

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ
ԺԱ. ՏԱՐԻ
11-ամեակի բացառիկ թիւ



ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ
ՄՈՆԹՐԷԱԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ՑԱԿՈՒ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ
2003 - 2004

Մաշտոցի արձագանգ 2004
Տարեկան բացառիկ թիւ

Բովանդակութիւն

- Խմբագրական
- Գիր օրհնութեան՝ Խաժակ Արք. Յակոբեան
- Հոգեւոր հօր խօսքը՝ Գառնիկ Քհնյ. Գոյունեան
- Հայց. Եկեղեցոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Տնօրէն Մաշտոց Վրդ. Զօպանեանի խօսքը
- Մեր խօսքը՝ Տնօրէն եւ ուսուցչական կազմ
- Զակի հետ կապը կը մշակուի՝ Ծաղիկ Պոյաճեան
- Վկայութիւններ Կիրակնօրեայ Դպրոցին մասին
- Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ Կիրակնօրեայ դպրոցներու հիմնադրութեան 75-ամեակին առթիւ հարցարան
- Ո՞ր է Աստուած՝ Գրիգոր Ծ. վարդապետ Զիֆթճեան
- Խոնարհութեան մասին՝ Ծաղիկ Պոյաճեան
- Աւետարանէն համարներ յատուկ նիւթերու շուրջ
- Ուսուցիչի մը տեսանկիւնէն դիտուած՝ Ծողիկ Նաճարեան
- Պահուած բառ
- Թէ ինչպէ՞ս ծագում առաւ Կիրակնօրեայ դպրոցը
- Մեր տարեկան տեղեկագիրը

Մեր ընթերցողներն են մեր ամսաթերթերի գոյութեան իմաստ տուողները

Յունիս ամսուան լոյս տեսնող «Մաշտոցի արձագանգ»-ի տարեկան բացառիկ այս թիւով կու գանք ամբողջացնելու մեր պարբերաթերթի 11-րդ տարուան հրատարակութիւնները: Անցեալ տարի, պարբերաթերթի տասնամեայի առթիւ, Մաշտոցի Արձագանգը վերածուեցաւ ամսաթերթի ու յատուկ ճիգերով ան հրատարակուեցաւ ամսուան սկիզբը իսկ: Ուրախութեամբ կը նկատենք որ յաջողեցանք այս տարի եւս մեր կանոնաւոր հետթականութիւնը յարգել ու մեր ընթերցողներուն ակնկալութիւնները գոհացնել:

«Մաշտոցի Արձագանգ»-ը, ամէն հրատարակութեան պէս, գոյատեւելու համար պէտք ունի մի քանի պայմաններու միատեղ եւ պարտադիր գոյութեան:

Նախ եւ առաջ, հրատարակութիւն մը իր գոյութիւնը լիովին կ'արդարացնէ իր ընթերցողներուն շնորհիւ: Մեր պարագային, ընթերցողներու մեր թիւը օրէ օր կը ծաւալի յատկապէս անոր Ե-նամակի ձեւով աշխարհի բոլոր երկրամասերուն վրայ տարածուելուն շնորհիւ: Անցեալ տարուան մեր ընթերցողներու վկայութիւններ եւ այս տարուան ընթացքին մեր ստացած ենամակները կը հաստատեն թէ «Մաշտոցի Արձագանգ»-ը արձագանգած է մինչեւ Աւստրալեայ, Եգիպտոս, Լիբանան եւ այլ անկիւններ: Տպուած իր ձեւին տակ, ամսաթերթը կը բաժնուի մեր դպրոցի աշակերտներուն յատկապէս: Չենք յաւակնիր սակայն ըսելով որ ան անպայման ընդհանուրը կը հետաքրքրէ, որովհետեւ հաւանաբար ամէն հրատարակութեան պէս, անոր բովանդակութիւնը օգտաշատ եւ մատչելի ըլլալով հանդերձ ոմանց կրնայ չհետաքրքրել: Եւ այս մեր կողմէն ընդունելի իրականութիւն է:

Երկրորդ նախապայմանը մեր ամսաթերթի առողջ գոյատեւման անոր նորոգութիւնն ու հետաքրքրաշարժ մնալն է: Այս մեր մեծ մարտահրաւերն է: Իրաքանչիւր ամիս իր յատուկ տօները ունենալով, տարուէ տարի ամսաթերթը կը ստիպուի կրկնել որոշ նիւթեր: Սակայն որեւէ ճիգ չենք խնայեր որպէսզի գոնէ նիւթը ներկայացնելու ձեւը փոխենք եւ անոր վերաբերեալ փոխանցուած տեղեկութիւնները նորոգենք: Մեր գործածած լեզուն պարզ ու մատչելի պահելը հրամայական կը մնայ, տրուած ըլլալով ամսաթերթիս ժողովրդական բնոյթը: Նիւթերուն վերլուծական ոճ չունենալը մտադիր է: Մեր առաջին նպատակը կը մնայ մեր ազգակիցներուն հետ պարզ եւ ուղղակի, հասկնալի կապ մը հաստատելը:

Գոհունակութեամբ ուրեմն կ'ամբողջացնենք տարուան մը մեր աշխատանքը: Կը մնանք բաց թելադրութիւններու եւ առաջարկներու ձեր բոլորին կողմէ, սիրելի ընթերցողներ եւ համեստօրէն կը կրկնենք թէ դուք էք, ձեր հաւատարիմ ընթերցանութեամբ, որ ամսաթերթիս գոյութեան իմաստ եւ արդարացում կու տաք: Ծնորհակալութիւն:

Շաղիկ Պոյաճեան

Գիր Օրհնութեան

Նշանակալից տարի մըն է, որ բացուած է մեր առջեւ: Նշանակալից քանի մը առումներով. –

Ա. Այս տարեշրջանին կը նշուի 75-ամեակը Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ Կիրակնօրեայ Դպրոցներու հիմնադրութեանը:

Բ. Մոնթրէալի Կիրակնօրեայ Դպրոցի սկզբնաւորման 24-ամեակը:

Գ. Մոնթրէալի «Մաշտոց Արձագանգ» հանդէսի հրատարակութեան 11-ամեակը:

Անշուշտ այս բոլոր ամեակները պարզապէս թիւեր չեն այլ կ'ենթադրեն երկար տարիներու վրայ տարածուած բազմախորհրդ մարդոց կամաւոր ու նուիրեալ ծառայութիւնը, զոհաբերութիւնն ու մանաւանդ հաւատքը:

Մեր աօրեայ եռուզերին, մեր ընկերային մտահոգութիւններուն, մեր ազգային խնդրուած նախաձեռնութիւններուն թոհուփոհին մէջ վերոյիշեալ յիշեցումները յաճախ աննշմար կը մնան ու չենք անդրադառնար անոնց կենսական կարեւորութեան ու դերին:

Ինչպէս այս տարուան ընթացքին բազմիցս շեշտեցինք՝ այս տարին Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ հռչակուած է «Ընտանիքի Տարի»:

«Ընտանիքի Տարի»ն լաւագոյն ձեւով արժեւորելու կերպը մեր ուշադրութիւնը Կիրակնօրեայ Դպրոց – Ընտանիք փոխարարութեան ու կապին վրայ կեդրոնացնելն է:

Մանուկի մը առողջ աճումին ու ազգին ու մարդկային ընկերութեան արժանաւոր զաւակը ըլլալու գրաւականը անոր առողջ դաստիարակութիւն մը ջամբելուն մէջն է:

«Դաստիարակութիւն» հասկացողութիւնը բարդ ու շարունակական ընթացք մըն է, իրականութեան մէջ մարդ էակը իր կեանքի ամբողջ տեսողութիւնը գիտակից ու անգիտակից դաստիարակութեան հոլովոյթին ենթակայ է:

Սակայն այդ դաստիարակութեան բեղմնաւոր ու կենսական շրջանը մանկութիւնն ու պատանեկութիւնն է, եւ կ'իրագործուի ընտանիք, դպրոց ու եկեղեցի երրորդութեան ճշմարիտ ու դաշն համագործակցութեամբը:

Չեմ ըսեր, թէ ծնողական անտարբերութիւնը, կրթական սխալ առաջնահերթութիւններն ու եկեղեցիներու եւ եկեղեցականներու ժամանակավրէպ գործելակերպերը յատուկ են մեր օրերուն, ասոնք ախտեր են, որ գոյութիւն ունեցած են բոլոր ժամանակներուն, եւ միշտ ալ արտացոլացուցած են ազգի ու ընկերութեան կեանքին մէջ: Յատկապէս մեր օրերուն, երբ թագուն բայց համադրուած ճիգ մը կայ մարդ արարածը ինքնուրոյն խորհողութենէ, կամքէ ու բարոյական որոշումներէ ու դատողութենէ պարպելու եւ մեքենական կեանքի մը

ուլորապտոյտին մէջ կամակատար արարածի մը վերածելու՝ ընտանիք, դպրոց եւ եկեղեցի գործակցութեան անհրաժեշտութիւնը բոլոր ժամանակներէն առաւել եւս կարեւորութիւն կը ստանայ, ու **ԿԻՐԱԿՆՕՐԵԱՑ ԴՊՐՈՑԸ** ու հոն ջամբուած քրիստոնէական դաստիարակութիւնը կը կազմեն հանդիպման վայրը այդ երրորդութեան: Ընտանիքը, դպրոցն ու եկեղեցին՝ իւրաքանչիւր պէտք է ստանձնէ իր պատասխանատուութիւնը, ապա թէ ոչ տխուր են հետեւանքները...:

Յստակ եւ հասկնալի են, որ ծնողները ծանրաբեռնուած են կենսապայքարի պարտաւորութիւններով, դպրոցները՝ խճողուած ծրագիրներով ու եկեղեցին ու եկեղեցականները առօրեայ պարտաւորութիւններով, սակայն եկէք անկեղծ ըլլանք՝ ո՞ր մէկ ծնողը կարելիութիւն չունի Կիրակի օրը կէս ժամ իր զակին տրամադրելու եւ զայն Կիրակնօրեայ Դպրոց բերելու, ո՞ր մէկ դպրոցը անկարելիութեան դիմաց կը գտնուի կրօնական ու բարոյական դաստիարակութեան տեղ գտնելու իր ծրագրին մէջ, եւ վերջապէս ո՞ր եկեղեցին ու եկեղեցականը դժուարութիւնը պիտի ունենայ ժամանակ գտնելու իր առաքելութեան ամէնէն կենսական հարցովը՝ հաւատաւոր մարդու պատրաստութեամբը զբաղելու, անկեղծօրէն՝ ոչ մէկը:

Անհորիզոն, մակերեսային եւ կամ շահախնդիր մարդիկն են, որ կը փորձեն ստեղծել անհաւատ մարդը: Աշխարհի ամէնէն վտանգաւոր ու ամէնէն յանցագործութիւններու պարարտ ենթահող ներկայացնող մարդիկն են հաւատքէ զուրկ կամ կեղծող անհատները:

Քրիստոնէական դաստիարակութեան նուիրուած մարմիններուն, Կիրակնօրեայ դպրոցներու համեստ բայց նուիրեալ ուսուցիչ-ուսուցչուհիներ ու երախտարժան ու մեծապէս գնահատելի տղոց ու աղջիկներուն, որ ի զարմանս շատերուն, այս անտեսուած առաքելութեան նուիրած են իրենց հոգին ու ժամանակը, «Մաշտոցի Արձագանգ» իսկապէս շահեկան ու դաստիարակիչ ու շատ շատերու կողմէ՝ երեց կամ երեխայ, անհամբերութեամբ սպասուող հրատարակութեան բոլոր անձնուէր ու շնորհալի աշխատակիցներուն կը ներկայացնենք մեր անխառն գնահատանքն ու խոր երախտագիտութիւնը, մեծ սիրոյ մը արդիւնքն ու արտայայտութիւնը եղող իրենց նուիրումին համար:

Աղօթարար՝

ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱԿՈԲԵԱՆ
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին

Հոգեւոր հովիւին խօսքը

Սիրելի տնօրէնութիւն, ուսուցչական կազմ, ծնողներ եւ աշակերտ-աշակերտուհիներ
Ս. Յակոբ Կիրակնօրեայ դպրոցի,

Այս տարի 75-ամեակն է Հայց. Առաք. եկեղեցիներու կիրակնօրեայ դպրոցներու
հիմնադրութեան:

Շատ յաճախ մեր ժողովուրդէն դժգոհութիւններ կը լսեմ մեր ծիսական կեանքի եւ առ
հասարակ հոգեւոր բաներու անհասկնալիութեան մասին: Այսինքն թէ՛ երբ մեր ժողովուրդի
զաւակները եկեղեցի կը մտնեն, չեն հասկնար եկեղեցիին մէջ ըսուածներն ու կատարուած
ները, կամ երբ Աստուածաշունչ կը կարդան, դժուարութիւն ունին զայն հասկանալու:

Նախ, անկասկած, Հայց. եկեղեցին իր առաքելութիւնը լրջօրէն պէտք է կազմակերպէ:
Ապա, բարեբախտաբար, որոշ ճիգեր տարուած են եւ կը տարուին Քրիստոսի ոգին խօսեցնելու,
զայն մատչելի դարձնելու արդի հայերուն: Բայց հիմնական աշխատանքը պարտաւոր են մեր
ծնողները տանելու: Ինչպիսի՞ն է եկեղեցիին հետ կապը մեր ծնողներուն, իրենք անձնապէս
եկեղեցի կու գա՞ն: Իրենց օրինակը շատ կարեւոր է իրենց զաւակներուն յետագայ ընթացքին
համար: Կենսական աշխատանք ունին նաեւ տանելու հայ դպրոցները: Անոնց թերացումը կը
վտանգէ մեր կարողութիւնը մեր իսկ հայրերուն աւանդութիւնը իւրացնելու:

Հայ Կիրակնօրեան իր հիմնադրութեան օրէն կու գայ մեր սերունդները պատրաստելու,
որպէսզի Աւետարանի պատգամը հասկնան, գիտնան թէ՛ ի՞նչ կը նշանակէ եկեղեցի ըլլալ:

Սիրելի աշակերտ-աշակերտուհիներ,

Մեզ որքան շատ ուրախացուցիք այս տարի: Մեծ պահքի Հսկումներուն այդ ինչքան լաւ
աղօթեցիք Ն. Շնորհալիի «Հաւատով խոստովանիմ»-ը: Մեզ յուզեցիք, քաջալերեցիք: Երանի
ձեր օրինակին նային մեր բոլոր փոքրիկները: Երբ նային՝ մեր ժողովուրդը նո՛ր պիտի ըլլայ:
Կեցցէ՛ք:

Աղօթարար՝

Տէր Գառնիկ Քհնյ. Գոյունեան
Հովի Սուրբ Յակոբ առաջնորդանիստ եկեղեցույ

**Պատուարժան Տնօրէնութիւն եւ Ուսուցչական կազմ
Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու
Որ ի Մոնթրէալ - Գանատա**

Քրիստոնէական ջերմ ու անկեղծ զգացումներով կու գամ հարցնելու Ձեր որպիսութիւնը, յուսամ լաւ էք ու հանգիստ: Թող ամենակարողն Աստուած միշտ հաստատ պահէ Ձեզ Ձեր հաւատքին մէջ, որուն մէկ շօշափելի արտայայտութիւնն է Ձեր նուիրումը, աշխատանքն ու ծառայութիւնը, որ կը ցուցաբերէք Կիրակնօրեայ Դպրոցներէն ներս:

Սիրելի գործակիցներ,

2004 տարուան սկիզբին, յատուկ տնօրինումովը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, հռչակուեցաւ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐԻ, որմէ տարի մը առաջ, 2003 տարին՝ ԱՍՏՈՒԱԾԱԾՈՒՆՉԻ ՏԱՐԻ, այն խոր հաւատքով ու համոզումով, եւ Եղիշէ պատմիչին բառերով՝ «*Քանզի Հայր մեր զՍուրբ Աւետարանն գիտնմք եւ Մայր զԱռաքելական Ս. Եկեղեցի*»: Ահա թէ ինչպէս անցեալին մեր նախահայրերը հայրութեան ու մայրութեան, այլ խօսքով՝ Ընտանիքի գաղափարի խորհրդանշանը տեսած են սուրբ Աւետարանին եւ սուրբ Եկեղեցւոյ մէջ:

Ահա այդ մեծ ընտանիքին մէկ անդամը կը հանդիսանայ Կիրակնօրեայ Դպրոցը ինք իր յատուկ առաքելութեամբ ու ծառայութեամբ: Այսօրուան իրականութեան դիմաց առաւել եւս անհրաժեշտութիւն ու կարիք կը դառնայ Կիրակնօրեայ Դպրոցին տեղը, դերը ու անոր ներկայութիւնը մեր կեանքին մէջ: Անոր համար, որ այսօրուան ընկերութիւնը, ու մանաւանդ՝ ընտանիքը լեցուն իր դժուարութիւններով ու մտահոգութիւններով, արդէն իսկ ժամանակը չունի պահ մը մտածելու այնպիսի բաներու մասին, որոնք հոգին կ'ազնուացնեն եւ առ Աստուած կը բարձրացնեն: Ընդհակառակը, օր ըստ օրէ մարդը առաւել նահանջ կ'արձանագրէ իր մարդկային բնութիւնը, այլ խօսքով՝ աստուածային պատկերն ու նմանութիւնը պահելու անաղարտ: Երբ պահ մը կ'անդրադառնանք, որ հակառակ մարդկային քաղաքակրթութեան, մտքի զարգացման ու իրագործումներուն անոր դիմաց անմարդկային երեւոյթները առաւել եւս կ'աճին ու կը զարգանան, որոնք կը վտանգեն ոչ միայն մարդը, այլ ընտանիքը եւ ընտանիքի ճամբով ամբողջ ընկերութիւնը: Այս մտահոգութիւններէ մղուած Կիրակնօրեայ Դպրոցը որպէս ընտանիք հետամուտ է նաեւ մանուկներու դաստիարակութեամբ, անոր տալու քրիստոնէական ու հայեցի առողջ դաստիարակութիւն:

Այս առիթով, որպէս Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցիչ-ուսուցչուհիներ, որպէս հոգետր ծնողներ մեր հայ մանուկներուն, եկէք անգամ մը եւս յիշենք Պօղոս Առաքելալի խօսքը ուղղուած իր աշակերտին Տիմոթէոսին, եւ Տիմոթէոսի ճամբով մեզի՝ «*Բայց դուն հաստատ կեցիր քու սորված բաներուդ վրայ, որոնց ճշմարտութեան վստահ ես, որովհետեւ գիտես թէ որոնցմէ սորվեցար: Եւ արդէն մանուկ հասակէդ գիտես Սուրբ գիրքերը, որոնք զօրութիւնը ունին քու միտքդ իմաստութեան բանալու՝ որպէս զի Քրիստոս Յիսուսի հաւատաս եւ փրկուիս: Աստուծոյ ներշնչումով գրուած բոլոր Սուրբ գիրքերը օգտակար են՝ թէ՛ ճշմարտութիւնը ուսուցանելու եւ թէ՛ սխալը հերքելու, մարդս ճիշդ ճամբու մէջ դնելու եւ արդար կեանքի մը դաստիարակութիւնը տալու համար. որպէս զի Աստուծոյ նուիրուած մարդը կատարեալ ըլլայ եւ պատրաստ՝ ամէն տեսակի բարի գործերու» (Բ. Տմ 3.14-17):*

Թող մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Աստուծոյ սէրը եւ Սուրբ Հոգիին հաղորդութիւնը ձեր բոլորին հետ ըլլան: Ամէն:

**Սիրով ու աղօթքով՝
Մաշտոց Վրդ. Զօպանեան
Վարիչ Տնօրէն Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու**

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ եւ աւարտել մեր 24րդ տարեշրջանը: Այս տարեշրջանը մասնաւոր նշանակութիւն ունի մեզի համար որովհետեւ 75րդ տարեդարձն է Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու հիմնադրութեան:

Այս 75 տարիներու ընթացքին հակառակ խոչընդոտներու եւ շնորհիւ անձնուէր եւ անշահախնդիր Վարիշ–Տնօրէններու, ուսուցչուհիներու եւ ուսուցիչներու, տնօրինուհիներու եւ տնօրէններու, Եկեղեցիներու Հոգաբարձութիւններու, Կիրակնօրեայ Դպրոցներու օժանդակ մարմիններու եւ քրիստոնէական դաստիարակութեան յանձնախումբերու ժողովական անդամներու՝ Կիրակնօրեայ Դպրոցները հազարաւոր հայ մանուկներու Քրիստոնէական Դաստիարակութիւն ջամբեցին՝ Աստուածաշունչի ոգիով, գաղափարներով, բարոյական սկզբունքներով եւ ճշմարտութիւններով. Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ հարազատ շունչով, աղօթքներով եւ շարականներով: Այս Քրիստոնէական դաստիարակութեամբ է որ մենք կրցանք որոշ չափով մեր բարոյական դիմագիծը առողջ պահել:

Այսօր, 75 տարիներ ետք, մեր մեծագոյն մարտահրաւերը կը մնայ մեր բարոյական դիմագիծին առողջութիւնը եւ մենք տակաւին կը հաւատանք թէ Քրիստոնէական Դաստիարակութիւնն է լաւագոյն միջոցը դիմագրաւելու այս մարտահրաւերը:

Այսօր, 21րդ դարու առաջին տասնամեակին երջանկայիշատակ Սահակ Բ. Կաթողիկոսին «ժամանակն է նոր աշխատութեանց, նոր միջոցներ գտնելու» խօսքերը կը մնան ի զօրու: Ժամանակն է ինքնաքննութեան, արժեւորելու անցեալը, ծրագրելու եւ գործադրելու նոր միջոցներ դիմագրաւելու համար ներկայի եւ ապագայի նոր մարտահրաւերները: Այս ծրագիրներու յաջողութիւնը կախեալ է Եկեղեցւոյ կառոյցներուն, Կիրակնօրեայ Դպրոցներու անձնակազմին եւ Հայ Քրիստոնէայ Ընտանիքին յանձնառութենէն:

«ժամանակը ծախու առէք» կ'ըսէ Քրիստոս: Այս յանձնառութիւնն է որ մեզի, բոլորիս պէտք է մղէ ժամանակ տրամադրելու ծրագրելու եւ գործադրելու միջոցներ, որպէսզի Կիրակնօրեայ Դպրոցները յաջողութեամբ շարունակէ իր առաքելութիւնը՝ ջամբելու Քրիստոնէական Դաստիարակութիւն, մանաւանդ մեր պատանիներուն եւ պատանուհիներուն:

Մեր փափաքն ու աղօթքն է որ այս 75 ամեակը խթան մը ըլլայ մեր բոլորին, պաշտպանելու, պահպանելու եւ նոր իրագործումներով դէպի նոր հորիզոններ ու նոր բարձունքներ առաջնորդելու Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցները:

Սակայն, **«հունձքը առատ է, բայց մշակները քիչ: Հետեւաբար խնդրեցէք հունձքի Տիրոջմէն, որ իր հունձքին համար մշակներ ղրկէ:»**

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական Կազմ

Զուկի հետ կապը կը մշակուի...

Երկար նախաբանի եւ ներկայացման պէտք չունի այս խորագիրը բոլոր այն ծնողներուն համար որոնք զուակներ դաստիարակելու դժուարին մարտահրաւերին առջեւ կը գտնուին: Օրուան երկայացողած դժուարութիւնները մեր բոլորին ծանօթ են եւ յանկերգ դառնալու աստիճան սովորական մտահոգութիւններ են այսպիսիները. - ինչպէ՞ս բարոյակից կեանքի մը մղեմ զուակս, ինչպէ՞ս հաւատքի հունտը դնեմ իր մէջ, ինչպէ՞ս հայ պահեմ, ինչպէ՞ս օտարամոլ կոչուած կենցաղէն հեռու պահեմ զինք, եւ այլն:

Առաջարկը ինքնին նոր չէ եւ հաւանաբար ո՛չ իսկ ինքնայատուկ: Սակայն կը կարծեմ թէ իր նախնական ըլլալուն պատճառաւ ան երբեմն մոռցուած է: Որոշ բարդութիւններ կարելի է կանխել այս պարզ սկզբունքը կիրարկելով՝ մեր զուակներու կողքին անխախտ կերպով ներկայ ըլլալով:

Կարգ մը ծնողներ իրենց զուակին այս կամ այն կեցուածքին առջեւ կը զարմանան, կ'ապշիին թէ ուրկի՞ց եկաւ ան եւ կը յայտարարեն թէ այս իրենց

ճանչցած - կամ ճանչնալ կարծած- զուակը չէ: Այս հաստատումը ինքնին կը փաստէ թէ դաստիարակութեան ընթացքին հանգրուան մը եղած է ուր ծնողը բացակայած է իր զուակին մօտէն եւ կամ, մօտը ըլլալով հանդերձ չէ տեսած ճիշդ ի՞նչ կը պատահի: Մանուկներու ամման հոգեբանութեան մասնագէտներուն կը ձգենք այս վերոյիշեալ հաստատումը վերլուծելն ու անոր մէջ երանգներ փնտռելը ու կը բաւարարուինք մեր ծնողի գործնական փորձառութենէն մղուած ըսելով՝ թէ զուակի մը դաստիարակութիւնը անընդհատ ընթացք մըն է որուն անբուն եւ 24/24, 7/7 հսկիչներն ենք մենք՝ ծնողներս: Դժբախտաբար թուութիւնն ու յուսահատութիւնը ընտրութիւններ չեն մեզի համար որովհետեւ դաստիարակութեան հրամայականին առջեւ մեր ուժերն ու կամքը անդադար պաշտօնի վրայ են:

Ծատեր կ'ըսեն թէ ծնողներ իրենց զուակներուն ստրուկները պէտք չէ ըլլան եւ թէ զուակ ունենալով մարդս ինքն իր կեանքը

զոհելու չէ, եւ թէ մենք ալ պէտքեր ունինք ու մեր ալ կեանքը կը շարունակուի: Ուէ՛լ մէկս այս հաստատումին դէմ չենք կրնար ելլել որովհետեւ խորապէս ճիշդ է: Կը վստահինք նաեւ իւրաքանչիւր ծնողի դատողականութեան եւ հասունութեան կարեւալ գանազանելու համար չափազանցը՝ չափաւորէն եւ առողջը՝ վատառողջէն: Սակայն օրինակելի զուակներ դաստիարակել փափաքող բայց միեւնոյն ատեն իրենց զուակն կեանքէն ներս քիչ թէ շատ ներկայ ծնողներուն յուշեմ թէ « ամէն ինչ իր գինը ունի » ժողովրդական խօսքը հոս հրաշալի ձեւով իր տեղը կը գտնէ եւ անոր մեկնաբանութիւնը հոս արծարծուած նիւթին առընչութեամբ կը ձգեմ ձեզի՝ ընթերցող ծնողներուդ:

Վկայութիւններ Կիրակնօրեայ Դպրոցին մասին

Կոչ կ'ուղղենք մեր բոլոր Թեմակալ Առաջնորդներուն, Ազգային իշխանութեան մաս կազմող ժողովականներուն, Հայ Ազգային Վարժարաններու տնօրէնութեանց, եւ բոլոր եկեղեցասէր եւ ազգանուէր ազգայիններուն՝ զա՛րկ տալու եւ լայնօրէն աջակցելու կիրակնօրեայ դպրոցներուն, որպէսզի օրէ օր առաւել թափ ստանայ քրիստոնէական դաստիարակութեան ազնուացուցիչ գործը մեր սուրբ եկեղեցւոյ աւանդութեան եւ առաքելութեան շրջագծին, ոգիին եւ ուղղութեան մէջ:

**Քաղուած 11 Նոյեմբեր 1979-ի
հայրապետական կոնդակէն
Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոս
Խորէն Ա. Կաթողիկոս
Մեծի Տանն Կիլիկիոյ**

Ըսինք ու կը կրկնենք. Կիրակնօրեայ դպրոցը հայ պատանիին մտքին դարբնոցն է ու բողբոջ հոգիին հնոցը: Պէտք է կուանել այդ դարբնոցը որպէսզի ան կարենայ շարունակ մտրակել հայ միտքը դէպի նոր հորիզոնները Ս. Գրոց ու հայոց պատմութեան: Պէտք է բորբ ու վառ պահել այդ հնոցը որպէսզի հոն թրծուի հայ մատղաշ հոգին քրիստոնէական եւ հայկական սրբազան արժէքներով ու վեհ իտէալներով մանաւանդ սա օրերուն երբ քիչ մը ամէն տեղ մեր ժողովուրդի երիտասարդ զաւակներուն մօտ սկսած է նուազիլ քրիստոնէութեան լոյսը ու մոռացութեան փոշիին մէջ թաղուիլ հայկական հոգեւոր արժէքներն ու աւանդութիւնները:

**1979 -
Արամ Եպս. Քէշիշեան
առաջնորդ Լիբանանի հայոց
այժմ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ**

... Կրօնական դաստիարակութիւնը պատմական իրաւունքն է Հայ ժողովուրդին: Սահակ-Մեսրոպի եւ Վնամշապուհ թագաւորի կատարած մեծ գործի գնահատանքը շատ բան կը կորսնցնէ իր ներքին իմաստէն եթէ զանց առնուի կրօնական դաստիարակութիւնը Հայ Եկեղեցւոյ, Հայ Տան եւ Հայ Դպրոցին մէջ: Եթէ կ'ուզէք որ այսօրուան պատանութիւնը վաղը չայլասերի, հոգ տարէք անոր կրօնական դաստիարակութեան *Կիրակնօրեայ Դպրոցներով* :

Բարգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս

Հետեւաբար կը պատուիրեմ մեր բոլոր Ս. Առաջնորդներուն, քարոզիչներուն եւ քահանաներուն, որ հիմնուելով մեր այս կոնդակին վրայ՝ խօսին մեր սիրեցեալ ժողովուրդին եւ բացատրեն *Կիրակնօրեայ Դպրոցներուն* կազմակերպութեան պէտքը: Կը յայտարարեմ եւ կը հրամայեմ որդեսէր ծնողաց, որ առանց խարխափուելու արտնիճ եւ հրապարակային ասուլիսներէն, հոգ ու խնամք տանին իրենց զաւակաց բարք ու բարոյականին, հոգածու ըլլան կրօնական եւ եկեղեցասիրական ոգին վառ պահելու *Կիրակնօրեայ Դպրոցներով*: ...

Մենք չենք կրնար անտեսել Հայաստանեայց Եկեղեցւոյ շուրջ լարուած ընտանի եւ օտար թակարդները. չենք կրնար թոյլ տալ որ հայ մատաղ սերունդ հակակրօն գաղափարներով դաստիարակուի, մենք չենք ներեր որ հայ երիտասարդութիւնը եղբայրատեաց զգացումներու դաստիարակուի: Մենք յայտնի կերպով կը տեսնենք թէ ի՛նչպիսի ողբալի վիճակի մը մէջ ինկած է Աւետարանի լոյսէն, կրօնքի սրբարար շնորհքէն զրկուած հայ երիտասարդութիւնը: Մենք կ'ուզենք որ մեր Մայրենի Եկեղեցւոյն զաւակները հարազատ զաւակները ըլլան իրենց Ընտանիքին, իրենց Ազգին եւ իրենց Եկեղեցւոյն: Չենք կրնար թոյլ տալ որ աս ու ան իր ուզած կերպով խաղայ մեր Եկեղեցւոյն անուան հետ եւ մեր երիտասարդութեան ճակատագրին հետ: Վերջապէս չենք ուզեր որ անկրօն եւ տգէտ մեծնայ հայ ժողովուրդին երիտասարդ սերունդը:

**Քաղուած 28 Յունիս 1930-ի
հայրապետական կոնդակէն Սահակ Բ.
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ**

Վկայութիւններ Կիրակնօրեայ Դպրոցին մասին

Քրիստոնէական դաստիարակութեան առաջին եւ մեծագոյն միջոցը ԱՍՏՈՒԱԾԱԾՈՒՆԶՆ է: Չենք կրնար եւ ճիշդ չէ դաստիարակել փոքրիկը առանց Աստուածաշունչի էջերուն, խորքին եւ ոգիին: Եթէ կրօնական դաստիարակութիւն է մեր նպատակը, Քրիստոս ինք պէտք է կազմէ առանցքը եւ նպատակը տրուելիք դաստիարակութեան, ծանօթութիւններուն: Ինք դառնայ մեր կեանքին օրինակը: Եթէ մենք զօրաւոր ենք մեր այս տեսակի դաստիարակութեան մէջ, այն ատեն կրնանք հասկնալ մեր Հայ Եկեղեցին, մեր հայրապետները, սուրբերը, տօները, աւանդութիւններն ու հոգեւոր սովորութիւնները: Այն ատեն Հայ Եկեղեցին ինքն ալ իր կարգին կը դառնայ *լրացուցիչ միջոցը* Քրիստոնէական լրիւ դաստիարակութեան:

**1979 - Օշական Վարդապետ Զօլոյեան
այժմ Արք. եւ Առաջնորդ
Միացեալ Նահանգներու Արեւելեան
Շրջանի**

**Հայաստանեայց Առաքելական Եկեղեցույ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 75-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ
Հարցարան**

Ծ.խ.- 2004 թուականը Հայաստանեայց Առաքելական եկեղեցույ կիրակնօրեայ դպրոցներու հիմնադրութեան 75-ամեակը յիշատակող տարին է: Այս առթիւ, պարբերաբար հարցումներու շարք մը ուղղեց Հայց. Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցներու վարիչ տնօրէն Մաշտոց Վրդ. Զօպանեանի : Այսու կ'արտատպենք հարցումներն ու պատասխանները:

Անհուն ուրախութեամբ նախ կ'ուզեմ շնորհաւորել ու գնահատել ձեզ այն աշխատանքին համար, որ կը կատարէք ամենայն նուիրուածութեամբ ու բժախնդրութեամբ:

Աշխատանք մը, որ կարելի չէ չափել մարդկային չափանիշով, որովհետեւ մարդկային չէ:

Աշխատանք մը, որ կարելի չէ գնահատել մարդկային արժանիքներով, որովհետեւ բաւարար պիտի չըլլայ:

Հապա, աշխատանք մը, որ միայն Աստուած կրնայ զայն արժեւորել, գնահատել ու մանաւանդ վարձատրել, որովհետեւ ինչ որ կ'ընէք աստուածային գործ է որ կ'ընէք, որպէս Անոր գործակիցները, Պօղոս Առաքելի բառերով. «Քրիստոսի սպասաւորները, իբրեւ մարդիկ՝ որոնց յանձնուած է Աստուծոյ ծածուկ ծրագիրին վերակացութիւնը» (Ա. Կր 4.1):

Ահա որպէս Վարիչ Տնօրէն Հայց. Առաք. Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցներու, այս առիթով կ'աղօթեմ առ Բարձրեալն Աստուած որ Զեզի պարգեւէ առողջութիւն, յաջողութիւն, հաւատքի ու սիրոյ զօրութիւն, «ամբողջական իմաստութիւն եւ հոգեւոր իմացականութիւն, որպէսզի ապրիք Տիրոջ վայել ձեւով, ամբողջութեամբ իր կամքին համաձայն, ամէն տեսակի բարի գործերով պտղաբեր դառնաք եւ Աստուծոյ գիտութեամբ անիք» (Կղ 1.9-10):

Առ այդ, պատասխանելով հարցումներուն.-

1.- Ի՞նչ էր Հայաստանեայց Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցներու հիմնադրութեան կոչումն ու նպատակը:

1.- Ինչպէս անցեալին այսօր եւս Կիրակնօրեայ Դպրոցներու հիմնական նպատակն ու առաքելութիւնը եղած էր ու է հայ մանուկին ու պատանիին տալ քրիստոնէական առողջ դաստիարակութիւն եւ Հայ Եկեղեցույ վերաբերեալ գիտելիքներ ու ծանօթութիւններ: Այլ խօսքով, դաստիարակութիւն մը հիմնուած անտարանի ճշմարիտ ուսուցման վրայ: Երբ կը դիտենք այսօրուան աշխարհը իր բոլոր դժուարութիւններով, ըլլան անոնք՝ ընկերային, տնտեսական ու մանաւանդ ընտանեկան, կը զգանք անհրաժեշտութիւնը այդ դաստիարակութեան ու մարդակերտումի աշխատանքին: Որովհետեւ այնպէս ինչպէս մարմինը ինք կարիքը ունի դաստիարակութեան, անման, սնունդի, նոյնպէս ալ մարդու հոգին կարիքը ունի ըստ այնմ դաստիարակուելու, կրթուելու, աճելու ու զարգանալու, մանաւանդ այսօրուան աշխարհին մէջ: Ահա թէ ինչու Կիրակնօրեայ Դպրոցները հետամուտ են այսպիսի աշխատանքի:

2.- Ի՞նչ իրագործումներ կատարեցին Հայաստանեայց Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցները անցնող 75 տարիներուն: Որչափով յաջողեցաւ իր նպատակին մէջ:

2.- Երբ կ'ուզենք պահ մը կանգ առնել ու անդրադառնալ, ու մանաւանդ արժեւորումը ընել թէ անցնող տարիներու ընթացքին ինչպիսի իրագործումներ կատարեցին Կիրակնօրեայ Դպրոցները Աւետարանին բառերով կրնանք ըսել՝ *«Որպէս անպիտան ծառաներ, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք»* (Ղկ 17.10): Անշուշտ այս մէկը չ'արդարացներ թէ բաւարար էր եղածը, բայց կրնանք ըսել, օրինակ թէ անցնող տարիներու ընթացքին կարգ մը շրջաններու մէջ ուր Կիրակնօրեայ Դպրոցներ չկային, շնորհիւ Թեմի Առաջնորդին ու նախկին Վարիչ Տնօրէնութեան նոր դպրոցներ բացուեցան: Ասոնց կողքին հրատարակչական հսկայ աշխատանք տարուեցաւ, ուսուցիչներու պատրաստութեան համար յատուկ դասընթացքներ կազմակերպուեցան, ու տակաւին համագումարներ եւ այցելութիւններ տեղի ունեցան: Եւ տակաւին նոյն աշխատանքը կը շարունակուի:

3.- Ի՞նչ դեր ունեցան Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցները Հայ իրականութենէն ներս:

3.- Կարծեմ արդէն վերեւ նշուած հարցումին պատասխանը կու գայ ըսելու թէ այս բոլոր իրագործումները ինչ դեր ունեցան Հայ իրականութենէն ներս: Ամէն պարագայի, սակայն, կրնանք ըսել թէ նուազագոյնը՝ Կիրակնօրեայ Դպրոցը կրցաւ Աստուծոյ խօսքը Հայ մանուկին ճամբով տանիլ Հայ ընտանիքին:

4.- Ինչպէ՞ս կ'արժեւորէք Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու ներկայ վիճակը:

4.- Տեսէք, անկեղծ ու իրապաշտ ըլլալու համար չենք կրնար բաւարարուիլ եղածով, որովհետեւ եղածով բաւարարուիլ կը նշանակէ նահանջի մէջ ըլլալ: Քրիստոնէական մեր հաւատքը մեզի կը սորվեցնէ աւելին ընել, Աւետարանին բառերով, հինգին վրայ ուրիշ

հինգ մը աւելցնել, ոչ իր նիւթական առումով, այլ հաւատքի ու աշխատանքի իմաստով: Հետեւաբար այս ըմբռնումը մեզ բոլորս կը դնէ պատասխանատուութեան ու պարտաւորութեան տակ, երբ կը տեսնենք օրինակ, թէ մարդ ուժի պակասը կայ. կարգ մը շրջաններու մէջ աշակերտութեան թիւի նուազում: Ուրիշ շրջաններու մէջ տեղի դժուարութիւն: Այո աշխատանքները կան, բայց դարձեալ չբաւարարուինք եղածով կամ ունեցածով, այլ մտածենք թէ ի՞նչ եւ ինչպէ՞ս կրնանք աւելին ընել:

5.- Ի՞նչ պէտք է ըլլան Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու հիմնադրութեան կոչումն ու նպատակը յաջորդ 25 տարիներուն:

5.- Կրկնութեան գնով ըսեմ, որ Կիրակնօրեայ Դպրոցները մէկ նպատակ ունին ու կը հետապնդեն, ինչ որ նաեւ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն է. *«Զգեցէք որ մանուկները ինձի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»* (Ղկ 18.16):

6.- Որո՞նք են Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու մեծագոյն 3 մարտահրաւերները յաջորդ 25 տարիներու ընթացքին: Ի՞նչ պէտք է ընէ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Տնօրէնը դիմագրաւելու համար սոյն 3 մարտահրաւերները:

6.- Տեսէք, իրաքանչիւր ժամանակաշրջան իրեն յատուկ դժուարութիւններ ունի եւ կրնայ ունենալ: Նաեւ դժուարութիւններ, որոնք այս տարի դժուարութիւն են, բայց յաջորդ տարին ոչ, կամ հակառակը: Բայց կայ ու կը մնայ միակ դժուարութիւնը, Աւետարանի բացատրութեամբ՝ *«Հունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ»*, մարդ ուժի պակասը: *«Հետեւաբար խնդրեցէք հունձքի Տիրոջմէն,*

որ իր հունձքին համար մշակներ դրկէ» (Մտ 9.37-38):

Այս բոլորով հանդերձ, սակայն, քրիստոնէական մեր հաւատքը հետեւեալը կը սորվեցնէ մեզի, թէ այն աշխատանքը որ կը կատարենք մեր աշխատանքը չէ, այլ Աստուծոյ, եւ որպէս գործակիցներ եկած ենք այդ աշխատանքը կատարելու: Երկրորդ, Պօղոս Առաքեալի բացատրութեամբ. «Ո՞վ կրնայ մեզ բաժնել Քրիստոսի սէրէն. նեղութի՞նը, անձկութի՞նը, հալածա՞նքը, սո՞վը, մերկութի՞նը, վտա՞նգը կամ սո՞րը: Բայց այս բոլորէն շատ ատելի յաղթական դուրս կու գանք շնորհիւ անոր՝ որ մեզ սիրեց: Որովհետեւ համոզուած ենք, որ ո՛չ մահը եւ ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ չար ոգիներու իշխանութիւնները, ո՛չ ներկան եւ ո՛չ գալիքը, ո՛չ ալ ոռէէ զօրութիւն, ո՛չ վերին եւ ո՛չ ալ ներքին աշխարհները, ո՛չ ալ ուրիշ ստեղծագործութիւն մը կրնայ մեզ բաժնել Աստուծոյ սէրէն, որ մենք ճանչցանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ» (Հո 8.35-39): Ահա այդ սէրը մեզ կը մղէ ու կը վստահեցնէ, թէ՛ «Աստուած կարող է քարերէն ալ Աբրահամի զաւակներ հանել» (Մտ 3.9):


Հետեւաբար, որպէս վերջին խօսք, մենք իբրեւ Կիրակնօրեայ Դպրոցներ հաւատարիմ մնանք մեր կոչումին ու մեր ուխտին եւ շարունակենք մեր աշխատանքը, որ այնքան նուիրական է: Այսօր ով չի ցանկար թագաւորի մը, ղեկավարի մը խորհրդականը, օգնականը եւ կամ գործակիցը ըլլալ, եւ մենք Կիրակնօրեայի ճամբով կոչուած ենք այդ բոլորը ըլլալու:

Անգամ մը եւս թող ամենաբարին Աստուած ինք հովանի եւ պահապան ըլլալ ձեզի, տալով ուժ, կորով, առողջութիւն, ու մանաւանդ համբերութիւն: Զեր վարձքը կատար եւ շնորհակալութիւն:

Սիրով եւ աղօթքով՝

**Մաշտոց Վրդ. Զօպանեան
Վարիչ Տնօրէն
Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու**

Շնորհակալութեամբ ստացանք



Ո՞ր է Աստուած

Գրիգոր Ծ. վարդապետ Չիֆթճեան
Հատուած «Մարդ, Ընտանիք, Ընկերութիւն» գիրքէն-
Անթիլիաս 2004

Մանուկներուն հարցուցած նմանօրինակ հարցումին չափահասներ կը պատասխանեն, իրենց ցուցամատը ուղղելով երկինքի կապոյտին, որուն ետին թաքնուած կը դաւանին Արարիչը: Երկինքի բարձունքներուն թէ անորոշ աշխարհի մը մէջ գտնուող Աստուծոյ մասին թերահաւատութեան արտայայտութիւն չէ՛ նման հարցում մը հարցնելը: Աստուծաբաններ, եկեղեցւոյ Հայրեր թէ սովորական հոգեւորականներ եւս նոյն հարցումը կը հարցնեն, խորաթափանց հայեացքով փնտռելու, գտնելու եւ մարդոց ծանօթացնելու համար Աստուած:

Յիսուսի հասկացողութեամբ Աստուծոյ թագաւորութիւնը մեր մէջ իսկ է (հմտո Ղկ 17.21) : Անոր ներկայութիւնը ամէն պահու կարելի է զգալ, որովհետեւ բարոյականութեան տէր մարդը Աստուածակեդրոն կեանք մը կ'ապրի, փոխանակ անձնակեդրոն ըլլալու: Սա էական պայմանն է Աստուծոյ ներկայութեան մեր մէջ: Աստուծոյ ո՞ր ըլլալուն մասին ինքնավստահ անձերը անոնք են, որոնք ներքին երանութիւնը ունին Անոր ներկայութիւնը իրենց մէջ զգալու: Այդպիսիներուն համար կասկած չկայ Աստուծոյ գոյութեան մասին, ոչ ալ Անոր բնակութեան վայրին մասին, որովհետեւ մնացուն մտերմութիւնը հաստատած են Անոր հետ:

Աստուծոյ ո՞ր ըլլալուն մասին մարդիկ հարցադրում կը կատարեն նաեւ երբ նեղութեան մատնուած են : Ինչո՞ւ Աստուած չի փրկեց զիս: Ինչո՞ւ թող տուաւ որ ես տառապիմ: Ինչո՞ւ զաւակս վտանգէն չազատեց, ինչո՞ւ խլեց իմ սիրելիս անժամանակ կերպով:

Ահաւասիկ հարցումներ, որոնք անպայման անհաւատ կամ թերահաւատ անձերու կողմէ չեն հարցուիր, այլ յաճախ պարզ հաւատացեալներու կողմէ ալ կը հարցուին, որոնք պարզապէս կ'ուզեն որ Աստուած մի՛շտ իրենց հետ ըլլայ իբրեւ իրենց զօրաւոր ու վստահելի պահապանը: Խորքին մէջ, նեղութիւններն ու փորձանքները իրե՛նք պատճառ կ'ըլլան որ այս հարցումը մարդկային մտքին մէջ տեղ գտնէ, քան թէ հաւատքի առարկային փնտռտուքը որ իւրաքանչիւր անձի մօտ տարբեր չափով ու ձեւով արտայայտութիւն կը գտնէ: Հետեւաբար Աստուծոյ գոյութիւնը վիճարկումի նիւթ չէ՛ այստեղ այնքան որքան տուեալ պահու մը Անոր բացակայութիւնը, որ այս պարագային վտանգի կամ փորձանքի մը պահն է:

Աստուած փնտռողը՝ դիրութեամբ կը գտնէ զԱյն որովհետեւ Աստուած ամենուրեք է: Կարելի է սակայն տեսնելէ աւելի զգալ Անոր ներկայութիւնը: Հեռուն վառած կրակին լոյսը կարելի է տեսնել, սակայն պէտք է մօտենալ՝ զգալու համար անոր ջերմութիւնը: Աստուած Իր կատարած հրաշալի գործերէն բացի, մարդուն հոգիէն ներս իր ներկայութեամբ զգալի իրականութիւն կը դառնայ: Այս իրավիճակին կ'ակնարկէ Յիսուս, երբ կ'ըսէ, թէ երկինքի արքայութիւնը ձեր մէջ է: Մեր մէջ գտնուող Աստուածային այդ ներկայութիւնը շարժումի կը վերածուի, երբ կարեցանք զայն միախառնել մեր էութեան հետ, ու գործի մղել զայն դէպի մեր նմանը: Երկար տարիներու վրայ տարածուած Աստուած փնտռելու մեր աշխատանքը աւարտած պիտի ըլլայ ու մենք պիտի համարձակինք Աստուած գտած ըլլալ յայտարարել, երբ կարեցանք մեր նմանին մէջ տեսնել զԱստուած:

Խոնարհութեան մասին

Իւրաքանչիւր հաւատացեալ իր հոգեւոր կեանքէն ներս կը մշակէ կատարեալ քրիստոնէայ մը ըլլալու ձգտումը: Այս ձգտումը առաւելապէս ձեռն կ'առնէ երբ հաւատացեալներ իրենց վարմունքով կամ պարզապէս «ըլլալու ձեռով» կը փորձեն իբր քրիստոնէաներ կատարելագործուիլ, այսինքն՝ Քրիստոսի նմանիլ: Բարոյակրօնական սկզբունքներու շարքը որոնցմով մարդ կրնայ նմանիլ իր Տիրոջ երկար է, սակայն կայ անոնցմէ մէկը, առաքինութիւններուն ազնուագոյնը, որուն ողջ օրինակը ինք Յիսուս էր, այն ալ խոնարհութիւնն է:

Անմիջապէս ի մտի կը բերենք այն դիտողութիւնները ըստ որոնց խոնարհ անձը տկար նկարագրի տէր է, եւ թէ իր լոռութեամբ ու բացառիկ համբերութեամբ ինքն իր իրաւունքները պաշտպանել չի գիտեր, եւ թէ մէկ հարուած ստանալուն միւս երեսը դարձնելը հոգուով խեղճ մարդու կեցուածք է: Սակայն խոնարհութեան մասին ինքն իրեն հարց տուող անձը կամ աւելին, իր կեանքը խոնարհ ձեռով ապրող մարդը միայն գիտէ թէ խոնարհութիւնը որքանով բարձր ու վեհ առաքինութիւն մըն է:

Խոնարհութիւնը ամենէն առաջ կը սկսի ընդունելով թէ Աստուծոյ պարգեւած կեանքին ու շնորհներուն առջեւ մարդ արարածը շատ փոքր է: Իսկական հաւատացեալը որ Աստուծոյ շնորհած բարիքներուն կը գիտակցի ինքնաբերաբար կը զգայ խոնարհութիւն որովհետեւ ինքն իրեն կը գոհացնէ Աստուծմէ իրեն տրուածով եւ ոչ՝ մարդոցմէ: Այսպէս խոնարհ անձը իր բարեգործութեան փոխարէն կը գոհանայ հոգեկան եւ մտային այն խաղաղութեամբ որ իր խիղճն իսկ իրեն կը պարգեւէ, երբ փառամոլը իր բարեգործութեան փոխարէն կը սպասէ որ մարդիկ շնորհաւորեն ու մեծարեն զինք:

Խոնարհութիւնը հոգիի առողջութիւն կը բերէ ու զայն կիրարկողին կ'ազատէ ամէն տեսակի վնասներէ ու մոլութիւններէ. որովհետեւ խոնարհ անձը հաշուետու է Աստուծոյ առջեւ միայն ու իր ցնծութիւնը ներքին է: Ան չի խոռովիր ուրիշէն, չթշնամանար, չյուսահատիր որովհետեւ իր տուածին փոխարէն ոչ գովեստ, ոչ այլ կերպի հատուցում կը սպասէ իր նմաններէն՝ մարդոցմէ: Այդ իսկ պատճառաւ թշնամական ոչ մէկ զգացում կը մշակէ իր նմաններուն հանդէպ ու այսպէս ինքն իրմով խաղաղ ու երջանիկ ընթացք մը կը որդեգրէ:

Խոնարհութեան մասին այս արագ անդրադարձով բարոյական տափակ քարոզչութիւն մը ընելէ կը փորձենք խուսաբիլ: Սակայն քրիստոնէութիւնը ապրիլ է, գործել է եւ իւրաքանչիւրս իբր հաւատացեալ մեր ձեռով ապրինք ու գործենք այն հաւատքը որ ցանուած է մեր մէջ: Եւ երանի անոնց որոնք իրենց կատարեալ քրիստոնէայ մը դառնալու ընթացքը կը ձգտին կատարել խոնարհութեամբ որովհետեւ « ինչքան մեծ ըլլաս, այնքան խոնարհեցուր անձդ եւ շնորհ կը գտնես Տիրոջ առջեւ »:

Աստուածաշունչէն համարներ յատուկ նիւթերու շուրջ

Աւետարանին ծանօթ ընթերցողներ գիտեն թէ որքան հարուստ է այս գրութիւնը համարներով որոնցմէ իւրաքանչիւրը կարելի է պատշաճեցնել յատուկ կացութիւններու: Ըլլան անոնք ուրախ թէ տխուր վայրկեաններ, յուսահատութեան թէ լաւատեսութեան փորձառութիւններ, փորձութեան ենթարկուածութիւն թէ փառաբանութեան պահանջք, Աստուածաշունչէն ներս կարելի է գտնել համարներ որոնք պիտի պատասխանեն այս զանազան տեսակի իրավիճակներուն:

Արիութիւն

Սաղմոս 27.14

Հաւատք

Մատթ. 8-5.13

Մարկ. 11.22-24

Ներողամտութիւն

Մարկ. 11.25

Եփես. 4.31, 32

Անկախութիւն

Յովհ. 8.31-36

Երջանկութիւն

Մատթ. 5.3-12

Սրբութիւն

Ա. Պետրոսի 1.13-16

Յոյս

Ա. Պետրոսի 1.13

Խոնարհութիւն

Ղուկ. 18.9-14

Փիլիպեց. 2.3-11

Սէր

Ա. Կորն 13

Համբերութիւն

Եբրայեց. 10.36

Անկեղծութիւն

Բ. Կորն. 8.21

Ծջմարութիւն

Յովհ. 14.6

Յովհ. 17.17

Եփեսաց. 4.14, 15

Յաղթանակ

Ա. Կորնթ. 15.57

Ա. Յովհ. 5.4



Շնորհակալութեամբ ստացանք

Ուսուցիչի մը տեսանկյունէն դիտուած...

Ծ.Խ.- Պատասխանելով խմբագրին կողմէ ուղղուած հարցումներու շարքի մը, մեր կիրակնօրեայ դպրոցի ուսուցչուհիներէն մէկը մեզ կը փոխանցէ իր ընդհանուր տպաւորութիւնն ու գաղափարները իր փորձառութեան մասին յատկապէս եւ կիրակնօրեայ դպրոցին մասին ընդհանրապէս:

Ծ.Ն.- Կիրակնօրեայ դպրոցին նպատակն է մեր նոր սերունդին քրիստոնէական դաստիարակութիւն ուսուցանել այս օտար ափերուն եւ այս դժուարին պայմաններուն մէջ: Կիրակնօրեայ դպրոցը տարիներու ընթացքին զանազան փոփոխութիւններու ենթարկուեցաւ եւ կը նկատեմ որ վերջին տարիներու ան բարելաւուեցաւ յատկապէս մանկապարտէզի բաժնին մէջ, աշակերտներու յատուկ դասագրքերու գոյութեամբ, ինչպէս նաեւ ձեռնային աշխատանքներու շնորհիւ, հարց ու պատասխանի դրութեան օգտագործումով եւ ոսկեղէն համարներու դասաւանդումով:

Սակայն տարիքով մեծերու դասարաններու պարագան կը մնայ համեմատաբար մտահոգիչ եւ հակառակ ուսուցիչներու ու տնօրինութեան ճիգերուն, գործը կը մնայ բաւական դժուար: Դժբախտաբար, ուսուցիչները իրենց շրջանակէն ու ծնողներէն մեծ ակնկալութիւններ չեն կրնար ունենալ: Ընդհակառակը Կիրակնօրեայ Դպրոցը կրնայ ծաղրանքի առարկայ դառնալ որուն որպէս արդիւնք աշակերտները չեն քաջալերուիր զայն յանախելու:

Պատանիները կիրակնօրեայ դպրոցէն ներս համոզումով պահելը կը մնայ մեծ մարտահրաւէր մը որուն դիմաց ամէն ջանք կը թափեմ եւ իբր մայր եւ ուսուցիչ, բայց

ծրագիրներուս մեծամասնութիւնը կը մնայ թուղթի վրայ: Մեծ զոհողութիւն է բոլորիս համար ներկայ պայմաններուն մէջ առանց բացակայութեան ներկայ ըլլալ Կիրակնօրեայ Դպրոց եւ տալու մեր լաւագոյնը:

Ամէն սրտով կը մաղթեմ որ աշակերտներ շարունակեն յանախել Կիրակնօրեայ Դպրոց եւ իրենց ժամերէն յատկացնեն նաեւ Աստուծոյ խօսքը սերտելու, որովհետեւ աշակերտներուն համար Կիրակնօրեայ Դպրոց յանախելը մեծ զոհողութիւն կ'ենթադրէ: Կը գնահատեմ նաեւ իրենց ծնողները որոնք կիրակի օրուան անուշ քունը խանգարելով կը վազեն Կիրակնօրեայ Դպրոց որուն որպէս արդիւնք, իբր ուսուցչուհի, պարտաւոր կը զգամ կարելիս ընել լաւագոյն ձեւով կատարելու համար այս գործը:

Աստուծոյ արտերը շատ են, մշակները՝ ափ մը միայն: Կը խնդրեմ Աստուծմէ որ աճեցնէ Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտներու, ծնողներու եւ ուսուցիչներու թիւը, ու բոլորս միասին հետապնդենք նոյն նպատակը՝ մեծցնելու քրիստոնէայ, հայ եւ բարեպաշտ զաւակներ:

**Ծողիկ Նաճարեան
Ուսուցչուհի
Նախակրթարան Ե. դասարանին**

Պահուած բառ

ա	բ	ա	բ	ա	տ	չ	ճ	կ	ո	տ	բ	ե	լ	դ	ո	ւ	ո	գ
խ	բ	ա	տ	ր	կ	տ	ո	ւ	ց	Ի	ձ	Ի	ւ	ց	ր	բ	կ	ր
կ	Ա	ա	ց	ա	ճ	Ի	տ	ե	կ	ա	ց	ո	ց	ց	բ	ա	ա	ա
Ի	յ	ա	ր	գ	ե	լ	փ	ա	ա	ր	տ	օ	ց	ե	լ	ր	ր	դ
ր	կ	ա	դ	Ի	ց	ա	պ	ա	ա	ո	ա	ւ	օ	տ	ո	ե	ա	ա
ա	ո	ա	կ	լ	չ	ա	ր	չ	ա	ր	ե	լ	ե	ե	ւ	կ	պ	ր
կ	Ի	ր	ա	կ	Ի	ց	Ն	ք	ց	Ի	կ	ր	ե	լ	ա	ա	ե	ա
ց	ր	գ	ց	ո	Գ	տ	ա	ց	ձ	ե	ո	ք	ր	ձ	լ	մ	տ	ց
օ	ա	ո	ա	յ	բ	ա	ր	ե	ր	ա	ր	ո	ա	ե	տ	ե	ւ	ա
ր	կ	ւ	չ	ս	ա	ո	օ	ր	ե	ա	յ	ւ	զ	ո	ջ	կ	լ	ց
ե	ա	ց	ա	տ	ո	Է	ք	ո	ւ	պ	Ս	ո	ե	ց	ւ	ո	ո	ա
ա	ց	դ	բ	ա	ց	ջ	ա	ր	բ	ա	ր	Ի	լ	ո	յ	ս	ւ	պ
յ	զ	ա	ր	ց	ե	լ	ր	ե	ր	գ	ե	լ	ց	ց	տ	ա	ր	ր
գ	Ի	ր	ք	ա	լ	օ	ձ	Ի	ք	ա	ց	ա	կ	ո	ւ	մ	ջ	ա
ո	ւ	զ	ե	լ	ց	ո	ր	ե	ց	յ	ք	պ	ա	դ	տ	Ի	կ	կ

Արարատ
Անահիտ
Անտառ
առօրեայ
արագիլ
առակ
առտու
առնել
անձրեւ
առաւօտ
ապագայ
աչք
ապակի
արտօնել
բանջար
բանուկ
բարեկամ
բարիլոյս

բարերար
բանակում
բարձր
բու
գիրք
գունդ
գրադարան
դուռ
դաս
ետեւ
ելլել
երկինք
երագել

երգել
զարնել
իրական
լուալ

լուրջ
խրատ
կիրակի
կանաչ
կիրակնօրեայ
կարապետ
կտուց
կաղին
կոտրել
կանոն

կոյս
հոտ
ձիւն
ձեռք
ձեռնոց
յարգել
նետել

ուզել
որբ
ուռիլ

չարչարել
չափեց
պաղտիկ
պանան
պրակ
ջուր
ստանալ

տարր
ցորեն
տանձ
օձի

Պահուած Բառը՝ 6 գիր

ԹԷ ԻՆՉԱԿԵՆ ԾԱԳՈՒՄ ԱՌԱՎ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՐՈՂ

Ուրկի՞ց յառաջացաւ Կիրակնօրեայ դարոցի գաղափարը...

Անգլիոյ Կլուէսթըր քաղաքին մէջ, շաբաթաթերթի խմբագիր մը՝ Ռոպէրթ Ռէյքս անունով, փողոցներու մէջ թշուառ մանուկներուն թափառիլը տեսնելով կը խղճայ անոնց վրայ եւ զանոնք կրթելու եւ դաստիարակելու նպատակով կը հաւաքէ տան մը մէջ եւ կը սկսի Սուրբ Գրային պատմութիւններով դաստիարակել զանոնք:

1780 Յուլիսէն սկսեալ ան յաջորդող Կիրակիներուն կը շարունակէ իր հաւաքները ունենալով օգնականներ, եւ հետզհետէ ընդարձակելով իր ձեռնարկը կը հաստատէ Կիրակնօրեայ դարոցներ այլ թաղերու մէջ եւս:

Ռոպէրթ իր թերթին միջոցաւ հանրութեան կը ծանօթացնէ իր դաստիարակչական այս կարեւոր շարժումը, եւ իր շուրջը կը բոլորէ համակիրներ: Ան կ'ունենայ նաեւ հակառակորդներ սակայն չի յուսահատիր այլ համբերութեամբ կը դիմագրաւէ իր դէմ ցցուող արգելքները, կը չքացնէ բոլոր խոչընդոտները եւ հաւատքով կը շարունակէ իր աշխատանքը բանալով յաջողութեան դուռը: Նոյնիսկ Անգլիոյ թագուհին իր հովանաւորութիւնը կը շնորհէ այս օգտաշատ ձեռնարկին եւ շուտով Կիրակնօրեայ դարոցները կը տարածուին երկրին ամէն կողմերը: Անոնց ջամբած կրօնաբարոյական դաստիարակութեան բերած բարիքները կը հրապուրեն նաեւ այլ երկիրներու առաջնորդները որոնք իրենց կարգին կը սկսին նոյն դրութիւնը կիրարկել իրենց երկիրներուն մէջ եւ այսպիսով Կիրակնօրեայ դարոցներ կը հաստատուին աշխարհի այլեւայլ շրջաններուն մէջ:

Իսկ Հայ ժողովուրդի՞ն մօտ...

Հայ եկեղեցւոյ պատմութենէն կը նկատենք որ մեր հայրապետները անտեղեակ ըլլալով հանդերձ, Կիրակնօրեայ դարոցի դրութենէն ունեցած են նման իտէալներ եւ իրենց ազատ ժամերուն հաւաքելով հայ մանուկներն ու պատանիները անոնց սորվեցուցած են աղօթք, շարական, սաղմոս, անոնց մէջ վառ պահելով Հայ եկեղեցւոյ աւանդութիւններն ու ազգային տոհմիկ բարի սովորութիւնները:

Կացութիւնը 1915-ի եղեռնէն ետք...

Հայաստանեայց Եկեղեցւոյ ծիրէն ներս Կիրակնօրեայ դարոցներու որդեգրումը անհրաժեշտութիւն դարձած է առ աւելաբար 1915-ի ջարդերէն եւ վերապրող հայոց տարագրութենէն ետք:

Նախապէս մեր հայրենի բնագաւառներու դարոցներուն մէջ լայն տեղ տրուած էր կրօնական դաստիարակութեան, իսկ Հայերէն լեզուի դասագիրքերը կը պարունակէին բազմաթիւ կրօնաշունչ պատմուածքներ: Սակայն տարագրութենէն ետք երբ հայութիւնը կը գաղթէ ի սփիւռս աշխարհի, նորակազմ դարոցները կը հարկադրուին գործադրել հիւրընկալ երկիրներու պետական ուսումնական ծրագիրները եւ կը ստիպուին կրճատել հայոց պատմութեան եւ կրօնի դասապահերը: Այս կացութեան մէջ աւելիով կը շեշտուի Կիրակնօրեայ դարոցներուն կարիքը:

Իր հօտին հետ գաղթական Մեծի Տանն Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոս եւ աթոռակից Բաբգէն Եպիսկոպոս Կիլիկիոյն . . .

1929 թուին համաշխարհային կիրակնօրեայ դպրոցներու Ամերիկեան ընկերութիւնը Լիբանանի Պալպէք քաղաքին մէջ համաժողով մը կը գումարէ: Համաժողովի պատասխանատուներու առաջարկով եւ Երուսաղէմի Հայոց Պատրիարք Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեանի եւ Կիլիկիոյ Կաթողիկոս Սահակ Բ. Խապայեանի հաւանութեամբ Բաբգէն Եպիսկոպոս կը մասնակցի համաժողովին ընկերակցութեամբ Արտաւազ Ծայրագոյն Վարդապետ Սիրմէեանի եւ Դիոնիսիոս Քահանայ Տրէզեանի իբրեւ ներկայացուցիչ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան:

Պալպէքի համաժողովը կ'որոշէ կիրակնօրեայ դպրոցներ հաստատել հայ մանուկներու համար՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ հովանաւորութեան ներքեւ ու այդ գործին վարիչ տնօրէնութեան պաշտօնին համար թեկնածու կը ներկայացնէ Պրն. Լեւոն Զէնեանը որ համաժողովը կազմակերպող ընկերութեան պատասխանատու էր եւ նաեւ ունէր համալսարանական ուսում իբրեւ մանկավարժ:

Սահակ Կաթողիկոս Պալպէքի համաժողովին հաղորդագրութիւնը ստանալով կ'օրհնէ առաջարկուած ձեռնարկը ու կ'արտօնէ կիրակնօրեայ դպրոցներ բանալ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերէն ներս, իսկ Պրն. Լեւոն Զէնեան կը նշանակուի Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցներու Վարիչ Տնօրէն եւ կը սկսի գործի 1929 թուին Հալէպի մէջ:

Աշխատանքը կը զարգանայ, Կիրակնօրեայ դպրոցը կը կազմակերպուի . . .

Լեւոն Զէնեան նախ իր շուրջը կը հաւաքէ նուիրեալ երիտասարդ-երիտասարդուհիներ եւ մասնաւոր դասընթացքներով զանոնք կը պատրաստէ կիրակնօրեայ դպրոցի ուսուցչութեան պաշտօնին, իսկ աշնան , Հալէպի ազգային առաջնորդարանի մանկապարտէզի սրահին մէջ պաշտօնապէս կը բանայ կիրակնօրեայ դպրոցը՝ որուն նշանաբանը կ'ըլլայ Յիսուս Քրիստոսի հետեւեալ պատգամը. «Թո՛ղ տուէք որ այդ մանուկները ինծի գան եւ մի՛ արգիլէք զանոնք» (ՄԱՐԿ. 1. 14):

Սահակ Կաթողիկոս իմաստութեամբ առաջքը առնելով այս կարեւոր գործի հակառակորդներուն, կը հաղորդակցի Բաբգէն Եպիսկոպոս Կիլիկիոյն հետ եւ 1930 Յունիս 28-ին կը հրապարակէ իր Կոնդակը ու կը յորդորէ եւ կը հրահանգէ որ ամէն տեղ կիրակնօրեայ դպրոցներ հաստատուին, հայ մանուկներու կրօնաբարոյական դաստիարակութեան համար:

1931-ին Վեհափառ Բաբգէն Աթոռակից Կաթողիկոս եւ Պրն. Լեւոն Զէնեան կը խմբագրեն Հայաստանեայց Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներու կանոնագիրը, որ վաւերացուելէ ետք կը ղրկուի բոլոր թեմերուն: Ներկայիս Սուրիոյ, Լիբանանի, Կիպրոսի, Քուէյթի, Յունաստանի, Գանատայի եւ Ամերիկայի զանազան շրջաններու գաղութները ունին կիրակնօրեայ դպրոցներ:

ՀԱԿԻՐԾ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ 2003- 2004 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ Եկեղեցույ Հոգաբարձութեան հովանաւորութիւնը: Հոգաբարձութեան ներկայացուցիչն է Պրն. Լեւոն Պոյաճեան:

ԿԱԶՄ


Կիրակնօրեայ Դպրոցի 2003 – 2004 տարեշրջանի իրենց կամաւոր մասնակցութիւնը բերին հետեւեալները

Իզապէլ Քուլութեան	Մանկապարտէզի Ա. կարգի դաստիարակ
Սալբի Բակլայեան	Մանկապարտէզի Բ. կարգի դաստիարակ
Վերժին Գեպթանճեան	Մանկապարտէզի Գ. կարգի դաստիարակ
Վերա կարապետեան	Նախակրթարանի Ա. կարգի դաստիարակ
Գարոլ Գաբթանճեան	Նախակրթարանի Բ. կարգի դաստիարակ
Երան Լոշխանեան	Նախակրթարանի Գ. կարգի դաստիարակ
Յասմիկ Նաճարեան	Նախակրթարանի Դ. կարգի դաստիարակ
Շողիկ Նաճարեան	Նախակրթարանի Ե. կարգի դաստիարակ
Աշխէն Իշխանեան	Նախակրթարանի Զ. կարգի դաստիարակ
Յասմիկ Գանաճեան	Երկրորդականի Ա. եւ Բ. կարգերու դաստիարակ
Թորոս Պապիկեան	Երկրորդականի Գ. եւ Դ. կարգերու դաստիարակ, Տնօրէն
Շաղիկ Պոյաճեան	Խմբագիր «Մաշտոցի Արձագանգ» ի
Բաֆֆի Պապիկեան	Webmaster
Նիկոլ Դանիէլեան	Լուսանկարիչ


Կազմը գումարեց ժողովներ որոնց ընթացքին արժարձուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներ եւ այլ նիւթեր:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2003-2004 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 91 է, իսկ շաբաթական ներկայութեան միջինն է 58 աշակերտ՝ բաժնուած 13 կարգերու:



Դասարանային արձանագրություն եւ միջին ներկայություն



Աշակերտության ներկայություն Իւրաքանչիւր Կիրակի

ԴՊՐՈՑԻՆ ԱՌՕՐԵԱՆ

2003-2004 տարեշրջանին կիրակնօրեայ դպրոցի առօրեայ լայտագիրը կ'ընթանայ Հայաստանեայց Եկեղեցույ Կիրակնօրեայ դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցուածքին համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր կը դասաւանդուին Ս. գրական, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին

Տէրունական աղօթքի, մաղթանքի եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները կը բաժնուին 3 խումբերու:

- Մանկապարտէզի Ա., Բ., Գ. եւ Նախակրթարանի Ա. Բ. եւ Գ. դասարաններ
- Նախակրթարանի Դ. Ե. եւ Զ. դասարաններ
- Երկրորդականի Ա., Բ., Գ. եւ Դ. դասարաններ

Պահը կ'ընթանայ հետեւեալ ձեւով՝

- Ոսկեղէն համարներու կամ Սաղմոսի ուսուցում:
- Բարոյալից պատմուածքներու պատմութիւն:
- Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում:
- Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն:

Դասարանային բաժին

Կը դասաւանդուի ըստ դասագիրքերու:

**ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՔՈՎ**

6 Սեպտեմբեր 2003	Ուսուցչական կազմը մասնակցեցաւ Գանատայի Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդին կողմէ կազմակերպուած Ուսուցիչներու միօրեայ Սեմինարի
7 Սեպտեմբեր 2003	Արձանագրութիւն
14 Սեպտեմբեր 2003	Տարեկիզբ եւ վերամուտ
21 Սեպտեմբեր 2003	Վարժարանի աշակերտութիւնը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդուեցաւ:
12 Հոկտեմբեր 2003	Թարգմանչաց տօնի յատուկ յայտագիր:
1 Նոյեմբեր 2003	Երկրորդականի Աշակերտներէն խումբ մը մասնակցեցաւ Գանատայի Ազգային առաջնորդարանի կազմակերպած երիտասարդական հաւաքին Kingstonի մէջ:
14 Դեկտեմբեր 2003	Դպրոցի աշակերտութիւնը գեղարուեստական յայտագրով իր մասնակցութիւնը բերաւ Ս. Յակոբի Տօնին առիթով կազմակերպուած հաւաքական ճաշի ընթացքին:
4 Յունուար 2004	Ամանորի եւ Ս. Ծննդեան զոյգ տօներու հանդիսութիւն, ուր տեղի ունեցաւ աշակերտներուն պատրաստած գեղարուեստական ելոյթը: Հանդիսութիւնը վերջ գտաւ հիւրասիրութեամբ եւ նուէրներու բաշխումով:
22 Փետրուար 2004	Վարդանանց եւ Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարութիւն:
25 Փետրուար 2004	Աշակերտներէն խումբ մը մասնակցեցաւ Պահքի Հսկումի ժամերգութեան եւ արտասանեցին «Հաւատով Խոստովանիմ» ը
3 Մարտ 2004	Աշակերտներէն խումբ մը մասնակցեցաւ Պահքի Հսկումի ժամերգութեան եւ արտասանեցին «Հաւատով Խոստովանիմ» ը
10 Մարտ 2004	Աշակերտներէն խումբ մը մասնակցեցաւ Պահքի Հսկումի ժամերգութեան եւ արտասանեցին «Հաւատով Խոստովանիմ» ը
17 Մարտ 2004	Աշակերտներէն խումբ մը մասնակցեցաւ Պահքի Հսկումի ժամերգութեան եւ արտասանեցին «Հաւատով Խոստովանիմ» ը
24 Մարտ 2004	Աշակերտներէն խումբ մը մասնակցեցաւ Պահքի Հսկումի ժամերգութեան եւ արտասանեցին «Հաւատով Խոստովանիմ» ը
31 Մարտ 2004	Աշակերտներէն խումբ մը մասնակցեցաւ Պահքի Հսկումի ժամերգութեան եւ արտասանեցին «Հաւատով Խոստովանիմ» ը
4 Ապրիլ 2004	Դպրոցս փակ էր Ծաղկազարդի առթիւ:
11 Ապրիլ 2004	Սբ. Զատկուայ յատուկ նշում:
30 Մայիս 2004	Դպրոցս փակ էր Dudemaine փողոցի փակ ըլլալուն պատճառաւ:
13 Յունիս 2004	Ամավերջի հանդէս:

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

ԺԱ. Տարի

Խմբագրական Կազմ

Խմբագիր՝

Աշխատակիցներ՝

Ծաղիկ Պոյաճեան

Յասմիկ Նաճարեան

Գարուլ Գաբթանճեան

Երան Լոշխաճեան

Ծողիկ Նաճարեան

Նիկոլ Դանիէլեան

Թորոս Պապիկեան

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք

www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն

«Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Ճաշու անտարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու Անտարանի հատուածները...

*Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը.-
Ուսուցիչներ՝ Իզապէլ Քուլլուրեան, Սալբի Բակլաեան,
Վերժին Գէպթանճեան, Վերա Կարապետեան, Երան
Լոշխաճեան, Գարուլին Գէպթանճեան, Յասմիկ Նաճարեան,
Ծողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան,
Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Կայքէջ՝ Րաֆֆի Պապիկեան,
Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Ծաղիկ
Պոյաճեան:*



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայց. Առաք. Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցի Պարբերաթերթ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 1

Սեպտեմբեր 2003

Կիր.	Բ2.	Գ2.	Դ2.	Ե2.	Ուր.	Շաբ.
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

6	Նիկիոյ Ա. Ժողովի 318 Հայրապետներուն
7	Բարեկենդան Ա. Խաչի Պահքի
8	Ա. Օր Ա. Խաչի Պահքի
14	Խաչվերաց «Տաղաւար»
15	Մենելոց
21	Հայաստանի Հանրապետութեան Տօն
23	Ս. Շուշան Վարդանի դուստր
27	Ս. Գէորգ
28	Վարագայ Ա. Խաչ

Արձանագրութիւն՝
7 Սեպտ. 10:30 - 1:00
Վերամուտ՝
14 Սեպտ. ժամը 10:30

Յիսուս ըսաւ
«Զգեցէք որ մանուկները ինծի գան,
արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ
այդպիսիներուն է Աստուծոյ
արքայութիւնը» Մարկոս 10.14

Մեր խօսքը

Կրկին հասաւ Սեպտեմբեր ամիսը: Ծնողներ, ուսուցիչներ, աշակերտներ կը պատրաստուին վերամուտին գնումներ, դպրոցական պիտույքներ, տարազներ, գոգնոց եւ այլ կարգադրութիւններ ընելով: Անհամար ժամեր կը տրամադրուին վերամուտի նիւթական պատրաստութեան ու երբեմն կը մոռցուի թէ դպրոցական վերամուտ մը կը կարօտի նաեւ հոգեկան եւ մտային պատրաստութեան:

Իւրաքանչիւր դաստիարակ, ծնողք թէ ուսուցիչ, գիտակցելով մանուկներու եւ պատանիներու մօտ իր ներդրումի կարեւորութեան, պարտի վերամուտի առիթը օգտագործել շահեկան խօսակցութիւններով կապ հաստատելու համար իր զակին հետ, յաջող եւ արդինաբեր դպրոցական տարի մը ապրելու հեռանկարով: Գիտական պրպտումներ ցոյց կու տան թէ ծնողներ, ծանրաբեռնուած ժամանակացոյց ունենալուն պատճառաւ, օրէ օր նուազ ժամանակ կ'անցնեն իրենց զաւակներուն հետ: Այս վերամուտը մեզի համար առիթ թող ըլլայ այս հակումին դէմ ելլելու եւ մեր զաւակներուն աւելի ժամանակ տրամադրելու, անոնց ծառայելով իբր խորհրդատու եւ դաստիարակ:

Այս վերամուտին, խօսինք մեր զաւակներուն ուսման կարեւորութեան մասին, դպրոցականի վայել կեցուածքի մասին որպէսզի անոնք ալ, իրենց փոքր տարիքին անդրադառնան թէ իւրաքանչիւր դպրոցական տարի, նախակրթարան կարգի թէ՛ երկրորդական, ամենօրեայ թէ՛ կիրակնօրեայ, իր կարեւորութիւնը ունի առողջ նկարագրի մը կերտման մէջ:

Տիրութեան կամ մտահոգութեան պահերու ընթերցում . . .

Եթէ կը սիրէք զիս, պիտի գործադրէք իմ պատուիրաններս: Եւ ես Հօրս պիտի աղաչեմ որ ուրիշ Մխիթարիչ մը տայ ձեզի, որպէսզի յաւիտեան ձեզի հետ ըլլայ: Ան Սուրբ Հոգին է, որ ճշմարտութիւնը կը յայտնէ: Աշխարհը չի կրնար զայն ընդունիլ, որովհետեւ ո՛չ կը տեսնէ եւ ո՛չ ալ կը ճանչնայ զայն: Բայց դուք կը ճանչնաք զայն, որովհետեւ ձեր մէջ պիտի մնայ եւ ձեր հետ պիտի ըլլայ:

Որք պիտի չձգեմ ձեզ. կրկին պիտի գամ ձեզի: Մօտ ատենէն այլեւս աշխարհը զիս պիտի չտեսնէ, բայց դուք պիտի տեսնէք զիս, որովհետեւ ես կ'ապրիմ եւ դուք ալ պիտի ապրիք: Այն օրը դուք պիտի գիտնաք թէ ես Հօրս մէջ եմ, դուք իմ մէջս եւ ես՝ ձեր մէջ: Ով որ կ'ընդունի իմ պատուիրաններս եւ կը գործադրէ զանոնք, ա՛ն է որ զիս կը սիրէ: Եւ Հայրս պիտի սիրէ զիս սիրողը: Ես ալ պիտի սիրեմ զայն եւ ինքզինքս յայտնեմ անոր:

Խաղաղութիւն կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խոռվիք ու մի՛ վախնաք: Լսեցիք ինչ որ ըսի ձեզի, թէ՛ «Ահա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի»: Եթէ զիս սիրէիք, ուրախ պիտի ըլլայիք որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան պատահիլը, որպէսզի երբ պատահին՝ այն ատեն հաւատաք:

Յովհաննէս 14.15-21, 27-29

Բովանդակութիւն

- Մեր խօսքը
- Տիրութեան կամ մտահոգութեան պահերու ընթերցում . . .
- Խաչ եւ եկեղեցական սպասներ
- Խաչվերաց
- Խաչեղբայր
- Սուրբ Գէորգ զօրավար
- Զո՞րն ասեմ կամ զո՞րն խոստովանիմ
- Վարագայ Սուրբ խաչի տօն
- Սեպտեմբեր ամսուան հայկական անուններ
- 23րդ տարեշրջանի ամավերջի հանդէս
- Ո՞րն է ճիշդ պատասխանը
 - Մանկապարտէզի անկիւն
 - Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն
 - Նախակրթարան Դ.Ե. եւ Զ. դասարաններու անկիւն
 - Երկրորդականի անկիւն
 - Ընդհանուրի անկիւն
- Կարճ լուրեր

Խաչ եւ եկեղեցական սպասներ

Խաչքուռ

Ցորենի հասկերէն կազմուած Խաչ:

Խաչվառ

Մեծ խաչ մը որ ձողի վրայ բարձրացած է եւ որ թափօրներու գլուխը կը տարուի երկու կողմերը կերոններով, այսինքն դպիր տղոց բռնած մոմերով շրջապատուած: Խաչվառը մէկ հատ է իսկ խաչալէմները զարդեր են եւ բազմաթիւ կրնան ըլլալ թափօրներու մէջ:




Սբ. Գրիգոր Լուսաւորչի խաչվառը 1448

Լանջախաչ

Կրօնական իշխանութեանց կողմէ բարձր գնահատութիւն մը, Սուրբ Խաչ մը, զոր արժանաւոր կրօնականներ կը կրեն իրենց կուրծքին:

Խաչկալ

Խորանի սեղաններու վրայ մեծկակ խաչ մը կեցնելու տեղ:



Սբ. Էջմիածնի մայր տաճարի Աւագ խորանի խաչկալը

Խաչալէմ

Թափօրներու առջեւէն տարուող նշան մը, որուն վրայ մանր խաչ մը կայ եւ ներքելը պատկերազարդ կամ ասեղնագործեալ զարդ մը կախուած է:

Խաչափայտ

Քրիստոսի խաչելութեան բուն խաչի փայտէն մանր կտոր մը կամ փշուր մը որ յատուկ զարդարուն ու ճաճանչաւոր անօթի մէջ զետեղուած է եւ ներքեւէն բռնուելու յարմար կոթ ալ ունի:

Խաչվերաց

Խաչի քո, Քրիստոս, երկիր պագանեմք

Խաչվերացը Հայաստանեայց եկեղեցույ տաղաւարներէն է եւ Սուրբ Խաչի նուիրուած տօներէն ամենէն աւելի կարեւորութիւն ստացած: Ան շարժական տօն մըն է: Կարգ մը եկեղեցիներ զայն կը յիշատակեն Սեպտեմբեր 14-ին, իսկ Հայց. Առաքելական Մայր եկեղեցին՝ Սեպտեմբեր 14-ի ամենէն մօտ կիրակին, որ կրնայ զուգադիպիլ Սեպտեմբեր 11-էն մինչեւ 17: Այս տարի Խաչվերացը կը տօնենք Սեպտեմբեր 14-ին, որովհետեւ ան Կիրակի օր մը կը զուգադիպի:

Խաչի նուիրուած Խաչվերացի տօնը Խաչը փառաբանելու, Խաչը հպարտութեամբ վեր բարձրացնելու տօն մըն է: Ան հիմնուած է պատմական յստակ եղելութեան մը վրայ որ տեղի ունեցած է Քրիստոնէութեան սկիզբի տարիներուն: Խաչը վեր առնելու այս առաջին եղելութիւնը կը վերագրուի Երուսաղէմի առաջին Եպիսկոպոս Յակոբ Առաքելին, որ ժողովուրդին դիմաց խաչը վեր առնելով օրհնեց զանոնք ըսելով «Խաչի քո, Քրիստոս, երկիր պագանեմք», այսինքն «Քրիստոս, Խաչիդ առջեւ կը ծնրադրենք ու կ'երկրպագենք»:



Խաչքար
12րդ - 13րդ դար
Վայոց Ձոր

Գիտէի՞ր թէ...

Ամէն տաղաւարներու պէս, Խաչվերացի տօնը նախորդող շաբաթը պահքի շաբաթ է, Երկուշաբթիէն մինչեւ Ուրբաթ: Զայն նախորդող Ծաբաթ օրը կը կոչուի Նաւակատիք, անուն մը որ կը տրուի Հայց. առաքելական եկեղեցույ հինգ տաղաւարները նախորդող իրաքանչիւր շաբաթ օրուան: Իսկ Խաչվերացը յաջորդող Երկուշաբթին, ինչպէս միւս տաղաւարները յաջորդող Երկուշաբթիները, Մտեւոց է:

Խաչեղբայր

Գիտէի՞ր թէ այն անձը որ Ս. Պսակի արարողութեան ընթացքին հարսին ու փեսային գլուխներուն վրայ խաչ կը բռնէ եւ որ մարդիկ կնքահայրի հետ կը շփոթեն կը կոչուի **խաչեղբայր**:

Սուրբ Գեորգ զօրավար

Անուն: Գեորգ
Ծնունդ: Կապադովկիայ
Ապրած ժամանակաշրջան: 284 թուականի շուրջ, երրորդ դարու աւարտին
Ասպարէզ: Հռոմէական բանակի զօրավար
Առաքելութիւն: Քրիստոնէական հաւատքի սիրոյն զոհուած մարտիրոս 303 թուին



Սուրբ Գեորգ Հռոմէական բանակի յարգուած ու սիրուած զօրավարներէն մէկն էր: Ան պաշտօնի վրայ էր Դիոկղետիանոս կայսրի օրերուն, 284-315 թուականներուն, կայսր մը որ ծանօթ է պատմութեան իր հակա-քրիստոնէական ծայրայեղութեամբ ու մոլեռանդութեամբ: Կայսրը երբ անդրադարձաւ թէ Քրիստոնէաներու թիւը օրէ օր կը շատնար, նոյնիսկ եթէ անոնք տակաւին բացալայտ ձեւով չէին յայտարարեր իրենց հաւատքը, հրովարտակով մը ժողովուրդը տեղեկացուց թէ բոլոր անոնք որոնք չեն

մատուցաներ չաստուածներուն, մահապատիժի կ'ենթարկուին: Հրովարտակը յստակօրէն կը մատնանշէր Քրիստոնէաները որոնցմէ մէկն էր կայսրին զօրավարներէն մէկը ի՛նքն իսկ, Գեորգ զօրավարը:

Զօրավարը լաւ կը ճանչնար քրիստոնէայ համայնքը ու գիտէր անոր անդամներուն բարեպաշտ ու խաղաղասէր նկարագիրը: Յանդուգն որոշում մը առաւ եւ կայսրի հրովարտակներէն մէկը վար առաւ հրապարակի մը վրայ ու զայն պատռեց, ըսել ուզելով թէ քրիստոնէաները կը մերժէին դրժել իրենց հաւատքը: Դէպքը աննշան չմնաց ու անոր հետեւանքները եղան սարսափելի: Ոչ միայն զօրավարը ի՛նք չարչարանքներու երթարկուելէ ետք գլխատուեցաւ, այլ նոյնպէս բոլոր անոնք որոնք զօրավարին գերբնական դիմադրականութիւնը տեսնելով դարձի եկան ու քրիստոնէութիւնը ընդունեցին տեղույն վրայ: Անոնց շարքին էր նոյնիսկ կայսրուհի Ալեքսանտրան:

Գիտէի՞ր թէ...

Ըստ Հրաչեայ Աճառեանի «Հայոց Անձնանունների Բառարան»-ին, Գեորգ բառին իմաստն է երկիր մշակող կամ՝ հողագործ:

Գեորգ զօրավար հայ ծագում չունի բայց հայ ժողովուրդը հայացուցած ու մեծ սիրով որդեգրած ու ազգայնացուցած է զինք: Անոր անունով հայկական եկեղեցիներ կերտուած են (Գանատա, Միացեալ Նահանգներ), ինչպէս նաեւ բազմաթիւ երեխաներ մկրտուած:

Ըստ քեզի...

Ի՞նչ ձեւով կարելի է Սուրբ Գեորգի յիշատակը վառ պահել:

Զո՞րն ասեմ կամ զո՞րն խոստովանիմ (Ո՞ր մէկը ըսեմ կամ ո՞ր մէկը խոստովանիմ)

Պատարագի ընթացքին, հաւատացեալներ, նախքան Սուրբ Հաղորդութիւն ստանալը, հաւաքաբար կը խոստովանին որպէսզի արձակուին իրենց գործած մեղքերէն ու արժանի ըլլան հաղորդուելու Յիսուսի եւ Սուրբ Խորհուրդին հետ:

Այս խոստովանանքը կ'արտասանէ դպիրը ու անոր իւրաքանչիւր պարբերութենէ ետք, պարարագ մատուցանող Քահանան կ'ըսէ «Աստուած թողութիւն շնորհեսցէ», այսինքն Աստուած ձեզ թողութիւն թող շնորհէ:

Խոստովանանքը կը սկսի ընդհանրութիւններ պարբակող պարբերութեամբ մը ապա, յաջորդող իւրաքանչիւր պարբերութեան մէջ, հաւատացեալը կը մանրամասնէ եւ Աստուծոյ առջեւ կը խոստովանի թէ ի՞նչ ձեւերով մեղանշած է:

«Մաշտոցի Արձագանգ»-ի այս թիւով կը ներկայացնենք Խոստովանանքի առաջին պարբերութիւնը ինչպէս նաեւ այն բաժինը որ կը վերաբերի հաւատացեալին լեզուով, այսինքն խօսքերով գործած մեղքերուն: Այս տողերը մեզի կը ներկայացնեն ցանկ մը այն կեցուածքներուն որոնցմէ խուսափելով քայլ մը եւս մօտեցած կ'ըլլանք Աստուածահաճոյ կենցաղին:

Ընդհանրութիւններու պարբերութիւն.-

Մեղանշեցի Ամենասուրբ Երրորդութեան՝ Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին դէմ: Մեղաւոր եմ Աստուծոյ առջեւ: Բոլոր գործած մեղքերս կը խոստովանիմ Աստուծոյ առջեւ, Սուրբ Աստուածածինին եւ բոլոր սուրբերուն առջեւ, ինչպէս նաեւ քու առջեւդ, հա՛յր սուրբ: Մեղանշեցի՝ մտածումով, խօսքով եւ գործով. երբեմն կամաւորաբար, երբեմն ակամայ, երբեմն գիտակցաբար եւ երբեմն անգիտակցաբար:

Խօսքով գործուած մեղքերու պարբերութիւն.-

Մեղանշեցի՝ լեզուովս, չարախօսութեամբ, ստախօսութեամբ, շողոքորթութեամբ, քսութեամբ, դատարկաբանութեամբ եւ ծաղրով, զրպարտութեամբ, պառակտիչ խօսքերով ու անէծքով: Տրտնջալով, դժգոհելով, բամբասելով եւ հայհոյելով՝ մեղանշեցի Աստուծոյ դէմ:

Խոստովանանքի բառային փոքրիկ աշխատանք.-
Գտիր հետեւեալ բառերուն իմաստը

Մեղանշել
Շողոքորթութիւն
Քսութիւն
Դատարկաբանութիւն
Զրպարտութիւն
Պառակտիչ
Բամբասել


Ինքնաքննութեան պահ, առանձին թէ խմբային...
Դուն քեզ հարց տուր թէ արդեօ՞ք պատահած է որ չարախօսես, ուրիշը զրպարտես, սուտ խօսիս, հայհոյես: Եթէ այո, ե՞րբ, ինչո՞ւ, ինչպէ՞ս: Եթէ նոյն կացութիւնը ստեղծուի, կը կարծե՞ս որ կրնաս դուն քեզ զսպել չարախօսութիւն, զրպարտութիւն, ստախօսութիւն կամ հայհոյանք չընելու համար: Ուրիշ ի՞նչ ձեւով կրնաս շարժիլ այդ պարագային:

Վարագայ Խաչի տօն

Վարագայ Խաչի տօնին պատմությունը կը սկսի Սուրբ Հռիփսիմէի օրերով:

Սուրբ Հռիփսիմէ եւ իր հետետորդ կոյսերը շրջան մը ապրած են Վարագայ լեռներու բարձունքներուն վրայ: Հոն անոնք գաղտնաբար ունեցած են աղօթակիցներ եւ հաւատացեալ հետետորդներ: Սակայն, փախուստ տալու համար Հոռոմէացի կայսրի հալածանքներէն կը ստիպուին լքել այդ վայրը ու մեկնիլ անվերադարձ: Մեկնումի պահուն Ս. Հռիփսիմէ իր կուրծքի խաչը կը յանձնէ աղօթակից հաւատաւորի մը որպէսզի զայն պահէ Գալիլիա կոչուած լեռներուն մօտ, ուր միասին աղօթելու սովորութիւն ունէին: Խաչը կը պահուի ու անոր տեղը կը մոռցուի:

Տարիներ ետք, երկու ճգնաւորներ, Թողիկ եւ Յովէլ, Վարագայ լեռներուն մօտ կու գան աղօթքի: Յանկարծ լուսաւորութիւն մը կը յայտնուի, կեդրոնանալով Վարագայ վանքի Սուրբ Սեղանին վրայ: Ծգնաւորները կը շտապեն հետեւիլ լոյսին եւ կ'ուղղուին դէպի վանք. կը մտնեն տաճար ու ահա կը նկատեն լոյսին տակ խաչ մը, հանգչած Ս. Սեղանին վրայ: Ծգնաւորները կասկած չեն ունենար թէ այդ Սուրբ Հռիփսիմէին ձգած Խաչն էր: Անմիջապէս լուր կը դրկեն օրուան կաթողիկոս Ներսէս Գ. Շինող Հայրապետին եւ հաւատացեալ ժողովուրդին որոնք խումբ առ խումբ կ'ուղղուին դէպի վանք Վարագայ Սուրբ Խաչը տեսնելու: Կաթողիկոսը ինք եւս կու գայ դէպի վանքը, իր աղօթքներով ժողովուրդին հետ բաժնելու համար Խաչի յայտնութեան երջանկալի այս պատահարը:



Սբ. Հռիփսիմէ, կառուցուած 618թ Կոմիտաս Կաթողիկոսի օրով

Վարագայ վանքի դպրոց

Հիմնուած է Մկրտիչ Խրիմեան Հայրիկի կողմէ, 1857-ին: Հոն տպագրուած է Խրիմեան Հայրիկի «Արծուի Վասպուրական» թերթը: Դպրոցի շրջանաւարտներէն է Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանց: Դպրոցէն ներս դասաւանդող Ուսուցիչներէն է վիպասան Ռաֆֆին:

Սեպտեմբեր ամսուան
հայկական անուններ

Խաչատուր, խաչիկ, խաչեր,
խաչօ, խէչօ, խաչերես,
Ռեհան, Գէորգ, Թողիկ,
Յովէլ:

23րդ Տարեշրջանի ամավերջի հանդես

Մոնթրեալի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցի 2002-2003 (23րդ) տարեշրջանի ամավերջի հանդեսը տեղի ունեցավ Կիրակի, 8 Յունիս 2003 ի կեսօրէ ետքը, ժամը 1:30 ին, Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի Բաստրմանեան սրահին մէջ, շուրջ հարիւր-յիսուն ծնողներու եւ ընտանիքներու անդամներու ներկայութեան:

Հանդեսը իր ներկայութեամբ կը պատուէր արժանապատի Տէր Արմէն աագ Քահանայ Իշխանեանը:



Հանդեսը բացուեցաւ Տէրունական աղօթքի, մաղթանքի եւ Հայաստանեայց Եկեղեցույ Կիրակնօրեայ դպրոցներու Մաղթերգի յտնկալս ունկնդրութեամբ:

Նախ. Գ. եւ Դ. դասարանի աշակերտները ներկայացուցին 150-րդ Սաղմոսը եւ «Հաւատամք»ը:

Ապա Բողոք, Կոկոն, Ծաղիկ, Նախ. Ա. եւ Բ. դասարաններու աշակերտները ելոյթ ունեցան աղօթքներով եւ դաշնակի ընկերակցութեամբ՝ երգերով եւ շարականներով. անոնք իրենց անմեղ եւ մանկական արտայայտութիւններով եւ ձայնով ներկաներուն փոխանցեցին Սուրբ Աւետարանի Խօսքը:





Նախ. Ա. եւ Բ. դասարանները ներկայացուցին Տասնաբանեայ Պատուիրանը, ապա Նախ. Բ. դասարանը ներկայացուց գոյգ մը աղօթք:

Յայտագրի մնացեալ մասով Նախ. Գ. եւ Դ. դասարանները կենդանի պատկերով ներկայացուցին Յովսէփի պատմութիւնը: Նախ. Ե. եւ Զ. եւ Երկր. Ա. Բ. եւ Գ. աշակերտները ներկայացուցին Սուրբ Պատարագէն բաժիններ եւ երգեցին շարականներ դաշնակի ընկերակցութեամբ:

Ապա խօսք առաւ Կիրակնօրեայ դպրոցի Տնօրէն արն. Թորոս Պապիկեան որ հակիրճ կերպով անդրադառնալէ ետք Դպրոցի ընդհանուր կեանքին մասին, շեշտը դնելով յա տուկ կերպով անդրադարձաւ Կիրակնօրեայի պարբերաթերթ «Մաշտոցի Արձագանգ» ի տասնամեակին առթիւ լոյս ընծայուած տասը թիւերուն, որ բացառիկ իրականացում մըն էր Կիրակնօրեային համար: Ոչ միայն ան կանոնաւորապէս լոյս տեսաւ ամէն ամիս եւ մուտք գործելով աշակերտներուն տունները կարդացուեցաւ աշակերտներուն ծնողներուն կողմէ, այլ՝ դրուելով Կիրակնօրեայ Դպրոցի կայքէջ www.sourphagop.org ին վրայ, մտաւ կայքէջ այցելող բոլոր ընտանիքներու տուններէն ներս Հիւսիս Ամերիկայէն մինչեւ Միջին Արեւելք: Ան յիշեց անունները Մաշտոցի Արձագանգին մասին արտայայտուած հեղինակաւոր ընթերցողներու, որոնց արտայայտութիւնները տեղ գտած են Մաշտոցի Արձագանգի Ժ. տարուան տասը թիւերուն 170 էջնոց հաւաքածոյին մէջ, որ դրան մուտքին ցրուեցաւ ժողովուրդին:

Պարոն Պապիկեան վեր առաւ այն իրականութիւնը որ Կիրակնօրեայ Դպրոցի Կայքէջը միայն հայերէնով է եւ «Մաշտոցի Արձագանգ»ը իր տեսակին մէջ եզակի է: Այս իրականացումը կը պարտի Կիրակնօրեայ Դպրոցի ազնիւ ուսուցչական կազմին եւ «Մաշտոցի Արձագանգ»ի կամաւոր խմբագրական կազմին:

Ան իր խօսքը փակեց ըսելով որ տակաւին շատ բան կայ ըլլալիք եւ կոչ ըրաւ ծնողներուն որ իրենց մասնակցութիւնը բերեն Կիրակնօրեայ Դպրոցի 2003 – 2004 տարեշրջանի բոլոր աշխատանքներուն, յիշեցնելով թէ 2004 թուականը 75 ամեակն է «Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներ»ու : Ան ըսաւ «այս սրահէն մեկնելու պահուն թող ամէն մարդ իր ձեռքը իր ժամանակի «cheque» ի տետրակին նետէ, եւ ինձի ըսէ թէ որքան ժամանակ պիտի տրամադրէ մեր Կիրակնօրեայ Դպրոցին» եւ մէջբերեց Յիսուսի խօսքը՝ «Ժամանակը ծախու առէք» ըսելով «Կիրակնօրեայ Դպրոցին տրամադրուած ժամանակը 'ծախու առնուած ժամանակ' է»:



Ան ջերմօրէն շնորհակալութիւն յայտնեց Մաշտոցի Արձագանգի խմբագրական կազմին եւ

ուսուցչուհիներուն իրենց տարած աշխատանքին համար եւ բեմ հրաւիրեց զանոնք ինչպէս նաեւ Արժանապատի Տէր Արմէն աւագ քահանայ Իշխանեանը, որուն ներկայութեան գեղեցիկ ծաղկեփունջ մը յանձնուեցաւ իւրաքանչիւրին:



Նուէրներ տրուեցան այն աշակերտներուն որոնք տարեշրջանի 36 կիրակիներէն առնուազն 35-ին մասնակցած էին դպրոցի գործունէութիւններուն, ինչպէս նաեւ «Հաւատամք»ը գոց սորվող աշակերտներուն:

Տէր Արմէնը, նախ քան հանդէսը փակելը, իր սրտի խօսքին մէջ բարձր գնահատեց ուսուցչական կազմին տարած գործը որ մեծ զոհողութիւն կ'ենթադրէ, երբ անոնք իրենց միակ ազատ օրը՝ Կիրակին կը տրամադրեն մեր երեխաներու հոգեւոր դաստիարակութեան: Ան կոչ ըրաւ որ մենք որպէս հայ, հպարտ զգանք մենք զմեզ մեր քրիստոնէայ հաւատքով եւ տարածենք այս գաղափարը մեր շուրջը, մեր բոլոր հայրենակիցներուն, որովհետեւ մեր խօսքով եւ գործով է որ կրնանք օրինակ դառնալ մեր զաւակներուն եւ զօրացնել անոնց մէջ քրիստոնէական հաւատքը: Ան թելադրեց որ բոլորը, յաջորդ տարի եւս իրենց զաւակները արձանագրեն Կիրակնօրեայ դպրոց:

Հանդէսը փակուեցաւ քահանայ հօր Պահպանիչով եւ ընդհանուրին կողմէ երգուած Կիլիկիա երգով:

Հանդէսէն ետք ներկաները հիւրասիրուեցան զովացուցիչով եւ կարկանդակներով պատրաստուած ծնողներու կողմէ:

ԾՆՈՂՔ ՄԸ



Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր ըստ Դուկաս 9.10-11 ին

Առաքեալները, ըրած, Բեթսայիդա, հետեւեցաւ, քարոզել, արքայութեան, բժշկեց

----- վերադարձան եւ ի՛նչ որ ----- էին՝ պատմեցին
Յիսուսի: Յիսուս զանոնք առաւ եւ քաշուեցաւ -----
քաղաքին մօտիկ ամաշի վայր մը: Ժողովուրդը երբ գիտցաւ՝
----- իրեն: Յիսուս ընդունեց զանոնք եւ սկսաւ անոնց
----- Աստուծոյ ----- մասին: Իսկ անոնք որոնք
բժշկութեան պէտք ունէին՝ -----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ե՞րբ տեղի ունեցաւ Վարդանանց պատերազմը:

- ա.- 541
- բ.- 451
- գ.- 646
- դ.- 459

2.- Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը ե՞րբ պետական կրօն հռչակուեցաւ, եւ ո՞ր թագաւորի օրով:

- ա.- 321 Տրդատ Գ.
- բ.- 301 Տրդատ Բ.
- գ.- 301 Տրդատ Գ.
- դ.- 321 Տրդատ Ա.

3.- Աստուած որո՞ւ տուաւ տասը պատուիրանները:

- ա.- Եղիայի
- բ.- Պետրոսի
- գ.- Պօղոսի
- դ.- Մովսէսի

5.- Յիսուս յարութենէն քանի՞ օր ետք երկինք համբարձաւ:

- ա.- 40 օր ետք
- բ.- 30 օր ետք
- գ.- 60 օր ետք
- դ.- 10 օր ետք

6.- Յիսուս ո՞ր թագաւորին օրով ծնաւ:

- ա.- Հերովդէս
- բ.- Տրդատ
- գ.- Արքեղայոս
- դ.- Ներոն

7.- Յիսուս ո՞ր աղօթքը սորվեցուց:

- ա.- Իմաստութիւն
- բ.- Տէրունական
- գ.- Ճաշակեսցու
- դ.- առաւօտ լուսոյ

8.- Ո՞ր առաքեալը առանց տեսնելու չուզեց հաւատալ Յիսուսի յարութեան:

- ա.- Յովհաննէս
- բ.- Պետրոս
- գ.- Մատթէոս
- դ.- Թովմաս

9.- Աստուածաշունչը քանի՞ կտակարաններէ կը բաղկանայ:

- ա.- երկու
- բ.- երեք
- գ.- չորս
- դ.- քսաներթը

10.-Ո՞վ ազատեցաւ ջրհեղեղէն:

- ա.- Իսահակ եւ ընտանիքը
- բ.- Մովսէս եւ ընտանիքը
- գ.- Յակոբ եւ ընտանիքը
- դ.- Նոյ եւ ընտանիքը

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Յիսուս ի՞նչ անունով ծանօթ է
նաեւ:

ա.- Մասիս

բ.- Փրկիչ

գ.- Փրկարար

դ.- Հոգի

2.- Ո՞ր առաքեալը ուրացաւ Յիսուսը:

ա.- Մատթէոս

բ.- Պետրոս

գ.- Յովհաննէս

դ.- Յուդա

3.- Ո՞րոնք եղած են Յիսուսի
առաքեալները:

ա.- Թովմաս

բ.- Գրիգոր

գ.- Յովհաննէս Մկրտիչ

դ.- Մատթէոս

ե.- Մարկոս

զ.- Թադէոս

է.- Մովսէս

4.- Ի՞նչ կը կոչուի Աւագ Ուրբաթի
նախորդող Յիսուսի Երուսաղէմ մուտքի
օրը:

ա.- Տեառնընդառաջ

բ.- Ծաղկազարդ

գ.- Այլակերպութիւն

դ.- Միջինք

5.- Որո՞նք եղան հայոց առաջին
լուստորիչները:

ա.- Մեսրոպ եւ Սահակ

բ.- Պետրոս եւ Պողոս

գ.- Թադէոս եւ Բարթողիմէոս

դ.- Յովհաննէս եւ Յակոբոս

6.- Յիսուսի Յարութիւնէն 50 օր ետք ի՞նչ
կը տօնենք:

ա.- Համբարձում

բ.- Այլակերպութիւն

գ.- Խաչվերաց

դ.- Հոգեգալուստ

7.- Ո՞վ է հայոց առաջին կաթողիկոսը:

ա.- Գրիգոր Նարեկացի

բ.- Սահակ Պարթեւ

գ.- Գրիգոր Լուսաւորիչ

դ.- Խրիմեան Հայրիկ

8.- Հետեւեալ տօներէն ո՞ր մէկը
Տաղաւար է:

ա.- Պայծառակերպութիւն

բ.- Յովհաննու Կարապետ

գ.- Քառասուն Մանուկ

դ.- Թադէոս Բարթողիմէոս

9.- Ի՞նչ էր Յիսուսի առաջին Հրաշքը:

ա.- Հացեր եւ ձուկեր շառցուց:

բ.- Կանաչի հարսանիքը

գ.- Կոյրի մը աչքերը բացաւ:

դ.- Բորոտներու բժշկութիւնը

10.- Գիրերու գիւտի ժամանակ ո՞վ էր
հայոց թագաւորը:

ա.- Տրդատ Գ.

բ.- Վրամշապունի

գ.- Արտաշէս

դ.- Մեծն Տիգրան

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն**

1.- Ո՞ր տարին հիմնուեցաւ
«Հայաստանեայց Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներ»ը:

- ա.- 1900
- բ.- 1929
- գ.- 1979
- դ.- 1980

2.- Ո՞ր տարին հիմնուեցաւ
Մոնթթէալի Հայաստանեայց
Առաքելական Սուրբ Յակոբ Մայր
Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը:

- ա.- 1900
- բ.- 1929
- գ.- 1979
- դ.- 1980

3.- Աստուածաշունչի ո՞ր 2 գիրքերուն
մէջ չենք հանդիպիր «Աստուած»
բառին:

- ա.- Եզրաս
- բ.- Նէեմեայ
- գ.- Եսթեր
- դ.- Երգ Երգոց

4.- Ո՞ր կը կարդանք «Նոյ» ին
պատմութիւնը:

- ա.- Ծննդոց
- բ.- Ելից
- գ.- Ղեւտացոց
- դ.- Թուոց

5.- Ո՞ր կը կարդանք «Յովսէփ»ին
պատմութիւնը:

- ա.- Ծննդոց
- բ.- Ելից
- գ.- Ղեւտացոց

դ.- Թուոց

6.- Ո՞ր կը կարդանք «Տաւր
Պատուիրաններ»ը:

- ա.- Ծննդոց
- բ.- Ելից
- գ.- Ղեւտացոց
- դ.- Թուոց

7.- Ո՞վ է Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

- ա.- Գարեգին Ա.
- բ.- Գարեգին Բ.
- գ.- Վազգէն Ա.
- դ.- Խորէն Ա.

8.- Ո՞վ է Մեծի Տանն Կիլիկիոյ
Կաթողիկոսը:

- ա.- Գարեգին Ա.
- բ.- Գարեգին Բ.
- գ.- Արամ Ա.
- դ.- Զարեհ Ա.

9.- Ո՞վ է Երուսաղէմի Պատրիարքը:

- ա.- Թորգոմ Արքեպիսկոպոս
- բ.- Արտակ Արքեպիսկոպոս
- գ.- Զարեհ Արքեպիսկոպոս
- դ.- Կորիւն Արքեպիսկոպոս

10.- Ո՞վ է Կոստանդնուպոլսոյ
Պատրիարքը:

- ա.- Մեսրոպ Մութաֆեան
- բ.- Վոսմշապուհ
- գ.- Արտաշէս
- դ.- Տիգրան

Ո՞րն է ճիշդ պատասխանը Ընդհանուրի անկիւն

1- Յիսուսի ո՞ր առակին մէջ թագաւոր մը կը գթայ իր ծառային ու անոր պարտքերը կը ջնջէ.-
 ա- Բարի Սամարացին
 բ- Աններող ծառան
 գ- Գթացող թագաւորը
 դ- Այդպիսի առակ չկայ

2- Տաղտկացող անձը.-
 ա- կը ցաւի
 բ- կը խաբէ
 գ- կը ձանձրանայ
 դ- երջանիկ է

3- Ո՞ր մէկը հայկական վանքի մը անունը չէ.-
 ա- Հրազդան
 բ- Գանձասար
 գ- Ամարաս
 դ- Գեղարդ

4- Ամբողջացուր խաչատուր Աբովեանի այս տողը.-
 «Տա՛սը լեզու սորվեցէք, բայց ձեր լեզուն, ձեր հաւատքը...»
 ա- ուրիշին չսորվեցնէք
 բ- չմոռնաք
 գ- հաստատուն բռնեցէք
 դ- ամենէն առաջ դասեցէք

5- Դուռը բաց մարդը.-
 ա- մոռացկոտ է
 բ- հիւրասէր է
 գ- կը տաքնայ
 դ- ամէն ինչ կը յայտնէ

6- Հայկական եկեղեցիի շէնքը կը զանազանուի ուրիշներէն.-
 ա- Լայն շրջաբակերով
 բ- պատերէն կախուած սուրբերու նկարներով
 գ- վեղարաձեւ գմբեթով
 դ- վերի բուր կէտերով

7- Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յարարիչն...
 ա- երկնի եւ երկրի
 բ- երկրի եւ երկնի
 գ- երկրի եւ երկրի
 դ- երկնի եւ երկնի

8- Յովհաննէս Թումանեանի «Կիկոս» պատմութեան մէջ, հայրը ունէր...
 ա- Երկու աղջիկ
 բ- աղջիկ մը ու տղայ մը
 գ- երեք տղայ
 դ- երեք աղջիկ

9- Կոմիտասի «Հորովել» երգին մէջ, մշակը կը խօսի...
 ա- իր էջին
 բ- իր եզին
 գ- իր կովուն
 դ- Հորովել երգը մշակի երգ չէ

10- Չէք կրնար ծառայել Աստուծոյ որքան ատեն որ կը ծառայէք... (Մատթ. 6.24)
 ա- չարին
 բ- հայրենիքին
 գ- կրակին
 դ- դրամին

Կարճ Լուրեր

Կիրակնօրեայ Դպրոցի 2003-2004 տարեշրջանի Սեպտեմբեր ամսուայ ժամանակացույցը

Սեպտեմբեր 7 ժամը 10:30 - 1:00 Արձանագրութիւն

Սեպտեմբեր 14 ժամը 10:30 ին Վերամուտ

Սեպտեմբեր 21 Սբ. Հաղորդութիւն

Ցաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել Թորոս Պապիկեանին՝ (514) 956-1277

Մաշտոցի Արձագանգի այս թիւին իրենց մասնակցութիւնը բերին.-
Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան, Գարուիկ Գէպթանճեան,
Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս Պապիկեան:

«Ճաշու աւետարան»ը
Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը
Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

*Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը.-
Ուսուցիչներ՝ Մարիա Քէօսէյեան, Անի Գըլնճեան, Սայրի Բակլաեան, Վերա Կարապետեան, Երան Լոշխաճեան, Գարուիկ Գէպթանճեան, Յասմիկ Նաճարեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան,
Յասմիկ Գանաճեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Կայքէջ՝ Բաֆֆի Պապիկեան, Լուսանկարիչ՝
Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Շաղիկ Պոյաճեան:*



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայց. Առաք. Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցի Պարբերաթերթ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 2

Հոկտեմբեր 2003

Կիր.	Բշ.	Գշ.	Դշ.	Եշ.	Ուր.	Շաբ.
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	

4	Քրիստոսի 72 աշակերտներու տօն
11	Ս. Թարգմանչաց վարդապետաց
18	Չորս Ս. Աւետարանիչներու տօն
26	Գիւտ խաչի

Յիշեցէ՛ք, սիրելի՛ եղբայրներս, որ
աւելի պատրաստակամ պէտք է
ըլլաք լսելու, քան՝ խօսելու:

Դիւրաւ մի՛ բորբոքիք: Գիտցէք թէ
մեր բարկանալովը չենք կրնար
Աստուծոյ արդար ծրագիրը
իրականացնել:

անով հպարտանալը:

Թարգմանչաց տօնը այս տարի թող ըլլայ յատկապէ՛ս Աստուածաշունչի ծանօթացման տօն եւ մեզմէ իրաքանչիւրը թող պարտք զգայ ձեռք ձգել - եթէ տակաւին չունի օրինակ մը- հայերէն Աստուածաշունչ մը, բանալ զայն, կարդալ, ծանօթանալ, ճանչնալ: Մենք մեր աշակերտներուն կը ծանօթացնենք Աստուածաշունչին: «Մաշտոցի Արձագանգ»-ի միջոցաւ Աստուածաշունչը կը հասցնենք մեր ընթերցողներուն: Դուն ալ, սիրելի ընթերցող, քու կարգիդ մեր թարգմանիչներուն վաստակի արդիւնք՝ հայերէն Աստուածաշունչը ծանօթացուր շրջապատիդ:

Կարդա՛ Աստուածաշունչը առ ի յիշատակ առաջին թարգմանիչներուն

Հոկտեմբեր ամսուան ամենէն աւելի յիշատակուող տօնը Թարգմանչաց տօնն է: Իրաքանչիւր կրօնական թէ ազգային տօնի պէս, Թարգմանչացի առթիւ եւս կը դրուի եզակի այս հարցումը, թէ՛ ի՞նչ ձեւով վառ կրնանք պահել այսօր, այդ տօնին յիշատակը:

Թարգմանչացը հայկական մշակույթի ընդհանուր տօն է: Գիրերու գիտի, հայերէնի թարգմանութիւններու, հայերէն լեզուով ստեղծագործութիւններու, հայ դպրոցներու կառուցման ընդհանուր տօն: Յստակ է թէ թարգմանչաց տօնը վառ պահելու ամենէն ազդու ձեւը հայերէն լեզուն պահպանելն է, սորվիլը, ծաղկեցնելը:

Սակայն կայ նաեւ այլ ձեւ մը որ պատիւ կը բերէ մեր թարգմանիչներուն, որոնք հայերէն գիրերու գիտէն անմիջապէս ետք լծուեցան Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան, եւ այդ թարգմանութիւնը եղաւ թարգմանութիւններուն առաջինը, գեղեցկագոյնը, սրբագոյնը, «թագուհին»:

Ո՞րն է թարգմանիչներու յիշատակը փառաբանելու լաւագոյն ձեւը եթէ ոչ իրե՛նց իսկ կատարած թարգմանութեան հանդէպ ցուցաբերուող հետաքրքրութիւնը, անոր ծանօթանալու, զայն ճանչնալու տրամադրութիւնը եւ մանաւանդ զայն սիրելն ու

Աստուծոյ խօսքը լսել եւ կատարել

Յիշեցէ՛ք, սիրելի՛ եղբայրներս, որ անլի պատրաստակամ պէտք է ըլլաք լսելու, քան՝ խօսելու: Դիրաւ մի՛ բորբոքիք: Գիտցէք թէ մեր բարկանալովը չենք կրնար Աստուծոյ արդար ծրագիրը իրականացնել: Հետեւաբար ձեզմէ թօթափեցէ՛ք ամէն աղտոտ սովորութիւն ու չար ցանկութիւն, եւ հեզութեամբ ընդունեցէք ձեր մէջ սերմանուած Աստուծոյ խօսքը, որ կրնայ ձեր հոգիները փրկել:

Այս պատուիրանները լսելով մի՛ գոհանաք, այլ՝ կատարեցէ՛ք զանոնք. այլապէս դուք ձեզ խաբած կ'ըլլաք: Որովհետեւ ով որ պարզապէս կը լսէ պատուիրանը բայց չի կատարեր, կը նմանի անոր՝ որ ուշադրութեամբ ինքզինքը կը դիտէ հայելիին մէջ. հազիւ հայելիէն հեռացած, ա՛լ չի տեսներ ինքզինք եւ կը մոռնայ իր ինչպէս ըլլալը: Մինչդեռ ան որ իր աչքերը կը յառէ Աստուծոյ ազատարար ու կատարեալ Օրէնքին եւ անոր մէջ կը յարատեւէ, այնպիսին լսելէ ետք չի մոռնար, այլ կը գործադրէ զայն. անհկա երանելի պիտի ըլլայ կատարելուն համար:

Ով որ ինքզինք բարեպաշտ կը սեպէ եւ սակայն իր լեզուին սանձ չի դներ, անհկա ինքզինք կը խաբէ, որովհետեւ անօգուտ է իր բարեպաշտութիւնը: Հօր Աստուծոյ համար անկեղծ եւ իսկական բարեպաշտութիւնը՝ կարօտութեան մէջ եղող որբերուն եւ այրիներուն այցելու եւ օգնական ըլլալն է, եւ աշխարհի մէջ ապրելով հանդերձ՝ ինքզինք անարատ պահելը:

Յակոբոս 1.19-27



Աստուածաշունչի Հայերէն ձեռագիր 1265 Թ

Բովանդակութիւն

- Կարդա՛ Աստուածաշունչը առ ի յիշատակ առաջին թարգմանիչներուն
- Աստուծոյ խօսքը լսել եւ կատարել
- Ասք օշականցի հայունիի ուխտին մասին
- Մեստոպ Մաշտոց
- Հայ գրչութեան կեդրոններ. Տաթևի վանքը
- Օշական գիղի Մեստոպ Մաշտոց եկեղեցին
- Ծանօթանանք Աստուածաշունչին
- Գիտ խաչ
- Խաչբառ
- խօսենք հայերէն
- Մեստոպ Մաշտոց
- Երկայնաւուն որդը եւ իր բառարանը
- Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտէզի անկիւն
Նախակրթարան Ա. Բ. Գ. ի անկիւն
Նախակրթարան Դ. Ե. Զ. ի անկիւն
Երկրորդականի անկիւն
Ընդհանուրի անկիւն
- Սեպտեմբեր ամսուան պատասխաններ եւ մասնակցողներ
- Կարճ լուրեր կիրակնօրեայէն

Ասք Օշականցի հայունիի ուխտին մասին

Ահա դրուագ մը որ կ'արտայայտէ հայ ժողովուրդին պաշտամունքը Մեսրոպ Մաշտոցի ստեղծած հայերէն գիրերուն հանդէպ:

Կ'ըսուի թէ օշականցի հայունի մը Աստուծոյ խնդրանք մը կը ներկայացնէ եւ ուխտ կ'ընէ այցելել Մաշտոցի գերեզմանը իր խնդրանքին իրականացման համար: Ան իր թխած հացերէն վեր կ'առնէ 36 լաւաշներ, համապատասխան Մաշտոցի ստեղծած 36 հայերէն գիրերու թիւին գիտնալով թէ Օ եւ Ֆ գիրերը աւելի ուշ աւելցուեցան այբուբենի ընդհանուր թիւը հասցնելով 38-ի:

Հայունին կու գայ ու կը կենայ Մաշտոցի գերեզմանին մօտ ու կը սկսի իր լաւաշ հացերը բաժնել անցորդներուն: Սակայն ամէն մէկ անցորդի պիտի տար մէկ լաւաշ միայն եւ ոչ երկու կամ երեք: Այլ խօսքով, իր 36 լաւաշները պէտք էր բաժնէր 36 տարբեր անցորդներու որպէսզի ուխտը կատարուէր: Եթէ այդ օրը 36 անցորդներու չհանդիպէր, այդ օրուան ուխտագնացութիւնը ապարդիւն կը նկատուէր ու ան կը ստիպուէր վերադառնալ յաջորդ օր, նորէն 36 այլ լաւաշներով, ու այսպէս որքան օր որ պէտք ըլլար, մինչէ որ հանդիպէր այն օրը ուր հայունին իր 36 հացերը կարենար բաժնել 36 տարբեր անցորդներու:

Մեսրոպ Մաշտոց

Հայ ժողովուրդը մեր այբուբենի հայր՝ Մեսրոպ Մաշտոցին կը պարտի ապահոված ըլլալ մեր ազգային ինքնութեան անկախացումն ու յանրապետութիւնը, շնորհիւ հայաստան գրականութեան ստեղծման: Ան 1600 տարիներէ ի վեր կը նկատուի մեր ժողովուրդի ամենէն սուրբ դէմքը:



Յուշարձան Օշականի մէջ

Մեսրոպ Մաշտոց ծնած է Տարօնի Հացեկաց գիւղին մէջ: Գործի կը մտնէ Վաղարշապատ, իբրեւ արքունիքի ատենադպիր: Լաւ գիտէր յունարէն, պարսկերէն, ասորերէն եւ վրացերէն լեզուները: 32 տարեկանին, Մեսրոպ Մաշտոց բանակային ասպարէզը ձգելով կը դառնայ հոգեւորական ու կը նուիրուի քարոզչութեան եւ ժողովուրդի ծառայութեան:

Այդ օրերու քաղաքական վիճակը շատ մտահոգիչ էր: Հայաստանը բաժնուած էր յունական եւ պարսկական կայսրութիւններուն միջեւ եւ ժողովուրդին մէկ բաժինը առաջինին ազդեցութեան տակ կ'ապրէր միւս բաժինը՝ երկրորդին: Եկեղեցական արարողութիւններն ալ կը կատարուէին ասորերէնով, ժողովուրդին բոլորովին օտար լեզուով մը: Այս պայմաններուն տակ, Մեսրոպ Մաշտոց կ'անդրադառնայ հայերէն գրականութիւն ունենալու անհրաժեշտութեան ու կը լծուի հայերէն տառերու ստեղծման աշխատանքին: Իր գաղափարին ու աշխատանքին կը զօրակցին օրուան թագաւոր Վրամշապուհն ու կաթողիկոս Սահակ Պարթեւը:

405 թուականին ծնունդ կ'առնէ հայերէն այբուբենը: Մեսրոպ Մաշտոց վախճանեցաւ 80 տարեկանին ու հողին յանձնուեցաւ Օշականի մէջ:

Հայ գրչութեան կեդրոններ

Տաթևի վանք

Սիւնեաց մարզի պատմաճարտարապետական ամենէն նշանոր յուշարձանը Տաթևի վանքն է որ կը գտնուի նոյն անունը ունեցող գիւղին մէջ: Վանքը հիմնուած է 9-րդ դարուն եւ անոր ամենէն հին շինութիւնն է Սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցին: Եկեղեցիին պատերը ծածկուած եղած են հարուստ որմնանկարներով որոնցմէ քիչ բան պահպանուած է:

Տաթևի վանքը այցելողներուն ուշադրութիւնը կը գրաւէ հետաքրքրական յուշարձան մը, «Շոճուող Սիւնը» որ ծանօթ է նաեւ «Գաւազան» անունով:

Ութկողմանի օրօրուող այս սիւնը հաստատուած է ծխնիներու վրայ, վանքի շրջափակէն ներս: Երբ դաշինք ան կը սկսուի օրօրուիլ, կը ծոխ սակայն չիցնար ու կը վերադառնայ իր տեղը: Ճարտարապետական այս հրաշալիքը ապշեցուցեր եւ վախ ներշնչած է 10-րդ դարուն Տաթևը ասպատակող օտարներուն, որոնք Շոճուող սիւնէն վախճալով չեն կործանած վանքը: 1931-ի երկրաշարժը մեծ վնաս հասցուց Տաթևի վանքին սակայն կանգուն մնաց Շոճուող սիւնը: Վնասուած կառույցներուն մեծ բաժինը վերականգնուեցաւ:



14-15-րդ դարերուն, Տաթևի վանքը հայկական մշակոյթի եւ լուսաւորութեան ճանչուած կեդրոններէն մէկը եղած է: Հոն գործած է Տաթևի համալսարանը որ ունեցած է մատենադարան եւ մանրանկարչութեան դպրոց: Տաթևի համալսարանէն ներս աշխատած են յայտնի գիտնականներ եւ աստուածաբաններ, ինչպէս Յովհաննէս Որոտնեցին եւ Գրիգոր Տաթևացիին:

Օշական գիւղի Մեսրոպ Մաշտոց եկեղեցին

Մեսրոպ Մաշտոցի անունը կրող այդ եկեղեցին կառուցուած է 1875 թուին, Գեորգ Դ. Կաթողիկոսի օրով: Սուրբին մասունքները կը հանգչին եկեղեցույն խորանին տակ: 1962 թուականին, Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600-ամեակին առթիւ, գիւղի մուտքին գետեղուեցաւ նաեւ յուշարձան մը՝ հայ գիրերու նուիրուած կոթողը: Կոթողը կը ներկայացնէ բացուած մատենի նմանող երկու յուշասալեր, որոնցմէ ձախ կողմին վրայ քանդակուած է հայերէն այբուբենը: Ան՝ այբուբենին նուիրուած առաջին եւ միակ յուշարձանն է աշխարհի վրայ «տեսնել էջ 3»:

Ծանօթանանք Աստուածաշունչին

Մեզմէ ո՞վ չի յիշեր Ադամի եւ Եւայի դրախտէն վտարուիլը, Նոյի տապանին ջրհեղեղէն ազատիլը, Դաւիթի արիութիւնը ընդէմ Գողիաթի, Յիսուսի ծնունդը, Յուդայի կողմէ մատուցուիլը: Այս բոլորը Աստուածաշունչէն առնուած դրուագներ են որոնք պատմութեան պէս մեր միտքը մնացած են, յաճախ իբր մանկութենէն մեզի հասած տեղեկութիւն:

«Մաշտոցի Արձագանգ»-ի այս թիւով կը սկսինք յօդուածներու շարք մը որոնց միջոցաւ պիտի ծանօթանանք Աստուածաշունչին: Իւրաքանչիւր թիւով, պիտի ներկայացնենք Հին եւ Նոր Կտակարանները կազմող իւրաքանչիւր գիրք, կարճ բացատրականներով, յուսալով որ այսպէսով առիթ ընծայած կ'ըլլանք ընդհանուր ձեւով ծանօթանալու Աստուածաշունչին:

Աստուածաշունչը կը բաղկանայ գլխաւոր երկու մասերէ.-

Հին կտակարանը որ կը պատմէ աշխարհի ստեղծումէն մինչեւ Քրիստոսի ծնունդի մարգարէութիւնները եւ **Նոր կտակարանը** որ Քրիստոսի ծնունդէն սկսելով կը պատմէ Անոր կեանքը, մահն ու յարութիւնը, Առաքեալներուն գործերը, նամակները մինչեւ Յովհաննէսի Յայտնութիւնը : Իւրաքանչիւր կտակարան իր կարգին ունի ենթաբաժանումներ որոնք կը կոչուին «գիրքեր»:

Հին Կտակարանը կը բաղկանայ 39 գիրքերէ, իսկ Նորը՝ 27: Այս 66 գիրքերէն զատ կան նաեւ «երկրորդականոն» կոչուած 11 գիրքեր: Ահա ցանկը Աստուածաշունչը կազմող 77 գիրքերուն, որոնց մասին յաջորդ թիւերով հետաքար աւելի մանրամասն կը խօսինք.-

<p>Հին Կտակարան</p> <p>17 պատմական գիրքեր</p> <p>Ծննդոց Ելից Ղեւտացւոց Թուոց Բ. Օրինաց Յեսու Դատաւորաց Հուութ Ա. Թագաւորաց Բ. Թագաւորաց Գ. Թագաւորաց Դ. Թագաւորաց Ա. Մնացորդաց Բ. Մնացորդաց Եզրասայ Նէեմեայ Եսթեր</p> <p>5 բանաստեղծական եւ դաստիարակչական գիրքեր</p> <p>Յոբ Սաղմոսներ Առակներ</p>	<p>Ժողովող Երգ երգոց</p> <p>17 մարգարէներու գիրքեր</p> <p>Եսայի Երեմեայ Ողբք Երեմեայ Եզեկիէլ Դանիէլ Ովսէա Յովէլ Ամոս Աբդիա Յովնան Միքա Նաոււմայ Ամբակում Սոփոնիա Անգէ Զաքարիա Մաղաքիա</p> <p>11 Երկրորդականոն Գիրքեր</p> <p>Ա. Գ. Եզրաս Յուդիթ</p>	<p>Տոբիթ Ա. Բ. Գ. Մակաբայեցիներուն Իմաստութիւն Սողոմոնի Բարուք Սիրաք Աղօթք Մանասէ թագաւորի</p> <p>Նոր Կտակարան</p> <p>4 Աւետարաններ</p> <p>Մատթէոս Մարկոս Ղուկաս Յովհաննէս Առաքեալներու գործերը -1 Գիրք-</p> <p>Պօղոս առաքեալի եկեղեցիներու ուղղուած 10 նամակները</p> <p>Հռոմայեցիներուն Ա. Կորնթացիներուն Բ. Կորնթացիներուն Գաղատացիներուն Եփեսացիներուն</p>	<p>փիլիպպեցիներուն Կողոսացիներուն Ա. Թեսաղոնիկեցիներուն Բ. Թեսաղոնիկեցիներուն Եբրայեցիներուն</p> <p>Պօղոս առաքեալի անձերու ղրկուած 4 նամակներ</p> <p>Ա. Տիմոթէոսի Բ. Տիմոթէոսի Տիտոսի փիլիմոնի</p> <p>Ընդհանրական 7 նամակներ</p> <p>Յակոբոս առաքեալի Պետրոս առաքեալի -2- Յովհաննէս առաքեալի -3- Յուդա առաքեալի Մարգարէական գիրքը</p> <p>Յայտնութիւն Յովհաննէսի <i>Շարունակելի...</i></p>
---	--	---	---

Գիտ խաչ


«Գիտ խաչ»ը Յիսուսի խաչափայտին գտնուելուն յիշատակութեան տօնն է: Հայաստանեայց Առաքելական եկեղեցին զայն կը տօնէ Խաչվերացի տօնին յաջորդող 7-րդ կիրակին, որ 7 օրերու շարժականութեամբ Հոկտեմբեր 23-էն 29-ի միջեւ կրնայ զուգադիպիլ: Այս տարի Գիտ խաչը կը զուգադիպի Հոկտեմբեր 26-ին:

Յիսուսի խաչելութենէն ետք, Պիղատոսի հրամանով Քրիստոսի մարմինը թաղուեցաւ: Սակայն խաչափայտը մնաց Գողգոթայի վրայ միւս երկու խաչերուն հետ եւ հոն թաղուած մնաց շուրջ երեք հարիւր տարիներ շարունակ. հետագային Գողգոթա լեռը աղբանցի վերածուեցաւ, քրիստոնէաներուն նախատինք ընելու համար:

313 թուին, Միլանոյի հրովարտակով երբ արտօնուեցաւ Քրիստոնէութիւնը ազատօրէն պաշտել, Երուսաղէմը դարձաւ ուխտավայր: Հաւատացեալներ կ'այցելէին քաղաքը Սուրբ տեղերը պատուելու համար: Այս ուխտաւորներու կարգին էր նաեւ Կոստանդիանոս կայսրին մայրը՝ Հելիեն: Ան մտադրած էր անպայման գտնել Քրիստոսի խաչափայտը: Յուդա անունով հրեայ անձի մը օգնութեամբ, կարելի եղաւ Գողգոթայի տեղը ճշդել եւ պեղումներէ ի յայտ եկան երեք խաչափայտեր որոնց մէջէն անկարելի եղաւ զանազանել Քրիստոսի խաչը: Նոյն ժամուն մահացած պատանիի մը դիակը հետզհետէ խաչերուն վրայ դրին հրաշքի սպասելով եւ այն խաչը որուն դպնալով պատանին յարութիւն առաւ ճշդուեցաւ Յիսուսի խաչը ըլլալը:

Այս գիտը տեղի ունեցաւ 327 թուին:

խաչքան



1- Սուրբ գիրք

2- Հայերը 5-րդ դարը կոչեցին...

3- Գիր

4- Ո՞վ գրած է «Ծանաչել զիմաստութիւն եւ զխրատ»-ով սկսող խօսքը

5- Մեսրոպ Մաշտոց բացաւ ասոնցմէ առաջինը

6- Աստուածաշունչը կոչուեցաւ թարգմանութիւններու ...

7- Գիրքը վեր եւ բարձր բռնելու գործիք

Խօսենք հայերէն Գրեց՝ Խաչիկ Դաշտենց



Մեր շուրջը լեզուներ նոր ու հին,
Մեր շուրջը խօսում են այլօրէն
Եկ խօսենք եղբայր իմ հայերէն:

Կուլ չերթանք այս ահեղ Լափումին,
Թոյլ չտանք մեր լեզուն աներեն
Եկ խօսենք եղբայր իմ հայերէն:

Մենք ունենք աշխարհում Մասիս սար,
Այդ սարը գալիս է դարերէն
Նա անվերջ խօսում է հայերէն:

Զաւակիդ հայկազեան դպրոց տար
Եկ գրենք մեսրոպեան տաւերով
Եկ խօսենք մեր անուշ բաւերով:

Մեզ ցրեց մի բազուկ անօրէն,
Թէ կ'ուզես սերունդներ մեզ ներեն,
Մենք հայ ենք եկ խօսենք հայերէն:

Այս օտար աշխարհի ցրտերում,
Եկ սիրենք մեր լեզուն ջերմօրէն,
Եկ վառենք եւ վառւենք հայերէն:

Մեսրոպ Մաշտոց


Ով մեծագործ
Մեսրոպ Մաշտոց.
մեր առաջին
բացուած դպրոց:

Մեր առաջին
լեզուի տաճար,
լուսապայծառ
Հայոց հանճար:

Ամէն գիրըդ
անձէթ ճրագ,
մեզ հայ պահող
անմար կրակ:

Դուն մեր մեծ պապ
Հացիկ գիւղէն,
Մշոյ դաշտի
քաղցրիկ հողէն:

Շրթունքներով
մեր մանկական՝
քեզ հազար փառք
յաւերժական:



Երկայնաւուն որդը եւ իր բառարանը

Երկայնաւուն որդը ծնաւ բառարանի մը առաջին էջին վրայ: Հազիւ ծնած, ան սկսաւ իրեն համար ճամբայ բանալ Այբ-ով սկսող բառերուն մէջէն: Համով թուղթ. անուշահոտ մելան. ուզածին չափ բառ: Կատարեալ երջանկութիւն: Մանաւանդ որ ան թէ՛ փորը կը կշտացնէր թէ՛ միտքը, որովհետեւ այս ճարպիկ որդը իր կրծած բառերուն իմաստն ալ կը սորվէր:

Եւ անհա օր մը ան հասաւ Այբ-ով սկսող Բառերուն վերջաւորութեան.-

«Բաւական մեծցայ եւ գիտուն դարձայ: Երթամ տեսնեմ թէ բառարանէս դուրս ի՞նչ կայ չիկայ» ըսաւ ան:

Գնաց հասաւ ծառերով զարդարուած կանաչ դաշտ մը: Թիթեռնիկները կը թռչկոտէին, թռչունները կ'երգէին: Բայց Երկայնաւունը չէր գիտեր թէ ի՞նչ էին այս բոլորը որովհետեւ Այբ-ով սկսող բառերուն մէջ այսպէս բաներ չկային: Երբ սակայն ան հանդիպեցաւ Արեւածաղիկին, անմիջապէս ճանչցաւ զայն:

Արեւածաղիկը ընկերասէր բնաւորութիւն ունէր: Ժպտելով ըսաւ որդիին.-

- Բարե՛ւ. նո՞ր եկած ես մեր կողմերը:

Երկայնաւունը կ'ուզէր երկար բարակ պատմել իր մասին, իր բառարանին մասին, իր այս առաջին ճամբորդութեան մասին: Բայց միայն կրցաւ ըսել.

- Այո՛, առաջին այցելութիւն:
- Այսօր օդը շատ նեղացուցիչ է- շարունակեց արեւածաղիկը:
- Արդարեւ, ամպոտ, անհամ:

Արեւածաղիկը զարմանքով նայեցաւ որդիին ու ըսաւ.

- Ծատ տարօրինակ ձեւ մը ունիս խօսելու:

Որդը հառաչեց: Ան կ'ուզէր ուրիշ շատ նիւթերու մասին խօսիլ իր նոր բարեկամին հետ: Բայց չէ՛ որ միայն Այբ-ով սկսող բառերը գիտէր: Ինչպէ՞ս կարելի էր խօսակցիլ միայն աստուծոյնով: Վերջապէս տխուր ձայնով մը ըսաւ.

- Ահ, ազնիւ արեւածաղիկ... այս անգամ այսքան: Աւելին՝ անկարելի...

Այդ օր, Երկայնաւունը անապարանքով վերադարձաւ տուն. մտաւ բառարանին մէջ եւ համբերութեամբ շարունակեց իր կէս ձգած գործը:

Մէկը միւսին ետեւէն լափեց մնացեալ տառերով սկսող բառերը, մինչեւ Օ եւ Ֆէ:

Հիմա՛ ան կրնայ խօսակցիլ որո՞նց հետ որ կ'ուզէ, ի՞նչ նիւթի մասին որ կը փափաքի:

Դուրս ըսէ ուրեմն, սիրելի ընթերցող, ի՞նչ է կատարելապէս յաջողելու գաղտնիքը...

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն**



**Ամբողջացո՛ւր ըստ Ղուկասի Աւետարանին 9.12-13
Կ'իրիկնանար, Արձակէ՛, գտնեն, ամայի, ուտելիքը,
ձուկ, հաց, բաւականաչափ**

Երբ օրը -----, տասներկու աշակերտները
մօտեցան Յիսուսի եւ ըսին.

- ----- ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերն
ու ագարակները, հանգչին եւ ուտելիք -----, որովհետեւ
հոս ----- տեղ ենք:

Յիսուս անոնց ըսաւ.

- Դո՛ւք տուէք անոնց -----:

Անոնք ըսին.

- Ամբողջ մեր ունեցածը հինգ ----- եւ երկու ----- է.
բայց եթէ կ'ուզես, կ'երթանք ժողովուրդին համար
----- կերակուր կր գնենք:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1- Անճան Աստուծոյ ի՞նչ խնդրեց:

- ա.- Դրամ
- բ.- Զաւակ
- գ.- Տուն
- դ.- Առողջութիւն

2- Անճան ի՞նչ անուանեց իր զաւակը:

- ա.- Սամուէլ
- բ.- Յակոբ
- գ.- Գէորգ
- դ.- Յիսուս

3- Անճան ո՞ր քահանային յանձնեց իր զաւակը:

- ա.- Հեղիին
- բ.- Արմէնին
- գ.- Յովհաննէսին
- դ.- Գրիգորին

4- Ո՞վ Սամուէլին երեք անգամ կանչեց:

- ա.- Հեղին
- բ.- Աստուած
- գ.- Հրեշտակը
- դ.- Սատանան

5- Հեղի քահանային որդիները ինչպիսի՞ մարդիկ էին:

- ա.- Բարի
- բ.- Հնազանդ
- գ.- Չար
- դ.- Իմաստուն

6- Յիսուսի առակին մէջ, Ո՞վ էր այդ անձը որ օգնեց երուսաղէմէն Երիքով գացող ճամբորդ վիրաւորին:

- ա.- Հրեայ պաշտօնեայ մը
- բ.- Քահանան
- գ.- Յիսուսի աշակերտներէն մէկը
- դ.- Սամարացի մարդ մը

7- Յովսէփի եղբայրները որու ծախեցին զինք:

- ա.- Երուսաղէմցիներուն
- բ.- Եգիպտացիներուն
- գ.- Հրեաներուն
- դ.- Արաբներուն

8- Ինչ՞ի մէջ էր Սամսոնի ուժը:

- ա.- Մկաններուն
- բ.- Մազերուն
- գ.- Մարմնին
- դ.- Հաւատքին

9.- Սողոմոն թագաւոր քանի՞ տարիներ թագաւորեց Իսրայէլի:

- ա.- 4
- բ.- 10
- գ.- 40
- դ.- 30

10- Յիսուս քանի՞ հացով եւ ձուկով կշտացուց հինգ հազար հոգին:

- ա.- 3 հաց եւ 1 ձուկ
- բ.- 5 հաց եւ 2 ձուկ
- գ.- 3000 հաց եւ 3000 ձուկ
- դ.- 100 հաց եւ 100 ձուկ

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն**

1- Հետեւեալներէն որո՞նք Մեսրոպ Մաշտոցի աշակերտներն են:

- ա.- Կորիւն
- բ.- Մովսէս Խորենացի
- գ.- Յովհաննէս
- դ.- Պետրոս

2- Սեպտեմբեր ամիսը ո՞ր տօները տօնեցինք

- ա.- Ս. Գէորգ
- բ.- Յովհաննու Կարապետ
- գ.- Խաչվերաց
- դ.- Վարդանանց

3- Ի՞նչ կը նշանակէ Խաչքուն

- ա.- խորանին մէջ դրուած խաչը:
- բ.- կերպասի վրայ խաչը որ ձողի վրայ բարձրացած է:
- գ.- Յորենի հասկերէն կազմուած Խաչ:
- դ.- Սուրբ խաչ մը զոր արժանաւոր կրօնականներ կը կրեն իրենց կուրծքին:

4- Ո՞ր ծնած է Սուրբ Գէորգ:

- ա.- Հայաստան
- բ.- Յունաստան
- գ.- Երուսաղէմ
- դ.- Կապադովկիա

5- Որո՞ւ ընկերները տան արաստաղէն վար իջեցուցին զինք, որպէսզի Յիսուսի կողմէ բժշկուի:

- ա.- կոյրին
- բ.- անդամալուծին
- գ.- բորոտին
- դ.- Ղուկասի

6- Ու՞ր գրուած է: «Եղբայրներ՛ր,

աստուած ձեզ կանչեց որ ազատ ըլլաք. միայն նայեցէք՝ որ այդ ազատութիւնը մարդկային ցանկութիւններ կատարելու պատրուակ չդառնայ, այլ՝ սիրով ծառայեցէք իրարու:»

- ա.- Կորնթացիներու Ա. նամակին 9.23
 - բ.- Գաղատացիներու նամակին 5.13
 - գ.- Կողոսացիներու նամակին 2.16
 - դ.- Եբրայեցիներու նամակին 9.3
- 7- Հին կտակարանէն ո՞ր գիրքին մէջ գրուած է Մովսէսի եւ 10 պատուիրաններու պատմութիւն:
- ա.- Ծննդոց
 - բ.- Թագաւորաց
 - գ.- Սաղմոսաց
 - դ.- Ելից

8- Յիսուս ու՞ր հինգ հազարը կերակրեց երկու ձուկով եւ հինգ հացով:

- ա.- Բեթսայեդա
- բ.- Գալիլիա
- գ.- Նազարէթ
- դ.- Բեթլեհէմ

9.- Հայոց Ո՞ր թագաւորին օրով Քրիստոնէութիւն սկսաւ տարածուիլ պալատին մէջ:

- ա.- Տրդատ Ա.
- բ.- Տրդատ Գ.
- գ.- Սանատրուկ
- դ.- Խոսրով

10- Ո՞վ էր հայոց թագաւորը երբ գիրերու գիտը եղաւ:

- ա.- Արտաշէս
- բ.- Վրամշապուհ
- գ.- Արշակ
- դ.- Տրդատ Գ.

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն**

1- Ամբողջացուր հետեւեալ աղօթքը:
----- կերակրողին -----, որ
զմեզ կերակրեաց եւ ----- . ---
փառք յաիտեանս. -----:

2- Կաթողիկոսին մակդիրն է ՆՍՕՏՏ:
Ի՞նչ կը նշանակէ:
Ն----- Ս----- Օ-----
Տ----- Տ-----

3- Ինչպէ՞ս կ'ողջուցենք
հոգեւորականները:
ա.- Կաթողիկոսին՝
-----, Վեհափառ
Տէր:

բ.- Եպիսկոպոսին՝
-----, Սրբազան
Հայր:

գ.- Վարդապետին՝
-----, Հայր սուրբ:

դ.- Քահանային՝
-----, Տէր:

4- Մկրտութեան ընթացքին:
Քահանան կ'ըսէ.
- Երախայս զի՞նչ խնդրէ
Կնքահայրը կը պատասխանէ
-----, -----, ----- եւ
-----: Մկրտիլ եւ
արդարանալ, սրբիլ ի մեղաց, ազատիլ
ի դիւաց եւ ծառայել Աստուծոյ:

5- Սուրբ հաղորդութիւն ստանալու ատեն
Հաւատացեալը կըսէ.

Քահանան կը պատասխանէ . Սա եղիցի
քեզ քաւութիւն եւ թողութիւն մեղաց քոց:
6- Մասի բաշխման ժամանակ:
Մաս բաշխողը կ'ըսէ.
-Մասն եւ բաժին եղիցի Սուրբ
Պատարագիս
Մաս ստացողը կը պատասխանէ
Բաժին ----- յաիտեան:

7- Սուրբ Պատարագի ընթացքին Ողջոյն
տուողը կ'ըսէ
----- Ի մէջ մեր -----
Ողջոյն ստացողը կը պատասխանէ
----- է ----- Քրիստոսի

8- Ս. Զատկուան օրը ողջոյն տուողը
կ'ըսէ.
Քրիստոս -----
Ողջոյն ստացողը կը պատասխանէ
----- է -----

9.- Ս. Ծնունդի օրը ողջոյն տուողը կ'ըսէ.
Քրիստոս -----
Ողջոյն ստացողը կը պատասխանէ
----- է -----
կամ
----- մեծ -----

10- Ո՞ր Տիեզերական Ժողովին ընթացքին
խմբագրուեցաւ Հաւատամքը:
ա.- Նիկիոյ 325
բ.- Կոստանդնուպոլսոյ 381
գ.- Եփեսոսի 431
դ.- Քաղկեդոնի 451

Ո՞րն է ճիշդ պատասխանը Ընդհանուրի անկիւն

1- Հին եւ Նոր կտակարանները կարելի է նաեւ կոչել Հին եւ Նոր.-

- ա- Գիրք
- բ- Ուխտ
- գ- Բաժիններ
- դ- Մասեր

2- Սուրբ երրորդութիւն երբ կ'ըսենք կը հասկնանք.-

- ա- Հաւատք, յոյս եւ սէր
- բ- ընտանիք, հայրենիք, ազգ
- գ- Հայր, Որդի եւ Սուրբ հոգի
- դ- երեք մոգերը որոնք Յիսուսի այցելեցին

3- Կանթեղը.-

- ա- լոյս կու տայ
- բ- լուր կու տայ
- գ- գիտութիւն կու տայ
- դ- անուշ հոտ կը հանէ

4- Խաչը իր տէրը կը զօրացնէ կը նշանակէ.-

- ա- տագնապ ապրող անձը ատելի տոկուն կը դառնայ
- բ- փորձանքէ անցնողը նկարագրով կը զօրանայ
- գ- Դժուարութիւն կրող անձը ատելի համբերատար կը դառնայ
- դ- Բոլոր պատասխաններն ալ ճիշդ են

5- Յիսուսի ո՞ր առակը մեզի կ'ըսէ թէ միշտ պատրաստ պէտք է ըլլալ Քրիստոսի գալուստին.-

- ա- Հաւատարիմ ծառան
- բ- Յիմար եւ իմաստուն կոյսերը
- գ- Յարատետող Այրին եւ դատաւորը
- դ- այդպէս առակ չկայ

6- Մեսրոպ Մաշտոց հայերէնէն զատ ուրիշ երկու լեզուներու ալ գիրերը գտած է

- ա- Վրացիներուն եւ աղուաններուն
- բ- վրացիներուն եւ արաբներուն
- գ- աղուաններուն եւ արաբներուն
- դ- ասորիներուն եւ վրացիներուն

7- Ըստ Վահան Թէքէեանի, «Եկեղեցին հայկական...».-

- ա- Ծննդավայրն է սրտիս
- բ- Ծննդավայրն է կեանքիս
- գ- Ծննդավայրն է հոգւոյս
- դ- Ծննդավայրն է մտքիս

8- Մովսէս խորենացի.-

- ա- Մեսրոպ Մաշտոցի հաստատած դպրոցներէն մէկուն աշակերտած է
- բ- Հայոց պատմութիւնը գրած է
- գ- թարգմանիչ եղած է
- դ- բոլոր այս վերինները ճիշդ են

9- Պատարագի ընթացքին յաճախ կը լսենք «Յիշեա՛ Տէր եւ ...»

- ա- Ազատեա՛
- բ- Ողորմեա՛
- գ- Ներեա՛
- դ- Յիշեա՛ Տէրը պատարագի ընթացքին չ'ըսուիր

10- Կերոնը.-

- ա- Դպիր տղոց բռնած մոմն է
- բ- քահանային զգեստն է
- գ- խունկ վառելու տեղն է
- բ- Մաս բաժնելու ծառայող ամանն է

Սեպտեմբեր ամսուան պատասխաններ եւ մասնակցողներ

Մանկապարտեզի անկիւն

Առաքելները, Ըրած, Բեթսալիդա, հետեւեցաւ, քարոզել, արքայութիւն, բժշկեց

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. բ. 451
2. գ. 301 Տրդատ Գ.
3. դ. Մովսէսի
5. ա. 40 Օր
6. ա. Հերովդէս
7. բ. Տէրունական
8. դ. Թովմաս
9. ա. Երկու
10. դ. Նոյ եւ ընտանիքը

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. ա. Փրկիչ
2. բ. Պետրոս
3. ա. Թովմաս դ. Մատթէոս, գ. Թադէոս
4. բ. Ծաղկազարդ
5. գ. Թադէոս եւ Բարթողիմէոս
6. դ. Հոգեգալուստ
7. գ. Գրիգոր Լուսաւորիչ
8. ա. Պայծառակերպութիւն
9. բ. Կանայի Հարսանիքը
10. բ. Վնամղապուն

Երկրորդականի անկիւն

1. բ. 1929
2. դ. 1980
3. գ. Եսթեր դ. Երգ երգոց
4. ա. Ծննդոց
5. ա. Ծննդոց
6. բ. Ելից
7. բ. Գարեգին Բ.
8. գ. Արամ Ա.
9. ա. Թորգոմ Արքեպիսկոպոս
10. ա. Մեսրոպ Մութաֆեան

Ընդհանուրի անկիւն

1. բ. Անցերող Ծառան
2. գ. կը ձանձրանայ
3. ա. Հրազդան
4. գ. Հաստատուն բռնեցէք

5. բ. Հիրասէր է
6. գ. Վեղարացեւ գմբէթով
7. ա. Երկնի եւ Երկրի
8. գ. Երեք աղջիկ
9. բ. իր եզին
10. դ. դրամին

Սեպտեմբեր ամսուան մասնակցողներ

Մանկապարտեզ

Անսխալ պատասխանողներ

Սեակ Պապիկեան, Խշիշեան Արշակ, Արազ Գաբթանճեան, Արին Անթեպեան, Կրէյս Նարեկեան, Քեհեայեան Թաթիանա:

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Լորի Չուխանեան, Անի Չուխանեան, Սեան Մելեքեան, Գէորգ Պուլիքեան, Դալար Գաբթանճեան, Յարութ Քուլլուքեան, Սերենա Քուլլուքեան, Ներսէս Նասոյեան, Հրայր Մատթէոսեան:

Անսխալ պատասխանող

Առէն Պապիկեան, Մարիա Դանիէլեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Թամար Չաքմաքճեան, Թամար Պուլիքեան, Գօգօ Մատթէոսեան, Անի Մելեքեան, Հրակ Նարեկեան, Լորա Սարիմանուկեան, Ռուբէն Սեթեան, Արի Սիրզայեան, Ժան-Յակոբ Չուխանեան:

Երկրորդականի անկիւն

Թամար Գիզիրեան, Փօլ Քիզիրեան, Կարօ Կարապետեան:

Կարճ Լուրեր

- Մեր 24-րդ տարեշրջանի արձանագրությունները տեղի ունեցան 7 Սեպտեմբեր 2003-ին: Արձանագրուեցան 32 աշակերտներ:
- Վերամուտը տեղի ունեցավ 14 Սեպտեմբեր 2003-ին: Աշակերտութեան թիւն էր 56 :
- 21 Սեպտեմբեր 2003-ին Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտութիւնը իրենց ծնողներով, ուսուցչական կազմով եւ տնօրէնին հետ Սուրբ Յակոբ մայր եկեղեցւոյ մէջ յաւարտ Սուրբ պատարագի հաղորդութիւն ստացան:
- Մինչեւ 28 Սեպտեմբեր 2002, արձանագրուած աշակերտներուն թիւն է 73:
- Մեր 24-րդ տարեշրջանի կազմը

Տիկ. Թալին Թաշճեան	դաստիարակ Բողբոջ դասարանին
Օրդ. Մարիա Քէօսէյեան	դաստիարակ Կոկոն դասարանին
Տիկ. Սալբի Բակլայեան	դաստիարակ Ծաղիկ դասարանին
Տիկ. Վերա Կարապետեան	դաստիարակ Նախ. Ա. դասարանին
Օրդ. Գարոլ Գաբթանճեան	դաստիարակ Նախ. Բ. դասարանին
Օրդ. Երան Լոշխանեան	դաստիարակ Նախ. Գ. դասարանին
Օրդ. Յասմիկ Նաճարեան	դաստիարակ Նախ. Դ. դասարանին
Տիկ. Ծողիկ Նաճարեան	դաստիարակ Նախ. Ե. դասարանին
Տիկ. Աշխէն Իշխանեան	դաստիարակ Նախ. Զ. դասարանին
Տիկ. Յասմիկ Գանաճեան	դաստիարակ Երկ. Ա. եւ Բ. դասարաններուն
Պրն. Թորոս Պապիկեան	դաստիարակ Երկ. Գ. եւ Դ. դասարաններուն
Տիկ. Ծաղիկ Պոյաճեան	Խմբագիր «Մաշտոցի Արձագանգ» ի
Պրն. Րաֆֆի Պապիկեան	Webmaster www.sourphagop.org
Պրն. Նիկոլ Դանիէլեան	Լուսանկարներ

Գիտե՛ս Թէ

- www.sourphagop.org ունի 670 էջեր որոնց 99% էն աւելին հայերէն են:



Կ'ուղուի՞նք Դպրոցէն դէպի Եկեղեցի

Կարճ Լուրեր



Կը սպասենք Ս. Հաղորդութիւն ստանալու

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ

Խմբագիր՝

Աշխատակիցներ՝

Շաղիկ Պոյաճեան

Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան, Գարուին Գէպթանճեան, Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս Պապիկեան:



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայց. Առաք. Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցի Պարբերաթերթ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 3

Նոյեմբեր 2003

Կիր.	Բ2.	Գ2.	Դ2.	Ե2.	Ուր.	Շաբ.
						1
2	3	4	5	6	7	8
9	10	11	12	13	14	15
16	17	18	19	20	21	22
23	24	25	26	27	28	29
30	31					

8	Սուրբ Գաբրիէլ եւ Սուրբ Միքայէլ Հրեշտակապետներու տօն
15	Անդրէ եւ Փիլիպպոս առաքելներու տօն
29	Սուրբ առաքելներ եւ առաջին լուսաւորիչներ Թադէոսի եւ Բարթողիմէոսի տօն

Ամէն տեսակ նեղութիւն ունինք, բայց ընկճուած չենք. տագնապի մատնուած ենք, բայց յուսահատ չենք. հալածանքներ անպակաս են, բայց լքուած չենք. յաճախ խոշտանգուած՝ բայց խորտակուած չենք:

Բ. Կորնթացիներուն 4

Առաջին լուսաւորիչներու առաքելութեան հետքերով

Ասկէ շուրջ 1950 տարիներ առաջ Հայաստան ուղարկուեցան Յիսուսի առաքելներէն երկուքը, Թադէոս եւ Բարթողիմէոս, նուիրական առաքելութեամբ մը՝ հայ ժողովուրդին մօտ քարոզելու եւ տարածելու Քրիստոնէութիւնը իբր ճշմարիտ կրօն: Այդ թուականէն գրեթէ 250 տարիներ ետք, Հայաստանը, հայ ազգը հանդիսանալով առաջինը՝ ընդունեց Քրիստոնէութիւնը իբր պետական կրօն:

Դարեր անցան ու հայ ժողովուրդը մնաց քրիստոնէայ: Ի՞նչ է քրիստոնէութիւնը. ի՞նչ կը նշանակէ քրիստոնէայ ըլլալ: Բարդ հարցում, բազմաթիւ պատասխաններու կարելիութեամբ: «Մաշտոցի արձագանգ»-ի այս թիւով մեր պարտքը կը համարենք այս հարցը դնել, այդպիսով ողջ պահած ըլլալու համար առաջին լուսաւորիչներու յիշատակը ու իմաստ տալու անոնց նահատակութեան:

«Քրիստոնէութիւն հոգեւորումն է աշխարհին եւ նիւթղէնին վրայ»: Այսպէս կը սահմանէր քրիստոնէութիւնը երջանկայիշատակ Գարեգին Վեհափառը: Դաւանանք մը որ ամբողջութեամբ ազատ կ'արձակէր մարդ արարածը որովհետեւ անոր կը թելադրէր նիւթական եւ աշխարհիկ կաշկանդումներէ ձերբազատուելով ձգտիլ հոգիի անկաշկանդութեան. կը թելադրէր արհամարհել մարմնական մահը, հաւատալով եւ յուսալով հոգիի անմահութեան:

Թադէոս եւ Բարթողիմէոս առաքելներու յիշատակը վառ պահելու համար, հարց տուր դուն քեզի ե՛ս, սիրելի ընթերցող, թէ ի՞նչ է քրիստոնէութիւնը, ի՞նչ կը նշանակէ քրիստոնէայ ըլլալ, ի՞նչ հասած է մեզի առաջին լուսաւորիչ առաքելներէն:

Եթէ կ'ուզես գիտնալ թէ Աստուած ի՞նչ հոգեւոր գանձ պարգեւած է քեզի...

Արդ, այս գանձը մեր մէջ կը կրենք՝ կաւէ անօթներու պէս, որպէսզի յստակօրէն երեւի՝ թէ այս անսահման զօրութիւնը Աստուծմէ է որ կու գայ, եւ ո՛չ թէ մեզմէ: Ամէն տեսակ նեղութիւն ունինք, բայց ընկճուած չենք. տազնապի մատնուած ենք, բայց յուսահատ չենք. հալածանքներ անպակաս են, բայց լքուած չենք. յաճախ խոշտանգուած՝ բայց խորտակուած չենք: Ծարունակ Յիսուսի մահը մեր մարմիններուն մէջ կը կրենք, որպէսզի Յիսուսի կեանքն ալ մեր մարմիններուն մէջ յայտնուի: Որքան ատեն որ կ'ապրինք՝ միշտ մահուան կը մատնուինք Յիսուսի սիրոյն, որպէսզի նաեւ Յիսուսի կեանքը յայտնուի մեր մահկանացու մարմիններուն մէջ: Այսպիսով, մահը կը ներգործէ մեր մէջ, որպէսզի կեանքը ներգործէ ձեր մէջ:

Սաղմոսին մէջ գրուած է. «Հաւատացի. ահա թէ ինչու խօսեցայ»: Հաւատքի նոյն ոգին ունինք մենք: Մենք ալ կը հաւատանք, ուստի նաեւ կը խօսինք: Գիտենք թէ Աստուած՝ որ Տէր Յիսուսը յարուցանեց, Յիսուսի հետ մեզ եւս պիտի յարուցանէ եւ ձեզմով միասին իր ներկայութեան կանգնեցնէ: Այս բոլորը ձեզի համար կ'ըլլան, որպէսզի փրկութեան շնորհքը աւելի եւ աւելի անձերու վրայ տարածուի, եւ գոհաբանական աղօթքները առատանան՝ Աստուծոյ փառքին համար:

Բ. Կորնթացիներուն 4.7-15

Բովանդակութիւն

- Առաջին լուսաւորիչներու առաքելութեան հետքերով
- Եթէ կ'ուզես գիտնալ թէ Աստուած ի՞նչ հոգեւոր գանձ պարգեւած է քեզի...
- Թէ ինչպէ՞ս քրիստոնէութիւնը սկսաւ տարածուիլ Հայաստանէն ներս
- Ասք Անգղայ վանքի հիմնադրութեան մասին
- Հաւատքի մասին
- Բառախաղ
- Ծանօթանանք Աստուածաշունչին
- Հրեշտակներուն մասին
- Սուրբ պատարագի գլխաւոր երգերէն
- Նկարագիր
- Յարատեւութիւն
- Ասկէ շատ տարիներ առաջ Նոյեմբեր ամսուան մը ընթացքին
- Առաջին լուսաւորիչներ
- Հոկտեմբեր ամսուան մասնակցողներ եւ պատասխաններ
 - Ո՞րն է ճիշդ պատասխանը
 - Մանկապարտէզի անկիւն
 - Նախակրթարանի անկիւն «ԱԲԳ»
 - Նախակրթարանի անկիւն «ԴԵԶ»
 - Երկրորդականի անկիւն
 - Ընդհանուրի անկիւն
- Կարճ լուրեր կիրակնօրեայէն

Թէ ինչպէ՛ս Քրիստոնէութիւնը սկսաւ տարածուիլ Հայաստանէն ներս

« Հետեւաբար գացէք եւ բոլոր ժողովուրդները ինձի աշակերտ դարձուցէք: Զանոնք մկրտեցէք՝ Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Անոնց սորվեցուցէք այն բոլոր պատուիրանները որ ես ձեզի տուի. եւ անա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը: »

Մատթէոս 28.19-20

Այս խօսքերով է որ Յիսուս արտայայտուեցաւ իր աշակերտներուն, իր համբարձումէն ճիշդ առաջ, զանոնք ղրկելով աշխարհի չորս կողմերը քարոզչութեան եւ քրիստոնէութիւն տարածելու առաքելութեամբ:

Հայաստանի մէջ այս քարոզչական աշխատանքը կատարելը վիճակուեցաւ Յիսուսի՝ իսկ աշակերտներէն երկուքին՝ Թադէոս եւ Բարթողիմէոս առաքելներուն, որոնք դժուարին պայմաններու տակ կատարեցին իրենց առաքելութիւնը եւ յաջողեցան հիմնել Հայոց եկեղեցին, որ իրենց իսկ անունին վերաբերելով կոչուեցաւ **« Հայաստանեայց առաքելական Մայր եկեղեցի »**:

Հայաստանեայց առաքելական եկեղեցին, Նոյեմբեր 29-ին կը տօնէ իր առաջին լուսաւորիչներու յիշատակը: Առաջին առաքելներու այս տօնով կը յիշատակուի Թադէոս եւ Բարթողիմէով առաքելներու կողմէ քրիստոնէութեան քարոզչութիւնը հայաստանէն ներս, Ա. դարէն սկսեալ: Ու թէ երեք դարեր ետք միայն, 301 թուին է որ Քրիստոնէութիւնը հայերուն համար հռչակուեցաւ պետական օրինաւոր կրօն, սակայն Ա. դարէն սկսեալ, երկու առաքելները հետեւողական աշխատանքով առիթ ընծայեցին որ քրիստոնէութիւնը տարածուի երկրէն ներս, որ հիմնուին վանքեր եւ եկեղեցիներ եւ կուսանոցներ, նոյնիսկ եթէ ճշմարտութեան տարածման ճամբուն վրայ զոհեցին իրենց կեանքերը:

Ասք Անգղայ Վանքի հիմնադրութեան մասին

Կ'ըսուի թէ Վասպուրականի Արտամետ գիւղի մօտ գտնուող Անգղայ Սուրբ Աստուածածին վանքը հիմնուած է Թադէոս Առաքելի կողմէ հետեւեալ պայմաններուն տակ. -

Թադէոս առաքելը երազին մէջ կը տեսնէ Աստուածածինը որուն ցուցմունքներուն համաձայն կ'աւերէ Անգղ Գիւղը գտնուող հեթանոսական մեհեանը եւ տեղը կը կառուցէ քրիստոնէական տաճար: Գիշերը, դէւեր կը քանդեն այս տաճարը: Առաքելին աղօթքով եւ Աստուածածնի հրամանով կու գան հրեշտակի կերպարանք ստացած բազմաթիւ անգղեր եւ չարաչար կը հալածեն դէւերը որոնք սեւ ագռաւներու կերպարանք առած փախուստ կու տան: Ու այդպէսով, վանքը կը ստանայ **« Անգղայ Վանք »** անունը:

Հաւատքի մասին Յովհաննէս Երզնկացի խրատ բոլոր քրիստոնէաներուն

Նախ պէտք է իմանալ թէ ի՞նչ է քրիստոնէութիւնը եւ ի՞նչ է քրիստոնէական հաւատքը: Գիտենք թէ հաւատքը Աստուծոյ եւ մարդոց միջեւ շաղկապ է: Հաւատքը Աստուծոյ կողմէ մարդոց մէջ կը հաստատուի եւ մարդոցմէ Աստուծոյ կը բարձրանայ, զոր օրինակով պիտի բացատրենք լսողներուն:

Ինչպէս որ լոյսին շողը արեւէն իջնելով կը մտնէ բոլոր երդիքներէն ու լուսամուտներէն ներս եւ կը ձեւաւորուի համաձայն տան մեծութեան կամ փոքրութեան՝ լուսատրելով այնտեղ գտնուած ներք. նոյնպէս հաւատքը Աստուծմէ մարդոց կ'իջնէ եւ անոնց սրտերուն ու հոգիներուն մէջ կը բնակի եւ զայն ընդունողներուն ընկալման չափով կը բովանդակուի: Եւ ինչպէս որ կնիքի նախատիպը երբ մոմի վրայ ձեւանայ, կնիքի նմանութիւնը կը տեսնուի մոմին վրայ, այսպէս ալ հաւատքը Աստուծոյ կողմէ մարդոց մէջ կը տպաւորուի եւ անոնց սրտերուն ու հոգիներուն մէջ կերպաւորուելով կը կնքուի:

Հաւատքը լուսեղէն անմարմին պարան է Աստուծոյ կողմէ երկնքէն մարդոց իջած, որպէսզի երբ մեր ձեռքերը վեր առնենք, Աստուծոյ մօտ բարձրանանք՝ այսինքն բազմապիսի բարեգործութիւններով:

Հաւատքը բանալին է երկնքի արքայութեան, զոր Աստուած տուաւ, որպէսզի ան որ հաւատքի զօրութիւնը ունենայ, բանայ եւ արքայութիւն մտնէ:

Հաւատքը մարդու սրտին մէջ արմատացած տունկ է, որուն արմատը Հայրն է, արմատին վրայ գտնուող ոստը՝ Որդին է, տունկին եւ ոստին վրայ անթառամ ծաղիկը՝ Ս. Հոգին, իսկ քաղցրահամ պտուղը՝ բոլոր բարի գործերն են. որովհետեւ պտուղը արմատէն, ոստէն եւ ծաղիկէն կը յառաջանայ, ինչպէս բարի գործերը՝ հաւատքէն: Ինչպէս որ ծառը առանց պտուղի գեղեցիկ չերեւիր եւ առանց ծառի պտուղ չըլլար, նոյնպէս հաւատքը առանց գործի վայելուչ չէ, ոչ ալ գործերը՝ առանց ճշմարիտ եւ ուղիղ հաւատքի:

Բառախաղ														
գ	ա	ր	դ	ա	ր	ե	լ	ր	ա	ն		ազատել	եկուր	նինուէ
ա	գ	ա	ր	տ	օ	ր	ա	լ	ն	ի		արագ	զարդարել	նոր
ր	ա	տ	ա	ա	ն	ա	ն	ձ	ի	ն		արտօրալ	զարդատել	ուրախ
դ	տ	ա	ց	ն	ա	ժ	ի	շ	տ	ո		ատանացի	թան	ուրանալ
ա	ե	ր	ի	ա	տ	շ	ի	ր	ա	ւ		ատակ	ժիր	ուրար
ս	լ	ի	ա	ց	ա	տ	ո	ր	ւ	է		աւազ	իլիկ	տարի
ե	ւ	ի	լ	ի	կ	ո	ւ	ր	ա	խ		արի	ինտրա	քար
դ	ե	կ	ա	կ	ո	ւ	ր	ա	ր	ա		ան	իւղ	••••• Պահուած
ե	կ	զ	զ	ո	ւ	թ	ա	ն	ա	ւ		առանձին	իրաւ	•բառը 6
ն	ւ	ի	ո	ր	ք	ի	ն	տ	ր	ա		գութան	լուռ	•գիր:
ն	ւ	ի	ո	ր	ք	ի	ն	տ	ր	ա		գորգ	խաւար	•Մկրտութեան
ն	ւ	ի	ո	ր	ք	ի	ն	տ	ր	ա		դրացի	կորիզ	•ընթացքին կը
ն	ւ	ի	ո	ր	ք	ի	ն	տ	ր	ա		երաժշտութիւն	դէկ	•գործածուի
ա	ր	ա	զ	զ	ր	ն	լ	ո	ւ	ո		եղէն	նաժիշտ	•

Ծանօթանանք Աստուածաշունչին

Հին Կտակարան

17 պատմական գիրքեր

- ԾՆՆՂՈՑ
- ԵԼԻԳ
- ՂԵՆՏԱՅԻՆ
- ԹՈՒՆԳ
- Բ. ՕՐԻՆԱՑ
- ՅԵՏՈՒ
- ԴԱՏԱՎՈՐԱՑ
- ՀՈՒՐ
- Ա. ԹԱԳԱՎՈՐԱՑ

- Բ. ԹԱԳԱՎՈՐԱՑ
- Գ. ԹԱԳԱՎՈՐԱՑ
- Դ. ԹԱԳԱՎՈՐԱՑ
- Ա. ՄՆԱԳՈՐՂԱՑ
- Բ. ՄՆԱԳՈՐՂԱՑ
- ԵԳՐԱՍԱՅ
- ՆԷԵՄՆԱՅ
- ԵՍԹԵՐ

- 5 բանաստեղծական
- և դաստիարակչական
- գիրքեր
- ՅՈՐ
- ՍԱՂՄՈՍՆԵՐ
- ԱՌԱԿՆԵՐ
- ԺՈՂՈՎՈՂ
- ԵՐԳ ԵՐԳՈՑ

17 մարգարէներու

- գիրքեր
- ԵՍԱՅԻ
- ԵՐԵՄՆԱՅ
- ՈՂՔՔ ԵՐԵՄՆԱՅ
- ԵԳԵԿԻԷԼ
- ԴԱՄԻԷԼ
- ՈՎԱԷԱ
- ՅՈՎԷԼ
- ԱՄՈՍ
- ԱԲԴԻԱ
- ՅՈՎՃԱՆ
- ՄԻԹԱ
- ՆԱՌՈՒՄԱՅ
- ԱՄՔԱԿՈՒՄ
- ՍՈՓՈՆԻԱ
- ԱՆԳԷ
- ԶԱՔԱՐԻԱ
- ՄԱՂԱՔԻԱ



ԾՆՆՂՈՑ

Կը պատմէ Աստուծոյ կողմէ աշխարհի եւ մարդկութեան սկիզբը, մեզի ծանօթ Ադամ եւ Եւայի պատմութիւնը: Աստուած մեզ շնորհեց կեանք ու փոխարէնը պ ա հ ա ն ջ ե ց հնազանդութիւն եւ հաւատարմութիւն իրեն հանդէպ:



ԵԼԻԳ

Կը պատմէ Մովսէսի ծնունդը եւ իսրայէլացիներու ելքը Եգիպտոսէն եւ Մովսէսին առընչուող դէպքերն ու պարագաները: Ծանօթ են Կարմիր ծովէն անցքի հրաշալի դէպքը եւ 10 պատուիրանները:



ՂԵՆՏԱՅԻՆ

Աստուած Մովսէսի կը փոխանցէ շարք կը օրէնքներ որոնք բոլորին համար են:



ԹՈՒՆԳ

Հրեաներու Սինայի անապատէն մեկնումը եւ Մովսէսի հասնիլը, այսինքն 40 տարուայ ա ն ա պ ա տ ա յ ի ն կեանքը: Հոս կը կարդանք Մովսէսի պատիժը եւ Պղնձէ օձի դրուագը:



Բ. ՕՐԻՆԱՑ

Ն կ ա ր ա գ Ր Ո Ւ Թ Ի Լ Ե ն անապատին մէջ պատահած դէպքերուն եւ շարք մը օրէնքներու կրկնութիւնը: Գիրքը կը վերջանայ Մովսէսի մահով:



ՅԵՏՈՒ

Այսպէս կը կոչուի հեղինակի անունով: Կը պատմէ Յետուի յաջորդումը Մովսէսի: Հոս կը կարդանք Երիթովի պատերու փլուզման մասին, իբր օ Ր Ի Ն Ա Կ հնազանդութեան եւ հաւատքի:



ԴԱՏԱՎՈՐԱՑ

Կը պատմէ պատմութիւնը այն շրջանին երբ Իսրայէլի ղ ե կ ա վ ա Ր Ե Ր Ը «դատաւոր» կը կոչուին: Այս գիրքէն ծանօթ են Գէդէոնի եւ Ս ա մ ս ո ն ի պատմութիւնները:



ՀՈՒՐ

Դատաւորաց գրքին յաւելուած մը կարելի է նկատել որուն մէջ կը պատմուի օրուան ընտանեկան կեանքի պատմութիւններ, ինչպէս հարս եւ կ ե ս ու լ Ր Ի պատմութիւնը:



- Ա. ԹԱԳԱՎՈՐԱՑ,
- Բ. ԹԱԳԱՎՈՐԱՑ,
- Գ. ԹԱԳԱՎՈՐԱՑ,
- Դ. ԹԱԳԱՎՈՐԱՑ

Այս չորս գիրքերու նպատակն է Ի ս ր ա յ է լ ց ի ն ե Ր Ը ներկայացնել իբր ընտրեալ ժողովուրդ եւ ա գ դ ա Ր ա Ր Ե Լ դժբախտութեանց դէմ, Աստուծոյ օրէնքներէն հ ե ո ա ն ա լ ու պարագային:

.....
 • Գիտէի՞ր թէ ...
 • Հին կտակարանի առաջին հինգ գիրքերու հաւաքածոն
 • կը կոչուի **հնգամատեան**:
 •

Հրեշտակներու մասին

Նոյեմբեր ամսուան առաջին կամ երկրորդ Ծաբաթ օրը, Հայաստանեայց եկեղեցին կը յիշատակէ հրեշտակապետեր Գաբրիէլի եւ Միքայէլի տօնը:

Հրեշտակ կը նշանակէ պատգամաւոր, առաքեալ: Նախապէս անոր կը տրուէր երկնային դէսպան, պատգամաւոր, սուրհանդակ նշանակութիւնը: Աստուածաշունչը կը վկայէ որ Հրեշտակները իբրեւ լուսեղէն ստեղծուած են առաջին օրը, լոյսի հետ միասին: Անոնք ժամանակի ներգործութենէն չեն ազդուիր եւ սեռական յատկանիշներ չունին:

Աստուածաշունչէն ներս հրեշտակներու մասին ակնարկութիւնները շատ են: Անոնք կը ներկայացուին իբր բազմաթիւ, մեծագործ եւ զօրաւոր էակներ: Հին կտակարանին մէջ անոնք Աստուծոյ ներկայացուցիչները կը նկատուին, միջնորդներ հոգեւոր եւ նիւթեղէն աշխարհներուն

միջեւ: Անոնք ունին իրենց ղեկավարները որոնցմէ ամենէն անելի ծանօթ են Գաբրիէլ հրեշտակը եւ Միքայէլը: Հայ միջնադարեան մանրանկարչութեան մէջ, կը գտնենք յատկապէս Գաբրիէլ հրեշտակի պատկերը, Տիրամօր անտելու ատեն:

Օրհնաբանեցէ՛ք Տէրը, ո՛վ հրեշտակներ, անոր հրամանները լսող եւ գործադրող հզօր էակներ:
Օրհնաբանեցէ՛ք Տէրը, դուք՝ որ անոր բանակն էք եւ անոր կամբը կատարող պաշտօնեաները:
Օրհնաբանեցէ՛ք Տէրը, դուք՝ բոլո՛ր ստեղծուածներ, որովհետեւ անոր տէրութիւնը ամենուրեք կը տարածուի:
Օրհնաբանէ՛ Տէրը, ով իմ անձս:

Սաղմոս 103[102].20-22



Հրեշտակի բարձրաբանդակը Աղթամար վանքի Ս. Խաչ եկեղեցոյ ճակատին:

«Հրեշտակը եւ Ս. Մարիամը» 1330 ի Կիրակոս Աղբակեցիի «Աւետում» մանրանկար

Սուրբ Պատարագի գլխաւոր երգերէն

Գիտէի՞ր թէ պատարագի ընթացքին, իւրաքանչիւր մասի բնագրին հիմնական բաժիններուն յարմարող երգեր կան որոնք կ'երգուին եւ որոնք կը նկատուին Պատարագի գլխաւոր երգերը: Իսկ որո՞նք են այդ երգերը...

Պատարագի երկրորդ բաժնի, Ծաշու ժամի ընթացքին կ'երգուի մեր բոլորին ծանօթ «Սուրբ Աստուած»-ը:

«Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յարեար ի մեռելոց. ողորմեա մեզ:»

Պատարագի երրորդ բաժնին, այսինքն Բուն Պատարագի ընթացքին կ'երգուին այլ շատ ծանօթ երգեր որոնցմէ են «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» եւ «Սուրբ, Սուրբ» երգերը:

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»-ին զուգահեռ, հաւատացեալները իրարու ողջոյն կու տան, այսինքն զիրար համբուրելու ձեւով կը մօտենան ու Քրիստոսի յայտնութեան լուրը իրարու կը փոխանցեն: Ողջոյն տուողը կ'ըսէ .-« Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», իսկ ողջոյն ստացողը կը պատասխանէ .- « Օրհնեալ է յայտնութիւն Քրիստոսի»:

Այս ողջոյնը կը սկսի խորանէն ու կը փոխանցուի պատարագին ներկայ եղող բոլոր հաւատացեալներուն, մէկէն միւսը, հերթաբար:

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, որ էնն Աստուած աստ բազմեցաւ. խաղաղութեան ձայն հնչեցաւ, սուրբ ողջունի հրաման տուաւ. Եկեղեցիս մի անձն եղել. համբոյրս յօդ լրման տուաւ: Թշնամութիւնն հեռացաւ. սէրն յընդհանուրս սփռեցաւ: Արդ պաշտօնեայք՝ բարձեալ զձայն տո՛ւք զօրհնութիւն ի մի բերան, միասնական աստուածութեանն, որում սրովբէքն են սրբաբան:

Պատարագի նոյն այս բաժնին ընթացքին,

քահանան սկիհը, գինիի բաժակը, վեր առնելով կ'ըսէ «Առէ՛ք, կերէ՛ք այս է Մարմին Իմ» ակնարկելով նշխարին որմով աւելի ուշ պիտի հաղորդուին հաւատացեալները: Այս բաժնէն ճիշդ առաջ կ'երգուի «Սուրբ, Սուրբ»-ը, սրբաբանելու համար Քրիստոս:

Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէ՛ր զօրութեանց. լի՛ են երկինք եւ երկիր փառօք քո. օրհնութիւն ի բարձունս. օրհնեալ որ երկիր եւ գալոցդ ես անուամբ Տեառն. Ովսանա ի բարձունս:



Սկիհ 1910 թ

Ը

Այնպես ինչպես իր ֆիզիքական յատկությունները, մեզմէ իրաքանջիւրը ունի իր նկարագրային յատկությունները որոնք մեզ կը զանազանեն մէկս միւսէն: Եթէ մարդ ունի հասակի, կազմի, մորթի գոյնի վերաբերող յատկություններ, ունի նաեւ իր մտածելու ձեւին եւ զգալու կերպին վերաբերող յատկություններ: Ահա այդ զգալու եղանակն ու մտածելակերպն են որ կը կազմեն անձի մը բարոյական տիպարը՝ նկարագիրը:

Կ

ա

Նկարագիր կը նշանակէ կեանքի մէջ վարուելու ձեւ եւ բարոյական յատկանիշներ: Մեզմէ ոմանք զգայուն են ոմանք անզգամ, ոմանք կոքոտ են ոմանք ալ տրամաբանող: Դժուար կացութեան առջեւ ոմանք ջղային կ'ըլլան ոմանք՝ պաղարիւն: Ընկերային շրջանակներէն ներս մէկը մեծամիտ կ'ըլլայ, մէկ ուրիշը՝ համեստ: Ու այսպէս անվերջ, մարդիկ նոյն կացութեան մը առջեւ կ'ունենան իրարմէ շատ տարբեր զգալու եւ մտածելու կերպեր:

ր

ա

Այն անձը որուն նկարագիրը ընդհանրապէս բարի եւ լաւ գիծեր ունի կրնանք կոչել առաքինի անձ: Հակառակը պիտի ըլլար՝ անառակ: Առաքինի անձ դառնալը աշխատանքի կը կարօտի: Որքան փոքր տարիքէն սկսինք մեր գէշ սովորություններն ու վարուելակերպերը փոխել այնքան շուտ կը յաջողինք դառնալ առաքինի եւ բարի անձ:

գ

ի

«Մաշտոցի արձագանգ»-ի այս թիւով պիտի սկսինք ներկայացնել յօդուածներու շարք մը որոնք պիտի վերաբերին առաքինություններուն: Անոնք պատմութեան եւ հարցումներու միջոցաւ, առիթ պիտի տան քեզի որ մտածես բարի նկարագրային գիծերու մասին եւ փորձես անոնց տէր դառնալ: Բարեկամներուդ հետ կարդա՛ այդ պատմությունները, մտածէ հարցումներուն մասին ու կարծիքդ յայտնէ թէ դուն ի՞նչ կը մտածես հոն ներակայացուած իրաքանջիւր առաքինութեան մասին:

ր

ՅԱՐԱՏԵԻՈՒԹԻՒՆ

Յարատեւ ըլլալ կը ճշանակէ...

... սկսուած ընթացք մը շարունակել դժուարութիւններով, հակադրութիւններով եւ վտանգներով հանդերձ:

Անձ մը որ յարատեւող է.- ➤

- Վճռակամ է
- Հաստատամիտ է
- Սկզբունքի տէր է
- Անփոփոխ է

Անձ մը որ չի յարատեւեր.- ➤

- համոզումի պակասը ունի
- համբերութիւն չունի
- երկմտանքի մէջ է
- փոփոխամիտ է
- տատամսող է

Դուն որքա՞ն յարատեւող անձ մըն ես

Ընկերոջդ կը խոստանաս իրեն օգնել գործ մը ամբողջացնելու համար: Ժամանակը կ'անցնի, գործը տակաւին չի վերջանար.-

- Ա- ընկերոջդ կ'ըսես որ առանձին շարունակէ
- Բ- Կը շարունակես նոյնիսկ եթէ յոգնած ես ու աշխատանքը կ'երկարի
- Գ- Այնպէս կը ձեւացնես թէ ուշացած ես եւ տուն պէտք է վերադառնաս
- Դ- Կը շարունակես գործը մինչեւ վերջ որովհետեւ խօսք տուած էիր

Աստուածաշունչը կ'ըսէ... ..
 Եղութիւնները մեզի համբերութիւն կու տան, համբերութիւնը՝ տոկունութիւն, տոկունութիւնը՝ յոյս... .

Հոռմայեցիներուն 5.3-4

Ասկէ շատ տարիներ առաջ, Նոյեմբեր ամսուան մը ընթացքին

Ասկէ 37 տարիներ առաջ Նոյեմբեր ամսուան ընթացքին կը մահանար հայ ժամանակակից գրականութեան մեծագոյն դէմքերէն՝ Համաստեղը:Ան ծանօթ է իր պատմուածքներով որոնց միջավայրը հայ գիւղն է, իսկ հերոսը՝ հայ խոնարհ ու բարի գիւղացին:

Չալօ հատուած

Աւելի ծեր քան մեր գիւղին երեզվոյիսը. սակայն անոր պէս ակնոց չէր գործածեր Չալոն: Երկու լայն տերեւներուն նման երկու ականջները կախ էին, պոչը թոյլ, այլեւս կոնակին վրայ կծկելու անկարող: Ծանր ու միշտ վար ինկած կոպերը աչքերուն մելամաղձոտ երեսոյթ մը կու տային: Դէմքը խորհրդաւոր էր մանաւանդ, երբ ճամբուն վրայ, միայնակ, դունչը լուսնկային տնկած, լուսնկան կը հոտուրտար:

Մեր գիւղի լուսնկան ալ, բոլոր գիւղերու լուսնկաներուն պէս, եկեղեցիին գմբեթէն չէր հեռանար. շատ անգամ անոր վրայ կ'իյնար, հոն կը հանգչէր: Չալոյի դունչը, հիւսիս երկարող Մագնիսի մը պէս, այն կողմն էր միշտ. կը կաղկանձէր ու կ'ոռնար պղինձի պէս արձագանգուող Քարայրներու ձայնով:

Ուաու... Ուաու... Ուաու..

* * *

Ասկէ 137 տարիներ առաջ, Նոյեմբեր ամսուան ընթացքին կը մահանար 18-րդ դարու հայկական վերածնունդի ամենալուսաւոր դէմքերէն՝ Մկրտիչ Պէշիկթաշլեան:Ան ծանօթ է ամենէն աւելի իր գրաբար եւ աշխարհաբար բանաստեղծութիւններով:



Աղուէսն ու կաքաւը

Աղուէսն որսաց մի կաքաւ,
Որսին վրայ կուզ եկաւ:
Ծատոնց ու շատ էր սոված:
Կաքաւն հիծեց.- «Ո՛վ Աստուած,
Ըլլաւ օրհնեալ, զի կ'ազատես զիս կեանքէն
Ամէնօրեայ տաժանքէն,
Իսկ դուն, աղուէս, դո՛ւն ալ փառք տուր
Արարչին,
Որ որս դրաւ քու առաջին:
Աղուէսն յուզուած, եկաւ ծունկի, աչքն երկնին,
Ու փառք տուաւ իր կարգին,
- «Փառաւորեալ ես դուն կապոյտ, մեծ Իշխան,
Զի քաղցածիս նուիրեցիր նուրբ սեղան...»:
Պիտի խօսէր տակաւին,
Սակայն, յանկարծ, կաքաւին
Լսեց թոխչքն, ի վերուստ
Տեսաւ հեզնանքն ու փախուստ:
Ու խօսեցաւ ինքն իրեն.
-«Ա՛յ քեզ յիմար, վայ քեզ տխմար, անօրէն,
Կեանքի կանոնն այսուհետեւ լա՛ւ գիտցիր,-
Նախ կեր, ապա գոհացիր»:

Առաջին լուսաւորիչներ

Թադէոս Առաքեալ



Քրիստոսի 12 առաքեալներէն մէկն է ան: Եղած է Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը առաջին անգամ քարոզողը: Իրեն կը հետեւի Բարթողիմէոս առաքեալ: Թադէոս առաքեալ Յիսուսի համբարձումէն ետք կու գայ Եդեսիա ուր կը բժշկէ Աբգար թագաւորը որ մորթայից հիւանդութենէ կը տառապէր: Աբգար կ'ընդունի նոր հաւատքը: Թադէոս Եդեսիայէն կ'անցնի Հայաստան իր հետ

իբր մասունք տանելով գեղարդը, այն սուր զէնքը որմով խոցուած էր Քրիստոս խաչափայտին վրայ: Թադէոս կը յաջողի մուտք գործել հայոց արքունիքէն ներս ու դարձի բերել մեծ թիւով մարդիկ որոնց շարքին արքայից իսկ աղջիկը՝ Սանդուխտ: Հայաստանէն ներս, Թադէոս առաքեալ կը գործէ յատկապէս Արտազ գաւառ, ուր հիմնադրած է Թադէի վանքը, նախկին հեթանոսական տաճարի մը վայրին վրայ: Թադէոս առաքեալ եւ Սանդուխտ նահատակուած են Սանատրուկ թագաւորի հրամանով:

Բարթողիմէոս Առաքեալ

Քրիստոսի 12 առաքեալներէն մէկն է, Հայաստան եկած Թադէոս առաքեալի նահատակութենէն ետք: Ան իր քարոզչութիւնը կը սկսի Գողթն գաւառէն ներս, ապա Սիւնեաց, Արարատեան եւ Վասպուրական նահանգներուն մէջ:

Բարթողիմէոս Հայաստան կը բերէ տիրամօր պատկերը, որ պահ կը դրուի Անձեւացեան գաւառի Դարբնաց Քար կոչուած տեղը, Անահիտ դիցուհիին մեհեանից տեղ կառուցած Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ:



Բարթողիմէոս առաքեալի գերեզմանը կը գտնուի Աղբակի համանուն վանքին մէջ:

Իբրեւ Հայաստանեայց եկեղեցոյ հիմնադիրներ, Թադէոս եւ Բարթողիմէոս առաքեալներուն նուիրուած աղօթքներն ու գանձերը շատ են: Առաքեալները իրենց տեղը գրաւած են նաեւ միջնադարեան կերպարարուեստէն ներս: Թադէոս առաքեալին պատկերը կը ներկայացուի ընդհանրապէս մէկ ձեռքը դաշոյն բռնած, դաշոյն որմով նահատակուեցաւ, իսկ միւս ձեռքին՝ գեղարդը, որ ըստ աւանդութեան իր հետ Հայաստան բերած էր:

Բարթողիմէոս առաքեալին պատկերը կը ներակայացուի ընդհանրապէս մէկ ձեռքը դաշոյնով իսկ միւս ձեռքը Տիրամօր նկարով որ ըստ աւանդութեան իր հետ Հայաստան բերած էր:

Հոկտեմբեր ամսուան պատասխանողներ եւ մասնակցողներ

Մանկապարտեզի անկիւն

Կ'իրիկնանար, Արձակէ՛, գտնեն, ամայի, ուտելիքը, հաց, ձուկ, բաւականաչափ

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. բ զաւակ
2. ա. Սամուէլ
3. ա. Հեղիից
5. գ. չար
6. դ. Սամարացի մարդ մը
7. բ. Եգիպտացիներուն
8. բ. Մազերուն
9. գ. 40
10. բ. հինգ հաց եւ երկու ձուկ

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. ա. Կորին, բ. Մովսէս Խորենացի
2. ա. Ս. Գէորգ գ. Խաչվերաց
3. գ. Յորենի հասկերէ կազմուած խաչ
4. դ. Կապադովկիա
5. բ. անդամալոյծից
6. բ. Գաղատացիս 5.13
7. դ. Ելից
8. ա. Բեթսաիդա
9. բ. Տրդատ Գ.
10. բ. Վնամշապուհ

Երկրորդականի անկիւն

1. Փառք, տիեզերաց, լիացոյց, նմա Ամէն
2. Նորին Սուրբ Օծութիւն Տէր Տէր
3. Աստուած Օգնական, Աստուած Օգնական, Աստուած Օգնական, Օրհնեա՛
4. Հաւատք, Յոյս Սէր եւ Մկրտութիւն
5. Մեղայ Աստուծոյ
6. Իմ Աստուած
7. Քրիստոս, յայտնեցաւ, Օրհնեալ, Յայտնութիւնը
8. Յարեաւ Ի Մեռելոց, Օրհնեալ Յարութիւնը Քրիստոսի
9. Ծնաւ եւ յայտնեցաւ, Օրհնեալ յայտնութիւնը Քրիստոսի, ձեզի մեզի Աւետիս
10. ա. Նիկիոյ 325

Ընդհանուրի անկիւն

1. բ. Հին եւ Նոր Ուխտ
2. գ. Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի
3. ա. լոյս կու տայ
4. դ. բոլոր պատասխանները ճիշդ են
5. բ. յիմար եւ իմաստուն կոչսերը
6. ա. Վրացիներուն եւ աղուաններուն
7. գ. Եկեղեցին հայկական ծննդավայրն է հոգւոյս
8. դ. բոլոր պատասխանները ճիշդ են
9. բ. Յիշէա՛ Տէր եւ ողորմեա՛
10. ա. դպիր տղոց բռնած մոմն է

Հոկտեմբեր ամսուան

մասնակցողներ

Մանկապարտեզ

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Խշիշեան Արշակ, Արագ Գաբթանճեան, Արին Անթեայեան, Կրէյս Նարեկեան, Քեհեայեան Թաթիանա:

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Լորի Չուխանեան, Անի Չուխանեան, Սեւան Մելեքեան, Գէորգ Պուլիքեան, Դալար Գաբթանճեան, Յարութ Քուլլուքեան, Սերենա Քուլլուքեան, Հրայր Մատթէոսեան:

Անսխալ պատասխանող

Առէն Պապիկեան, Մարիա Դանիէլեան, Ներսէս Նասոյեան,

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Թամար Չաքմաքճեան, Թամար Պուլիքեան, Գօգօ Մատթէոսեան, Անի Մելեքեան, Հրակ Նարեկեան, Լորա Սարիմանուկեան, Ռուբէն Սեթեան, Արի Միրզայեան, Ժան-Յակոբ Չուխանեան:

Երկրորդականի անկիւն

Թամար Գիզիրեան, Փօլ Գիզիրեան, Կարօ Կարապետեան:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն**



Ամէն մարդ կերաւ այնքան որ ուզեց: Եւ ինչ որ աւելցաւ, տասներկու կողով լեցուց:

Ամբողջացո՛ւր ըստ Ղուկասի Աւետարանին 9.14-17
**հինգ, յիսունական, տասներկու, աչքերը, կշտացան,
ձուկը, հացը, կատարեցին**

Որովհետեւ շուրջ ----- հազար մարդ կար: Յիսուս
աշակերտներուն ըսաւ.

- Նստեցուցէք զանոնք ----- հոգինոց խումբերով:

Անոնք ----- հրահանգը եւ նստեցուցին բոլորն ալ:

Ապա Յիսուս առաւ հինգ ----- եւ երկու -----,

----- երկինք բարձրացուց, կտրեց, եւ աշակերտներուն

տուաւ՝ որ բաժնեն ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու

-----, եւ աշակերտները աւելցած կտորները հաւաքելով՝

----- սակաւ լեցուցին:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1) Իսրայէլի ազգին գլխաւորները
ինչ խնդրեցին Սամուէլէն:
ա.- Թագաւոր մը նշանակել
բ.- Դատաւոր մը ընտրել
գ.- Տաճար մը շինել
դ.- Սաւուղին պատժել

2) Սաւուղ իր ծառային հետ ինչ կը
փնտռէր:
ա.- Սամուէլ մարգարէին որդիները
բ.- Իր կորսուած էշերը
գ.- Իր հօրը
դ.- Իր ընկերներուն

3) Սամուէլ մարգարէն ինչ ըսաւ
Սաւուղին
ա.- Թագաւոր պիտի ըլլաս
բ.- Հարուստ պիտի ըլլաս
գ.- Զաւակ մը պիտի ունենաս
դ.- Դճոխք պիտի երթաս

4) Սաւուղ թէեւ քաջ էր, սակայն
յաճախ ինչպէս կը վարուէր:
ա.- բռնակալ
բ.- տգէտ
գ.- միամիտ
դ.- ինքնագլուխ

5) Սաւուղ Սամուէլին ուշանալուն
պատճառով ինչ ըրաւ:
ա.- յետաձգեց մատուցը
բ.- Սպասեց մարգարէին
գ.- Զոհը ինքը մատուցանեց
դ.- ուրիշ մարգարէ մը
մատուցանեց

6) Ամբողջացո՞ւր հետեւեալ աղօթքը:
Ով մեծ -----, որ ես
-----, մեզ ----- հայր
եւ գթոտ մայր, տուր մեզ -----,
ընենք -----, չըլլանք անհոգ
ապրիմք -----:

7) Աստուած զո՞ր պտուղը Ադամի եւ
Եւայի արգիլեց ուտել:
ա.- Նարինջ
բ.- բարի եւ չարը գիտնալու ծառէն
գ.- Պանան
դ.- Ելակ

8) Ո՞վ կրցաւ Փառաւոնին երազը
բացատրել:
ա.- Մովսէս
բ.- Յակոբ
գ.- Յովսէփ
դ.- Իսահակ

9) Դաւիթ զո՞ր հսկային սպաննեց:
ա.- Գողիաթ
բ.- Փառաւոն
գ.- Մաթուսաղա
դ.- Ենովք

10) Նոր կտակարանը քանի՞ գիրքերէ կը
բաղկանայ:
ա.- 27
բ.- 18
գ.- 29
դ.- 39

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն**

Ամբողջացու՛ր

1) Մովսէսի մահէն ետք Տէրը խօսեցաւ անոր օգնական Նաւէի որդի ----- հետ.

- ա.- Յովսէփի
- բ.- Յակոբի
- գ.- Յեսուի

2) Տէրը Յեսուին պատգամ տուաւ որ քաջ ըլլայ, պահէ ու կատարէ այն բոլոր օրէնքները որոնք ----- իրէն պատուիրած էր.

- ա.- Մովսէս
- բ.- Մաթէոս
- գ.- Մարկոս

3) Յեսու հետախույզներ դրկեց ----- գաղաքը

- ա.- Երուսաղէմ
- բ.- Եգիպտոս
- գ.- Երիթով

4) Տէրը որ քաղաքը խոստացաւ Յէսուի.

- ա.- Երուսաղէմ
- բ.- Եգիպտոս
- գ.- Երիթով

5) Ինչպէս փլան Երիթովի պարիսպները.

6) Հին կտարկարանը գանի՞ գիրքերէ կը բաղկանայ

- ա.- 27
- բ.- 39
- գ.- 17
- դ.- 77

7)- Մեսրոպ Մաշտոցի անունը կրող Եկեղեցին ե՞րբ կառուցուած է Օշական գիւղին մէջ:

- ա.- 1875
- բ.- 1962
- գ.- 875
- դ.- 500

8) Ե՞րբ կը տօնենք Քրիստոսի 72 աշակերտներու տօնը:

- ա.- Մարտին
- բ.- Հոկտեմբերին
- գ.- Սեպտեմբերին
- դ.- Յունունարին

9) - Յովսէփի եղբայրները քանի՞ ոսկի ծախեցին իրենց:

- ա.- երեսուն արծաթ դրամով:
- բ.- քսան ոսկի դրամով:
- գ.- քսան արծաթ դրամով:
- դ.- տասը ոսկի դրամով:

10) «Հաւատով խոստովանիմ» քանի՞ համարներէ կը բաղկանայ:

- ա.- քսանհինգ համարներէ:
- բ.- տասերկու համարներէ:
- գ.- երեսուն համարներէ:
- դ.- քսանչորս համարներէ:

11) Ամբողջացու՛ր համարը:
Հաւատով խոստովանիմ եւ երկիրպագանեմ քեզ:----- լոյս, ----- Սուրբ երրորդութիւն եւ մի -----, արարիչ ----- եւ հալածիչ -----. հալածեա՛ ի ----- իմմէ զխաւար մեղաց եւ անգիտութեան. եւ ----- զմիտս իմ՝ ի ժամուս ----- աղօթել քեզ ի հաճոյս, եւ ընդունել ի քէն ----- իմ.եւ ----- քո արարածոց եւ ինձ՝ -----

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն**

1- Յիսուսի 12 առաքեալներէն որո՞նք քարոզեցին Հայաստանի մէջ:
-----:

2- Որո՞նք հիմնեցին Հայաստանի Եկեղեցին
-----:

3-Մօտաւորապէս ո՞ր թուականին հիմնուեցաւ Հայաստանի Եկեղեցին:

- ա. 60 Ք.Ե.
- բ. 300 Ք.Ե.
- գ. 301 Ք.Ե.
- դ. 451 Ք.Ե.

4-Քրիստոնէութիւնը ե՞րբ պետական կրօնք հռչակուեցաւ Հայաստանի մէջ:

- ա. 260 Ք.Ե.
- բ. 400 Ք.Ե.
- գ. 301 Ք.Ե.
- դ. 451 Ք.Ե.

5-Ո՞վ է հայոց առաջին հայրապետը:

- ա. Սուրբ Թադէոս
- բ. Սուրբ Բարթողիմէոս
- գ. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ
- դ. Սուրբ Սահակ Պարթեւ

6- Ո՞ր տաճարն է, որ առաջինը կառուցուեցաւ Հայաստանի մէջ, եւ կանգուն է մինչեւ այսօր: Ո՞ր թուականին:

7- Ի՞նչ կը նշանակէ Էջմիածին:

8- Ո՞վ եւ ե՞րբ ստեղծեց Հայ այբուբենը:

9.- Ո՞ր կաթողիկոսի օրով ստեղծուեցաւ Հայ այբուբենը:

10- Աստուածաշունչի Հին կտակարանի ո՞ր գիրքը առաջին անգամ հայերէնի թարգմանուեցաւ:

Ի՞նչ է առաջին նախադասութիւնը:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Ընդհանուրի անկիւն

1- Ո՞ր տեղի ունեցաւ տիեզերական երկրորդ ժողովը.-

- ա- Կանա
- բ- Երուսաղեմ
- գ- Կոստանդնուպոլիս
- դ- Երեւան

2- Հետեւեալներէն ո՞ր մէկը չգործածուիր Ս. Մարիամին համար.-

- ա- Աստուածամայր
- բ- Աստուածածին
- գ- Ս. Կոյս
- դ- այս բոլորն ալ կ'ըսուին

3- Յախումն անձը.-

- ա- խառնող է
- բ- յանդուգն է
- գ- դանդաղաշարժ է
- դ- կոռագան է

4- Հետեւեալներէն ո՞ր մէկը արական անուն է.-

- ա- Հայկուկ
- բ- Եւգիենէ
- գ- Ծերուն
- դ- Դեղձան

5- Հետեւեալներէն ո՞ր մէկը բոժոժի չի վերագրուիր.-

- ա- զանգակ
- բ- բուրվառ
- գ- աւետարան
- դ- հնչուն

6- Ղուկաս 16-ի ո՞ր առակին մէջ Աբրահամ մեծահարուստ մարդուն կը թելադրէ մարգարէներուն եւ Մովսէսի օրէնքին հաւատալ.-

- ա- աղքատ Ղազարոս
- բ- Ծարպիկ տնտեսը
- գ- կորսուած դրամը
- դ- Ղուկասի մէջ առակներ չկան

7- Ո՞րն է Յիսուսի վերջին խօսքը, խաչափայտին վրայ.-

- ա- Հա՛յր ներէ զիրենք
- բ- Հա՛յր ձեռքերուդ մէջ կ'աւանդեմ հոգիս
- գ- Հա՛յր, օրհնեալ ես
- դ- Հա՛յր ինչո՞ւ լքեցիր զիս

8- Ըստ Սաղմոսին, «Տէրն է իմ...».-

- ա- Ապաւէնս
- բ- Պաշտպանս
- գ- Աստուածս
- դ- Հովիս

9- Մարդու մը տիկնոջ քրոջ ամուսինը անոր.-

- ա- քենեկալն է
- բ- քեցին է
- գ- քեռին է
- դ- քեռայրն է

10- Դպիր, սարկաւագ, եպիսկոպոս, արեղայ. ո՞րն է ամենէն բարձրաստիճանը.-

- ա- Դպիր
- բ- սարկաւագ
- գ- եպիսկոպոս
- դ- արեղայ

Կարճ Լուրեր Կիրակնօրեայէն

. Մինչեւ Նոյեմբեր 2, 2003 Կիրակնօրեայ Դպրոցի Արձանագրուած աշակերտներուն թիւն է 80

. Դպրոցիս աշակերտներէն՝ Թամար Գիզիրեան, Փոլ Գիզիրեան եւ Քրիստինա Լոշխաճեան ինչպէս նաեւ ուսուցիչներէն Օրդ. Գարուին Գէպթանճեան եւ Պրն. Թորոս Պապիկեան մասնակցեցան Գանատայի Թեմի Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Խոհուրդի կողմէ կազմակերպուած Երիտասարդական Միօրեայ Սեմինարին Քինկսթըրնի մէջ Նոյեմբեր 1, 2003 ին:

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ

Խմբագիր՝	Շաղիկ Պոյաճեան
Աշխատակիցներ՝	Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան, Գարուին Գէպթանճեան, Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս Պապիկեան:

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

*Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը.-
Ուսուցիչներ՝ Թային Թաշճեան, Իզապէլ Քուլլուքեան, Սալբի Բակլաեան, Վերա Կարապետեան,
Երան Լոշխաճեան, Գարուին Գէպթանճեան, Յասմիկ Նաճարեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն
Իշխանեան, Յասմիկ Գանաճեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Կայքէջ՝ Բաֆֆի Պապիկեան,
Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Շաղիկ Պոյաճեան:*



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայց. Առաք. Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցի Պարբերաթերթ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 4

Դեկտեմբեր 2003

Կիր.	Բշ.	Գշ.	Դշ.	Եշ.	Ուր.	Շաբ.
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30	31			

Փառք կեանքի շնորհքին

Իւրաքանչիւր տարիքի համար, Ամանորը յատուկ իմաստ կ'ունենայ եւ տարբեր հմայք կը ստանայ: Ամենէն փոքրերը յատկապէս կ'ուրախանան զարդարուն եւ լուսաւոր տօնածառով ու կը խանդավառուին Կաղանդ Պապայիցն այցով ու անոր բերած անհամար նուէրներով: Մենք՝ չափահասներս, Նոր Տարուան երեկոյեան յատկապէս ցնծութիւն կը զգանք մեր ընտանիքի անդամներով շրջապատուած ըլլալով, եւ կ'երջանկանանք մեր զաւակներուն իսկ երջանկութեամբ. իսկ տարեցներ իրենց կարգին կ'երջանկանան իրենց զաւակներով ու թոռներով:

6	Ս. Նիկողայոս սքանչելագործ հայրապետ
13	Սուրբ Յակոբ Մօքնայ հայրապետ
20	Սուրբ Աբգար Նախավկայ թագաւոր
23	Տօն Դաւիթ մարգարէին եւ Յակոբ առաքելին
25	Տօն Սուրբ Ստեփանոս նախասարկաւագին եւ առաջին մարտիրոսին
27	Տօն սուրբ առաքելներ Պետրոսի եւ Պօղոսի
30	Ծննդեան պահքի առաջին օր
31/1	Նոր տարուան գիշեր- Ամանոր

Ամանորեան ընտանեկան հաւաքներու ամենէն գեղեցիկ բաժինն է սակայն նոր տարին դիմաւորելու խորհրդաւոր այն պահը ուր մրգեղէններու սեղանին շուրջ հաւաքուած, մոմի լոյսին տակ ընտանեօք կ'արտասանուի «Հայր Մեր»ը, աղօթքով ընդունելու եւ սկսելու համար այդ տարին:

Աղօթելու առիթները անշուշտ մեր կեանքէն ներս անպակաս են. անոնք ժամ ու թիւ չունին ու կրնան կատարուիլ որեւէ տեղ, որեւէ պահու, որեւէ նիւթի շուրջ: Ամանորի առթիւ արտասանուած աղօթքին սակայն, կարելի տալ յատուկ նիւթ, այդ առթիւ երախտապարտ գտնուելով Աստուծոյ որ տուաւ մեզի շնորհքն ու պարգեւը տարի մը եւս ամբողջացնելու. թէեւ ուրիշներ ալ սկսան տարին սակայն չկրցան ամբողջացնել զայն: Փառք ուրեմն կեանքի շնորհքին համար, առողջութեան համար, ընտանիքին եւ սիրոյն համար:

Այս առթիւ «Մաշտոցի Արձագանգ»ի խմբագրական կազմը կը հայցէ Աստուծմէ որ բոլորին տայ Նոր տարին առողջութեամբ եւ ուրախութեամբ ամբողջացնելու շնորհքը:

Ոեւէ մէկուն ոեւէ բանով պարտական մի՛ մնաք. միայն իրար սիրելու պարտաւորութիւնը ունեցէք, քանի որ իր ընկերը սիրողը կատարած կ'ըլլայ Աստուծոյ Օրէնքը:

Ս. Պօղոս Առաքել

Հոռմայեցիներուն գրած նամակէն 13.8

Սէր իրարու հանդէպ

Հատուած՝ Պօղոս առաքեալի
հռոմայեցիներուն գրած նամակէն
13.8-14

«Սուրբ Պօղոս առաքեալի տօնի առթիւ»

Ոեւէ մէկուն ոեւէ բանով պարտական մի՛ մնաք. միայն իրար սիրելու պարտաւորութիւնը ունեցէք, քանի որ իր ընկերը սիրողը կատարած կ'ըլլայ Աստուծոյ Օրէնքը: Որովհետեւ Աստուծոյ պատուիրանները, «Մի՛ շնար, մի՛ սպաններ, մի՛ գողնար, սուտ վկայութիւն մի՛ ըներ, մի՛ ցանկար» եւ միւս բոլորը, խտացած են սա միակ պատուիրանին մէջ. «Սիրէ ընկերդ քու անձիդ պէս»: Ով որ իր ընկերը կը սիրէ, չարիք չ'ըներ անոր: Ուրեմն սիրել, կը նշանակէ Աստուծոյ օրէնքը լման գործադրել:

Սիրոյ այս սկզբունքով ընթացէք, գիտնալով թէ ի՛նչ ժամանակի մէջ կ'ապրիք: Ժամանակն է որ քունը թօթափենք եւ արթննանք, որովհետեւ հիմա փրկութիւնը աւելի մօտ է մեզի, քան այն ատեն՝ երբ հաւատացինք: Գիշերը ահա կ'անցնի եւ ցերեկը մօտ է: Ուստի խաւարի գործերէն հեռանանք եւ լոյսի զէնքերը մեր վրայ առնենք, ապրելու համար այնպէս՝ ինչպէս վայել է լոյսի մէջ քալողներուն, փոխանակ անառակութեամբ, արբեցութեամբ, խառնակեցութեամբ ու պղծութեամբ, կամ նախանձով ու հակառակութեամբ ապրելու: Տէր Յիսուս Քրիստոսի նկարագիրը ձեր վրայ առէք, եւ մարմնի ցանկութիւնները կատարելու հետամուտ մի՛ ըլլաք:

Բովանդակութիւն


- Փառք կեանքի շնորհքին
- Սէր իրարու հանդէպ
- Ամանոր
- Ո՞վ է կաղանդ պապան
- Ծանօթանանք Աստուածաշունչին
- Յիսուսի առաջին առաքեալներէն՝ Պետրոս առաքեալ
- Յիսուսի վերջին առաքեալներէն՝ Պօղոս առաքեալ
- Նկարագիր
- Սուրբ Յակոբի մասին
- 7 Դեկտեմբեր 1988
- Խօսքեր Պօղոս առաքեալէն
- Պահուած բառ
- Փոքրիկներու ամանորը
- Նոյեմբեր ամսուան պատասխաններն ու մասնակցողները
- Ո՞րն է ճիշդ պատասխանը
- Կարճ լուրեր կիրակնօրեայէն

Ամանոր

Նոր Տարին կը տօնուի բազմաթիւ ազգերու կողմէ: Այս տօնը հայերը կը կոչեն նաեւ «Ամանոր», բառ մը որ կազմուած է հայերէն *ամ* եւ *նոր* արմատներէն, կամ Նաւասարդ որ կազմուած է հնդկաիրանական *ճավ* եւ *սարդ* բառերէն որոնք կը նշանակեն *նոր* եւ *տարի*: Ան կը կոչուի նաեւ տարեմուտ, կաղանդ:

Հին հայերը Նոր Տարին կը դիմաւորէին ամրան, թէւ կան նաեւ այլ տուեալներ որոնք կ'ըսեն թէ տարեմուտը կը տօնուէր գարնան: Ամրան տօնուելուն պատճառը այն է որ հայկական աւանդութիւնը, Հայկ նահապետի բռնակալ Բելի դէմ յաղթանակը հայոց Ջոր գաւառին մէջ, կը նշէ նախքան Քրիստոս 2492 թուականի Ն աւ ա ս ար դ

1-ին, որ մեր ամիսներու ա ն ու ն ո վ Օգոստոս 11-ն է: 18-րդ դարու Ամենայն Հայոց Տէր Սիմէօն Երեւանցի կաթողիկոսի տոմարով հայերը Յունուար 1-ը ը ն դ ու ն ե ց ի ն որպէս տարուայ սկիզբ եւ Ամանորի տօն. մինչ այդ Յունուար 1-ը մեր մօտ մասնակիօրէն կը նշուէր որպէս տարեսկիզբ:



Ո՞ր է Կաղանդ Պապան



Շատ մը ժողովուրդներ ամանորուայ տօնին տօնածառ կը զարդարեն, ինչ որ կը խորհրդանշէ դրախտի Կենաց ծառը. իսկ տօնածառին գլխուն դրուած աստղը կը խորհրդանշէ Բեթլեհէմի աստղը:

Կէս գիշերին նուէրներով եկող Չմեռ կամ Կաղանդ Պապան, ուրիշներու մօտ՝ Տէտ Մորոզ, Սանթա քլաուս, Չմիւռնիա քաղաքի սուրբ Նիկողայոս Աքանչելագործ Հայրապետն է: Նիկողայոսը ծնած է 280 թուականին Փոքր Ասիոյ Լիկիա նահանգին մէջ: Մեծահարուստ, բարեպաշտ եւ բարեգործ ընտանիքի զաւակ էր եւ մանուկ հասակէն Աւետարանի պատգամներուն հետեւելով քրիստոնէական բարեպաշտ կեանք մը կ'ապրէր: Իր ամբողջ կեանքի ընթացքին հետեւած էր Աւետարանի այն պատգամին որ կ'ըսէ « եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, ունեցածներդ վաճառէ եւ աղքատներուն տուր»: 1087թուականին, Իտալիոյ Պարի քաղաքին մէջ Նիկողայոսի անուան փառաւոր տաճար մը կառուցուած է ուր ամփոփուած են իր նշխարները:

Նիկողայոս Աքանչելագործ հայրապետը հրաշագործ էր, բարի, առատաձեռն եւ միշտ պատրաստ կարիքաւորներուն օգնելու եւ իր հարստութենէն մանուկներուն անակնկալ նուէրներ ընելու: Սուրբ Նիկողայոսը մանուկներուն պաշտպան սուրբն է, որոնց հանդէպ յատուկ հոգածութիւն կը ցուցաբերէ: Նոյնիսկ իր մահուրնէ ետք ան իր երկնային արագահաս օգնութեամբ կ'օգնէ իր բարեխօսութիւնը հայցող աղօթքներուն:

Ծանօթանանք Աստուածաշունչին Հին Կտակարան

17 պատմական գիրքեր
Ծննդոց
Ելից
Ղեկացուց
Թուոց
Բ. Օրինաց
Յեսու
Դատաւորաց
Հուրթ
Ա. Թագաւորաց
Բ. Թագաւորաց

Գ. Թագաւորաց
Դ. Թագաւորաց
Ա. Մնացորդաց
Բ. Մնացորդաց
Եզրասայ
Նէեմեայ
Եսթեր

5 բանաստեղծական եւ դաստիարակչական գիրքեր Յոբ

Սաղմոսներ
Առակներ
ժողովող
Երգ երգոց

17 մարգարէներու գիրքեր
Եսայի
Երեմեայ
Ողբ Երեմեայ
Եզեկիէլ
Դանիէլ

Ովսէա
Յովէլ
Ամոս
Աբդիա
Յովնան
Միքա
Նաումայ
Ամբակում
Սոփոնիա
Անգէ
Զաքարիա
Մաղաքիա



Ա. Մնացորդաց Բ. Մնացորդաց

Ի ս ր ա յ է լ ի կ ր օ ն ա կ ա ն ա ն ց ու դ ա ը եր ու պատմութիւնն են այդ գիրքերը որոնց նպատակն է վառ պահել կրօնական եւ ազգային գգացումները: Այս գիրքերուն մէջ գլխաւոր նիւթն է Սողոմոն թագաւորին տաճար շինելը:



Եզրասայ

Հ ա զ ա ր ա ո թ տարիներ առաջ գրուած այս գիրքը կը պարունակէ շատ այժմէական նիւթ մը՝ խ ա ո ն անուանութիւնները: Ան այսպէս կոչուած է իր հեղինակ Եզրասի անունով:



Նէեմեայ

Այս գիրքը ծանօթ է իր պարունակած մէկ պատմութեամբ՝ Երուսաղէմի պարիսպի վերականգնումը:



Եսթեր

Ե ս թ ե թ Պ ա ր ս կ ա ս տ ա ն ի Արտաշէս թագաւորին հետ ամուսնացած հրեայ աղջիկ մըն էր: Ան իր թագուհիի պաշտօնը օգտագործեց վտանգէ ազատելու համար իր ժողովուրդին կեանքը:

Մարկոսի Աւետարանի անուանաթերթը, մանրակար 1232ի Աստուածաշունչէն, Գրիչ եւ ծաղկող՝ Իգնատիոս

Գիտէի՞ր թէ...
Հին կտակարանի գիրքերէն Սաղմոսները, կը կարդացուին եկեղեցական արարողութիւններու ընթացքին: Անոնք հին կտակարանի ամենէն աւելի տարածուած եւ հաւատացեալներու կողմէ որդեգրուած գիրքն են:
Թէեւ տարբեր տարբեր մարդիկ Սաղմոսներ գրած են, սակայն բոլորն ալ միախմբուելով վերագրուած են մէկ հեղինակի՝ Դաւիթ թագաւորին:



5 բանաստեղծական եւ դաստիարակչական գրքեր



Յոբ

Այս գիրքը տառապող եւ վշտահար մարդուն պատմութիւնն է: Ան հիւսուած է այն հարցումին շուրջ թէ արդեօք կարելի՞ է վիշտերն ու տառապանքները մեղմացնել Աստուծոյ նախախնամութեամբ եւ Անոր հանդէպ հաւատքով:



Սաղմոսներ

Ո՞վ ծանօթ չէ Սաղմոս բառին: Ան կը նշանակէ գովեստ կամ փառաբանութիւն: Թիւով 150 հատ են եւ ունին գովաբանական, աղաչանքի կամ խնդրանքի բնոյթ:



Առակներ

Այս գիրքը կը սկսի մեր բոլորին ծանօթ այն նախադասութեամբ որ հայերէն թարգմանուած եւ հայերէն տառերով գրուած առաջին նախադասութիւնը եղած է. «Ճանաչել զհմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ,»



Ժողովող

Այս գիրքը ընդհանրապէս կը թուէ թէ ինչ ձեւերով կարելի է երջանկութիւն ձեռք ձգել եւ ինչ ձեւերով կարելի չէ: Ծանօթ նախադասութիւն մըն է այդ գիրքէն ներս «Ունայնութիւն, ունայնութիւն, աշխարհի վրայ ամէն ինչ ունայն է» գրութիւնը: Սակայն այս կարդալով պէտք չէ կարծել որ այս գիրքը յոռետես եւ յուսահատական է:




Երգ երգոց

Կենթադրուի թէ այս գիրքը Սողոմոնի ի՛ր իսկ ամուսնութեան առթիւ գրած բանաստեղծութիւններու հաւաքածոն է: Ամբողջութեամբ հարս ու փեսայի միջեւ խօսակցութիւններ է եւ քնարական բանաստեղծութիւն: Սուրբ գիրքի բանասէրները այս սիրոյ խօսքերը կը մեկնաբանեն որպէս Աստուծոյ եւ իր հաւատացեալ ժողովուրդին միջեւ գոյացող խօսակցութիւն կամ Քրիստոսի եկեղեցոյ հանդէպ սիրոյն արտայայտութեան միջոց:

Գիտէի՞ր թէ...

Ըստ հրէական ավանդութեան Երգ Երգոցը, Առակները եւ Ժողովողը գրած է Սողոմոն թագաւորը: Առաջինը՝ երիտասարդ տարիքին, երկրորդը՝ հասուն , իսկ երրորդը՝ ծերութեան շրջանին:



Աւետարանի կազմ, 15րդ դար

Յիսուսի առաջին առաքելներէն՝ Ս. Պետրոս Առաքեալ

Դեկտեմբեր ամսուան վերջին շաբաթը, Հայաստանեայց Առաքելական Մայր Եկեղեցին ունի աւագ տօն մը որուն ընթացքին կը յիշատակուին Յիսուսի աշակերտներէն երկուքը՝ Ս. Պետրոս եւ Ս. Պօղոս առաքելները:

Տեղեկութիւններ Պետրոս առաքելի մասին

Պետրոս Յիսուսի առաջին աշակերտներէն մէկն էր. բուն անունով Սիմոն կոչուած ձկնորս մը: Առաջին իսկ հանդիպումին, Յիսուս անոր տուաւ Պետրոս անունը որ կը նշանակէ վեմ, ժայռ եւ աւելցուց թէ իր եկեղեցին պիտի հիմնէ անոր վրայ: Պետրոսի եւ անոր եղբօր՝ Անդրէասի ակնարկելով Յիսուս ըսած է «Հետեւեցէք Ինձի եւ ես ձեզ մարդու որսորդ պիտի ընեմ», ըսել ուզելով թէ անոնց պիտի յանձնէ ճշմարիտ Աստուածը մարդոց ծանօթացնելու պաշտօնը:

Պետրոսի աշակերտական կեանքը լեցուն է յատուկ դէպքերով: Անոնցմէ օրինակ մըն է այն օրը երբ Յիսուս Պետրոսի հետ մալ կը նստի ու կ'երթայ ծովուն բացը: Հոն, Ան դուրս կ'ելլէ մալէն ու կը սկսի ջուրին վրայ քալել: Ապա կը թելադրէ Պետրոսի որ ինքն ալ նոյնը ընէ: Պետրոս դուրս կու գայ մալէն ու կը սկսի յառաջանալ դէպի Յիսուս: Սակայն շուտով կը սկսի ընկղմիլ որովհետեւ իր հաւատքը կը տկարանայ ու կասկած կ'արթննայ իր մէջը ջուրին վրայ քալելու իր կարողութեան շուրջ:



Ս. Պետրոս Առաքեալ

«Կ'ըսեմ քեզի որ այս գիշեր քաղաքը երկու անգամ չկանչած՝ դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս»...

Կայ յատուկ դէպք մը որմով ծանօթ է Պետրոս առաքեալ եւ որն է անոր երեք անգամ Յիսուս ուրանալը: Երեք տարբեր առիթներով, երբ կը հարցուի Պետրոսի թէ արդեօ՞ք կը ճանչնայ Յիսուսը, ան կը պատասխանէ թէ բնաւ չէր տեսած այդ անձը եւ թէ չէր ճանչնար Զինք: Ասով հանդերձ, խաչելութեան յաջորդ օրն ի՛սկ, Յիսուս, Պետրոսին է որ կ'երեւի, անոր պատուիրելով որ Երեւման լուրը փոխանծէ միւս 11 աշակերտներուն:

«Սիմո՛ն, Յովնանի՛ որդի, կը սիրե՞ս զիս ասոնցմէ աւելի:... Արածէ՛ իմ գառնուկներս»

(մանրամասնութիւնները Յովհ. 21.15-19)

Յիսուս, մեռելներէն յարութեն առնելէ ետք երեւցաւ Սիմոն Պետրոսի եւ ինչպէս Պետրոս Զինք 3 անգամ ուրացած էր, 3 անգամ վերի հարցումը հարցուց անոր: Երբ 3 անգամներուն ալ դրական պատասխան ստացաւ, Յիսուս ըսաւ Պետրոսի - Հետեւէ՛ ինձի: այսպիսով Պետրոս վերականգնուեցաւ իր պաշտօնին մէջ:

Արդեօք մենք երբեք ուրացա՞նք Յիսուսը: Վերականգնուեցա՞նք մեր պաշտօնին մէջ:

Յիսուսի վերջին առաքելներէն՝ Ս. Պօղոս Առաքեալ

Տեղեկութիւններ Պօղոս առաքելի մասին

Շնորհիւ իր քարոզչական լայն գործունէութեան, Պօղոս առաքեալ Յիսուսէ ետք կը նկատուի քրիստոնէութեան ամենէն մեծ դէմքը:

Պօղոս Յիսուսի 12 առաքելներէն մէկը չէր այլ ընդհակառակը թունդ հակաքրիստոնէայ մըն էր Յիսուսի համբարձումէն ետք: Սակայն, Պօղոս առաքելի կեանքէն իւրայատուկ է անոր դարձը դէպի քրիստոնէութիւնը, որ կը պատմուի «Սօղոսի դարձը» հատուածին մէջ - Առաքելներուն գործերը 9.1-19: Բուն անունով Սօղոս, առաքելը հրեայ բարեկեցիկ ընտանիքի մը զաւակն էր որ ղեկավարութեանց կողմէ դրկուած էր քրիստոնէաներ ձերբակալելու: Դէպի Դամասկոս ճամբուն վրայ է որ կը պատահի հրաշալի դէպքը շնորհիւ որուն Սողոս կ'ընդունի քրիստոնէութիւնը իբրեւ ճշմարիտ կրօն, կը մկրտուի ու կը վերակոչուի Պօղոս: Ահա թէ ինչպէս.-

«Գացած ատեն, մինչ Դամասկոսի կը մօտենար, յանկարծ երկինքէն լոյս մը փայլատակեց իր շուրջ: Սօղոս գետին ինկաւ եւ լսեց ձայն մը, որ իրեն կ'ըսէր.

-Սօղո՛ս, Սօղո՛ս, ինչո՛ւ կը հալածես զիս:

- Ո՞վ ես Տէր,- հարցուց ինք:

Չայնը պատասխանեց.

- Ես Յիսուսն եմ, որ դուն կը հալածես: Հիմա ոտքի՛ ել եւ քաղաք մտի՛ր. հոն քեզի պիտի ըսուի ինչ որ պիտի ընես:»

Դամասկոս հասնելուն, Սօղոս կապի մէջ կը դրուի Անանիա կոչուած քրիստոնէայի մը հետ. ան, մինչ այդ կուրցած Սօղոսին գալով ձեռքերը կը դնէ անոր գլխուն վրայ ու կ'ըսէ.

«- Սօղո՛ս եղբայր, զիս Տէրը դրկեց՝ որպէսզի տեսնես եւ Սուրբ Հոգիով լեցուիս:

Անմիջապէս Սօղոսի աչքերէն կարծես կեղեւանքներ ինկան եւ սկսաւ տեսնել: Ելաւ մկրտուեցաւ եւ ապա կերակուր ուտելով՝ զօրացաւ:»


Այս դէպքէն վերջ, Դամասկոսի ժողովարանները այցելելով, Սօղոս Յիսուս կը քարոզէր ըսելով թէ Աստուծոյ որդին է Ան: Իսկ զինք խողները զարմանքով կ'ըսէին.

«Ասիկա ան մարդը չէ՞ր որ Երուսաղէմի մէջ կատաղօրէն կը հալածէր զանոնք՝ որոնք Յիսուսը կը պաշտէին: Եւ նոյն նպատակով չէ՞ր որ եկաւ հոս, որպէսզի զանոնք ձերբակալելով աւագ քահանաներուն տանի:»

Գիտէի՞ր թէ...

Պօղոս առաքեալ իր հիմնադրած եւ կազմակերպած եկեղեցիներուն ուղղած է բազմաթիւ նամակներ, որոնք սքանչելի բացատրութիւններ եւ ուղեցոյց կը նկատուին քրիստոնէայ հաւատացեալին համար:

Այս նամակները, թիւով 14, կը կազմեն ամբողջ Նոր Կտակարանին մէկ երրորդ բովանդակութեանն ալ աւելին:



Ս. Պօղոս Առաքեալ

Ը

«Քրիստոնէութիւնը հոգետիրումն է աշխարհին եւ Գիթեղէնին վրայ»

Կ

Այս խօսքը մեկնակետ եւ սկզբունք առնելով է որ այս յօդուածներու շարքով կը կեդրոնանանք մեր նկարագրի բարեպաշտ եւ օրինակելի գծերուն վրայ, այլ խօսքով՝ մեր առաքինութիւններուն վրայ, որոնց միջոցաւ միայն կրնանք Գիթական աշխարհէն բարձրանալով հասնիլ հոգետիրին:

«Քրիստոնէութիւնը հոգետիրումն է աշխարհին եւ Գիթեղէնին վրայ», եւ քրիստոնէային առաքինութիւններէն մէկն է ...

ա

Իմաստութիւնը

ր

Իմաստութիւն կը նշանակէ ծայրագոյն գիտութիւն եւ ճանաչում, խելահասութիւն, փորձառութիւն:

Իմաստութիւն բառը հայերէն լեզուի թարգմանուած երկրորդ բառն է. «Մանաչել զիմաստութիւն եւ զխրատ...»

ա

Իմաստութիւնը քրիստոնէական ըմբռնումով գործադրել եւ ապրիլ է: Որովհետեւ եթէ մարդուս գիտութիւնը միայն ուղեղը հարստացնէ ու մտային ճոխութեան վերածուի ոչ մէկ ազդեցութիւն կ'ունենայ անոր կեանքին եւ սրտին վրայ: Ընդհակառակը մարդ կրնայ իր գիտութեամբ պարծենալ ու բոլորովին հեռանալ առաքինի բնաւորութենէն: Այսպէս օրինակ իմաստուն մարդը ճշմարտութիւնը ըմբռնելով զայն իր գործին մէջէն պետք է յայտնէ: Իմաստուն կ'ըլլայ այն անձը որ հեռու կը մնայ խօսքով իր գիտութիւնը ցուցադրելու փորձութենէն եւ փոխարէնը գործով իր գիտութիւնը կը յայտնէ ու կը ձգէ որ կատարած գործին արդիւնքը խօսի ինքնին:

հ

Իմաստութիւնը գիտութիւն ամբարել չէ, ուղեղային հասկացողութիւն չէ, իմացական ճիգով գիտութեան հարստութիւն չէ, այլ՝ ապրումներու, զգացումներու, համոզումներու, կամեցողութեան հարստութիւն, ու այդ հարստութեան օգտագործումը մեր կեցուածքներուն եւ վերաբերումներուն մէջ:

Ինչպէս Ամենայն Հայոց Գարեգին Ա. Վեհափառը կը գրէ.- «Իմաստութիւնը գիտութիւն չէ սոսկ, այլ՝ գիտութեան, մանաւանդ ի ն ք ն ա գ ի տ ու թ ե ա ն թարգմանութիւնը կեանքին մէջ, մարդուն երջանկութեան ի խնդիր»:

ր

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

Իմաստուն ըլլալ կը նշանակէ...

... Ծշմարտութիւնն ու արդարութիւնը ճանչնալու կարողութիւն ունենալ:

Անձ մը որ իմաստուն է.- ➤


- խոհեմ է
- հմուտ է
- խելահաս է
- հեռատես է

Անձ մը որ իմաստուն չէ.- ➤

- բթամիտ է
- մակերեսային կրնայ ըլլալ
- կեանքի փորձառութիւններէն չօգտուիր
- խոկալ ու մտածել չսիրէր

ժայռի վրայ շինել տունը

- Ուրեմն, ով որ իմ այս խօսքերս կը լսէ եւ կը գործադրէ զանոնք, պիտի նմանի այն իմաստուն մարդուն, որ իր տունը ժայռի վրայ կը շինէ: Անձրեւները կու գան, գետերը կը յորդին, հովերը կը փչեն եւ կը զարնուին տան, բայց տունը չի կործանիր, որովհետեւ ժայռի վրայ հաստատուած է: Իսկ ով որ իմ այս խօսքերս կը լսէ բայց չի գործադրեր զանոնք, պիտի նմանի այն յիմար մարդուն, որ իր տունը աւազի վրայ կը շինէ: Անձրեւները կու գան, գետերը կը յորդին, հովերը կը փչեն եւ կը զարնուին տան, եւ տունը կը կործանի: Եւ ի՛նչ ահաւոր կ'ըլլայ այդ տան կործանումը:



Մատթէոս 7.24-27

Աստուածաշունչը կ'ըսէ...

Երկնային իմաստութիւն ունեցող անձը նախ որ մաքուր կ'ըլլայ, ապա նաեւ խաղարարար, ազնիւ, բարեացակամ, ողորմած եւ բարի գործերով արդիւնաւոր, անկողմնակալ եւ անկեղծ:

Յակոբոս 3.13-18

Սուրբ Յակոբ Ծաբաթ 13 Դեկտեմբեր 2003

Մեզմէ ո՞վ ծանօթ չէ Սուրբ Յակոբի անունին: «Մծբնացի» հայրապետին անունը ամէն տարի կը յիշատակուի Սուրբ Ծնունդը նախորդող 50 օրերու մէջ զուգադիպող չորրորդ շաբաթ օրը, Մարուգէ Ծգնաւորի եւ Մելիտոս եպիսկոպոսի հետ:

Սուրբ Յակոբը հայ ժողովուրդին եւ եկեղեցիին կողմէ կը վայելէ բացառիկ սէր եւ յարգանք: Սուրբին կեանքը ամբողջութեամբ ընթացած է Քրիստոսի օրինակով եւ անոր պատգամներուն համաձայն: Այդ իսկ պատճառաւ է որ կարելի է ըսել թէ անոր կեանքը դաստիարակիչ օրինակ մըն է բոլոր անոնց որոնք կը ձգտին արժանանալ խոստացուած փրկութեան:

Սուրբ Յակոբի ճգնաւոր կեանքը

Թէպէտ հայրապետը կարելիութիւնը ունէր արքունիքի կեանք մը ապրելու, երիտասարդ տարիքին կը նախընտրէ ճգնաւորական կեանքը: Ան կ'ապրի սրբակեաց կեանք մը Մծբնի մօտ լեռներու եւ անտառներու մէջ, աղօթքով եւ ճգնաւորական խիստ սովորութիւններով: Ան իր ամբողջ ժամանակը կ'անցնէ ծոմապահութեամբ, աղօթքով, մարմնի ճգնութեամբ: Ապրելով անմարդաբնակ տեղեր, ամրան իր օրերը կ'անցնէ անօթեւան, այսինքն բաց երկնքի տակ իսկ ձմեռները կ'ապաստանի քարայրները: Սուրբ Հոգիին ներգործութեամբ կու գայ վանք մը, Մծբնի մօտ ուր կ'ապրէր Մարուգէ ճգնաւոր վանահայրը, որ Աստուծմէ ստացած էր մարգարէական շնորհք:



Իրողութիւններ Սուրբ Յակոբի կեանքէն

Ան մասնակցած է 325 թուականին, Նիկիոյ Ժողովին, ուր խմբագրուած է քրիստոնէական Հաւատոյ Հանգանակը:

Պատմութեան մէջ, Ս. Յակոբ հայրապետը առաջին Արարատ լեռ բարձրանալու յանդգնութիւնը ունեցող անձը եղած է.

Ան եղած է հրաշագործ մը. ատենին երբ բժշկական միջոցներ չկային հիւանդութիւնները դարմանելու համար, ժողովուրդը կը պայքարէր մահացու հիւանդութիւններու, ժանտախտի կամ այլ փոխանցիկ հիւանդութիւններու դէմ իրենց հաւատքով, եւ այդ առթիւ իրենց աղօթքներով կը դիմէին Ս. Յակոբ Մծբնաց հայրապետին միջնորդութեան:

Սուրբ Յակոբի անուամբ եկեղեցիներ

Մասիսի ստորոտին գտնուած է իր անունով վանք մը որ 1840 թուին, մեծ երկրաշարժի մը պատճառաւ կործանած է: Բազմաթիւ երկիրներու մէջ կառուցուած են Ս. Յակոբ անունով եկեղեցիներ, ինչպէս Մոնթրէալի մեր Սուրբ Յակոբ եկեղեցին: Սուրբ Յակոբի տօնին այդ եկեղեցիներուն մէջ յատուկ արարողութիւններ կը կատարուին, մատաղօրհնէք եւ հանդիսութիւններ կը կազմակերպուին պատշաճ կերպով նշելու համար տօնը: Նոյն օրը, ըստ գոյութիւն ունեցող աւանդութեան, տուներէն ներս եւս ուրախալի ընդունելութիւններ տեղի կ'ունենան, եւ բարեկամներ ու ազգականներ կ'այցելեն իրենց Յակոբ անունով սիրելիին կամ հարազատին:

Թող չխոռովին ձեր սիրտերը: Հաւատացէք Աստուծոյ, հաւատացէք նաեւ ինձի:

Սուրբ Յակոբի հրաշագործություններէն

Օր մը Ս. Յակոբ կ'իջնէ լեռնէն եւ կը հասնի Սաթթիմա գետը, եւ հոն գտնուող ասորիներուն կը հարցնէ թէ գետին ո՞ր մասը ամենէն աւելի ծանծաղ է. ասորիները կը խնդան ու կը ծաղրեն զինք եւ կ'ըսեն՝ «Եթէ Աստուծոյ մարդ ես, ջուրերուն վրայէն քալէ»: Ս. Յակոբ կը հանէ իր վերարկուն, կը նետէ ջուրին վրայ եւ քալելով կ'անցնի գետը: Այս իր առաջին հրաշքն էր:

Ուրիշ անգամ մը, երբ Արարատ լեռնէն կը վերադառնար, Արտամէտ գիւղին մօտ տեսաւ կիներ որոնք կը լողային եւ իրեն տեսնելով ինքզինքնին չի պահեցին եւ շարունակեցին լողալ: Այն ատեն սուրբը կ'անհիծէ աղբիւրը, ջուրը կը ցամքի իսկ աղջիկներուն մազերը կը ճերմկին: Ժողովուրդը կը խնդրէ Հայրապետէն որ խնայէ իրենց, նզովքը ետ քաշէ. այդպէս ալ կ'ընէ եւ խաչակնքելով աղբիւրը վերստին կը ցայտէ:

Յաղթող եւ սուրբ Հայրապետ

Կը պատմուի որ պարսիկներու Շապուհ թագաւորը 70 օր Մծբինը պաշարելէ ետք չի յաջողիր ներս արշաւել եւ գրաւել, շնորհիւ Ս. Յակոբի ձեռք առած իմաստուն միջոցառումներուն: Հաւանաբար այս դէպքէն մեկնած է որ, հետագային Ներսէս Շնորհալին յատուկ շատ գեղեցիկ շարական մը ձօնած է Ս. Յակոբին «Յաղթող եւ սուրբ Հայրապետ» սկզբնատողով:



Սուրբ Յակոբ Մծբնայ Հայրապետի մասունքներէն կը գտնուին Անթիլիասի Կիլիկիոյ կաթողիկոսարանին մէջ. մասունքը ամփոփուած է արծէքաւոր խաչի մը մէջ 1798-ին:

7 Դեկտեմբեր 1988

7 Դեկտեմբեր 1988. Ժամը 11:41. Շուրջ 100,000 հայորդիներ կը մահանան մի քանի երկվայրկեանի մէջ, բանտարկեալ մնալով իրենց տուններու, գործատեղերու, դպրոցներու, հիւանդանոցներու շէնքերու քարերուն տակ, շինություններ որոնք անկարող կ'ըլլան դիմանալ 6.9 ուժգնութեամբ երկրաշարժին: Առաջին անգամ ըլլալով, արտօնութիւն կը տրուի օտար ոյժերու մուտք գործել ժամանակուայ խորհրդային միութենէն ներս, շտապ օգնութիւն հասցնելու ու կեանքեր փրկելու համար: Միայն 80 հոգիներ կը վերապրին 15,524 ազատած անձերէն:

Լեւինականը «այժմ Գիւմրի», Հայաստանի երկրորդ մեծ քաղաքը աւերակ կը դառնայ: Սպիտակը ամբողջութեամբ կ'անհետանայ: Մեծ վնաս կը կրեն Կիրովականը եւ Ստեփանաւանը: 514,000 հայեր անտուն կը մնան: Հայաստանը 8 Միլիոն քառակուսի մէթր տարածութեամբ բնակավայր կը կորսնցնէ, շրջանի դպրոցներուն կէտը, 110 հիւանդանոցներ, 119 թանգարաններ կամ պատմական յուշարձաններ կ'աւերուին: Լեւինականի 20 մայր գործատեղիներէն 17-ը քարուքանդ կը մնան: Թրջանի ելեկտրական կայանները ինչպէս նաեւ Մեծամօրի կեդրոնը հսկայական փլուզումի կը մատնուին:

Գործը իշու կը նմանի. վրան հեծիր՝ կը քալէ, վար իջիր կանգ կ'առնէ

Խօսքեր Պօղոս առաքեալէն

Ուեւ մէկու չարիքին չարիքով մի՛
հատուցանէք:

Որքան կրնաք՝ ամենուն հետ
խաղաղ ապրեցէք:

Ատեցէ՛ք այն ինչ որ չար է եւ բարիին
կառչած մնացէք:

Մեծամիտ մի՛ ըլլաք.
ընդհակառակը, միշտ համեստ
եղէք եւ միայն Աստուծմէ ձեզի
տրուած հաւատքին չափով
գնահատեցէք դուք ձեզ:

Յարգելու մէջ իրար գերազանցեցէք:

Մի՛ պարտուիր չարէն,
այլ՝ բարիով յաղթէ չարին:

Յոյսով ուրախացէք, Գեղութեանց
մէջ համբերող եղէք,
յարատեւ աղօթեցէք:

Պահուած բառ

պ	ա	տ	ո	ւ	ի	ա	ն	ձ	ո	ւ	կ
ա	ն	ի	ծ	ե	ա	լ	ո	յ	ս	պ	ա
դ	ա	ր	ա	կ	ն	ա	ր	կ	կ	շ	ր
ա	ր	ա	ր	ա	դ	կ	ա	ե	ա	տ	ն
մ	ա	կ	մ	դ	ե	դ	ձ	ն	փ	ե	ա
ա	ր	ա	մ	ն	ր	ծ	ե	դ	ա	մ	տ
ն	ր	ն	ա	ո	ձ	ե	ւ	ա	ր	ա	ե
դ	ժ	ր	ո	կ	ա	ր	դ	ն	ի	ր	ւ
ա	ա	ե	ա	ա	ր	ա	ր	ի	չ	ա	ր
ր	մ	ր	ն	պ	ա	ն	ա	ն	տ	ն	է
ձ	մ	ե	ր	ա	ն	ո	ց	ջ	ո	ւ	ր
գ	ա	ն	ա	տ	ա	ց	ի	ր	ա	ւ	գ

արամ
անիծեալ
ակնարկ
արար
արարիչ
ադամանդ

կենարար
կոնդակ
կափարիչ
կենդանի
կարճատեւ

գանատացի

հանդերձարան

դար
դարակ
դեղձ
դրացի
դրամ

ձմեռ
ձուկ
ձմերանոց

ժամ

մառան

իրաւ

նորածեւ

լոյս

շտեմարան

ծերանոց

չար

ջուր

պանան
պատուհան

Պահուած բառը 6 գիր: Այն ինչ որ է Գեթսեմանի

**Փոքրիկներու
ամանորը**

Մեղրով օծուց
Ու զարդարուց
Կարկանդակ մը կար
սեղանին
Ամանորի: Եւ մանուկներ
Ա՛լ անհամբեր
Պաշարեցին բերքը շրթեղ,
Եւ ուզեցին
Մատով, ձեռքով,
Մէկը միւսը դէն հրրելով՝
Յափըշտակել պատառ
մ'համեղ:
- Այդպէս չ'ըլար,-
Միջամտեց տիկինն
արդար:
Եւ դանակով մը սուր ու
փայլուն
Կտրեց շերտ-շերտ, ու
հաւասար
Տուաւ բաժինն ամէն
մէկուն:

Սուր մը հատու
Եւ ձեռք մ'արդար
Որ չմընայ ոչ-ոք թշուառ:

Նոյեմբեր ամսուան պատասխանողներ եւ մասնակցողներ

Մանկապարտեզի անկիւն

հինգ, յիսունական, կատարեցին, հացը, ձուկը, աչքերը, կշտացան, տասներկու

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. ա. թագաւոր մը նշանակել
2. բ. իր կորսուած էշերը
3. ա. թագաւոր պիտի ըլլաս
4. դ. ինքնագլուխ
5. գ. զոհը ինք մատուցանեց
6. Աստուած, տուած, բարի, այսօր, բարիք, խաղաղ
7. բ.բարին եւ չարը գիտնալու ծառէն
8. գ. Յովսէփ
9. ա.Գողիաթ
10. ա. 27

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. գ. Յեսու
2. ա. Մովսէս
3. գ. Երիթով
4. գ. Երիթով
5. Երբ իսրայէլացիները անոր շուրջ դարձան 1+1+1+1+1+1+7 անգամ
6. բ. 39
7. ա. 1875
8. բ. Հոկտեմբերին
9. գ. 20 արծաթ
10. դ. 24

Երկրորդականի անկիւն

1. Ս. Թաղէոս եւ Ս. Բարթողոմէոս
2. Ս. Թաղէոս եւ Ս. Բարթողոմէոս
3. ա. 60 Բ.Ե.
4. գ. 301 Բ.Ե.
5. գ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ
6. Ս. Էջմիածին
7. Հոն ուր Միածինը «Յիսուս» իջաւ
8. Ս. Մեսրոպ Մաշտոց 404--406
9. Ս. Սահակ Պարթեւ
10. Առակաց: Ծանաչել գիմաստութիւնն ու Խրատն, Իմանալ զբանս հանճարոյ:

Ընդհանուրի անկիւն

- 1- գ, Տիեզերական բ. ժողովը տեղի ունեցաւ Կոստանդնուպոլիս

- 2- դ- բոլորն ալ կ'ըստին
- 3- բ- յախուռն անձը յանդուգն է
- 4- գ- Ծերուն արական անուն է
- 5- գ- անտարան բառը բոժոժի հետ կապ չունի
- 6- ա- Աղքատ Ղազարոս
- 7- բ- Հայր ձեռքերուդ մէջ կ'աւանդեմ հոգիս
- 8- դ- Տէրն է իմ հովիւս
- 9- ա- քենեկալն է
- 10- գ- Եպիսկոպոս

Նոյեմբեր ամսուան մասնակցողներ

Մանկապարտեզ

Թամար Տեմիրճեան, Ճեսիքա Մատթէոսեան

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Խշիշեան Արշակ, Արագ Գաբթանճեան, Արին Անթեպեան, Ռիթա Խշիշեան, Դանիէլ Ակրեան:

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Դալար Գաբթանճեան, Յարութ Բուլլուքեան, Սերենա Բուլլուքեան, Մհեր Մատթէոսեան, Մարիա Դանիէլեան, Զոհրապ Կարապետեան, Ծողիկ Թուխեան, Հրայր Մատթէոսեան

Անսխալ պատասխանող

Առէն Պապիկեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Գօգօ Մատթէոսեան, Անի Մելքեան, Հրակ Նարեկեան, Լորա Սարիմանուկեան, Արի Միրզայեան, Արի Քէօսէյեան:

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Էլմանճեան, Ժան-Յակոբ Չոխանճեան, Թամար Չաքմաքճեան, Թամար Պուիքեան եւ Քրիստինա Կարապետեան

Երկրորդականի անկիւն

Թամար Գիզիրեան, Փօլ Գիզիրեան, Կարօ Կարապետեան, Լոռի Քէօսէյեան:

Ո՛րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ր ըստ Մատթեոսի Աւետարանին 2.1-6
**Քրիստոսը, արեւելքէն, Երուսաղէմ, Հերովդէս, աւագ,
ուսուցիչները, Բեթլեհէմ, աստղը, երկրպագելու,
վրդովեցաւ,**

Եւ ահա ----- մոգեր եկան ----- եւ
հարցուցին.

- Ո՛րն է Հրեաներու նորածին թագաւորը. մենք տեսանք անոր
----- արեւելքի մէջ եւ եկանք ----- իրեն:

Երբ ----- թագաւոր լսեց ասիկա -----, եւ
իրեն հետ՝ Երուսաղէմի բոլոր բնակիչները: Կանչեց ժողովուրդի
----- քահանաներն ու Օրէնքի ----- եւ հարցուց
անոնց, թէ ո՛րն պիտի ծնէր -----:

Անոնք պատասխանեցին.

- Հրէաստանի ----- քաղաքին մէջ, որովհետեւ
Միքիա մարգարէն այսպէս գրած է.

Ո՞րն է ճիշդ պատասխանը Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1-Ի՞նչ նշանակէ «Մովսէս» անունը:

- ա.- Հաւատացեալ մարդ
- բ.- Բարի մարդ
- գ.- Զուրէն ելած մարդ
- դ.- Սուրբ մարդ

- գ.- Դրամ
- դ.- Իմաստութիւն

8-Երկու կիները ինչո՞ւ համար Սողոմոնին քով եկան:

2-Ո՞ր ծնաւ Յիսուս Մանուկը:

- 1-Երուսաղէմ
- 2-Եգիպտոս
- 3-Բեթլեհէմ
- 4-Գալիլիա

- ա.- Կիներէն մէկը միւս կնոջ զաւակը գողցաւ
- բ.- Կիներէն մէկը իր լուման կորսնցուց
- գ.- Երկու կիները կ'ուզէին Սողոմոնին քով աշխատիլ
- դ.- Երկու կիները կ'ուզէին տեսնել թէ ո՞վ է Սողոմոնը

3-Ամբողջացուր հետեւեալ սաղմոսը:

Տիրո՛ջ աղաղակեցէք, -----աշխարհի
-----ծառայեցէք Տիրոջ,
ցնծութեան ----- եկէք անոր
ներկայութեան:

9-Սողոմոն երկու կիները մտիկ ընելէ ետք, ի՞նչ ըսաւ կամ ըրաւ:

- ա.- Առաջարկեց ողջ տղան երկու կտոր ընելով բաժնել կիներուն
- բ.- Դուրս վճռեց երկու կիները
- գ.- Ըսաւ թէ ժամանակ չունէր հարցը լուծելու
- դ.- Տղան քովը պահեց եւ ոչ մէկուն տուաւ

4-Ո՞ր թագաւորը նախատեց Մովսէսը:

- ա.- Սողոմոն
- բ.- Փարաւոն
- գ.- Հերովդէս
- դ.- Սաւուղ

10-Մանկան հարազատ մայրը Սողոմոնին ի՞նչ առաջարկեց:

- ա.- Սողոմոնին քովը պահել
- բ.- Տէր իմ, ողորմէ ինձի. զաւակս միւս կնոջ տուէք, բայց մի մեռցնէք
- գ.- Ուրիշին տալ
- դ.- Պատրաստել որպէսզի վարդապետ ըլլայ

5- Պօղոս առաքեալ քանի՞ նամակներ գրեց :

- ա- 14
- բ- 9
- գ- 7
- դ- 11

6-Ո՞վ յաջորդեց Դաւիթ թագաւորին:

- ա.- Դաւիթ Բ
- բ.- Սամուէլ
- գ.- Սողոմոն
- դ.- Դանիէլ

7-Սողոմոն ի՞նչ խնդրեց Աստուծմէ:

- ա.- Տուն մը
- բ.- Խաղալիք մը

Ո՞րն է ճիշդ պատասխանը Նախակրթարան Դ. Ե. և Զ. դասարաններու անկիւն

1 - Աբրահամ որո՞ւ հետ հեռացաւ իր ընտանիքէն:

- ա.- իր կնոջ Սառային եւ Ղովտի հետ:
- բ.- կնոջ Սառային եւ զաւակներուն հետ:
- գ.- իր հօրեղբօրը հետ:
- դ.- հօրեղբօրը տղուն հետ:

2- Դեկտեմբեր ամսուան մէջ որոնց տօնը կը յիշենք:

- ա.- Յովհաննու Կարապետի օրը:
- բ.- Սուրբ Գրիգոր լուսաւորիչի եւ Տրդատ Գ. Թագաւորին:
- գ.- Յիսուսի աշակերտներուն տօնը:
- դ.- Թաթէնս եւ Բարթողիմիոսի տօնը

3- Աբրահամ քանի՞ տարեկան էր երբ իր միակ զաւակը ունեցաւ:

- ա.- 99
- բ.- 86
- գ.- 100
- դ.- 76

4- Հաւատով Խոստովանիմի մէջ երբ կըսենք Որդին Աստուծոյ զո՞վ ըսել կ'ուզենք:

- ա.- Սուրբ Հոգին
- բ.- Մովսէս
- գ.- Յիսուս
- դ.- Պետրոս առաքեալ

5- Հաւատով Խոստովանիմ աղօթքին երկրորդ համարին մէջ Ներսէս Շնորհալին ինչ կ'աղերսէ Աստուծմէ:

- ա.- հարստութիւն
- բ.- տուն
- գ.- մեղքերու քաւում
- դ.- իր սենեակին լուսաւորում:

6- Նոյան տապանի պատմութիւնը Աստուած աշունչին որ մէկ գիրքին մէջ գրուած է:

- ա.- Աւետարան ըստ Յովհաննու
- բ.- Ծննդոց
- գ.- Սաղմոսաց
- դ.- Յայտնութիւն Յովհաննու

7- Չորս Աւետարաններէն ո՞ր մէկը կը պարունակէ Յովհաննէս Մկրտիչի ծննունդը:

- ա.- Աւետարան ըստ Մատթէոսի
- բ.- Ղուկասու
- գ.- Յովհաննու
- դ.- Մարկոսի

8- Ամբողջացուր Հաւատով Խոստովանիմ աղօթքը:

- ա.- Հոգին Աստուծոյ - - - - -
- ճշմարիտ. որ Իջեր ի - - - - - եւ իր վերնատունն, եւ լուսաւորեցեր զիս - - - - -
- - - - - սուրբ աւագանին.
- մեղայ - - - - - եւ առաջի քո, մաքրեա՛
- զիս վերստին աստուածային հրով քով՝ որպէս
- - - - - լեզուօք սուրբ - - - - -
- .
- եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝
- բազմամեղիս:

9- Աստուած ինչպէ՞ս պատժեց Սողոմ եւ Գոմոր քաղաքներու ժողովուրդը:

- ա.- ջրհեղեղով
- բ.- երկրաշարժով
- գ.- կրակով
- դ.- սովով

10- Ո՞ր գրուած է «Բանն էր ճշմարիտ Լոյսը, որ աշխարհ գալով՝ կը լուսաւորէ ամբողջ մարդկութիւնը»:

- ա.- Մատթէոս 14.5
- բ.- Մարկոս 5.17
- գ.- Յովհաննու 1.9
- դ.- Յովհաննու 9.1

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն**

1- Ս. Բարթողիմէոս Առաքեալ ունի
նաեւ երկրորդ անուն մը: Ի՞նչ է այդ
անունը: «Յովհ. 1.44-51»

-----:

2- «Կաղանդ Պապա»ին ծագումը
մեր ո՞ր սուրբին կը վերագրուի «որուն
տօնը այս տարի կը տօնենք
Դեկտեմբեր 6 ին»:

-----:

3-Աստուածաշունչի Հին Կտակարանի
գիրքերէն ո՞ր երեքը գրուեցան
Սողոմոն Իմաստունին կողմէ:

4-Աստուածաշունչի Հին Կտակարանի
գիրքերէն ո՞ր երկուքին մէջ չենք
հանդիպիր «Աստուած» բառին:

5-Պետրոս կը նշանակէ Վէմ կամ
Ժայռ: Ի՞նչ էր Ս. Պետրոս
Առաքեալին անունը նախքան
Յիսուսի կողմէ իր Պետրոս
անուանումը:

6- Պօղոս Առաքեալ ի՞նչ կը կոչուէր
նախ քան իր քրիստոնեայ մկրտուիլը
եւ Պօղոս կոչուիլը:

7- Պօղոս Առաքեալ ո՞ր երկրին
հպատակութիւնը ունէր:

8- Ս. Յակոբը ո՞ր քաղաքը ծնած է:

9.- Ս. Յակոբը ո՞ր Տիեզերական
ժողովին մասնակցած է: Ո՞ր տարին:

10- Ո՞րն է «Սիրոյ Գլուխ»ը: Ո՞վ
գրած է: Որո՞նց:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Ընդհանուրի անկիւն

1- Հետեւեալ բառերէն ո՞ր մէկը ձմրան չի վերաբերիր.-

- ա- Մահիկ
- բ- Չմուշկ
- գ- Մոյկ
- դ- Դահուկ

2- Հետեւեալ մարզանքներէն ո՞ր մէկը մէկ հոգիով կը կիրարկուի.-

- ա- ոտնագնդակ
- բ- ըմբշամարտ
- գ- սուսերամարտ
- դ- ծանրաբարձութիւն

3- Ըստ առածին, երեսին միւտոն չունեցող անձը.-

- ա- տգեղ Կ՛ըլլայ
- բ- անամօթ կ՛ըլլայ
- գ- չոր մորթ կ՛ունենայ
- դ- հաւատացեալ է

4- Բշխունը.-

- ա- նուրբ ծաղիկ մըն է
- բ- ասեղնագործ կտոր մըն է
- գ- իգական անուն է
- դ- հայերէն բառ չէ

5- Ըստ 62(61)-րդ Սաղմոսին, «Միայն Աստուծով հոգիս...».-

- ա- խաղաղութիւն կը գտնէ
- բ- հանգիստ կը գտնէ
- գ- կը հարստանայ
- դ- կը բարձրանայ

6- Եկմալեան անունը կը վերագրենք.-

- ա- Աստուածաշունչի
- բ- հայերէն լեզուի գիտութեան
- գ- պատարագի
- դ- հայաստանի տեսարժան վայրերէն մէկուն

7- «Հաւատով խոստովանիմ»-ին բոլոր գլուխները կը վերջանան այսպէս «Ողորմեա քո արարածոց եւ ինձ՝...».-

- ա- հաւատացեալիս
- բ- աղօթարարիս
- գ- մեղաւորիս
- դ- բազմամեղիս

8- Մատթէոս 13-ի ո՞ր առակին մէջ արդարները չարերէն պիտի զատուին ընտիր եւ վատ ձուկերու պէս.-

- ա- Որոմներու օրինակը
- բ- ձկնորսներուն օրինակը
- գ- ուռկանին օրինակը
- դ- այդպէս առակ չկայ Մատթէոսի մէջ

9- Հայաստանի ազգային օփերայի շէնքը որո՞նք անուան կառուցուած է.-

- ա- Կոմիտասի
- բ- Ալէքսանոս Սպենդիարեանի
- գ- Արամ խաչատուրեանի
- դ- Անուշ օփերայի

10- Ճարտարապետ Ալէքսանոր Թամանեան ծանօթ է.-

- ա- Երեւանի համար մշակած իր յատակագիծերով
- բ- Եկեղեցիներ նորոգելու իր աշխատանքով
- գ- խաչքարերու ստեղծագործութեամբ
- դ- Ալէքսանոր Թամանեան ճարտարապետ չէ

Կարճ Լուրեր Կիրակնօրեայէն

- Ներկայիս Կիրակնօրեայ Դպրոցին արձանագրուած աշակերտներուն թիւն է 81 :
- Կիրակնօրեայ Դպրոցը կը ծրագրէ Սուրբ Ծնունդը տօնել Յունուար 4 ին :
- Կաղանդ Պապան կը ծրագրէ այցելել Կիրակնօրեայ Դպրոց Յունուար 4 ին մեզի հետ տօնելու համար Սուրբ Ծնունդը :
- Սուրբ Յակոբի տօնը տօնն է նաեւ մեր Կայքէջին: Այս տարի www.sourphagop.org-ը 3 տարեկան է :

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ

Խմբագիր՝

Շաղիկ Պոյաճեան

Աշխատակիցներ՝

Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան, Գարոլին Գէպթանճեան, Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս Պապիկեան :

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցույ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը.- Ուսուցիչներ՝ Իզապէլ Քուլլութեան, Սալբի Բակլաեան, Վերա Կարապետեան, Երան Լոշխաճեան, Գարոլին Գէպթանճեան, Յասմիկ Նաճարեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Կայքէջ՝ Բաֆֆի Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Շաղիկ Պոյաճեան:



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Ցակոբ Մայր Եկեղեցու
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ



ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 5

Յունուար 2004

Կիր.	Բշ.	Գշ.	Դշ.	Եշ.	Ուր.	Շաբ.
				1	2	3
4	5	6	7	8	9	10
11	12	13	14	15	16	17
18	19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30	31

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ Ձեզի եւ Մեզի Մեծ Աւետիս

Անգամ մը եւս եղաւ տարեսկիզբ ու հասաւ օրը Քրիստոսի ծննդեան աւետիսը իրարու աւետելու:

Ծննդեան տօնը միշտ ալ հոգեկան վերածնունդի կը վերագրուի որովհետեւ Յիսուսի ծնունդը եղաւ հրաշալի եւ անով ամբողջ մարդկութեան առիթ տրուեցաւ հոգեպէս վերածնելու ու նորոգուելու:

5	Ճրագալոյց Ս. Ծննդեան, Խթման գիշեր
6	Ս. Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն
7	Յիշատակ Մեռելոց
13	Անուանակոչութիւն Տեառն
15	Ս. Յովհաննու Կարապետի
31	Ս. Սահակ Պարթեւ

Մենք կը հաւատանք Ծնունդի տօնին որպէս հոգեւոր եւ հոգեկան վերածնունդի տօն: Սուրբ Ծննդեան տօնը այս տարի թող առիթ ըլլայ մեզի հոգեպէս նորոգուելու եւ մեր մէջ հոգեւոր ապրումներու ծնունդ տալու: Արդի ժամանակաշրջանի հետ քայլ պահող ամէն անհատի պէս մենք ալ հետքի մէջ ենք ու կը մրցինք ժամանակին հետ: Սուրբ Ծննդեան օրով պահ մը անջատուինք այդ վազքէն ու քննադատ աչքերով նայինք մեր կեանքին: Ո՞վ ենք, ո՞ր կ'երթանք: Թող մենք մեզի այս հարցումները հարցնենք ու կեդրոնանանք, նիւթական մեր կենցաղի հետքէն անդին, մեր մտածումներուն, ապրումներուն, ձգտումներուն, երազներուն, յուսախաբութիւններուն, փորձառութիւններուն վրայ, այլ խօսքով մեր հոգեկան եւ հոգեւոր կեանքին վրայ: Ծնունդի առիթի մեր մէջ թող վերածննդի ինքնահայեցողութիւնը որպէսզի մենք մեզ վերլուծելով, քննարկելով ու ճանչնալով նորոգուինք ու նորոգեալ այս կեցածքով ընդունինք ու փորձենք շարունակել այս նոր Տարին:

Այսօր տօն է Սուրբ Ծննդեան,
աւետի՛ս.

Տեառըն մերոյ եւ յայտնութեան,
աւետի՛ս:

Այսօր Արեւն արդարութեան, աւետի՛ս
Երեւեցաւ ի մէջ մարդկան, աւետի՛ս:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:

«Չքննարկուած կեանքը ապրիլն անգամ չ'արժէր»
կ'ըսէ Սոկրատ: Թող Քրիստոսի Ծնունդն ու
կեանքը արժէք ստանան մեր ինքնաքննարկումի եւ
ներհայեցողութեան խոստումով, ինքնաքննարկում
մը որով կարող պիտի ըլլանք մեր մէջ փնտռել ու
գտնել Քրիստոսի բաշխած շնորհներն ու
բարիքները:

Փրկչական շնորհքին յայտնութիւնը

*Ծննդեան օրուան ճաշու ատետարան
Տիտոսին 2.11-15*

Որովհետեւ Աստուած իր շնորհքը յայտնեց՝ որպէսզի բոլոր մարդիկ փրկուին: Այդ շնորհքը մեզ կը մղէ որ անհաւատ կենցաղէ եւ աշխարհիկ ցանկութիւններէն հեռանանք, զգաստութեամբ, արդարութեամբ ու բարեպաշտութեամբ ապրինք այս աշխարհի մէջ, յոյսով սպասենք այն երջանիկ օրուան, երբ մեր մեծ Աստուածն ու փրկիչը՝ Յիսուս Քրիստոս իր փառքով պիտի յայտնուի: Որովհետեւ Քրիստոս իր անձը տուաւ մեզի համար, որպէսզի մեզ ազատէ մեր բոլոր անօրէնութիւններէ, եւ մեզ մաքրելով՝ իր սեփական ժողովուրդը դարձնէ, բարի գործերու նախանձախնդիր:

Այս բաները սորվեցոր հաւատացեալներուդ: Քաջալերէ՛ զանոնք եւ ի հարկին յանդիմանէ՛ հեղինակութիւնդ գործածելով, այնպէս՝ որ ոեւէ մէկը քեզ չարհամարհէ:

Հովիւները եւ հրեշտակները

*Ծննդեան օրուան առաւօտեայ հատուած
Ղուկաս 2.8-14*

Այնտեղ, դաշտերուն մէջ հովիւներ կային, որոնք գիշերով իրենց հօտերուն պահակութիւն կ'ընէին: Տիրոջ հրեշտակը անոնց երեցաւ եւ Տիրոջ փառքը լոյսի պէս անոնց վրայ ծագեցաւ: Հովիւները սաստիկ վախցան. հրեշտակը ըսաւ անոնց.

- Մի՛ վախնաք, ձեզի ատետիս մը պիտի տամ, որ ամբողջ ժողովուրդին մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ ձեր փրկիչը ծնաւ, որ Օծեալ Տէրն է: Հետեւեալը ապացոյց ըլլայ ձեզի.- հոն մանուկ մը պիտի գտնէք՝ խանձարուրով փաթթուած եւ մսուրի մէջ դրուած:

Եւ յանկարծ այդ հրեշտակներուն միացաւ երկնաւոր զօրքերու բազմութիւն մը, որ կ'օրհնաբանէր զԱստուած, ըսելով.

«Բարձունքներուն մէջ Աստուծոյ փա՛ռք, խաղաղութի՛ւն երկրի վրայ եւ մարդոց միջեւ հաճութիւն»:

Բովանդակութիւն

- Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
- Փրկչական շնորհքին յայտնութիւնը
- Հովիւները եւ հրեշտակները
- Սուրբ Ծննդեան արարողութիւններ
- Ծանօթանանք Աստուածաշունչին
- Սուրբ Ծնունդը եւ մայրութեան գաղափարը
- Ծննդեան ծառ
- Սուրբ Ծնունդ
- Թէ ինչո՞ւ հայերը Ծնունդը կը տօնեն Յունուար 6-ին
- Նկարագիր- Արդարութիւն
- Խաչակնքում կամ խաչ հանել
- Յիսուսի կեանքը
- Աւանդական ճաշկերոյթ Ս. յակոբի տօնին առթիւ
- Պահուած բառ
- 75 Ամեակ
- Մաղթերգ՝ խօսք եւ երաժշտութիւն
- Դեկտեմբեր ամսուան պատասխաններն ու մասնակցողները
- Ո՞րն է ճիշդ պատասխանը
- Գործունէութիւններ
- Կարճ լուրեր

Սուրբ ԾՆՆՂԵԱՆ արարողութիւններ

Հայաստանեայց Առաքելական Մայր Եկեղեցին Սուրբ ԾՆՆՂԵԱՆ տօնակատարութիւններու իր ժամանակացոյցին մէջ նկատի կ'առնէ Ծրագալոյցի արարողութիւնը որ տեղի կ'ունենայ Ծնունդը նախորդող օրը, Յունուար 5-ին:

Ծրագալոյցը նախատօնակ է, այսինքն տաղաւար մը նախորդող երեկոյեան կատարաւոր նախատօնական արարողութիւն:

Ծրագալոյցը կը սկսի ժամերգութեամբ, ապա Սուրբ Գրքէն հատուածներու ընթերցանութեամբ: Կը կարդացուի, ուրիշ հատուածներու կարգին, Դանիէլի մարգարէութիւնը: Այս ընթերցումներուն կը յաջորդէ պատարագի մատուցումը: Կը կարդացուի Աւետարանը, կ'երգուի Ծնունդի յատուկ շարական, կ'արտասանուի «Պահպանիչը» եւ եզրափակիչ շնորհաւորական բարեմաղթանքներէ ետք, ընտանիքներ կը մեկնին իրենց աւանդական ընթրիքը կատարելու:

Սուրբ Ծնունդի եւ Զատկուայ նախատօնակի պատարագները միակ երկու պատարագներն են որոնք ընդունուած է կատարել երեկոյեան:

Ծրագալոյցի երեկոն կը կոչուի նաեւ «խթում» եւ ժողովրդական սովորութիւններէն է իրարու աւետիս տալ,

- Քրիստոս Ծնաւ եւ յայտնեցաւ
- Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի կամ


Ձեզի եւ մեզի մեծ աւետիս
եւ ընտանեկան սեղանի շուրջ գինիով ձկնեղէն
եւ ձու ճաշակել:

Գիտէի՞ր թէ...

Ծրագալոյցը անունը տրուած է Ծնունդի գիշերը նախորդող օրուան արարողութեան եկեղեցոյ կանթեղները վառելու եւ ներկայ հաւատացեալներուն մոմեր բաժնուելուն համար:

Գիտէի՞ր թէ...

Անցեալին ամէն մեծ տօներու նախատօնակ երեկոները կը կատարուէր ճրագալոյց սակայն ժամանակի ընթացքին, միայն Զատիկէն եւ Սուրբ Ծնունդէն առաջ է որ պահուեցաւ ճրագալոյցի սովորութիւնը:



Ս. Ծնունդ
Սարգիս Պիծակ 1336

Ծանօթանանք Աստուածաշունչին Հին Կտակարան

17 պատմական գիրքեր

- Ծննդոց
- Ելից
- Ղեւտացոց
- Թուոց
- Բ. Օրինաց
- Յեսու
- Դատաւորաց
- Հռութ
- Ա. Թագաւորաց
- Բ. Թագաւորաց

- Գ. Թագաւորաց
- Դ. Թագաւորաց
- Ա. Մնացորդաց
- Բ. Մնացորդաց
- Եզրասայ
- Նէեմեայ
- Եսթեր

5 բանաստեղծական եւ դաստիարակչական գիրքեր Յոբ

- Սաղմոսներ
- Առակներ
- Ժողովող
- Երգ երգոց

17 մարգարէներու գիրքեր

- Եսայի
- Երեմեայ
- Ողբ Երեմեայ
- Եզեկիէլ
- Դանիէլ

- Ովսէա
- Յովէլ
- Ամոս
- Աբդիա
- Յովնան
- Միքա
- Նաւումայ
- Ամբակում
- Սոփոնիա
- Անգէ
- Զաքարիա
- Մաղաքիա

17 մարգարէներու գիրքեր



Եսայի

Եսայի մարգարէն իր գրութիւններուն մէջ այնքան յստակօրէն կը խօսի Յիսուսի ծննդեան, Յովհաննէս Մկրտիչի, Յիսուսի չարչարանքներու մասին, որ կարելի է զինք կոչել Հին կտակարանի անտարանիչ: Այս գիրքը կը բաղկանայ 66 գլուխներէ:



Ողբ Երեմեայ

Այս գիրքը բանաստեղծական ոճով գրուած տխուր նկարագրութիւն մըն է Երուսաղէմի կործանման:



Եզեկիէլ

Հեղինակը կը շեշտէ թէ փալլուն ապագայի մը համար պէտք է ապաւինիլ սեփական ոյժին: Գիրքը կը պարունակէ յատկանշական գրական եւ սեմպոլիք պատկերներ ինչպէս չորցած ոսկորներու ձորի տեսիլքը:

Գիտէի՞ր թէ...

• Հին կտակարանի Եզեկիէլ մարգարէի գրքին մէջ նշուած պատկերներէն մէկը, Չորցած ոսկորներուն ձորը, կը գործածուի Ապրիլ 24-ի եղեռնի յիշատակման առթիւ իբր ընթերցանութիւն:



Երեմեայ

Երեմիան գուշակութիւններ կը կատարէ Յիսուսի գալստեան մասին ու ժողովուրդին կը յորդորէ որ ապաշխարեն: Այս գիրքին մէջ կան նաեւ աղօթքներ թագաւորներու եւ ժողովուրդին համար:



Դանիէլ

Այս գրքին գլխաւոր նիւթը Աստուծոյ նախախնամութիւնն է եւ հոն տրուած օրինակները, ինչպէս Սեդրաք, Միսաք եւ Աբեդնագով կրակին մէջ կամ Դանիէլ առիւծի գութին մէջ, ցոյց կու տան թէ Աստուած ինչպէս կը պահէ մեզ:



Ովսէա

Կը բովանդակէ յանդիմանութիւններ Իսրայէլի ժողովուրդի դէմ, օրէնքի հանդէպ անհաւատարիմ ըլլալուն համար: Կը նախատեսէ Յիսուսի գալուստը:



Յովէլ

Վսեմ խօսքեր Աստուծոյ մասին: Կը խօսի նաեւ վերջին դատաստանի մասին:

17 մարգարէներու գիրքեր



Ամոս

Կը խօսի ընդհանրապէս Աստուծոյ դատաստանի մասին եւ խստութեամբ կ'արտայայտուի ժողովորդի ապականած կենցաղին եւ կուրքերու պաշտամունքին մասին:



Միքա

Կը գուշակէ Երուսաղէմի կործանումը, Յիսուսի գալուստը ու նոյնիսկ Անոր ծննդավայրը:

Նաուումայ

Կը գուշակէ Նինուէ քաղաքի կործանումը եւ Ասորեստանի կայսրութեան խորտակումը:

Ամբակում

Սքանչելիօրէն կը նկարագրէ Յիսուսի գալուստը, վերջին դատաստանը եւ հարդերձեալ կեանքը:



Յովնան

Այս գիրքը մարգարէական գրութիւններէն աւելի հեղինակին կեանքի պատմութիւնն է: Նպատակն է ցոյց տալ թէ Աստուած կը ցանկայ բոլորին փրկութիւնը:

Սոփոնիա

Կը զգուշացնէ հրեայ ժողովորդը կռապաշտութենէ:



Անգէ

Իսրայէլի ժողովորդը կը քաջալերէ տաճարի վերաշինութեան ընթացքին: Քաջալերական խօսքեր ունի ընդհանրապէս ապագայի նկատմամբ:

Յստակ եւ պարզ ձեւով կը նախատեսէ Յիսուսի գալուստը եւ Երուսաղէմի պաշարումը:



Մաղաքիա

Կը գուշակէ Յիսուսի գալուստը, ինչպէս նաեւ Անոր երկրորդ գալուստը:

Գիտէի՞ր թէ...

Առաջին 5 մարգարէական գիրքերը կը կոչուին «մեծ» իրենց ծաւալին համար:

Գիտէի՞ր թէ...

Յովնան մարգարէի 3 օրեր ձուկին փորը մնալը կարելի է նմանցնել Յիսուսի 3 օրեր գերեզմանին մէջ մնալուն:

Գիտէի՞ր թէ...

Հայ Եկեղեցւոյ Ծարականներէն «Հարց» գլխաւորումին տակ ինկող շարականները գրուած են պանծացնելու համար յիշատակը Սեդրաքի, Միսաքի եւ Արեդնագովի կրակէն փրկութեան:

Սուրբ Ծնունդը եւ մայրութեան գաղափարը

Յիսուսի մօր՝ Մարիամին ստացած անտխով ու անոր Քրիստոսի ծնունդ տալով, Աստուած պատուեց սուրբ Կոյսը որ Աստուածամայր կոչուելու բարձրագոյն պատիւին արժանացաւ: Այսպէսով ան պատուեց նաեւ մայրութիւնը ընդհանրապէս: Մայրութիւնը բարձրացաւ պատուոյ աստիճանի մը եւ դարձաւ յարգանքի արժանի մէկ իրողութիւն:

Մայրութեան գաղափարը բարձր եւ վսեմ խորհուրդ է, եւ մեզի համար ամենէն հարազատ եւ սրտի մօտ արժէքները կապուած են անոր:

Պատահական չէ որ կ'ըսենք մայր եկեղեցի, մայր հայրենիք, մայր հող, մայրենի լեզու, եւայլն:

- Մայր եկեղեցի՝ որովհետեւ անոր սուրբ աւազանէն կը ստանանք մեր հոգեւոր ծնունդը:

- Մայր հայրենիք՝ որովհետեւ անով է որ կ'ապրինք եւ կը գործենք:

- Մայրենի հող՝ որովհետեւ ան է մեր գոյութեան գրաւականը:

- Մայր լեզու՝ որովհետեւ մեր կեանքի առաջին իսկ վայրկեանէն մեր մայրերու քաղցրաբարբառ շրթներէն այդ լեզուն է որ կը լսենք եւ կը սորվինք որպէս մեր ազգային ինքնութեան հիմքը:

Մայրական սէրը եւ գորովն են որ մեզ կը ձեւաւորեն որպէս արժանավայել մարդ: Մայրութեան վսեմութիւնն է որ մեզ կը մղէ որդիական սիրով եւ երախտագիտութեամբ խոնարհելու մեր մայրերուն առջեւ:

Ծննդեան ծառ

Տեսէ՛ք սիրուն ծննդեան ծառ,
Տեսէ՛ք, փայլի ինչ պայծառ
Ոհ, ինչ գիշեր հիանալի
Յիսուս ծնաւ սիրելի:

Ամէն աչքեր խանդով յառին
Բեռնաւորոած սա ծառին.
Ամէն սիրտեր արդ թող ցնծան,
Զի ծընաւ Յիսուս Մեսիան:

Յիսուս փրկիչ, Դու ինձ համար
Երկնից իջար մեր աշխարհ,
Դու որ ինձի կեանք ես տուեր՝
Կու տամ սի'րտըս քեզ նուէր:

Սուրբ Ծնունդ

Խոր մութին մէջ այս գիշեր,
Երկինք, երկիր են թաղուեր.
Բայց դուք, սիրո՛ւն մանուկներ,
Օն վերցուցէ՛ք ձեր աչքեր,
Տեսնել մսուր շողշողուն
Լուսով սիրուն ողողուն:

Հոն մերկ, ցուրտէն դողալով,
Կ'հանգչի մանուկ մը խոնարհ,
Երկնքի փառքը թողելով
Փրկել եկած մեր աշխարհ.
Մեզմէ կ'ուզէ իբր նուէր՝
Միայն սիրով տաք սրբտեր:

Թէ ինչո՞ւ հայերը Ս. Ծնունդը կը տօնեն Յունուար 6-ին

Յիսուսի Սուրբ Ծննդեան օրը պատմական իրողութիւններու հետեւելով ընդունուած է տօնել Յունուար 6-ին:

Յիսուսի ծնունդն ու մկրտութիւնը սկզբնական շրջանին կը յիշատակուէին Յունուար 6-ին: Երբ քրիստոնէութեան առաջին դարերը անցան եւ քրիստոնէութիւնը պետութիւններու կողմէ սկսաւ ճանաչում գտնել, քրիստոնէայ ժողովուրդներու հոգեւոր պետերը սկսան խորհրդակցիլ իրենց ժողովուրդի ընթացիկ դժուարութիւններուն մասին, անոնց լուծումներ գտնելու նպատակով:

Այս դժուարութիւններէն մէկ մասը կու գար հին սովորութիւններէ, որոնք դարեր շարունակ կրկնուելով, խոր արմատներ ձգած էին ժողովուրդին մօտ: Այսպէս, քրիստոնէայ դառնալով հանդերձ, մարդիկ կը շարունակէին իրենց հին հեթանոսական տօնախմբութիւնները կատարել: Այդ տօնախմբութիւններէն մէկն էր Արեւ աստուծոյ նուիրուած պաշտամունքը որ մեր օրացոյցով տեղի կ'ունենար Դեկտեմբեր 25-ին: Այս կացութեան դիմաց, քրիստոնէայ եկեղեցիներու հայրապետները յարմար գտան հեթանոսական ընդհանրացած որոշ թուականներ նոյնացնել քրիստոնէական տօնախմբութիւններու հետ:

Այսպէսով է որ 451 թուականին, Քաղկեդոնի մէջ գոյացաւ տիեզերական ժողով մը որուն ընթացքին, այս նիւթերու կողքին որոշուեցաւ Արեւ աստուծոյ պաշտամունքի օրը՝ այսինքն Դեկտեմբեր 25-ը նոյնացնել Յիսուսի ծննդեան օրուան հետ:

Սակայն ինչո՞ւ հայերը չհետեւեցան տիեզերական այս ժողովի որոշումին: Եթէ ժողովին թուականը նաչինք, պիտի նկատենք որ ան կը համապատասխանէ Վարդանանց պատերազմի թուականին որուն պատճառաւ հայ ժողովուրդի ներկայացուցիչ կղերականները բացակայ եղան: Հետագային, Քաղկեդոնի ժողովին որոշումները:

Ու այսպէս է որ հայ ժողովուրդը պահեց անցեալի սովորութիւնը ու կը շարունակէ Սուրբ Ծնունդը եւ Աստուածայայտնութիւնը տօնել Յունուար 6-ին:



Մկրտութիւն

Յովնաթան Յովնաթանեան

Ը

«Քրիստոնէութիւնը հոգետիրումն է աշխարհին եւ Գիթեղէնին վրայ»

Կ

Այս խօսքը մեկնակէտ եւ սկզբունք առնելով է որ այս յօդուածներու շարքով կը կեդրոնանանք մեր Եկարագրի բարեպաշտ եւ օրինակելի գիծերուն վրայ, այլ խօսքով՝ մեր առաքինութիւններուն վրայ, որոնց միջոցաւ միայն կրնանք Գիթական աշխարհէն բարձրանալով հասնիլ հոգետիրին:

«Քրիստոնէութիւնը հոգետիրումն է աշխարհին եւ Գիթեղէնին վրայ», եւ քրիստոնէային առաքինութիւններէն մէկն է ...

ա

Արդարութիւնը

ր

Իւրաքանչիւրին իրաւունքը յարգող առաքինութիւն:

Արդար գործ ընել կը նշանակէ ամէն մէկուն տալ այն ինչ որ իրեն կը պատկանի իբր արդար իրաւունք:

ա

Արդարութիւնը բարոյական առաքինութիւն մըն է որ անհատի մը յարաբերութիւնը ուրիշին հետ կը կարգաւորէ: Ան մեզի կը ստիպէ որ ամէն մէկուն տանք իր իրաւունքը: Կը պահանջէ անձէն որ իր ենթայական ըլլալէ դադրի ու ըլլայ առարկայական ու դիմացինին տայ իր լրիւ իրաւունքը: Կը պահանջէ որ կողմնակցութիւն չընենք, մեր անձնական նախասիրութիւններն ու նախընտրութիւնները դիմացինին արդար իրաւունքէն առաջ չանցնենք:

ի

Կան մարդիկ որոնք կը կամենան արդար օրէնքները ծառայեցնել իրենց կամքին: Անոնք անօրէններն ու կամապաշտներն են, որոնք չեն հասկնար թէ օրէ՛նքը պիտի իշխէ մարդու կամքին վրայ եւ ո՛չ թէ մարդու կամքը՝ օրէնքին: Որովհետեւ եթէ մարդու կամքն օրէնք ըլլար, պիտի գտնուէին նոյնքան թիւով օրէնքներ քան մարդիկ:

ր

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Արդար ըլլալ կը նշանակէ...

... ըլլալ ճշմարիտ ստանց շեղելու իրականութենէն:

Անձ մը որ ...արդար է.- >

Անձ մը որ արդար չէ.- >

- Ողջախոհ է
- Պարկեշտ է
- Անկեղծ է
- Անկողմնակալ է
- Իրաւացի է
- Խղճամիտ է
- Վստահելի է
- Ուղիղ է

- Դաւաճան է
- Կեղծաւոր է
- Խարդախ է
- Անուղղամիտ է
- Անպարկեշտ է
- Խաբեքայ է

Իշխանն ու դատաւորը

Ուէլզի իշխանը, Հենրիկոս, վայրագ եւ անուղղայ երիտասարդ մըն էր որ իր դիրքին անհամապատասխան ստորին կարգի ընկերներու հետ ժամանակ կ'անցընէր եւ ամէն տեսակ անվայել արարքներու մէջ կը գտնուէր:

Օր մը, իր չար ընկերներէն մէկը, գողութեան մը պատճառով բանտարկութեան դատապարտուեցաւ: Իշխանը որ ներկայ էր դատավարութեան, երբ լսեց վճիռը զայրացաւ ու դատաւորին սպառնալով հրամայեց ազատ ձգել իր բարեկամը:

- Բանտը իշխանի մը բարեկամին տեղը չէ: Ես իշխանն եմ ու իմ բարեկամս հասարակ գողի մը պէս բանտը ղրկելէ կ'արգիլեմ ձեզ:

- Ով կ'ուզես եղիր, պատասխանեց դատաւորը: Դատարանին մէջ այսպէս խօսելու իրաւունք չունիս. ես երդուած եմ արդարադատ ըլլալ եւ արդարութիւնը պիտի գործադրեմ:

Դատաւորի հաստատամտութիւնն ու արդարամտութիւնը բոլորովին կատղեցուցին իշխանը որ յարձակում գործեց ատենին վրայ ու դատաւորին ուժգին ապտակ մը իջեցուց:

Դատաւորը պահակներուն հրամայեց ձերբակալել իշխանը եւ իր գող բարեկամին հետ բանտը առաջնորդել զինքը: Ու դառնալով իշխանին ըսաւ.

- Պարոն, օր մը դուն թագաւոր պիտի ըլլաս: Այն ատեն ինչպէ՞ս արդարութեամբ պիտի վարես երկիրդ. երբ այժմ դուն ի՛նքդ անկարող ես արդարութիւնը ընդունիլ եւ քաջալերել...

հարցումներ.-

- Իշխանը ի՞նչ տեսակի նկարագիր ունէր
- Դատաւորին վճիռին համաձայն ես
- Կը կարծե՞ս որ մարդոց միջեւ խտրութիւն պէտք է դրուի ու իւրաքանչիւրը տարբեր ձեւով դատուի
- Կարելո՞ր է որ ղեկավար մը արդար ըլլայ. ինչո՞ւ
- Արդարութիւնը կարելո՞ր առաքինութիւնը մըն է ըստ քեզի. ինչո՞ւ

**Ո՞վ ձեզի չարիք կը հասցնէ եթէ դուք բարին գործելու
ճախանձախնդիր ըլլաք:
Բայց Նոյնիսկ եթէ արդարութեան համար չարչարուիք, երանելի էք:**

Ա. Պետրոսի 3.13-14

Խաչակնքում կամ խաչ հանել

Մեր նախնիները ամեն առաւօտ տունէն դուրս ելլելու, եկեղեցի մտնելու, սրբութիւններու մօտենալու, ծիսական արարողութիւններու մասնակցելու, ցորենին հատիկը հողին մէջ ցանելու, գութանով հողը վարելու եւ աշնան բերքը հաւաքելու, նեղութեան, հիւանդութեան եւ վտանգներու, աշխատանքի սկսելու, հեռու ճանապարհ երթալու ժամանակ, ճաշէն առաջ եւ վերջ իրենց երեսը կը խաչակնքէին:

Խաչակնքելու սովորութիւնը այնքան հին է որքան քրիստոնէութիւնը:

Հին օրերուն եւ Հռոմէական կայսրութեան ժամանակ խաչը անարգ մահուան, նախատինքի, չարչարանքի միջոց կը համարուէր, եւ ով որ այդպիսի մահուան կը դատապարտուէր անիծեալ կը կոչուէր: Քրիստոս խաչին վրայ մեզի համար մահը յանձն առնելով, մահուան գործիքը Իր զօրութեամբ վերափոխեց յաիտենական կեանքի խորհրդանշանի:

Բոլորս ալ գիտենք թէ խաչակնքելու համար կը միացնենք մեր աջ ձեռքի բթամատը, ցուցամատը եւ միջնեմատը, մինչ մատնեմատը եւ ճկոյթ մատը իրար միացած կը սեղմենք ափին եւ մեր ձեռքը այդ վիճակով կը դպցնենք մեր ճակատին ըսելով՝ «յանուն Հօր», կ'իջեցնենք մեր կուրծքին ըսելով՝ «եւ Որդւոյ», կը տանինք դէպի ձախ ըսելով՝ «եւ Հոգւոյն», ապա կը տանինք կուրծքին դէպի աջ կողմը ըսելով՝ «Սրբոյ», եւ կը դնենք մեր կուրծքին վրայ, ըսելով՝ «Ամէն»:

Սակայն գիտէ՞ք թէ ինչ կը նշանակէ այս շարժումներէն եւ ուղղութիւններէն իւրաքանչիւրը...

Բացատրական խաչակնքումի շարժումներուն

Ըստ մեր եկեղեցւոյ հայրերուն, բթամատը, ցուցամատը եւ միջնեմատը միացած կը խորհրդանշեն Սուրբ Երրորդութիւնը: Իրար միացած եւ ափին վրայ սեղմուած մատնեմատը եւ ճկոյտը կը խորհրդանշեն Քրիստոսի կատարեալ մարդ եւ Աստուած ըլլալը, որ միացած են մէկ բնութեան մէջ:

Դէպի ճակատ տանիլը կը խորհրդանշէ կեանքը, կուրծքին իջեցնելը՝ մահը, դէպի ձախ տանիլը այս աշխարհի կեանքը իսկ աջ կողմ տանիլը՝ հանդերձեալ կեանքը:

Խաչակնքելու ժամանակ կը դրոշմենք մեր ճակատը, յիշելով որ Քրիստոս Երկինքն էր, ապա ձեռքը կ'իջեցնենք դէպի վար, մտաբերելով որ Քրիստոս երկիր իջաւ: Երբ ձեռքը կը տանինք կուրծքէն դէպի ձախ, կը նշենք որ ձախ կողմը՝ մենք մեղաւորներուն կողմը ինկանք, եւ դէպի աջ տանելով կ'ուզենք ըսել որ կը փափաքինք արդարներուն կողմը երթալ, եւ երբ մեր ձեռքը մեր սիրտին վրայ կը դնենք, կը նշանակէ թէ կ'ընդունինք թէ Քրիստոսով Աստուծոյ զաւակներ կ'ըլլանք:

Յիսուսի կեանքը

Ամփոփեց՝ Կասիա Պոյաճեան

Երկար ատենէ ի վեր, մարդիկ չարութիւն կ'ընէին. մէկը չկար որ կեցնէր զիրենք: Օր մը Յիսուս ծնաւ ու սորվեցուց մարդոց որ չարութիւնը բանի մը չի ծառայեր:

Երբ Յիսուս ծնաւ, հրեշտակներ օդին մէջ երեւցան ու հովիւներուն ըսին որ աշխարհի փրկիչը ծնած էր: Հովիւները գացին տեսնելու Յիսուս մանուկը: Երբ տեսան զինք, շատ ուրախացան:

Հեռու երկրի մը մէջ, կ'ապրէին երեք մոգեր: Երբ տեսան աստղը, մտածեցին որ աշխարհի փրկիչը պէտք է ծնած ըլլայ: Ուրեմն մոգերը Բեթլեհեմի ճամբան բռնեցին: Այն տեղի թագաւորը վախցաւ երբ լսեց որ Յիսուս ծնաւ: Կարծեց որ Ան իր տեղը թագաւոր պիտի ըլլայ ու ըսաւ մոգերուն որ երբ Յիսուս գտնեն իրեն ալ ըսեն ուր է Անոր տեղը: Երբ մոգերը հասան Յիսուսի քով, խոնարհեցան ու նուէրներ տուին: Երբ որ գացին, հրեշտակ մը երեւցաւ անոնց եւ ըսաւ որ թագաւորին չըսեն թէ ուր է Յիսուս մանուկը եւ ուրիշ տեղէ մտնեն իրենց երկիրը: Հրեշտակն ալ երեւցաւ Յովսէփին երազին մէջ, ըսելով որ իր ընտանիքը առնէ ու փախի Եգիպտոս: Երբ որ թագաւորը տեսաւ որ մոգերը Յիսուսի տեղը ցոյց չտուին, հրամայեց որ երկու տարեկանէն վար եղող բոլոր մանուկները սպաննեն, կարծելով որ անոնց կարգին կ'ըլլայ նաեւ Յիսուս:

Երբ թագաւորը մեռաւ, Յովսէփն ու իր ընտանիքը ետ եկան ապրելու Նազարէթ քաղաքը: 40 օր ծնունդէն վերջ, Մարիամն ու Յովսէփը Յիսուսին տաճար տարին որ Աստուծոյ նուիրեն. երկու տատրակներ որ բերեր էին իրենց հետ: Տաճարին մէջ կար Սիմէոն անունով բարի ծերունի մը որ միշտ կ'աղօթէր Աստուծոյ: Աստուածոյ Սուրբ Հոգին Սիմէոնին ըսած էր որ Յիսուսը չտեսած պիտի չմեռնէր: Երբ Սիմէոն տեսաւ Յիսուսը, շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ: Աննա մարգարէութիւնն ալ շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ եւ դուրս գնաց ամէն մարդու պատմելու ինչ որ տեսաւ:

Երբ Յիսուս 12 տարեկան եղաւ, ան տաճարին մէջ վարդապետներուն հետ կը խօսակցէր ու կը բացատրէր շատ բաներ Աստուծոյ մասին:



Աւանդական Ճաշկերոյթ Ա. Յակոբի Տօնին առթիւ

Կիրակի 14 Դեկտեմբեր 2003 ին Հայ կեդրոնի ՀՄԸՄ-Կամք մարզադաշտին մէջ տեղի ունեցաւ Սուրբ Յակոբի տօնին առթիւ Եկեղեցասէր Տիկնանց Օժանդակ Մարմնի եւ Հայ Կեդրոնի Վարչութեան կողմէ կազմակերպուած աւանդական ճաշկերոյթը: Աւելի քան 200 հոգիներ ներկայ եղան ճաշկերոյթին որոնց կարգին էին, Գանատայի Հայոց Թեմին Կաթողիկոսական Փոխանորդն ու Քաղաքական ժողովին անդամները. Եկեղեցոյ Հոգաբարձութեան եւ Դպրաց դասի անդամները ինչպէս նաեւ Կիրակնօրեայ Դպրոցին Տնօրէնը, Ուսուցչական կազմը, 30 աշակերտ-աշակերտուհիներ եւ ծնողք:

Կիրակնօրեայ Դպրոցին աշակերտները իրենց մասնակցութիւնը բերին ճաշկերոյթի գեղարուեստական բաժնին հետեւեալ ձեւով:


Նախ.Ա. դասարանի աշակերտները աղօթեցին 3 աղօթքներ:



Նախ. Բ.եւ Գ. դասարանի աշակերտները արտասանեցին Դաւիթի Սաղմոս թիւ 100[99] Երգ Գոհաբանութեան



Նախ. Դ դասարանի աշակերտներէն Փան-Յակոբ Չուխանեան, Արման-Հրակ Նարեկեան, Սեւակ Ալմանեան եւ Գրիգոր Մատթէոսեան ասմունքեցին ժազ Յակոբեանի «Յիսուսերգ»ը:



Նախ. Դ դասարանի աշակերտներէն Փան-Յակոբ Չոխաճեան եւ Արման-Հրակ Նարեկեան ներկայացուցին հատուած մը Ս. Գրիգոր Նարեկացիի «Ներբող Ս. Յակոբ Մծբնացիին» գործէն:



Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարանները ներկայացուցին «Հաւատով Խոստովանիմ»ի առաջին 3 համարները:

Ճաշկերոյթի ընթացքին Տէր Գառնիկ քահանայ Գոյունեան իրաքանչիւր ուսուցիչի նուիրեց գիրք մը իբրեւ գնահատանք իրենց տարած կարեւոր աշխատանքին:

Ճաշկերոյթը աւարտեցաւ «Կիլիկիա» մաղթերգով առաջնորդութեամբ Կիրակնօրեայ Դպրոցի Նախ. Դ. Ե. եւ Զ. աշակերտներուն որոնք երգեցին առաջին եւ երրորդ համարները:



Տպաւորիչ եւ գեղեցիկ էր դիտել մանուկներն ու պատանիները որոնք իրենց մատղաշ տարիքէն արդէն ծանօթ են Աստուածաշունչին, Հայ Եկեղեցւոյ աղօթքներուն եւ երգերուն: Մասնաւորաբար գնահատելի է գրաբարով արտասանուած «Հաւատով Խոստովանիմ»ը, Աշխարհաբարով Սաղմոս 100[99] եւ Կիլիկիա մաղթերգին Յրդ տունը



երգելը:

Կարելոր է անդրադառնալ որ Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցիչները ամէն կիրակի կամաւոր կերպով մեր մանուկներուն կը սորվեցնեն երգեր, աղօթքներ եւ Աստուածաշունչէն պատմութիւններ. անոնք կ'օգնեն որ մեր զաւակները աճին որպէս Հայ Քրիստոնեաներ որոնց պէտքը որչափ զգալի է այս օրերու տագնապալի աշխարհի մէջ՝ ամէնուրեք: Անոնց այս աշխատանքը կարելի է համարել սուրբ աշխատանք:



Կիրակնօրեայ Դպրոցի Տնօրէնին եւ բոլոր Ուսուցիչներուն վարձքը կատար:

Ծնողք մը



Պահուած բառ

ա	ր	ա	ր	ա	տ	Ծ	հ	կ	ո	տ	ր	ե	լ	դ	ո	ւ	ռ	գ
խ	ր	ա	տ	ր	կ	տ	ո	ւ	ց	Ի	ձ	Ի	ւ	ն	ր	բ	կ	ր
կ	Ն	ա	ն	ա	հ	Ի	տ	ե	կ	ա	ն	ն	ն	բ	ա	ա	ա	
Ի	յ	ա	ր	գ	ե	լ	փ	ա	ա	ր	տ	օ	ն	ե	լ	ր	ր	դ
ր	կ	ա	ղ	Ի	ն	ա	պ	ա	ա	ո	ա	ւ	օ	տ	ո	ե	ա	ա
ա	ռ	ա	կ	լ	չ	ա	ր	չ	ա	ր	ե	լ	ե	ե	ւ	կ	պ	ր
կ	Ի	ր	ա	կ	Ի	ն	Ո	ք	ն	ի	կ	ր	ե	լ	ա	ա	ե	ա
ն	ր	գ	ն	ո	Ի	տ	ա	ն	ձ	ե	ո	ք	ր	ձ	լ	մ	տ	ն
օ	ա	ո	ա	յ	բ	ա	ր	ե	ր	ա	ր	ո	ա	ե	տ	ե	ւ	ա
ր	կ	ւ	չ	ս	ա	ո	օ	ր	ե	ա	յ	ւ	զ	ո	ջ	կ	լ	ն
ե	ա	ն	ա	տ	ո	Ն	բ	ո	ւ	պ	Դ	ո	ե	ն	ւ	ո	ո	ա
ա	ն	դ	բ	ա	ն	ջ	ա	ր	բ	ա	ր	ի	լ	ո	յ	ս	ւ	պ
յ	զ	ա	ր	ն	ե	լ	ր	ե	ր	գ	ե	լ	ն	ց	տ	ա	ր	ր
գ	ի	ր	ք	ա	լ	օ	ձ	Ի	բ	ա	ն	ա	կ	ո	ւ	մ	ջ	ա
ո	ւ	զ	ե	լ	ց	ո	ր	ե	ն	յ	բ	պ	ա	ղ	տ	Ի	կ	կ

Արարատ
Անահիտ
Անտառ
առօրեայ
արագիլ
առակ
առնել
անձրեւ
առաւօտ
ապագայ
աչք
ապակի
արտօնել

բանջար
բանուկ
բարեկամ
բարիլոյս
բարերար
բանակում
բարձր
բու

Գիրք
Գունդ
Գրադարան

Դուռ
Դաս

Ետեւ
Ելլել
Երկինք
Երագել
Երգել

Զարնել

Իրական

Լուալ
Լուրջ

Խրատ

Կիրակի
Կանաչ
Կիրակնօրեայ
Կարապետ
Կտուց
Կաղին
Կոտրել
Կանոն
Կոյս

Հոտ

ձիւն
ձեռք
ձեռնոց

յարգել

նետել

ուզել
որք
ուռիլ

չարչարել
չափեց

պաղտիկ
պանան
պտակ

ջուր

ստանալ

տարր
տանձ

ցորեն

օձի

Պահուած բառը
6 գիր:

Նախորդ
պահուած բառը՝
Պարտէզ:

Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներ

75- Ամեակ

1929-2004

«Մաշտոցի Արձագանգ»ը կ'ողջունէ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցները իր հիմնադրութեան 75-Ամեակին առթիւ:

Փառք կու տանք Աստուծոյ որ մեր ազգին շնորհեց այս օրհնաբեր շարժումը:

Երախտագիտական զգացումներով կը վերակոչենք յիշատակը Մեծի Տանն Կիլիկիոյ Երջանկայիշատակ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսին, որուն նախաձեռնութեամբ հիմնուեցաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցները:

Մեր յաջորդող թիւերով պիտի անդրադառնանք Կիրակնօրեայ Դպրոցին մասին, եւ մասնաւորապէս անոր մուտքին Հայաստանեայց Եկեղեցւոյ ծիրէն ներս: Այս թիւով կը բաւականանք ներկայացնելով Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանը՝

«Զօգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը:» Մարկոս 10.14:

եւ մաղթերգը

Մաղթերգ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու

Խօսք՝ Կարապետ Փափագեան

Կիրակնօրեայ Սուրբ յարկին
Մենք սաներն ենք լուսաբաղձ,
Կայծերու պէս լուսածին
Ցայտած՝ սրտէն պերճ նախնեաց:
Ուստի քալենք անխրոով,
Ո՛վ հարազատ զարմ արի,
Հաւատաւոր գընացքով՝
Լոյս-աղբիւրին ցանկալի:

Եկեղեցին սրբազգեաց՝
Ժառանգ անգին, հրաշափառ,
Մեր խոյանքին վերասլաց
Թափն է խիզախ բոցավառ.
Հայ մըշկահոտ սրբութեան
Բոյրովն օծած մեր հոգին,
Մեր երթին մէջ յաղթական՝
Թումբերն ամէն պիտ' փըշրի՛ն:

Կէցցե՛ն յաւերժ, անասան,
Հիմնադիր եւ բարերար ,
Կիրակնօրեայ լուսոյ տան
Ջահակիրներ վեհաբառ:
Հնչեցէ՛ք յար, ծնծղանե՛ր
Մեր սրտերուն ցնծագին,
Որ վառ մընայ դարեր դեռ՝
Սրբաճանչ Հայ հոգին...:

Մաղթերգ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու

Երաժշտութիւն՝ Յակոբ Նալպանտեան

Զափաւոր

PIANO

5

9

13

Fine

The image shows a piano score for a hymn. It consists of four systems of music, each with a treble and bass clef staff. The time signature is 4/4. The music is primarily chordal, with some melodic lines in the treble clef. There are some red and blue markings on the notes, possibly indicating fingerings or specific articulation. The word 'PIANO' is written at the beginning of the first system. Measure numbers 5, 9, and 13 are indicated at the start of their respective systems. The piece ends with the word 'Fine' at the end of the fourth system.

Դեկտեմբեր ամսուան պատասխանողներ եւ մասնակցողներ

Մանկապարտեզի անկիւն

արեւելքէն, երուսաղէմ, աստղը,
երկրպագելու, Հերովդէս, վրդովեցաւ, աւագ,
ուսուցիչներ, Քրիստոսը, Բեթլեհեմ

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. գ. Զուրէն ելած մարդ
2. գ. Բեթլեհեմ
3. ամբողջ, ուրախութեամբ, երգերով
4. բ. Փարաւոն
5. ա. 14
6. գ. Սողոմոն
7. դ. Իմաստութիւն
8. ա. Կիներէն մէկը միւսին զաւակը գողցաւ
9. ա. առաջարկեց ողջ տղան երկու կտոր ընելով բաժնել կիներուն
10. բ. Տէր Իմ, ողորմէ ինծի, զաւակս միս կնոջ տուէք բայց մի մեռցնէք

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. ա. Իր կնոջ Սառայի եւ Ղովտի հետ
2. դ. Թադէոս եւ Բարթողիմէոսի «երբեմն»
3. գ. 100
4. գ. Յիսուս
5. գ. մեղքերու քաւում
6. բ. Ծննդոց
7. բ. Ղուկաս
8. Աստուած, Յորդանան, մկրտութեամբ, յերկինս, հրեղէն, զառաքեալսն
9. գ. կրակով
10. գ. Յովհաննու 1.9

Երկրորդականի անկիւն

1. Նաթանայէլ
2. Ս. Նիկողայոս
3. Առակաց, ժողովող, Երգ Երգոց
4. Եսթեր, Երգ երգոց
5. Սիմոն
6. Սողոս
7. Հոմ
8. Մծբին
9. Նիկիոյ, 325
10. Ա. Կորնթացիներուն 13, Պողոս, Կորնթացիներուն իր առաջին նամակին մէջ

Ընդհանուրի անկիւն

- 1- ա, մահիկ, լուսնի մէկ ձեւն է
- 2- դ, ծանրաբարձութիւն
- 3- բ, անամօթ կ'ըլլայ
- 4- բ, բշխունը ասեղնագործ մըն է
- 5- բ, միայն Աստուծով հոգիս հանգիստ կը գտնէ
- 6- գ, Եկմալեան պատարագ
- 7- դ, բազմամեղիս
- 8- գ, ուրկանին օրինակը
- 9- բ, Ալէքսանտր Սպենդիարեան
- 10- ա, Երեւանի համար մշակած յատակագիծ երով

Դեկտեմբեր ամսուան մասնակցողներ

Մանկապարտեզ

Կրէյս Նարեկեան, Ճեսիքա

Մատթէոսեան

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Արին Անթեպեան,
Ռիթա Խշիշեան, Յուլեր Անթեպեան:

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Գէորգ Պուլիքեան, Ալէք Կարապետեան

Անսխալ պատասխանող

Առէն Պապիկեան, Յարութ
Քուլլուքեան, Սերենա Քուլլուքեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Թամար Պուլիքեան, Անի Մելեքեան,
Հրակ Նարեկեան, Ժան-Յակոբ
Չուխանեան


Անսխալ պատասխանողներ

Սեւակ Ալմանեան, Գօգօ Մատթէոսեան

Երկրորդականի անկիւն

Լոռի Քէօսէյեան:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



«Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներ»ը հիմնուեցան ----- թուականին եւ 2004ը «Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներ»ու ---- Ամեակն է:

Ամբողջացո՛ւր «Ղուկաս 2.8-14»

Հովիւներ, խաղաղութի՛ւն, Փրկիչը, խանձարուրով, հաճութիւն, հրեշտակը, աւետիս, Օծեալ

Այնտեղ, դաշտերուն մէջ ----- կային, որոնք գիշերով իրենց հօտերուն պահակութիւն կ'ընէին: Տիրոջ ----- անոնց երեւցաւ եւ Տիրոջ փառքը լոյսի պէս անոնց վրայ ծագեցաւ: Հովիւները սաստիկ վախցան. հրեշտակը ըսաւ անոնց.

- Մի՛ վախնաք, ձեզի ----- մը պիտի տամ, որ ամբողջ ժողովուրդին մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ ձեր ----- ծնաւ, որ ----- Տէրն է: Հետեւեալը ապացոյց ըլլայ ձեզի.- հոն մանուկ մը պիտի գտնէք՝ ----- փաթթուած եւ մսուրի մէջ դրուած:

Եւ յանկարծ այդ հրեշտակին միացաւ երկնաւոր զօրքերու բազմութիւն մը, որ կ'օրհնաբանէր զԱստուած, ըսելով.«Բարձունքներուն մէջ Աստուծոյ փա՛ռք, ----- երկրի վրայ եւ մարդոց միջեւ ----- »

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն**

1.- Ամբողջացուր հետեւեալ աղօթքը:

Գոհութիւն եւ ----- քեզի միշտ
----- Դու որ ----- ծաղիկին
եւ երկնքի ----- ծնունդ կու տաս
-----:

2.- Ի՞նչ կը տօնենք Յունուար 6 ին:

- ա.- Կաղանդ պապային գալը
- բ.- Դպրոցին վերամուտը
- գ.- Յիսուսի ծնունդը
- դ.- Նոր տարին

3.- Հովիւներուն Յիսուս մանուկին
այցելութիւնը ո՞ր Աւետարանին մէջ
գրուած է:

- ա.- Մատթէոսի
- բ.- Ղուկասի
- գ.- Յովհաննոսի
- դ.- Մարկոսի

4.- Տիրոջ Հրեշտակը Յովսէփի
առաջարկեց ո՞ր երթալ Յիսուս
մանուկը ազատելու համար:

- ա.- Գանատա
- բ.- Երուսաղէմ
- գ.- Եգիպտոս
- դ.- Նազարէթ

5.- Զաքարիայէն եւ Եղիսաբէթէն ծնած
մանուկը ի՞նչ պիտի կոչուէր:

- ա.- Զաքարիա
- բ.- Պետրոս

- գ.- Յարութիւն
- դ.- Յովհաննէս

6.- Ի՞նչ նուէրներ ընծայեցին մոգերը
Յիսուսին:

- Ա.- Հաց
- Բ.- ոսկի, կնդրուկ եւ զմուռ
- Գ.- Զուկ
- Դ.- Կերակուր

7.-Մոգերը ինչպէ՞ս գտան Յիսուսի
ծննդավայրը:

- Ա.- Թագաւորը ըսաւ
- Բ.- Մէկը ըսաւ
- Գ.- Արեւելքի աստղին հետեւելով
- Դ.- Հովիւները ըսին

8.- 13 Դեկտեմբերին ի՞նչ տօնեցինք:

- Ա.- Յիսուսին ծնունդը
- Բ.- Կաղանդ պապային գալը
- Գ.- Սուրբ Յակոբ Մծբնացիի տօնը
- Դ.- Տարեդարձ մը

9.- «Հայաստանեայց Եկեղեցոյ
Կիրակնօրեայ Դպրոցներ»ը հիմնուեցան
----- թուականին:

10. 2004ը «Հայաստանեայց Եկեղեցոյ
Կիրակնօրեայ Դպրոցներ»ու
----- Ամեակն է:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Դեկտեմբեր ամսուն որո՞նց յիշատակը կը տօնենք:

ա.- Սուրբ Յովհաննու Կարապետի

բ.- Ս. Պետրոսի եւ Ս. Պօղոսի

գ.- Սուրբ Յակոբ Մծբնայ հայրապետին

դ.- Յիսուսի ծննդեան

2.- Աստուծոյ հրեշտակը Սուրբ Յակոբին ինչո՞ւ Նոյան Տապանէն փայտ մը տուաւ:

ա.- Որովհետեւ Սուրբ Յակոբ կ'ուզէր այդ փայտէն խաչ մը շինել:

բ.- Սուրբ Յակոբ կ'ուզէր Արարատ բարձրանալ Տապանը գտնելու:

գ.- Սուրբ Յակոբ Յովհաննէսի անունը պիտի գրէր վրան:

դ.- Սուրբ Յակոբ կ'ուզէր աղօթք մը գրել փայտին վրայ եւ փայտ չունէր:

3.- «Կ'ըսեմ քեզի, որ այս գիշեր աքաղաղը երկու անգամ չկանչած՝ դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս»: Յիսուս որո՞ւ ըսաւ այս խօսքերը:

ա.- Պօղոս Առաքելին

բ.- Յովհաննէս Առաքելին

գ.- Յակոբոս Առաքելինին

դ.- Պետրոս Առաքելինին

4.- Ո՞վ բժշկեց Սօղոսը:

ա.- Պետրոս

բ.- Անանիա

գ.- Յովհաննէս

դ.- Զաքարիա

5.- Յովսէփի ինչո՞ւ Յիսուս մանուկը եւ Մարիամը փախցուց Եգիպտոս:

ա.- Հնազանդելու համար Աստուծոյ Հրեշտակին:

բ.- Յովսէփի գործը ատելի յաջող էր հոն:

գ.- Յովսէփի ընտանիքը հոն կը գնտուէր:

դ.- Յիսուս մանուկը ատելի առողջ կը մեծնայ հոն:

6.- Պօղոս առաքեալ որոնց գրած էր այս նամակը: «Ուստի գովենք զինք այն փառքին համար՝ որ մեզի շնորհեց իր սիրելի Որդիին միջոցաւ»: 1.6

ա.- Հռոմայեցիներուն

բ.- Կորնթացիներուն

գ.- Գաղատացիներուն

դ.- Եփեսացիներուն

7.- «Բարձունքներուն մէջ Աստուծոյ փա՛րք, խաղաղութի՛ւն երկրի վրայ եւ մարդոց միջեւ հանութիւն»: Հրեշտակները ե՞րբ երգեցին այս երգը:

ա.- Յիսուսի ծննդեան գիշերը:

բ.- Յիսուսի մկրտութեան ժամուն:

գ.- Յիսուսի Յարութեան ժամանակ:

դ.- Յիսուսի համբարձման ընթացքին:

8.- Հին Կտակարանի ո՞ր գիրքը յաճախ կը կրկնուի մեր եկեղեցիներուն մէջ:

ա.- Ծննդոցը

բ.- Սաղմոսացը

գ.- Թագաւորացը:

դ.- Յոբան

9. Յետո քանի տարեկանին մեռաւ.

ա. 650 տարեկան

բ. 27 տարեկան

գ. 110 տարեկան

դ. 59 տարեկան

10.- «Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներ»ը հիմնուեցան

----- թուականին եւ 2004ը

«Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներ»ու ---- Ամեակն է:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն**

1- «Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներ»ը հիմնուեցան ----- թուականին եւ 2004ը «Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներ»ու ---- Ամեակն է:

2- Այն մանուկը որ ծնաւ Յունուար 6 ին Յունուար ---- ին «Յիսուս» անուանուեցաւ:

3-Այս տարի ե՞րբ կը տօնենք Յովհաննէս Մկրտիչին Տօնը:

4-Մատթէոս 1.23 Հին Կտակարանի ո՞ր մարգարէական Գիրքէն առնուած է:

5-Մատթէոս 2.6 Հին Կտակարանի ո՞ր մարգարէական Գիրքէն առնուած է:

6- Մարկոս 1.3 Հին Կտակարանի ո՞ր մարգարէական Գիրքէն առնուած է:

7- Հայ Եկեղեցւոյ Ծարականներէն «Հարց» գլխաւորումին տակ ինկող շարականները գրուած են ի յիշատակ «Երից մանկանց ի Հնոցէ փրկութեան»: Մարգարէական ո՞ր գիրքին մէջ կը գտնենք այս պատահարը:

8- Հայ Եկեղեցւոյ Ծարականներէն «Մեծացուցէ» գլխաւորումին տակ ինկող շարականները գրուած են ի գովեստ Ս. Կոյս Մարիամ Աստուածածնի: Աստուածաշունչի ո՞ր գրքին մէջ կը կարդանք «Մարիամի Օրհներգութիւնը»:

9.- Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանը ո՞ր գրուած է:

10- Որո՞ւն նախաձեռնութեամբ Հիմնուեցաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցները:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Ընդհանուրի անկիւն

1- «Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակօրեայ Դպրոցներ»ը հիմնուեցան -----
թուականին եւ 2004ը «Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակօրեայ Դպրոցներ»ու
---- Ամեակն է:

2- Հայերէն լեզուի մէջ երկու արմատ բառեր
գիրար միացնելով կը ստանանք.-

- ա- ածանց բառ
- բ- զոյգ բառ
- գ- բարդ բառ
- դ- բարդածանց բառ

3- Երբ յիշենք հին կտակարանի Բաբելոնի
աշտարակի պատմութիւնը, մեր խօսքը կը
վերագրենք.-

- ա- արտագաղթի
- բ- անհաւատութեան
- գ- խառնակութեան
- դ- աշխատասիրութեան

4- Ըստ առածին, «ծոյլին գործ տուր, տեղը
քեզի» ...

- ա- դրամ կու տայ
- բ- խելք կու տայ
- գ- գործ կը վերադարձնէ
- դ- փորձանք կը հասցնէ

5- Ըստ Վահան Թէքէեանի, «Հաշուէարդար,
Ի՞նչ մնաց կեանքէն ինծի, Ի՞նչ մնաց» ...

- ա- ինչ որ ըրի ուրիշին, տարօրինակ, այն
միայն
- բ- ինչ որ ըսի ուրիշին, տարօրինակ, այն
միայն
- գ- ինչ որ տուի ուրիշին, տարօրինակ, այն
միայն
- դ- Այս խօսքը Վահան Թէքէեանը չէ ըսած

6- Ըստ Սաղմոս 67[66]-ին, «Աստուած,
ողորմէ մեզի եւ օրհնէ մեզ...եւ ամբողջ
աշխարհը թող երկիւղով...»

- ա- պաշտպանէ զայն
- բ- պահպանէ զայն
- գ- պատուէ զայն
- դ- լուսաւորէ զայն

7- Ըստ Ղուկասի ատարանին, Յիսուսի
ծննդեան առթիւ հրեշտակները օրհնաբանեցին
զԱստուած ըսելով «Բարձունքներուն մէջ
Աստուծոյ փառք, խաղաղութիւն երկրի վրայ
եւ մարդոց միջեւ ...».-

- ա- միութիւն
- բ- համերաշխութիւն
- գ- հաճութիւն
- դ- հասկացողութիւն

8- խանձարուրը...

- ա- Յիսուս մանուկը փաթթելու ծառայեց
- բ- մոգերուն բերած նուէրներէն մէկն էր
- գ- այս տեղն էր որ Մարիամ եւ Յովսէփ
գիշերեցին
- դ- Յիսուս մանուկին անկողինն էր

9- Հայերէն լեզուով Թօնը.-

- ա- ձուկի տեսակ է
- բ- տեղատարափ անձրեւ է
- գ- գոյնի երանգ է
- դ- երաժշտական ձայնի կարգ է

10- Հետեւեալներէն ո՞ր մէկը, ինքնին մեծ
թերութիւն մը ըլլալով հանդերձ մահացու եօթ
մեղքերու կարգին չի նշուիր.-

- ա- Ծուլութիւն
- բ- բարկութիւն
- գ- նախանձ
- դ- ստախօսութիւն

Գործունեություններ

Երիտասարդներուն համար Աստուածաշունչի Սերտողություն

Ամէն Եսբաթ Օր ժամը 7:00 - 8:30

Ս. Յակոբ Մայր Եկեղեցի

Դասախօսություն

**Սահիկներու Ցուցադրութեամբ
«Աղթամարի Ս. Խաչ Եկեղեցին
Հայ Ծարտարապետութեան Մէջ»**

Կը ներկայացնէ Պրն. Հրաչ Ա. Թորաթլեան
Հինգշաբթի, 15 Յունուար 2004 ի երեկոյեան ժամը 8:00 ին
Ս. Յակոբ Մայր Եկեղեցի

Դասախօսություն

**«Գարեգին Ա. Անենայն Հայոց Կաթողիկոսի
Գրական Վաստակը»**

Կը ներկայացնէ Պրն. Վազգէն Ղուկասեան
Հինգշաբթի, 12 Փետրուար 2004 ի երեկոյեան ժամը 8:00 ին
Ա. Ահարոնեան Սրահ

Կարճ Լուրեր

• Նուիրատուութիւն

Շնորհակալութեամբ ստացանք C\$ 200 ՀՕՄի Սօւէ մասնաճիւղէն «Մոնթրէալ»

Շնորհակալութեամբ ստացանք C\$ 50 Պրն. Սէրգօ Պոյաճեանէն

Այս գումարները գործածուեցան աշակերտներուն կաղանդի նուէրներուն համար:

• Հոգաբարձութեան ներկայացուցիչ Պրն. Լեւոն Պոյաճեան այցելեց Կիրակնօրեայ Դպրոց մօտէն ծանօթանալու համար Կիրակնօրեայ Դպրոցի գործունէութիւններուն:

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ

Խմբագիր՝	Շաղիկ Պոյաճեան
Աշխատակիցներ՝	Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան, Գարուիկ Գէպթանճեան, Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս Պապիկեան:

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

*Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցոյ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը.-
Ուսուցիչներ՝ Իգապէլ Քուլլութեան, Սալբի Բակլաեան, Վերժին Գէպթանճեան, Վերա Կարապետեան,
Երան Լոշխաճեան, Գարուիկ Գէպթանճեան, Յասմիկ Նաճարեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Կալքէջ՝ Բաֆֆի Պապիկեան, Լուսանկարիչ՝
Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Շաղիկ Պոյաճեան:*



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցու
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ



ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 6

Փետրուար 2004

Կիր.	Բ2.	Գ2.	Դ2.	Ե2.	Ուր.	Շաբ.
1	2	3	4	5	6	7
8	9	10	11	12	13	14
15	16	17	18	19	20	21
22	23	24	25	26	27	28
29						

1	Բարեկենդան առաջաւորի պահօքի
6	Յիշատակ Յովհաննոս մարգարէին
7	Սուրբ Սարգիս
14	Տեառնընդատաջ
17	Սուրբ Ղեւոնդեանց քահանաներու
19	Վարդանանց
21	Կոստանդնուպոլսոյ ժողովի 150 հայրապետներու
22	Բուն բարեկենդան
23	Սկիզբ Մեծ Պահօքի

Վստահ գիտցէք, որ եթէ ցորենի հատիկը հողին մէջ չիցնայ եւ չմեռնի ինք որպէս առանձին հատիկ կը մնայ, իսկ եթէ մեռնի՝ բազմաթիւ հատիկներ կու տայ: Ով որ իր անձը կը սիրէ կը կորսնցնէ զայն, իսկ ով որ իր անձը կ'անտեսէ այս աշխարհին վրայ՝ զայն յաւիտենական կեանքին համար պահած կ'ըլլայ:

Յովհ. 12.24-25

Անոնք նահատակուեցան որպէսզի մենք գոյատևենք

Փետրուար ամսուան մէջ զուգարհալող Վարդանանց պատերազմի յիշատակութեան տօնը ամէն տարի կու գայ մեզի տալու զոհողութեան, նուիրումի, նահատակութեան, հայրենասիրութեան, աննահանջ հաւատքի եւ այլ առաքինութիւններու մասին դասեր:

Վարդանանց պատերազմի այս պատմական եղելութիւնը սերտ նմանութիւն մը ունի Սուրբ Գիրքին մէջ արտայայտուող «դասերէն» մէկուն հետ՝ Յովհաննէս առաքելի անտարանին մէջ պարզուող այն իրականութեան հետ, ըստ որուն ցորենի հատիկը եթէ հողին մէջ չիցնայ ու չմեռնի, ինք որպէս առանձին հատիկ կը մնայ ու արդիւնք չի տար: Իսկ եթէ իցնայ գետին ու մեռնի, կը բազմանայ ու բազմաթիւ հատիկներ կու տայ:

Վարդան Մամիկոնեանի ու անոր հաւատարիմ նախարարներու, հոգեւորականներու, զինուորներու եւ ժողովուրդի զոհողութիւնն ու մահը ճիշդ այդպէս, կեանք տուին ամբողջ հայ ժողովուրդին, եկեղեցւոյն, հայու գոյութեան՝ իսկ: Անոնք մեռան որպէսզի հայութիւնը ապրի, անոնք անհետացան որպէսզի մենք գոյատևենք:

Վարդանանց պատերազմէն մեզի փոխանցուած օրինակներն ու դասերը անհամար են: Այս տարի անոնց մէջէն վեր առնենք մէկը ու այդ օրինակին հետեւելով, ինչպէս նաեւ Աստուածաշունչի ոգիին հետ հաղորդակից ըլլալով՝ փորձենք նաեւ եսակեդրոն ըլլալէ խուսափիլ ու մեր զոհողութեամբ ուրիշին հանդէպ բարիք գործել:

Փորձութեանց մէջ յարատելութիւն՝ Քրիստոսի օրինակով

Ծաշու անտարանի ընթերցում Վարդանանցի օրուան առթիւ, Երրայեցիներուն 12.1-7

Ուրեմն մենք ալ, որ այսքան բազմաթիւ վկաներով շրջապատուած ենք, վանե՛նք ամէն խոչընդոտ եւ մէկ կողմ ձգենք մեղքը, որ մեզ դիրաւ կը պաշարէ, եւ համբերատարութեամբ պայքարինք մեզի ներկայացող փորձութիւններուն դէմ: Մեր աչքերը յատենք Յիսուսի, մեր հաւատքի հիմնադիրին ու կատարելագործողին, որ գիտնալով թէ ի՛նչ ուրախութիւն կը սպասէ իրեն՝, արհամարհեց ամօթը, յանձն առաւ խաչի վրայ մեռնիլ, եւ Աստուծոյ աթոռին աջ կողմը նստաւ:

Որպէսզի երբեք չյուսալքուիք եւ չտկարանաք, մտաբերեցէք՝ թէ Յիսուս ինչպիսի համբերութեամբ կրեց մեղաւորներու հակառակութիւնները: Դուք տակաւին ձեր արիւնը թափելու չափ դիմադրութիւն ցոյց չտուիք մեղքի դէմ պայքարին մէջ:

Երրայեցիներուն 12.5-9


... Ուստի համբերութեամբ ընդունեցէք Աստուծոյ խրատը, գիտնալով որ հօր մը պէս կը վարուի ձեզի հետ: Կա՛յ զաւակ մը որ իր հօրմէն յանդիմանութիւն ստացած չըլլայ: Ընդհակառակը, եթէ Աստուած ձեզ յանդիմանէ, ինչպէս կ'ընէ իր բոլոր որդիներուն, կը նշանակէ՝ թէ իր զաւակները չէք եւ խորթ էք իրեն: Մեր մարմնաւոր հայրերը երբ մեզ յանդիմանեն, կը դադրինք զիրենք յարգելէ: Ո՛չ: Ուրեմն որքան անելի եւս հնազանդ պէտք է ըլլանք հոգիներու Հօրը, որպէսզի կեանք ունենանք:

Բովանդակութիւն

- Անոնք նահատակուեցան որպէսզի մենք գոյատեւենք
- Փորձութեան մէջ յարատելութիւն՝ Քրիստոսի օրինակով
- Վարդանանց պատերազմի մասին
- Մեծ պահքը կը սկսի...
- Ղեւնդեանք
- Հայ ընտանիքը որպէս եկեղեցի
- «Արագահաս» Սուրբ Սարգիս
- Պահուած բառ
- Նկարագիր- ժուժկալութիւն
- Յունուար ամսուան պատասխաններն ու մասնակցողները
- Ո՞րն է ճիշդ պատասխանը
 - . Մանկապարտէզ
 - . Նախակրթարան Ա. Բ. Գ.
 - . Նախակրթարան Դ. Ե. Զ.
 - . Երկրորդական
 - . Ընդհանուր
- Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ ... Կիրակնօրեայ Դպրոցը
- Սուրբ Ծնունդը Կիրակնօրեայ Դպրոցէն ներս
- Գործունէութիւններ
- Գիտէի՞ր թէ
- Կարճ Լուրեր

Վարդանանց պատերազմի մասին

Վարդանանք անունին տակ ծանօթ են պարսկական տիրապետութեան դէմ, 451 թուականին հայոց սպարապետ Վարդան Մամիկոնեանի, հոգեւոր դասի եւ սպարապետի կողմնակից նախարարներու գլխաւորութեամբ հայրենիքի ազատագրութեան, քրիստոնէութեան եւ Հայ եկեղեցւոյ պաշտպանութեան համար հայ ժողովուրդի մղած պայքարի՝ Վարդանանց պատերազմի մասնակիցները, նահատակները:



Վարդան Մամիկոնեան ու Վանդանանց պատերազմը հայ արուեստագէտները լայնօրէն ներշնչած են:



Այսպէս օրինակ մեզի ծանօթ են Երեւանի մէջ կանգնող Ե. Քոչարի «Վարդան Մամիկոնեան» արձանը որ տպաւորիչ ուրուագիծ մը ունի:

Հանրածանօթ են նաեւ Գ. խանճեանի եւ Վ. խորեհեանի մեծադիր կտաւներուն վրայ պատկերազարդուած Աւարայրի ճակատամարտը, ուր հայ մարտիկներէն իւրաքանչիւրի կերպարը ունի շեշտուած անհատականութիւն:

Իսկ գրականութենէ ներս, Վարդանանց պատերազմի թեման ամէնէն ասելի լաւ կերպով կը ներկայանայ Դ. Տեմիրճեանի «Վարդանանք» վէպին մէջ:

Վարդանանց պատերազմը ներշնչած է նաեւ Ներսէս Ծնորհալի որ անոր նուիրած է իր շարականներէն մէկը՝ «Նորահրաշ»-ը.-

Նորահրաշ պսակաւոր եւ զօրագլուխ կտրիճներուն,
Արիաբար դէմ դիրք մահուան , սպառազինուած սուրովն
Հոգւոյն,
Վարդան, քաջ նահատակ, որ թշնամին վանեցիր դուն,
Եկեղեցին պըսակելով քու արիւնովդ վարդագոյն:

Մեծ Պահքը կը սկսի...

Հայ եկեղեցույ ծիսաշարքին համաձայն Բուն Բարեկենդանին յաջորդող Երկուշաբթին, այսինքն այս տարուան Փետրուար 23-ին, կը սկսի Մեծ Պահքի շրջանը: Ան կը տևի 42 օրեր մինչեւ Ծաղկազարդի Կիրակին, յետոյ շաբաթ մը եւս պահքի օրեր՝ Աւագ Ծաբաթը, որու ընթացքին եկեղեցին հաւատացեալները կը պատրաստէ արժանաւորապէս եւ երկիւղածութեամբ մօտենալու Յիսուս Քրիստոսի Յարութեան տօնին: Մեծ Պահքի բոլոր կիրակիներուն բոլոր եկեղեցիներուն մէջ կը կարդացուին աւետարանական առակներ, որոնք հրաւերներ են որ մարդիկ հեռանան իրենց մեղքերէն, մաքրուին եւ պատրաստ ըլլան սուրբ տօնին:

Մարդ միայն հացով չ'ապրիր...

Աւետարանին մէջ գրուած է թէ Քրիստոս իր քարոզչութիւնը սկսելէ առաջ քառասուն օր առանձնացաւ անապատ՝ աղօթքով եւ ծոմապահութեամբ ապրելու համար: «Այդ օրերուն ո՛չ կերաւ եւ ո՛չ ալ խմեց: Երբ քառասուն օրերը ամբողջացան, Յիսուս անօթեցաւ: Սատանան ըսաւ իրեն.

- Եթէ դուն Աստուծոյ որդին ես, հրամայէ՛ որ այս քարը հաց դառնայ: Յիսուս պատասխանեց.

- Օրէնքի գիրքին մէջ գրուած է. «Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ՝ Աստուծոյ բոլոր խօսքերով:»

Ղուկաս 4.2-4

Մեծ Պահքի Կիրակիները

Մեծ Պահքը ունի 7 կիրակիներ, որոնք յատուկ եւ իմաստալից անուններ ունին. ահա անոնցմէ երկուքը որոնք կ'իյնան Փետրուար ամսուան մէջ. -

Բուն Բարեկենդան.

Մեծ Պահքին նախորդող Կիրակին Է. Բարեկենդան կը նշանակէ բարի կեանք՝ աշխարհիկ իմաստով ուրախութիւն, խրախճանք, իսկ կրօնական իմաստով՝ երանելի կեանք, ինչպէս Ադամը սկիզբը կ'ապրէր դրախտին մէջ:

Արտաքսման Կիրակի.


Ադամն ու Եւան իրենց անհնազանդութեան պատճառաւ երկար չի մնացին դրախտին մէջ եւ արտաքսուեցան հոնկէ: Մեզի՛ մեղաւորներուս համար Քրիստոս ապաշխարհութեամբ ցոյց տուաւ փրկութեան ճամբան, եւ դրախտին արժանանալու յոյսը:

Պահքի շրջանը իր սահմանափակումներով, մեղքերու խոստովանութեամբ, մարդը կը հասցնէ իր կատարելութեան եւ հաւատացեալներ անոր միջոցաւ կը փորձեն կիրարկել «Լերան քարոզ»-ին մէջ Յիսուսի ըսած մէկ խօսքը . «կատարեալ եղէք ձեր Երկնաւոր հօրը նման»:

Պահքը ունի երկու տեսակ առաւելութիւններ. մէկը նիւթական, միւսը հոգեկան:

Առաջինը կենդանական կերակուրներէ հրաժարիլն է իսկ երկրորդը մեղքերու քաւումը: Այս երկու տեսակները իրար կը լրացնեն եւ մէկը առանց միւսին անիմաստ է եւ անբաւարար:

Ղեւնդեանք



Յովսէփ կաթողիկոս, Սահակ եւ Թաթիկ եպիսկոպոսներ, Ղեւնդ, Մուշէ, Արշէն, Սամուէլ քահանաներ, Քաջաջ եւ Աբրահամ սարկաւազներ եւ այլ հոգեւորականներ, Ղեւնդեանք անուան տակ կը ճանչցուին:

Ղեւնդեանց քահանայից տօնը կը տօնուի Վարդանանց տօնի նախորդող Երեքշաբթի օրը որ նաեւ տօնն է բոլոր քահանաներուն:

Պարսից Յազկերտ Բ. թագաւորը, Վարդանանց պատերազմէն ետք, Հայաստանի մէջ ապստամբական նոր խլրտումներ կանխարգիլելու համար, կարգ մը կասկածելի նախարարներու հետ հոգեւորականներն ալ արգելափակեց:

454-ի Քուշանաց դէմ պատերազմի պարտութենէն ետք, Յազկերտ թագաւորը արգելափակուածներէն իրաքանջիւրը տարբեր ձեւով սպաննեց:

Ղեւնդեանք հայ եկեղեցականութեան պարծանք ներշնչող սուրբերն են: Հայրենիքի եւ հաւատքի նկատմամբ նուիրումի գաղափարը Ղեւնդեանք տուին իրենց անձնական օրինակով:

Հայ ընտանիքը որպէս եկեղեցի

Հատուած 2004-ը հայ ընտանիքի տարի հռչակման առիթով Արամ Ա. Կաթողիկոսի կողմէ փոխանցուած պատգամէն

Թերեւս առաջին հերթին զարմանալի թուի այս եզակի բնորոշումը: Արդարեւ, աստուածկեդրոն կառույց մըն է ընտանիքը՝ իր ծնունդով, իր բնոյթով ու նպատակով: Աստուած ո՛չ միայն Ադամն ու Եւան ստեղծեց, այլ անոնց թելադրեց միասի՛ն ապրիլ ու բազմանալ, միշտ իրենց Արարիչին հաւատարմութեանը մէջ: Զմոռնանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խօսքը թէ, «ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուած ըլլան իմ անունովս, հո՛ն եմ ես, անոնց մէջ»-Մատթ.18.20: Երբ Քրիստոս ընտանիքի մը կեանքին մէջ ներկայ է, այդ ընտանիքը կը վերածուի կենդանի եկեղեցւոյ: Աստուածաշունչը յատուկ կերպով շեշտած է ընտանիքի կարեւորութիւնը՝ սէրը, միութիւնը, հնազանդութիւնը ու հաւատարմութիւնը, այլ խօսքով՝ ընտանիքը վաւերական ընտանիքի վերածող այս կենսական արժէքները նկատելով ընտանիքին կարեւոր սիւները: Եկեղեցւոյ հայրերը նախանձախնդիր ու խստապահանջ եղած են ընտանիքին նկատմամբ՝ զայն համարելով ամուր հիմքը եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան: Եկեղեցւոյ կանոններուն եւ տիեզերական ժողովներու ուսուցումներուն մէջ յատուկ տեղ է վերապահուած ընտանիքին:

«Արագահաս» Սուրբ Սարգիս զօրավար



ի հետեւանք իրենց յանդուգն կեցուածքին՝ զօրավարն ու իր որդիին մահուան դատապարտուեցան:

Ս ու Ր Բ
Ս ա Ր Գ Ի Ս
Զ օ Ր ա Վ ա Ր
Կ ա պ ա թ ո Վ կ ի ո յ
Գ ա մ ի Ր ք
գ աւ առ է ն էր-
ք ա ջ եւ
ա ո ա ք ի ն ի
զ ի ն ու թ ա կ ա ն
մ ը , ո Ր
զ օ Ր ա պ ե տ ի
ա ս տ ի ճ ա ն ի ն
հ ա ս ա լ :
Հ ա մ ար ձ ա -
կ ու թ ե ա մ ք կ ը
ք ա Ր ո զ է Ր
Ա լ ե տ ար ա ն ը
եւ կ ը
կ ո Ր ծ ա ն է Ր
բ ա գ ի ն ն եր ը :

Իր պարսիկ զինուորներէն տասնըջորս անձեր որոնք մինչեւ վերջ հաւատարիմ մնացեր էին իրեն, առին Սարգիսի մարմինը եւ մաքուր զգեստներով պատեցին: Բայց թագաւորին հրամանով իրենք եւս գլխատուեցան ու իրենց նահատակութիւնը եւս կը յիշատակուի Սուրբ Սարգիսի եւ անոր Մարտիրոս զաւակին յիշատակին հետ, ամէն տարի:

Ե Ր Բ
Յ ու լ ի ա ն ո ս
կ ա յ ս ը ը ո Ր
ք Ր ի ս տ ո ն է ու թ ի ն ը ու Ր ա ց ա ծ է Ր , գ ա հ
բ ար ձ ր ա ց աւ , Ս ար գ ի ս ի Ր Մ ար տ ի Ր ո ս ո Ր դ ի ի ն հ ե տ
Հ ա յ ա ս տ ա ն ա պ ա ս տ ա ն ե տ աւ , Տ ի Ր ա ն թ ա գ աւ ո Ր ի
մ օ տ , եւ ժ ա մ ա ն ա կ մ ը հ ո ն մ ն ա լ է ե տ ք ա ն ց աւ
Պ ար ս կ ա ս տ ա ն , Պ ար ս ի ց Ծ ա պ ու ի թ ա գ աւ ո Ր ի ն
մ օ տ՝ ծ ա ո ա յ է լ ո Վ զ ի ն ու թ ա կ ա ն ա ս պ ար է զ ի ն մ է ջ :

Մեծ եղաւ իր որդիին՝ Մարտիրոսին ազդեցութիւնը իր հսկողութեան ներքեւ գտնուող պարսիկ զօրքին վրայ. անոնց մէջէն քրիստոնէութեան դարձողներ եղան:

Այս պարագան հետզհետէ ուշագրաւ դառնալով, Սարգիս եւ իր զաւակը արքայական հրաւեր ստացան զոհ մատուցանելու արքունի մեհեանին մէջ: Սակայն Սուրբ Սարգիս նոյնիսկ քաջութիւնը ունեցաւ անարգելու կուրքերը: Առ

Աղօթք Սուրբ Սարգիսին

Բարձրեալէն գերագոյն պատիւ ստացար Քրիստոսի քով բարեխօսելու համար եւ դարձար մեր խնդրանքները կատարող, աղօթքները լսող, սատանաները հալածող, ով արագահաս Սուրբդ Սարգիս:

Ցաւերով լեցուն մարդկային կեանքին զօրեղ բժիշկ. արտասուքը սրբող, նեղութեան մէջ ինկածներու վիշտերը դիւրութեամբ մեղմացնող, գերիները ազատող, ով արագահաս Սուրբդ Սարգիս:

Դուրս որ ամէն տեղ կը յիշուիս ու կը փառաբանուիս, որովհետեւ գեղեցիկ եւ բարի անուն ես, հաւատացեալներուն շուրթերուն համար քաղցրահամ պտուղ: Գիշեր ու ցերեկ յոյսով քեզ կը կանչենք, արագահաս Սուրբդ Սարգիս, բարեխօս եղի՛ր Քրիստոսի քով մեր անձերուն համար:

դ	կ	ի	ր	ա	կ	ց	օ	ր	ե	ա	լ	բ	ե	ր	դ
բ	կ	ա	ւ	դ	ա	զ	դ	ե	ճ	ա	պ	ր	ի	լ	ա
ա	ա	ր	ա	բ	տ	ց	ա	ա	ա	ր	ա	ծ	ի	լ	տ
ր	ց	ա	տ	ի	ա	ո	ր	կ	շ	ա	ւ	ե	ր	ա	կ
ի	ա	պ	ո	ւ	ր	ա	ւ	ա	ա	ծ	ր	ա	ր	ե	լ
ց	բ	ձ	ա	ր	կ	ա	ծ	ց	կ	ւ	ե	ե	լ	ա	կ
ա	ո	ր	խ	մ	ո	ր	խ	մ	ե	լ	լ	ծ	ց	ո	բ
ր	ա	փ	ո	ւ	ո	օ	խ	ո	ր	ա	ց	բ	ե	մ	ժ
դ	ո	ւ	ո	ճ	ա	ս	կ	ա	ր	կ	ա	չ	կ	լ	ի
ո	ւ	տ	ե	լ	ո	լ	մ	ա	զ	է	բ	ի	ց	ո	շ
ա	ւ	ե	տ	ա	ր	ա	ց	դ	կ	ա	ց	ո	ւ	խ	կ
լ	ե	ր	օ	ր	օ	բ	ա	ր	ձ	ր	ա	չ	ո	ւ	կ

աղբիւր
արածիլ
ապրիլ
աւերակ
արկած
աւետարան
ական
աշուկ
ապուր
այսօր
անբան
արար
բանակ
բարի
բարձր
բերդ

բեմ
բոց
բժիշկ
Դուռ
Դրացի
Դատ
Դարաւանդ
Ելարան
Ելակ
Խմել
Խմոր
Խորան
Խորէն
Խոլ
ծրարել

ծեծել
կատար
կանուխ
կարկաշ
կաւ
կզակ
կին
կիրակնօրեայ
հասկ
ձոր
ճաշակ
ճարակ
մազ
ուտել

տուն
նատիա
փուռ
օրօրել

**Պահուած բառը
6 գիր:**

**Նախորդ
պահուած բառը՝
Ծնունդ:**

Ը

«Քրիստոնեությունը հոգետիրումն է աշխարհին եւ Գիթեղէնին վրայ»

Կ

Այս խօսքը մեկնակէտ եւ սկզբունք առնելով է որ այս յօդուածներու շարքով կը կեդրոնանանք մեր Եկարագրի բարեպաշտ եւ օրինակելի գծերուն վրայ, այլ խօսքով՝ մեր առաքինութիւններուն վրայ, որոնց միջոցաւ միայն կրնանք Գիթական աշխարհէն բարձրանալով հասնիլ հոգետիրին:

«Քրիստոնեությունը հոգետիրումն է աշխարհին եւ Գիթեղէնին վրայ», եւ քրիստոնեայից առաքինութիւններէն մէկն է ...

ա

Ժուժկալութիւնը

ր

Ժուժկալութիւնը անձի մը Գիթական վիճակէն կախեալ չէ, հարուստ անձն ալ կրնայ ժուժկալ ըլլալ, ճիշդ ինչպէս Գուազ բարեկեցիկ կեանք ունեցողը մսխող կրնայ ըլլալ:

Ապահով է ըսել թէ ժուժկալ մարդը երջանիկ է որովհետեւ իր պէտքերը դիւրութեամբ կը գոհացնէ ու իր միտքն ու հոգին այնուհետեւ կը տրամադրէ ուրիշ երջանկութիւն ապահովելու միջոցներու փոխանակ անդադար դրամ ու Գիթ դիզելու հեւքին մէջ ըլլալու:

ա

Ժուժկալութիւնը պէտք է զանազանել ազահութենէ եւ կծծիութենէ, որովհետեւ ան բաւարարուածութեան զգացում մըն է եւ ոչ թէ ծախսել չուզելու:

Ժուժկալութեան օրինակ է Գաեւ պահք բռնելը որուն ընթացքին անձը կամաւոր ձեռով ինքզինք կը զրկէ ճոխութենէ տեղ տալու համար հոգեկան արժէքներու զարգացման:

գ

հ

Ժուժկալ մարդը հաւասարակշիռ մարդ է որովհետեւ գիտէ իրեն ճիշդ պէտք եղածովը բաւարարուիլ ու ինքն իրեն աւելորդ Գիթական պէտքեր չստեղծել: Ժուժկալ անձը մսխող անձէն կը տարբերի որովհետեւ կեանքի արժէքը ուրիշ բանի մէջ կը գտնէ քան Գորածեութեան, հարստութեան եւ ինչքերու մէջ:

ր

ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ

Ժուժկալ ըլլալ կը նշանակէ...

Հաւասարակշռուած ցանկութիւններ ունենալ...

Անձ մը որ ...ժուժկալ է.- >

Հաւասարակշիռ է
Չափաւոր է
Պարկեշտ է
Ինքնագուսպ է
Սակաւապէտ է

Անձ մը որ ժուժկալ չէ.- >

Աւելորդ կը ծախսէ
Նիւթականը բարոյականէն չի
զանազաներ
Դիւրութեամբ չի բաւարարուիր
ինքն իր վրայ չ'իշխեր

Ծունը եւ Ծութը

Օր մը շուն մը մսագործին քովէն խոշոր կտոր մը միս կը գողնայ ու կը փախչի:
Տան ճամբուն վրայ կ'անցնի գետի մը եզերքէն, եւ յանկարծ իր Ծութը կը նշմարէ հոսող գետի ջուրերուն մէջ: Մտածելով որ այ՛դ ուրիշ շուն մըն էր որ բերնին մէջ խոշոր կտոր մը միս ունէր, կը որոշէ այդ միսը եւս գողնալ: Սակայն երբ կը փորձէ այդ կտոր մը միսը բռնել, բերնին կտորը կ'իյնայ ջուր ու ինք կը կորսնցնէ բոլոր ունեցածը:

- Ի՞նչ օրինակ կարելի է առնել այս պատմութենէն
- Ինչ է ձեր կարծիքը շունին մտածած ձեւին մասին
- Նման կացութեան մէջ գտնու՞ած ես բնաւ

Այս աշխարհի հարուստներուն պատուիրէ որ շատ չհարստանան եւ անկայուն հարստութեան չվստահին, այլ՝ վստահին Աստուծոյ, որ ամէն ինչ առատօրէն կու տայ մեզի որպէսզի վայելենք: Պատուիրէ որ բարիք գործեն, լաւ գործերով հարստանան եւ ըլլան առատածէն, սիրալիր եւ իրենց ունեցածով ուրիշներուն օգնելու պատրաստ:

Ա. Տիմոթէոսին 6.17-18

Յուճուար ամսուան պատասխանողներ եւ մասնակցողներ

Մանկապարտէզի անկիւն

1929, 75, հովիւներ, հրեշտակը, աւետիս, փրկիչը, Օծեալ, խանձարուրով, խաղաղութիւն, հաճութիւն

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. փառք, տանք, դաշտի, թռչունին, ատենին
2. բ. Յիսուսի ծնունդը
3. բ. Ղուկասի
4. գ. Եգիպտոս
5. դ. Յովհաննէս
6. բ. ոսկի, կնդրուկ, զմուռ
7. գ. Արեւելքի աստղին հետեւելով
8. գ. Ս. Յակոբ Մծբնացիի տօնը
9. 1929
10. 75

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. բ. եւ գ. Ս. Պետրոս, Ս. Պօղոս, Ս. Յակոբ Մծբնաց հայրապետ
2. բ. Ս. Յակոբ կ'ուզէր Արարատ լեռը բարձրանալ եւ Նոյի Տապանը գտնել:
3. դ. Պետրոս Առաքելին
4. բ. Անանիա
5. ա. հնազանդելու համամը Աստուծոյ հրեշտակին
6. դ. Եփեսացիներուն
7. ա. Յիսուսի ծննդեան գիշերը
8. բ. Սաղմոսացը
9. գ. 110
10. 1929, 75

Երկրորդականի անկիւն

1. 1929, 75
2. 13
3. Յուճուար 15
4. Եսայի
5. Միքիա
6. Եսայի
7. Դանիէլ
8. Ղուկասի Աւետարան
9. Մարկոս 10.14
10. Մեծի Տանն Կիլիկիոյ երջանկայիշատակ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսին

Ընդհանուրին անկիւն.-

- 1- 1929,75-ամեակ
- 2- Բարդ բառ
- 3- խառնակութեան
- 4- խելք կու տայ
- 5- Ինչ որ տուի ուրիշին, տարօրինակ այն միայն
- 6- Պատուէ զայն
- 7- հաճութիւն
- 8- Յիսուս մանուկը փաթթելու ծառայեց
- 9- տեղատարափ անձրեւ է
- 10- ստախօսութիւնը

Յուճուար ամսուան մասնակցողներ

Մանկապարտէզ

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Արին Անթեպեան, Ռիթա Խշիշեան, Յուլեր Անթեպեան, Թաթիանա Քէհէեան, Կրէյս Նարեկեան, Ճեսիքա Մատթէոսեան:

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Գէորգ Պուիքեան, Ալէք Կարապետեան
Անսխալ պատասխանող
Առէն Պապիկեան, Յարութ Քուլլուքեան, Սերենա Քուլլուքեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Թամար Պուիքեան, Անի Մելքեան, Հրակ Նարեկեան, Ժան-Յակոբ Չուխանեան


Անսխալ պատասխանողներ

Սեւակ Ալմանեան, Գօգօ Մատթէոսեան

Երկրորդականի անկիւն

Լոռի Քէօսէյեան, Կարօ Կարապետեան, Թամար Գիզիրեան, Փօլ Գիզիրեան:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն**



Յիսուսի տաճար ընծայումը «Տեառնընդառաջ, Փետրուար 14»

Ամբողջացո՛ւր ըստ Ղուկաս 2.22- 32

Տիրոջ, նուիրուի, տատրակ, աղաւնիի, Սիմոն, Սուրբ Հոգիին, Օծեալը, Յիսուսը, գոհաբանեց

Յովսէփին ու Մարիամը մանուկը Երուսաղէմ տարին ----- ընծայելու համար որովհետեւ Տիրոջ Օրէնքին մէջ գրուած է. «Տիրոջ պետք է ----- ամէն արու զաւակ, որ մօր առաջին զաւակն է». ինչպէս նաեւ Տիրոջ Օրէնքին համաձայն զոհ մատուցանելու զոյգ մը ----- կամ ----- երկու ձագ:

Այդ ժամանակ Երուսաղէմի մէջ ----- անունով մարդ մը կ'ապրէր: Սիմոն արդար եւ աստուածավախ մարդ մըն էր, ----- իրեն հետ էր եւ վստահեցուցած էր զինք՝ թէ Տիրոջ ----- չտեսած պիտի չմեռներ: Արդ, Սուրբ Հոգիէն առաջնորդուած՝ անկա տաճար գնաց: Երբ ծնողքը մանուկ ----- տաճար բերին, որպէսզի կատարեն այն ինչ որ Օրէնքը կը պահանջէր մանուկին համար, Սիմոն իր գիրկը առաւ փոքրիկը եւ ----- զԱստուած:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Աստուած ո՞ր լերան վրայ Տասը Պատուիրանները տուաւ Մովսէսի:

- ա.- Մասիս
- բ.- Ջիթենեաց
- գ.- Սինա
- դ.- Սիփան

6.Ի՞նչ կը նշանակէ բարեկենդան:

- Ա. Հալուվին
- Բ. Բարի կեանք
- Գ. Վարդանանք
- Դ. Բարի լուր

2.- Ի՞նչ էր Մարիամ Աստուածածնի մօրը անունը:

- ա.- Ս. Աննա
- բ.- Եղիսաբէթ
- գ.- Սարա
- դ.- Ռիթա

7.Գտիր տապանակ բառին ճիշդ իմաստը

- Ա. Նաւակ
- Բ. Կուռքերու տուն
- Գ. Սնունկ
- Դ. Տախտակ

3.- Ի՞նչ էր հայր Յովսէփի գործը:

- ա.- ոսկերիչ
- բ.- ատաղձագործ
- գ.- բժիշկ
- դ.- քահանայ

8.Ամբողջացուր պակաս բառերը

Սիրէ քու տէր ամբողջ
..... եւ ամբողջ

4.- Յովհաննէս Մկրտիչ ո՞ր անապատի մէջ կը քարոզէր:

- ա.- Հրէաստանի
- բ.- Տէր Զօր
- գ.- Արաբիոյ
- դ.- Լիբանանի

9. Ե՞րբ Հայաստան պետական ձեւով քրիստոնեայ դարձաւ:

- Ա. 406
- Բ. 306
- Գ. 301
- Դ. 506

5.- Երբ Պետրոս Յիսուսի հարցուց թէ քանի անգամ պէտք է ներէ իր եղբօրը, Յիսուս պատասխանեց:

- ա.- եօթը
- բ.- եօթանասուն անգամ եօթը
- գ.- հարիւր
- դ.- տասը

10. Հետեւեալներէն ո՞ր տօնը կը տօնենք Փետրուարին:

- Ա.Ս. Գրիգոր Լուսաւորիչ
- Բ.Ս. Գէորգ
- Գ. Վարդանանք
- Դ.Ս. Յակոբ

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ե՞րբ կը տօնեցինք Սուրբ Սահակ

Պարթեւի յիշատակը:

- ա.- Հոկտեմբեր 15
- բ.- Նոյեմբեր 21
- գ.- Յունուար 31
- դ.- Մարտ 26

2.- Սուրբ Ծնունդին զիրար կ'ողջունենք ըսելով « Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ... »

- ա.- Օհնեալ է յայտնութիւն Քրիստոսի
- բ.- Զեզի մեզի մեծ աւետիս
- գ.- Օհնեալ է յարութիւն Քրիստոսի
- դ.- Աստուած Օրհէ

3.- Ո՞ր Մարգարէն կը գուշակէ Երուսաղէմի կործանումը, Յիսուսի գալուստը եւ անոր ծննդավայրը:

- ա.- Ամոս
- բ.- Միքա
- գ.- Աբդիա
- դ.- Եզեկիէլ

4.- Հին Կտակարանի մէջ Մարգարէներու քանի՞ գիրքեր կան:

- ա.- 5 հատ
- բ.- 10 հատ
- գ.- 21 հատ
- դ.- 17 հատ

5.- Ամբողջացու՛ր:

Ո՞վ ձեզի - - - - - կը հասցնէ եթէ դուք
- - - - - գործելու նախանձախնդիր
ըլլաք: Բայց նոյնիսկ եթէ - - - - -
- - - - - համար - - - - - ,
երանելի էք:

Ա. Պետրոսի 3.13-14

6.- Աստուած Աբրահամի հնազանդութիւնը փորձելու համար ի՞նչ խնդրեց իրմէ:

- ա.- Ոչխար մը զոհելը:
- բ.- Եզ մը զոհելը:
- գ.- Իր որդին Իսահակը զոհել:
- դ.- Եղնիկ մը զոհել:

7.- Ո՞ր թուականին նահատակուեցաւ Ս. Ղեւոնդ Երէջը:

- ա.- 451
- բ.- 454
- գ.- 484
- դ.- 301

8.- Այս տարի ե՞րբ է Մեծ Պահքի առաջին օրը:

- ա.- 22 Փետրուար
- բ.- 23 Փետրուար
- գ.- 24 Փետրուար
- դ.- 25 Փետրուար

9.- Ի՞նչ կը կոչուի Մեծ Պահքի առաջին Կիրակին որ այս տարի կը զուգադիպի Փետրուար ---- ին: :

10.- Ի՞նչ կը կոչուի Մեծ Պահքի երկրորդ Կիրակին:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն**

1- Վարդանանց ճակատամարտի տարին տեղի ունեցաւ 4րդ տիեզերական ժողովը որ հետագային մերժուեցաւ Հայերուն կողմէ: Ո՞ր տեղի ունեցաւ այդ ժողովը:

2- Վարդանանց ճակատամարտէն 33 տարիներ ետք Վահան Մամիկոնեան Պարսիկներուն հետ ստորագրեց դաշնագիր մը որ Հայ ժողովուրդին տուաւ ինքնավարութիւն, Հայ Եկեղեցիին տուաւ ազատ գործելու իրաւունք եւ քանդելու կարուցուած ատրուշանները: Ո՞ր ստորագրուեցաւ այդ դաշնագիրը

3-Հայ Եկեղեցին Փետրուարի ո՞ր օրը կը տօնէ Յիսուսի Տաճար ընծայումը:

4-Սուրբ Սարգիսի նախորդող Երկուշաբթիէն Ուրբաթ օրերը պահք են: Ի՞նչ կը կոչուի այս 5 օրեայ Պահքը:

5-Տարուան ո՞ր 4 օրերը Ճաշու գիրք չի կարդացուիր:

6- Թիւ 5 հարցումին մէջ նշուած 4 օրերուն յաջորդող օրը Հին Կտակարանի ո՞ր մարգարէին գիրքն է Ճաշու ընթերցումը:

7- Ե՞րբ տեղի ունեցաւ Տիեզերական այն ժողովը որուն մասնակից 150 հայրապետներուն տօնը որ այս տարի կը տօնենք Փետրուար 21 ին:

8- Յիսուս քանի՞ օրուայ էր երբ Տաճար ընծայուեցաւ:

9.- Ե՞րբ հիմնուեցան Կիրակնօրեայ Դպրոցները Անգլիոյ Gloucester քաղաքին մէջ:

10- Ամբողջացուր
ՔԱՆԶԻ ՀԱՅՐ ՄԵՐ
ԶՍՈՒՐԲ -----


ԳԻՏԵՄՔ ԵՒ ՄԱՅՐ
ԶԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿԷ

Ո՞րն է ճիշդ պատասխանը Ընդհանուրի անկիւն

- 1- Վարդան Մամիկոնեանի հօր անունն էր.-
 - ա- Վաչէ
 - բ- Վասակ
 - գ- Համազասպ
 - դ- Համաստեղ
- 2- խրատը սիրողը՝
 - ա- իմաստութիւնն ալ կը սիրէ
 - բ- խօսք մտիկ կ'ընէ
 - գ- որոշում առնել չի գիտեր
 - դ- հնազանդութիւնն ալ կը սիրէ
- 3- Պահքի նպատակն է.-
 - ա- Հոգիի մաքրագործումը
 - բ- ճոխութենէ գիտակցաբար զրկուիլը
 - գ- Ինքնաքննութիւնը
 - դ- վերոյիշեալ բոլորը
- 4- Նորահրաշ շարականը կ'երգուի.-
 - ա- Բարեկենդանի առթիւ
 - բ- Վարդանանցի առթիւ
 - գ- Սուրբ Սարգիսի առթիւ
 - դ- Նորահրաշը շարական չէ
- 5- Ըստ Սաղմոս 118(119)-ին, Տիրոջ ճշմարտութիւնը նոյնն է.-
 - ա- բոլոր սերունդներուն համար
 - բ- բոլոր հաւատացեալներուն համար
 - գ- բոլոր ազգերուն համար
 - դ- երկրի եւ երկնքի մէջ
- 6- Փերեզակը.-
 - ա- շրջուն վաճառական մըն է
 - բ- ողորմութիւն խնդրող մըն է
 - գ- երազկոտ մըն է
 - դ- փերեզակը հաչերէն բառ մը չէ
- 7- Յիսուսի ո՞ր առակին մէջ կը պարզուի թէ հրեշտակները պիտի ուրախանան մեղաւորի մը համար.-
 - ա- Կորսուած ոչխարը
 - բ- կորսուած դրամը
 - գ- անառակ որդին
 - դ- բարի սամարացին
- 8- Դաստառակը եկեղեցիէն ներս գործածուող.-
 - ա- փոքր գորգ է
 - բ- անուշահոտ խունկ է
 - գ- առաջին կարգի շարուած աթոռ է
 - դ- ձեռք սրբելու փոքր անձեռոց է
- 9- Մեսրոպ մաշտոցի շարականին համեմատ.- «Անկանիմ առաջի քո եւ խնդրեմ զթողութիւն յանցանաց իմոց, մի՛ անտես առնէր հայր...»
 - ա- զխնդրանքս իմ
 - բ- զաղօթքս իմ
 - գ- զաղաչանս իմ
 - դ- զթողութիւնն իմ
- 10- Ո՞րն է անկապ բառը.-
 - ա- նզովք
 - բ- անէծք
 - գ- բանափիսութիւն
 - դ- բանադրանք

Աղթամարի Ս. Խաչ Եկեղեցու Կիրակնօրեայ Դպրոցը




Հինգշաբթի 15 Յունուար 2004ին ներկայ գտնուեցայ դասախօսութեան մը՝ «Աղթամարի Ս. Խաչ Եկեղեցին Հայ Ճարտարապետութեան Մէջ» ներկայացուած Պրն. Հրաչ Ա. Թոքաթեանի կողմէ, Մոնթրէալի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցու մէջ:

Բժախնդրօրէն պատրաստուած այս դասախօսութեան ընթացքին ցուցադրուած 50 սահիկները դիտելով, կրցայ մօտէն տեսնել Ս. Խաչ Եկեղեցու պատերուն վրայ դուրսի կողմի որմնաքանդակները որոնք կը ներկայացնեն Հին կտակարանի տարբեր պատմութիւնները «Ադամ եւ Եւա, Նոյան Տապան, Դաւիթ եւ Գողիաթ, Յովնան Մարգարէն, Դանիէլ Մարգարէն . . .» ինչպէս նաեւ Եկեղեցու

ներսի պատերուն վրայ գծուած որմնանկարները որոնք կը ներկայացնեն Աւետարաններէն ներշնչուած Յիսուսի կեանքը, հրաշքներն ու առակները:

Այս 50 սահիկներուն մէջէն ես տեսայ մեր Հայրերուն ու այդ օրերու քաղաքական իմաստուն ղեկավարներուն հաւատքն ու տենչը Քրիստոնէական Դաստիարակութիւն ջամբելու իրենց չափահաս ժողովուրդին եւ ապագայ սերունդներուն, եւ երեւակայեցի . . . թէ հաւանաբար այդ օրերուն Ս. Պատարագին ընթացքին հետաքրքիր մանուկներ եւ պատանհիներ կը դիտէին որմնանկարները եւ հարցումներ հարցնելով իրենց ծնողքին կը սորվէին Յիսուսի կեանքին,



հրաշքներուն եւ
առակներուն մասին: Ս.
պատարագի աւարտին,
դուրս ելլելով Եկեղեցոյ
շէնքէն, ծնողներ իրենց
զաւակներուն ձեռքէն
բռնած կը դառնային Ս.
Խաչ եկեղեցոյ շուրջ ու
անոնց կը պատմէին Հին
կտակարանի
պատմութիւնները:
Որմնանկարներու եւ
որմնաքանդակներու
միջոցաւ, ծնողներ կը
յուսային
Աստուածաշունչի
ոգիով,
գաղափարներով,
բարոյական
սկզբունքներով եւ
ճշմարտութիւններով
սնուցանել իրենց
զաւակները: Այսպիսով
Աղթամարի Ս. Խաչ
եկեղեցին կը դառնար...
Կիրակնօրեայ Դպրոց:

Հաւանաբար


Երջանկայիշատակ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսը քաջ գիտէր թէ իր տարագրուած ժողովուրդին շինելիք եկեղեցիները պիտի չունենային ոչ որմնանկար եւ ոչ որմնաքանդակ եւ այդ իսկ պատճառով նախաձեռնեց Հայաստանեայց Եկեղեցոյ Կիրակնօրեայ Դպրոցներու հիմնադրութիւնը 1929-ին որպէսզի հայ մանուկն ու պատանին կարենան ստանալ Քրիստոնէական Դաստիարակութիւն՝ Աստուածաշունչի ոգիով, գաղափարներով, բարոյական սկզբունքներով եւ ճշմարտութիւններով. Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ հարազատ շունչով, աղօթքներով եւ շարականներով:

Այսօր մենք դժուարութիւն ունինք պաշտպանելու ու պահպանելու Աղթամարի Ս. Խաչ Եկեղեցին, անոր որմնանկարներն ու որմնաքանդակները: Սակայն մենք առիթը եւ պարտականութիւնը ունինք պաշտպանելու, պահպանելու եւ նոր իրագործումներով դէպի նոր հորիզոններ ու նոր բարձունքներ առաջնորդելու Հայաստանեայց Եկեղեցոյ Կիրակնօրեայ Դպրոցները:

Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին եղաւ Կիրակնօրեայ Դպրոց: Այսօր մենք՝ բոլորս, անսակարկ գործակցութեամբ դառնանք Կիրակնօրեայ Դպրոցներ:

Թորոս Պապիկեան

Սուրբ Ծնունդը Կիրակնօրեայ Դպրոցէն ճերս



Յունուար 4, 2004 ին
 Կիրակնօրեայ Դպրոցը
 Տօնեց Սուրբ Ծնունդը,
 ծնողներու ներկայութեան:
 Աշակերտութիւնը
 մասնակցեցաւ
 երգեցողութեամբ,
 սաղմոսացութեամբ եւ
 կենդանի պատկերով:
 Հանդէսի աւարտին
 Կաղանդ Պապան ալ եկաւ
 եւ նուէրներ բերաւ բոլոր
 աշակերտներուն:
 Այս բոլորին յաջորդեց
 հիւրասիրութիւն
 պատրաստուած ծնողներուն
 կողմէ:

Գործունեություններ

Դասախօսություն
«Գարեգին Ա. Անենայն Հայոց Կաթողիկոսի
Գրական Վաստակը»
կը ներկայացնէ Պրն. Վազգէն Ղուկասեան
 Հինգշաբթի, 12 Փետրուար 2004 ի երեկոյեան ժամը 8:00 ին
 Ա. Ահարոնեան Սրահ

Երիտասարդներուն համար
Աստուածաշունչի Սերտողութիւն
Յիսուսի Առակները
Ս. Յակոբ Մայր Եկեղեցի

Շաբաթ 7 Փետրուար, 2004 «Պարտատէրն ու երկու պարտապանները»
 Շաբաթ 21 Փետրուար, 2004 «Ճրագը գրուանի տակ», «Աճող Սերմը»
 Շաբաթ 28 Փետրուար, 2004 «Մանանեխի հատիկը», «Խմորը»
 Շաբաթ 6 Մարտ, 2004 «Պահուած Գանձը», «Անգին մարգարիտը»

Գիտէի՞ր թէ...

- Առաջին Կիրակնօրեայ Դպրոցը Sunday School հիմնուած է 1780 ին
- Անգլիոյ Gloucester քաղաքին մէջ Robert Raikes ի կողմէ:
- Robert Raikes ունէր շաբաթաթերթ մը որ օգնեց Կիրակնօրեայ
- Դպրոցներուն տարածուելուն Անգլիոյ բոլոր քաղաքներուն մէջ...
- Առաջին աշակերտները 4-14 տարեկան մանուկներ եւ պատանիներ էին
- որոնք կ'աշխատէին շաբաթը 6 օր օրական 10 ժամ հանքերու եւ
- գործարաններու մէջ ինչպէս նաեւ որպէս ծխնելոյզ մաքրողներ...
- Կիրակնօրեայ Դպրոցներուն մէջ, Աստուածաշունչի կողքին կը սորվէին նաեւ
- գրել, կարդալ եւ թուաբանութիւն. մաքրասիրութիւն եւ վարուելակերպ
- լաւապէս պատրաստուելու համար իրենց կեանքին...

Կարճ Լուրեր

- Նուիրատուիւն
Շնորհակալութեամբ ստացանք C\$20 Տիկ. Ովսաննա Մանուկեանէն առ ի գնահատանք «Մաշտոցի Արձագանգ»ի աշխատանքներուն:
- Կիրակի Փետրուար 15 ին Կիրակնօրեան պիտի յիշատակէ Վարդանանքը
- Կիրակի Փետրուար 22 ին Կիրակնօրեան պիտի տօնէ Բարեկենդանը
- Չորեքշաբթի Փետրուար 25 Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտներէն խումբ մը պիտի մասնակցի հսկումին եւ արտասանէ «Հաւատով Խոստովանիմ» էն համարներ

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ

Խմբագիր՝ Ծաղիկ Պոյանեան

Աշխատակիցներ՝ Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխանեան, Գարուիկ Գէպթանճեան, Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս Պապիկեան:

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցոյ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը.- Ուսուցիչներ՝ Իզապել Քուլլոքեան, Սալբի Բակլանեան, Վերժին Գէպթանճեան, Վերա Կարապետեան, Երան Լոշխանեան, Գարուիկ Գէպթանճեան, Յասմիկ Նաճարեան, Ծողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանանեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Կալքէջ՝ Բաֆֆի Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Ծաղիկ Պոյանեան:



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ
Կիրակնօրեայ դպրոցի Ամսաթերթ



ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 7

Մարտ 2004

Կիր.	Բ2.	Գ2.	Դ2.	Ե2.	Ուր.	Շաբ.
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30	31			

7	Մեծ պահքի երրորդ Կիրակի, Անառակին
13	Յիշատակ սուրբ Յովհաննու Երուսաղէմի հայրապետին, Յովհաննու Օձնեցիի, Յովհաննու Որոտնեցիի եւ Գրիգոր Տաթեւացիի
14	Տնտեսին
17	Միջինք
20	Քառասուն մանկանց տօն
21	Դատարին
27	Գրիգոր Լուսաւորչի Մուտն ի Վիրապ
28	Գալստեան

Մի՛ ընէք ռելէ բան որ հակառակասիրութենէ կամ փառասիրութենէ մղուած ըլլայ. այլ՝ խոնարհ ոգիով՝ ձեր ընկերները աւելի լաւ համարեցէք քան դուք ձեզ: Միայն դուք ձեզ մի՛ մտածէք, այլ նաեւ՝ ձեր ընկերոջ մասին:

Փիլիպպեցիներուն 2

Հաւատով Խոստովանիմ

Մարտ ամսուան ընթացքին կը շարունակուի անցեալ ամսուան 23րդ օրը սկիզբ առած Մեծ Պահքը: Համեստութեամբ եւ հիացումով կ'արդարադառնանք բոլոր Պահք բռնող հաւատացեալներուն մասին եւ կը մաղթենք որ Աստուած անոնց կամքին համեմատ ոյժ եւ տոկունութիւն ընծայէ բոլորելու համար այս կամաւոր զրկանքի շրջանը եւ մանաւանդ շնորհիւ մարմնական զրկանքներու ընդմէջէն փնտռուած հոգեւոր նորոգութիւնն ու զօրացումը:

Կիրակնօրեայ դպրոցէն ներս, հաւատարիմ մեր սովորութեան, այս տարի եւս մեր աշակերտներուն կ'առաջարկենք «մանկապատանեկան» պահք բռնել: Ինչպէս անցեալ տարիներուն, այս տարի եւս հերթաբար ամէն շաբաթ կը խուսափինք ժամանակաւոր ձեռով որոշ հանդիսներէ, ինչպէս տուրմ ուտելէ, կազային խմիչքներ խմելէ կամ համակարգիչ գործածելէ:

Այս կամաւոր փոքրիկ զրկանքներուն կ'աւելցնենք Մեծ Պահքի ընթացքին հոգեւոր նորոգութիւն ապահովելու հրամայականը: Այս տարի մեր աշակերտներէն տարբեր խումբեր իւրաքանչիւր Չորեքշաբթի հսկումի արարողութեան ընթացքին գոց կ'արտասանեն կամ կը կարդան «Հաւատով Խոստովանիմ»-էն համարներ: Տարիքով փոքրերը՝ որոնք տակաւին կարդալ չեն գիտեր, ստիպուած, գոց կը սորվին իրենց արտասանելիք հատուածները ու այդպէս կը գրեն «Հաւատով Խոստովանիմ»ը իրենց մտքերուն եւ սրտերուն մէջ: Իբր Կիրակնօրեայ դպրոց կը հաւատանք որ մեր աշակերտներուն սրտերուն մէջ քանդակուած «Հաւատով Խոստովանիմ»ը եւ Պահք բռնելու սովորութիւնը պիտի օգնէ իրենց ըլլալու հաւատարիմ Աստուծոյ եւ Հայաստանեայց Եկեղեցույ իրենց կեանքին ընթացքին:

Քրիստոսի խոնարհութիւնը մեզի օրինակ

Փիլիպպեցիներուն 2.1-5

Արդ, եթէ երբեք Քրիստոսի միացած ըլլալը միտարարութիւն է, եթէ իր սէրը կը սփռուի, եթէ Սուրբ Հոգին մարդիկը իրարու հաղորդակից կ'ընէ՝ զանոնք իրարու հանդէպ գթած ու ողորմած դարձնելով, ուրախութիւնս կատարեալ ըրէք՝ միաբանելով, նոյն սէրը ունենալով իրարու հանդէպ, եւ համերաշխ ու համախորհուրդ ըլլալով: Մի՛ ընէք ոեւէ բան որ հակառակասիրութենէ կամ փառասիրութենէ մղուած ըլլայ. այլ՝ խոնարհ ոգիով՝ ձեր ընկերները աւելի լաւ համարեցէք քան դուք ձեզ: Միայն դուք ձեզ մի՛ մտածէք, այլ նաեւ՝ ձեր ընկերոջ մասին:

Ուսուցում ծոմապահութեան մասին

Մատթէոս 6.16-18

- Երբ ծոմ կը պահէք, տրտումերես մի՛ ըլլաք կեղծաւորներուն նման, որոնք իրենց երեսը կը կախեն, որպէսզի մարդոց ցոյց տան թէ ծոմ կը պահեն: Վստահ եղէք, միայն ատիկա է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, երբ դուն ծոմ կը պահես, օձէ՛ գլուխդ եւ լուս՝ երեսդ, որպէսզի մարդիկ չտեսնեն թէ ծոմ կը պահես, այլ՝ միայն Հայրը, որ անտեսանելի է. եւ Հայրդ, որ կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

Բովանդակութիւն

- խմբագրական գալիք
- Քրիստոսի խոնարհութիւնը մեզի օրինակ
- Ուսուցում ծոմապահութեան մասին
- Մեծ պահքի կիրակիներ
- Սուրբ Գրիգոր Լուսաւորչի մուտքը խոր վիրապ
- Նահատակութիւն քառասուն մանուկներու
- Մեծ պահքը երբեակ իմաստով Պարզ խօսքեր՝ պարզ հոգիներու համար Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս
- Խաչբառ
- Նկարագիր- Արիութիւն
- Ընտանիքի մը համերաշխութեան եւ միաբանութեան ոյժը
- Չարչարանքներու մէջ հաւատքի զօրութիւն եւ համբերութիւն խնդրելու աղօթք
- Փետրուար ամսուան պատասխաններ եւ մասնակցողներ
- Ո՞րն է ճիշդ պատասխանը
- Կարճ լուրեր կիրակնօրեայէն

Մեծ Պահքի Կիրակիները

Մեծ Պահքը ունի 7 կիրակիներ, «Առաջին Կիրակին Բուն Բարեկենդ հաշուելով որուն յաջորդ օրը Մեծ Պահքը կը սկսի» որոնք յատուկ եւ իմաստալից անուններ ունին. ահա անոնցմէ երրորդը որ կը զուգադիպի 7 Մարտին.-

Անառակ կիրակի

Մեծ Պահքի երրորդ կիրակին այս անունը կը կրէ, որովհետեւ նոյն օրուան Աւետարանին կը կարդացուի Ղուկասի 15-րդ գլուխը, ուր կը գտնուին հարիւր ոչխարներուն եւ տասը դրամին եւ անառակ որդիին առակները:

Անառակ որդիին առակը

Մարդ մը երկու զաւակ ունէր: Կրտսերը հօրը ըսաւ.

- «Հայր, քու ստացուածքէդ ինծի ինկած բաժինը հիմա՛ տուր ինծի»: Եւ հայրը իր զաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետք, կրտսեր զաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով՝ մսխեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

Պատահեցաւ որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ եւ անիկա իր ագարակը դրկեց զինք՝ խոզ արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիրներէն իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: «Հօրս տան մէջ քանի՛ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրենք.- Հայր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու. զիս քու գործաւորներէդ մէկը նկատէ»: Ապա ելաւ եւ հօրը քով գնաց:

Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գթաց. վազելով դիմաւորեց զայն, վիզին փաթօնեցաւ եւ համբուրեց: Որդին

հօրը ըսաւ. «Հայր մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու:» Հայրը իր ծառաներուն հրամայեց. «Անմիջապէս բերէք լաւագոյն պատմունճանը եւ հագցուցէք իրեն. մատանի անցուցէք իր մատին եւ կօշիկ տուէք իրեն: Բերէ՛ք պարարտ հորթը, մորթեցէք, ուտենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս զաւակս մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»: Եւ սկսան խրախճանքի:

Մինչ այդ երէց զաւակը ագարակ կը գտնուէր: Վերադարձին, երբ տան մօտեցաւ, երգի ու պարի ձայներ լսեց: Կանչեց ծառաներէն մէկը եւ հարցուց թէ ի՞նչ կայ: Ծառան ըսաւ իրեն. «Եղբայրդ եկաւ, եւ որովհետեւ ողջ առողջ վերադարձաւ, հայրդ պարարտ հորթը մորթեց:» Երէց եղբայրը զայրացաւ եւ չուզեց ներս մտնել: Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց որ ներս մտնէ: Իսկ անիկա պատասխանեց. «Տարիներէ ի վեր քեզի կը ծառայեմ. ոեւէ մէկ հրահանգդ չանտեսեցի, եւ սակայն նոյնիսկ ուլ մը չտուիր ինծի, որ ուրախանայի բարեկամներուս հետ: Մինչդեռ, երբ եկաւ այդ որդիդ, որ քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսխեց, պարարտ հորթը մորթեցիր անոր համար»: Հայրը ըսաւ. «Տղա՛ս, դուն միշտ ինծի հետ ես եւ ամբողջ ունեցածս քուդ է: Սակայն հիմա պէտք է ուրախանանք եւ ցնծանք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ:»


Սուրբ Գրիգոր Լուսավորիչի մուտքը Խոր Վիրապ

Սուրբ Գրիգոր հայաստանեաց եկեղեցույ առաջին պաշտօնական հայրեպետը կը նկատուի որ Ոսկեդարու գրողներէն Ագաթանգեղոսի կողմէ նկարագրուած է իբր Քրիստոնէութիւնը հայ ժողովուրդին մօտ հաստատող եւ տարածող հիմնական դէմք: Անոր կրօնական աշխատանքը այնքան ազդեցիկ եւ որոշիչ եղած է որ ան նկատուած է իբր հայ ժողովուրդի «Հայր եւ Լուսավորիչ»:

Հայաստանեաց եկեղեցին տարին մի քանի անգամ կը յիշատակէ Սուրբ Գրիգորի անունը, հիմնուելով անոր կեանքի յատկանշական հանգրուաններուն վրայ: Այսպէս՝ Խոր Վիրապ մտնելը, Խոր Վիրապէն ելլելը եւ «Գիւտ նշխարաց»-ը:



Խոր Վիրապի վանք



Սուրբ Գրիգոր Լուսավորիչի Աջը

Ծարական նուիրուած Սուրբ Գրիգոր Լուսավորիչի

Քրիստոսը դաւանող վկայ ճշմարիտ,
Բազմաշարշար նահատակ Գրիգոր Հայրապետ:
Տիրոջ շարշարանաց պակասը քու մարմնոյդ վրայ լրացուցիր
Որով կը ցնծայ Եկեղեցին Սիոնի որդւոց փառքով:

Աստուածային սիրով մեզի հոգեւոր ծնունդ տուիր,
Գորովագութ Հայր պանծալի, Գրիգոր Հայրապետ,
Մարմնիդ շարշարանքով մեզ մեղքի աղտէն մաքրեցիր,
Լուսաւոր քարոզութեամբդ որդիներ ծնար:

Նահատակութիւն Սուրբ քառասուն Մանկանց

313 թուին Հռոմէական աշխարհին Արեւելեան եւ Արեւմտեան թեւերուն վրայ իշխող երկու կայսրերու՝ Կոստանդիանոսի եւ Լիկիանոսի հռչակած Միլանի հրովարտակով քրիստոնէութեան շնորհուած էր ամբողջական ազատութիւն եւ վերջ գտած էին հալածանքները. իսկ 323-ին Կոստանդիանոսը դարձած էր միակ իշխող կայսրը ամբողջ հռոմէական աշխարհին եւ քրիստոնէութիւնը հռչակած պետական կրօնք:

Կոստանդիանոս թէեւ միակ կայսրն էր այժմ, բայց իր շրջանին մէջ Լիկիանոս պահած էր իր ազդեցութիւնը եւ կը հրամայէր հարցաքննել բոլոր զօրականները եւ անոնք որ չընդունին աստուածներու պաշտամունքը՝ սպաննել: Այս ալիքը հասած էր նաեւ Կապադովկիա, Փոքր Հայք, ուր Լիկիանոսի բանակին մէջ քառասուն զինուորներ կը մերժէին ենթարկուիլ Լիկիանոսի հրամանին: Անոնք ազնուական ընտանիքներէ եկած, պարկեշտ, հայրենասէր, պատերազմներու ատեն իրենց քաջութեամբ եւ առաքինութիւններով ուշադրութեան եւ յարգանքի արժանացած ընտիր զինուորականներ էին: Լիկիանոս իր մօտ կանչելով զանոնք, գովաբանելով եւ մեծ յարգանքներ մատուցանելով բազմիցս փորձեց համոզել զանոնք որ հրաժարին իրենց քրիստոնէական հաւատքէն եւ արժանանան տակաւին աւելի մեծ տիտղոսներու եւ փառքի, բայց միշտ հանդիպեցաւ անոնց ժխտական պատասխանին: Զանոնք բանտ նետեց, չարչարեց. այդ չարչարանքներու ժամանակ քառասուն զինուորները կ'աղօթէին եւ Աստուծմէ կը խնդրէին որ փրկէ զիրենք: Յանկարծ լոյս մը կը ծագի բանտին մէջ եւ այդ լոյսին մէջ անոնք կը տեսնեն Քրիստոսը որ կ'ըսէ՝ «զօրացէք իմ քաջ նահատակներս, ասիկա ձեր պաքարին սկիզբն է, ով որ համբերէ յաւիտեան պիտի ապրի»:

Լիկիանոս կը շարունակէր զանոնք չարչարել, դատաւորներու առաջ տանիլ եւ պնդել

որ ուրանան իրենց հաւատքը: Միշտ նոյն մերժումը: Լիկիանոս նախ կը հրամայէ քարկոծել զանոնք քաղաքին հրապարակը. մոգական ոյժի մը ներկայութեամբ, իրարանցումը այնքան մեծ կ'ըլլայ որ քարկոծողները կը սկսին իրար քարկոծել եւ անմիջապէս կը հրահանգուի դարձեալ զանոնք բանտ առաջնորդել: Բանտին մէջ դարձեալ Աստուած կ'երեւի իրենց եւ կ'ըսէ՝ «ով որ Ինձի հաւատայ, թէեւ կը մեռնի բայց կ'ապրի»: Այս յաճախակի երեւումները աւելի կը զօրացնէ քաջ զինուորները եւ անոնք երբ դարձեալ ատեան կը տարուին կը պահանջեն որ Լիկիանոս որոշէ թէ ինչ պիտի ընէ, որովհետեւ իրենք պիտի չուրանան Քրիստոսը:

Լիկիանոս սաստիկ բարկացած եւ պարտուած կը հրամայէ զանոնք լիճին սառուցեալ ջուրերուն մէջ նետել որպէսզի սառին եւ տանջանքով մահանան: Այդպէս ալ կ'ընեն: Անոնցմէ մէկը չի դիմանալով սառուցին դուրս կուգայ եւ տաք բաղնիք մը կը մտնէ, որ սարքած էին դիտմամբ լիճին եզերքը, սակայն պաղէն յանկարծակի տաքի անցումը մահացու կ'ըլլայ զինուորին ու կը մահանայ: Գիշերը, երբ Լիկիանոսի զինուորները քնացած էին եւ միայն պահակ մը կը հսկէր լիճին մէջի նահատակուողներուն եւ կը լսէր անոնց աղօթքները, յանկարծ կը տեսնէ որ երկինքէն լուսաւոր շրջագիծով պսակներ կ'իջնեն եւ կը հանգչին սուրբերու գլխին: Հեթանոս պահակը յանկարծ տարօրինակ զգացում մը կ'ունենայ, չի դիմանար այդ ներքին ձայնին ու երկինքէն իջնող լուսապսակներուն, կը հանէ իր զգեստները եւ կը նետուի սառած ջուրերուն մէջ, դարձեալ ամբողջացնելով քառասուն թիւը:

Այս նահատակներուն յիշատակն է որ մեր եկեղեցին կը նշէ ամէն տարի, Սրբոց Քառասնից Մանկանց յիշատակութեան տօն անունով:

Մեծ պահքը երբեակ իմաստով Պարզ խօսքեր՝ պարզ հոգիներու համար Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս

Հատուածներ

Մեծ պահքի քառասորեայ շրջանը եկեղեցույ հաւատացեալներուն համար հոգեկան վերանորոգութեան սքանչելի առիթ մըն է: Երբ անկա գիտակցօրէն ապրուի հոգեկան ազնուացման, եւ առհասարակ մարդ անհատի երջանկութեան ամենէն ազդու եւ բարերար միջոցը կը դառնայ:

Մեծ պահքը գիտակցօրէն ապրիլ՝ կը նշանակէ.-

1.- Աղօթքը դարձնել մեր կեանքի կեդրոնական առանցքը

Առաջին հերթին, աղօթել առանձնապէս տունին կամ ոեւէ այլ հանդարտ միջավայրի մէջ, ուր ինքնամփոփումի, առանձին ըլլալու, ինք իր խղճին հետ խօսակից դառնալու կարելիութիւնը կայ: Կ'անդրադառնա՞նք թէ մարդ իր աօրեայ կեանքին մէջ որքան գրաւուած է ուրիշներով...: Բայց անհրաժեշտ է որ երբեմն երբեմն ինք իր անձին հետ առանձին ըլլայ, եւ Աստուծոյ ամենատես աչքին ներքեւ, դիտէ ու քննէ ինքզինք:...

Խոկումի, ինքնանդարձումի, առանձնութեան, աղօթքի պահերուն, երբ ոչ ոք մեզի կը նայի, ոեւէ մէկու հետ կապ չունինք, երբ մեր աչքերը մեր անձերուն վրայ կը սեւեռենք, այն ատեն կը յաջողինք սրտբացօրէն, ճշմարտօրէն եւ ջիւշ յստակութեամբ մենք զմեզ տեսնել, ճանչնալ եւ սրբագրել կամ վերանորոգել:...

2.- Պահք բռնել

Աղօթելու հետ առընթեր եւ բացի աղօթելէ, անհրաժեշտ է պահք բռնել, ինչպէս ժողովրդական արտայայտութեամբ կ'ըսուի: Ի՞նչ կը նշանակէ պահք բռնել:...

Կրօնական ճշգրիտ եւ խորունկ իմաստով՝ պահքը այնպիսի արարք մըն է որ մարդը կ'առաջնորդէ ինքզինք կամատրապէս զրկելու որոշ զգայարանական, նիւթական հաճոյքներէ եւ ճոխութիւններէ: Առիթ կու տայ անոր մտածելու հոգեկան, բարոյական կեանքի մշակման մասին:...

Յիսուսի կեանքի պատկերին մէջ մենք կը տեսնենք որ Ան քառասուն օր անապատի մէջ առանձնացաւ, ինքզինք կերակուրներէ զրկեց, հոգեպէս զօրանալու համար: Աւետարանին մէջ մենք կը կարդանք թէ Ան պատուիրեց Իր հետետրոյներուն եւ ըսաւ որ պէտք է պահք բռնել բայց ո՛չ «ի ցոյց մարդկան», այլ ներքին ինքնամփոփումով, որպէսզի պահքը արժէք ստանայ եւ ծառայէ անձին վերանորոգութեան:...

3.- Բարիք գործել

Մեծ պահքի շրջանը գիտակցօրէն ապրիլ կամ գործնապէս իմաստաւորել կը նշանակէ ոչ միայն ներանձնական աղօթք ընել կամ պահք բռնել, այլ նաեւ որոշ գործեր կատարել, դրական արարքներ գործել, որոնց նպատակն է արդիւնքը բարիք ըլլան, եւ՝ ոչ թէ միայն անհատին, այլ իր նմանին, ուրիշին երջանկութեանը ծառայեն:

Հետեւաբար, Մեծ Պահք քառասորեայ շրջանը քրիստոնէաբար եւ հայօրէն ապրելու համար ունինք երեք գլխաւոր պարտաւորութիւններ.-

- 1.- Աղօթել՝ առանձնապէս եւ հաւաքաբար
- 2.- Պահք բռնել՝ ինքնազրկումի սկզբունքով
- 3.- Բարիք գործել՝ ծառայութիւններ մատուցանելով

Խաչբառ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1						■	■		■		
2				■	■						
3					■				■		
4			■	■				■			
5			■	■					■		
6	■		■	■		■					
7		■					■				■
8					■	■		■		■	
9									■		
10					■						

Ուղղահայեաց

- 1- Ոչ իրական արտայայտություն- յանցաւորները հոն կը դրուին
- 2- Կենդանի պտտցնել- Գոյութիւն ունին
- 3- Աչքերուն կափարիչ - ետեւէն՝ թափանցիկ նիւթ
- 4- Ազնուականներու հող- Ետեւէն՝ գոյութիւն ունինք
- 5- Թուլնայ
- 6- Ստացիր- ետեւէն՝ չսիրել
- 7- Կարաս - Լեռ
- 8- Գիրերու հաւաքածոյ- գոյութիւն ունին- Ետեւէն՝ մատանիի զարդ կամ աղբիւր
- 9- Ծաշակ
- 10- Ուշանաս - ժխտական իմաստ կու տայ
- 11- Կատունները կը ձայնեն- հրաւեր

Հորիզոնական

- 1- Դաշտի ծաղիկ - դրացի գիրեր
- 2- այր մարդ- ունենալ
- 3- խոհանոցի առարկայ- տուրին հակառակը- հակառակէն տարի
- 4- Ետեւէն հայերէն գիր մը- պզտիկ տուն- գոյն մը
- 5- Ետեւէն եկուր- պատկեր- ետեւէն էական բայ
- 6- Լեցուն- համեմի բոյս մը
- 7- Չոքիլ- ետեւէն՝ կաթսայ կամ տղայ
- 8- փոս, խրամ- անձս
- 9- Ցատկոտող կենդանի- ետեւէն՝ չէ
- 10- Պզտիկ տուն- ստեղծող

Փետրուար
ամսուան պահուած
բառը՝ Ղեւոնդ

Ը

«Քրիստոնէութիւնը հոգետիրումն է աշխարհին եւ Գիւթեղէնին վրայ»

Կ

Այս խօսքը մեկնակետ եւ սկզբունք առնելով է որ այս յօդուածներու շարքով կը կեդրոնանանք մեր Եկարագրի բարեպաշտ եւ օրինակելի գծերուն վրայ, այլ խօսքով՝ մեր առաքինութիւններուն վրայ, որոնց միջոցաւ միայն կրնանք Գիւթական աշխարհէն բարձրանալով հասնիլ հոգետիրին:

«Քրիստոնէութիւնը հոգետիրումն է աշխարհին եւ Գիւթեղէնին վրայ», եւ քրիստոնէային առաքինութիւններէն մէկն է ...

ա

Արիութիւնը

ր

Արին այն անձն է որ բնաւ չընկճուիր: Ընդհանրապէս համոզուած կ'ըլլայ իր նպատակով եւ հաստատուն համոզումներէ մղուած դէմ կը դնէ ամէն դժուարութեան գիտնալով թէ իր նպատակը տկարութիւն չի ճանչնար:

Արիութիւնը կը նշանակէ նաեւ ինքն իր վրայ իշխելու կարողութիւն, որովհետեւ արի անձը այն անձը չէ որ չի վախնար, այլ այն անձն է որ վախով հարդերձ, կը յաղթահարէ իր ներքին արգելքները ու ընթացքը կը շարունակէ:

ա

Արիութիւն կը նշանակէ քաջասրտութիւն, աներկիւղութիւն, մտային եւ զգայական ոյժ դիմադրելու դժուարութեան, փորձութեան, վտանքի:

Արի անձը կարող է ձերբազատուիլ անելորդ կասկածներէ եւ տատանումներէ որովհետեւ անվճռական այդ կեցուածքները կրնան իր վերջնական նպատակին հասնելու ընթացքը խանգարել:

ի

Արիութիւնը կը նշանակէ նաեւ վճռակամութիւն այսինքն հաստատ որոշում տալու կարողութիւն , հիմնաւորուած որոշում, դատողութեան ծնունդ առած որոշում որուն համար անձը յանձն կ'առնէ ամէն տեսակ վտանք եւ դժուարութիւն:

ր

ԱՐԻՈՒԹԻՒՆ

Արի ըլլալ կը նշանակէ...

... վտանգն ու արգելքները դիմագրաւել քաջութեամբ եւ կտրիճութեամբ

Անձ մը որ ...արի է.- >

Վճռակամ է
սկզբունքի տէր է
ինք իր վրայ իշխող է
չընկճուող է
աներկիւղ է

Անձ մը որ արի չէ.- >

Դիւրութեամբ կ'ընկճուի
Փորձութեան կ'ենթարկուի

Քաջն Վարդան

449 թուին Յազկերտ Բ. թագաւոր հրովարտակ մը հրատարակեց՝ իր պետութեան մէջ գտնուող բոլոր քրիստոնէաներուն հրահանգելով կրակապաշտ դառնալ: Ասիկա պատճառ եղաւ որ Հայոց մեծ նախարարները, բոլոր եպիսկոպոսները եւ բազմաթիւ երեցներ, եկեղեցույ Սուրբ Ուխտին հետ միասին հաւաքուին Արտաշատ քաղաքը եւ երկրին ամբողջ բազմութեան հաւանութեամբ մերժեն ենթարկուիլ Յազկերտի հրահանգին: Հայերը պատասխանեցին Յազկերտի նամակին այսպէս՝ «Այս հաւատքէն ոչ ոք կրնայ խախտել մեզ, ոչ հրեշտակները, ոչ մարդիկ, ոչ սուր եւ ոչ հուր, ոչ ջուր եւ ոչ ալ ոեւէ ուրիշ դառն հարուածներ»: 451 ին պարսկական բանակը 300,000 զինուորներով մտաւ Հայաստան եւ Աւարայրի մէջ բախեցաւ 60,000 հաշուղ հայկական բանակին, որուն հրամանատարն էր Քաջն Վարդան Մամիկոնեան:

- Ինչպէս կրնաս որակել Հայերու կեցուածքը
- Ինչ օրինակ կարելի է առնել այս պատմութենէն
- Պատահա՞ծ է որ սկզբունքներուդ տէր կանգնելու համար ինքզինքդ դնես վտանգաւոր կացութեան մը մէջ
- «Հայ եմ ես, Քաջ եմ ես, Քաջ Վարդանի թոռն եմ ես» ասացուածքը Հայոց ո՞ր նկարագիրը կը ցոլացնէ

Որպէսզի երբեք չուսալքուիք եւ չտկարանաք, մտածեցէ՛ք՝ թէ Յիսուս ի՞նչպիսի համբերութեամբ կրեց մեղաւորներու հակառակութիւնները:

Եբրայեցիներուն 12.3

Ընտանիքի մը համերաշխութեան եւ միաբանութեան ոյժը

Հայր մը խորհուրդ տուաւ իր որդիներուն որ սիրով եւ համերաշխ ապրին: Որդիները չլսեցին:

Օր մը հայրը հրամայեց ցախաւել մը բերել: Ցախաւելը տուաւ իր որդիներու եւ առաջարկեց կտորել զայն:

Որդիները շատ չարչարուեցան, բայց ցախաւելը չկրցան կտորել: Այն ժամանակ հայրը քակեց ցախաւելը եւ շիւղերը մէկ- մէկ տուաւ որդիներուն ու հրամայեց կտորել:

Որդիները դիւրութեամբ մէկ-մէկ կտորեցին իրարմէ այսպէս զատուած շիւղերը:

Հայրը դարձաւ ու ըսաւ որդիներուն.

- Այսպէս ալ դուք, եթէ համերաշխ ու միաբան ըլլաք, որ ոք պիտի կրնայ յաղթել ձեզի, իսկ եթէ կռուիք, խռովիք իրարմէ՝ դիւրին պիտի ըլլայ ձեզ մէկ-մէկ կտորել:

Հարցումներ, խօսակցութեան նիւթեր . -

- 1- Ինչո՞ւ որդիները չկրցան կտորել ցախաւելը:
- 2- Անոնք ե՞րբ միայն կրցան կտորել զայն:
- 3- Ի՞նչ նպատակով հայրը իր որդիներուն ցախաւելի օրինակը տուաւ:
- 4- Պատմեցէ՛ք թէ ի՞նչ գիտէք մարդոց միջեւ համերաշխութեան եւ միաբանութեան մասին: Այս առաքիճութիւնները ի՞նչ բարիքներ կու տայ մարդոց:

Աղօթք խնդրանքներու կատարման համար

Քու դիմացդ ծունկի եկած, ամբողջ սրտով կ'աղաչենք եւ գթութիւնդ կը հայցենք, բարերար եւ բազումողորմ Աստուած: Ինչպէս քու ծառաներուդ խոստացար՝ ըսելով. «Ինչ որ հաւատքով խնդրէք Հօրմէն՝ Որդիին անունով, պիտի տրուի ձեզի», այս պահուն շնորհէ՛ եւ իրենց բարի կատարումին հասցուր քեզի հաւատացողներուս խնդրանքները, որովհետեւ քեզի՛ ապաւինած ենք: Քու առատ ողորմութեամբդ մխիթարէ՛ մեզ այս կատեքիս մէջ, եւ առաջորդելով՝ երկինքի անպատմելի արքայութեանդ հասցուր, որպէսզի ամենասուրբ Երրորդութիւնդ փառաբանուի եւ պատուընդի. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Չարչարանքներու մէջ հաւատքի զօրութիւն եւ համբերութիւն խնդրելու աղօթք

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ

Որդի Աստուծոյ, այս նեղութեան ցաւերուն մէջ տոկալու զօրութիւն տուր եւ ողորմէ՛ ինձի, ինչպէս ողորմեցար խաչելութեան ատեն քեզի խաչակից աւազակին: Ծնորհք տուր նաեւ՝ որ համբերեմ այս դառն տանջանքներուն, որպէսզի ե՛ս ալ արժանի ըլլամ պահելու մեր լուսաւոր հաւատքին աւանդութիւնը, որ ինձի տուիր՝ որպէսզի ճանչնամ եւ կատարեմ քու կամքդ:

Արդ, Տէր բարերար, դուն որ ըսիր. «Ես միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհի վախճանը», մի՛ լքեր զիս, զօրացուր քու կամքիդ մէջ, որպէսզի կարենանք այս պատերազմին տոկալ քու մեծ անուցիդ համար. որպէսզի հաւատքի մեր պարծանքը յայտնուի քու ծառաներուդ եւ քեզ ճանչնան իբրեւ Տէր եւ Աստուած:

Դուն, մարդասէր, քու արդարներուդ խումբին խառնէ մեզ եւ զօրութիւն տուր՝ որ պատերազմինք եւ ի հարկին մեռնինք քու ճշմարտութեանդ եւ անուցիդ համար, եւ դարձեալ փառքով նորոգուինք՝ երբ վերստին առաքես իւրաքանչիւրին հատուցումներու բաշխիչը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսը. որպէսզի զուարթ երեսով կանգնինք անոր դիմաց եւ յաղթանակի պսակը առնենք քեզ սիրողներուն հետ միասին:

Ամենակալ Տէր, դուն որ փառքով կը պսակես քեզի յուսացողները եւ կը կատարես քեզմէ վախցողներուն փափաքը, զիս արժանի ըրէ, Տէր, որ քու վրադ իմ յոյսս պահեմ, եւ համբերութիւն տուր որ իմ ընթացքս կատարեմ այս նեղութեամբ, որուն մէջ կը գտնուիմ:

Դուն՝ որ մեր ցաւերը կը բժշկես, սրտաբեկները կ'առողջացնես, նեղեալները կը հանդարտեցնես, կապուածները կ'արձակես, սգաւորները կը մխիթարես, անյոյսներուն յոյս կու տաս, խռովածներուն՝ հանգիստ եւ յոգնածները նաւահանգիստ կը հասցնես, դուն՝ որ սիրով կը նայիս քու արարածներուդ եւ քու քաղցրութեամբդ կը կերակրես բոլորը, տուր ինձի, Տէր, որ ե՛ս ալ պսակը առնեմ բոլոր անոնց հետ՝ որոնք արժանի ըրիր քու անուցիդ համար մեռնելու փառաւոր մահուամբ. որպէսզի ե՛ս ալ արժանի ըլլամ յափշտակուելու քու սիրելի Որդիիդ դիմաւորութեան, երբ գայ իր ճառագայթող լոյսին մէջ առնելու սրտանց իրեն փափաքողները, եւ ճշմարտութեամբ դատելու ամբողջ տիեզերքը իր բարկութեան կրակով: Փառք քեզի, Որդիիդ եւ Սուրբ Հոգիիդ հետ միասին, յաւիտեանս յաւիտեանից: Ամէն:

Փետրուար ամսուան պատասխանողներ եւ մասնակցողներ

Մանկապարտէզի անկիւն

Տիրոջ, նուիրուի, տատրակ, աղանիի, Սիմոն, Սուրբ Հոգին, Օծեալը, Յիսուսը, գոհաբանեց

Նախակրթարան Ա. Բ. Գ.անկիւն

1. գ. Սինա
2. ա. Ս. Աննա
3. բ. ատաղձագործ
4. ա. Հրէաստանի
5. բ. եօթանասուն անգամ եօթը
6. բ. Բարի կեանք
7. գ. Սնտուկ
8. Աստուածդ, սրտովդ, հոգիովդ
9. գ. 301
- 10.գ. Վարդանանք

Նախակրթարան Դ. Ե. Զ.անկիւն

1. գ. Յունուար 31
2. ա. Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի կամ բ. Զեզի եւ մեզի մեծ Աւետիս
3. բ.Միքա
4. դ.17
5. չարիք, բարին, արդարութեան, չարչարուիք
6. գ. իր որդին Իսահակը զոհել
7. բ. 454
8. բ. 23 Փետրուար
9. 29, Արտաքսման
- 10.Անառակին

Երկրորդականի անկիւն

1. Քաղկեդոն
2. Նուարսակ
3. Փետրուար 14
4. Առաջաւորաց պահք
5. Առաջաւորաց Պահքի առաջին 4 օրերը
6. Յովնան մարգարէի
7. 381
8. 40
9. 1780
- 10.Աւետարանն, Եկեղեցի

Ընդհանուրից անկիւն

- 1- Համազասպ
- 2- խրատը սիրողը իմաստութիւնն ալ կը սիրէ
- 3- Պահքի նպատակն է հոգիի մաքրագործումը, ճոխութենէ զրկուիլը եւ ինքնաքննութիւնը
- 4- Վարդանանցի առթիւ
- 5- Բոլոր սերունդներուն համար
- 6- փերեզակը շրջուն վաճառական մըն է
- 7- Կորսուած ոչխարը
- 8- ձեռք սրբելու փոքր անձեռոց է
- 9- զաղաշանս իմ
- 10- բանահիւսութիւն

Փետրուար ամսուան մասնակցողներ

Մանկապարտէզ

Ճեսիքա Մատթէոսեան

Անսխալ պատասխանողներ

Սեակ Պապիկեան, Կարօ Պալուզեան, Թաթիանա Քէհէեան, Արին Անթեպեան, Ռիթա Խշիշեան, Յուլեր Անթեպեան:

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Նաթալի Սեթեան, Հրայր

Մատթէոսեան, Մհեր Մատթէոսեան:

Անսխալ պատասխանող

Առէն Պապիկեան, Ալէք Կարապետեան Զոհրայ Կարապետեան, Ռիթա Գոճաօղլանեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Լորա Սարիմանուկեան, Քրիստինա Կարապետեան, Գօգօ Մատթէոսեան

Երկրորդականի անկիւն

Լոռի Քէօսէյեան, Կարօ կարապետեան, Թամար Գիզիրեան, Փօլ Գիզիրեան:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն**



**Յիսուսի յաղթական մուտքը Երուսաղէմ «Այս տարի
Ծաղկազարդը Ապրիլ --- ին է:»**

Ամբողջացո՛ւր ըստ Յովհաննէս 12.12- 15

**Զատիկի, Երուսաղէմ, Յիսուս, արմաւենիի, Ովսաննա՛, Տիրոջ, Սուրբ,
աւանակի**

Յաջորդ օրը, ժողովուրդի մեծ բազմութիւն մը, որ ----- տօնին
առիթով ----- եկած էր, երբ լսեց թէ ----- Երուսաղէմ կու գայ,
----- ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ, բարձրաձայն
աղաղակելով .

*«-----, օրհնեա՛լ ըլլայ ան՝ որ կու գայ ----- անունով,
Իսրայէլի թագաւորը»*

Յիսուս էջ մը գտնելով՝ նստաւ անոր վրայ, ինչպէս որ ----- գիրքերուն մէջ
գրուած է .-

*«Մի՛ վախճար, ո՛վ Երուսաղէմ, Սիոնի՛ աղջիկ. ահա թագաւորդ քեզի
կու գայ իշու մը ----- վրայ նստած»:*

Աւելի գէշ կոյր չկայ քան այն որ չ'ուզեր տեսնել

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն**

- | | |
|--|--|
| <p>1. Այս տարի Մեծ Պահքը ե՞րբ սկսաւ:
 Ա. 11 Ապրիլին
 Բ. 23 Փետրուարին
 Գ. 20 Փետրուարին
 Դ. 5 Մարտին</p> | <p>6.- Վարդանանց պատերազմին հայկական բանակը քանի՞ հոգի էր:
 ա.- 10 000
 բ.- 60 000
 գ.- 50 000
 դ.-300 000</p> |
| <p>2. Որո՞նք ներկայ էին Վերջին ընթրիքին:
 Ա. Աշակերտները
 Բ. Փարիսեցիները
 Գ. Հիւանդները
 Դ. Զինուորները</p> | <p>7.- Աստուած աշխարհը քանի՞ օրէն ստեղծեց:
 ա.- հինգ օրէն
 բ.- եօթը օրէն
 գ.- վեց օրէն
 դ.- մէկ օրէն</p> |
| <p>3. Յիսուսի հետ քանի՞ հոգի խաչուեցաւ:
 Ա. 1
 Բ. 2
 Գ. 3
 Դ. 4</p> | <p>8.- Ի՞նչ եղաւ Ադամ եւ Եւայի պատիժը:
 ա.-իմաստութեան ծառէն չուտել:
 բ.- դրախտէն դուրս վտարուեցան:
 գ.- առանց աշխատելու ճաշ ապահովել:
 դ.- օրական երեսուն անգամ աղօթել:</p> |
| <p>4. Յիսուս իր խաչելութենէն քանի՞ օր ետք յարութիւն առաւ:
 Ա.4
 Բ.3
 Գ.2
 Դ.1</p> | <p>9.- երբ կը տօնենք Բուն Բարեկենդանը:
 ա.- մեծ պահքէն առաջ:
 բ.- մեծ պահքէն վերջ:
 գ.- մեծ պահքի կէսին:
 դ.- Ծնունդին յաջորդող շաբաթը:</p> |
| <p>5. Ո՞վ մատնեց Յիսուսը:
 Ա. Պիղատոս
 Բ. Յակոբ
 Գ. Յուդա
 Դ. Մարկոս</p> | <p>10.- Յիսուսի աշակերտներէն քանի՞ հոգի ներկայ եղան իր այլակերպութեան:
 ա.- տասներկու
 բ.- հինգ
 գ.- երեք
 դ.- չորս</p> |

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Յիսուսի հետեւողները առաջին անգամ ըլլալով ո՞ր կոչուեցան քրիստոնեաներ: (Առաքեալներու գործերը 11.26)

- ա.- Երուսաղէմ
- բ.- Հայաստան
- գ.- Անտիոք
- դ.- Սուրիա

2.- Ո՞ր հերոսն է որու անունով կը կոչուի այն պատերազմը որուն ընթացքին ինք նահատակուեցաւ:

- ա.- Յովհաննէս
- բ.- Վարդան
- գ.- Անդրանիկ
- դ.- Քրիստոս

3.- Ո՞վ ըսած է «Մարդ միայն հացով չ'ապրիր այլ»:

- ա.- Աստուած
- բ.- Մովսէս
- գ.- Յիսուս
- դ.- Յովհաննէս

4.- Ծարգալոյցը կը կոչենք նաեւ:

- ա.- պատարագ
- բ.- խթում
- գ.- տաղաւար
- դ.- շարական

5.- Ո՞ր թուականին երոպայի քրիստոնեայ հայրապետները որոշեցին Ս. Ծնունդի օրը փոխել 6 Յունուարէն 25 Դեկտեմբերի:

- ա.- 451
- բ.- 521
- գ.- 378
- դ.- 350

6.- Հայերս ինչու՞ չհետեւեցան այդ որոշումին:

- ա.- որովհետեւ չէին մասնակցած Քաղղկեդոնի ժողովին եւ հետագային մերժեցին այդ ժողովին որոշումները:
- բ.- Ժողովուրդը չէր ուզեր թուականը փոխել:
- գ.- Որովհետեւ 6 Յունուարը հայ հեթանոսական տօն մըն էր:

դ.- Որովհետեւ հայրերը ուզեցին յատուկ ըլլալ այդ օրը պահելով:

7.- Խաչակնքումի միջոցին մեր երեք մատները միացած մեր ճակատ տանիլը կը նշանակէ:

- ա.- Յիսուսի այս աշխարհի կեանքը:
- բ.- Յիսուսի այս աշխարհի նախորդող կեանքը:
- գ.- Յիսուսի խաչելութիւնը:
- դ.- Յիսուսի յարութիւնը:

8.- Ի՞նչ էր Իսահակի երկրորդ զաւակին անունը:

- ա.- Մովսէս
- բ.- Յովսէփ
- գ.- Յակոբ
- դ.- Յեսու

9. Ամբողջացո՞ւր հետեւեալ բառերով: **Մոմավառութիւն. Մաս. Խնկարկութիւն. Մեծ Պահք. Նշխար. Երկրպագութիւն.**

ա.-Կը գործածուի Ս.Պատարագի ընթացքին որպէս Հաղորդութիւն:

բ.-Սպիտակ բարակ հաց .բաղարջ:

գ.-Բարեպաշտական սովորութիւն եւ հոգեւոր ապրումի տեսանելի արտայայտութիւն:

դ.- Եկեղեցական արարողութեան ընթացքին յաճախ կը կատարուի:

ե. -Բարեպաշտական սովորութիւն մը Աստուծոյ նկատմամբ մեր ունեցած յարգանքին որպէս արտայայտութիւն:

զ.- Բուն բարեկենդանէն մինչեւ Զատիկ զղջումի, ինքնաքննութեան եւ ապաշխարութեան շրջան:-----

10.-Ծարէ՛ յաջորդականութեամբ Մեծ Պահքի Կիրակիները:

- | | |
|---------------|---------------------|
| --- Գալստեան | ----Տնտեսին |
| ----Անառակին | -1- Բուն Բարեկենդան |
| ----Արտաքսման | ---- Ծաղկազարդ |
| ----Դատաւորին | --8-- Զատիկ |

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն**

1- Միջինքը ո՞ր Կիրակիին կը յաջորդէ :

2- Արտաքսման Կիրակիին յաջորդող 3 կիրակիները կը կոչուին Յիսուսի 3 առակներու անունով: Ի՞նչ կը կոչուին այդ Կիրակիները «պահել կարգը»:

3-Վերեւ նշուած Առակները կը յիշուին միայն մէկ Աւետարանի մէջ: Ո՞րն է այդ Աւետարանը

4-Քանի՞ տուներէ կը բաղկանայ «Հաւատով Խոստովանիմ» աղօթքը:

5-Ո՞վ գրած է «Հաւատով Խոստովանիմ» աղօթքը:

6- Ո՞ր դարուն գրուած է «Հաւատով Խոստովանիմ» աղօթքը:

7- Գրէ՛ «Հաւատով Խոստովանիմ» աղօթքին 11րդ տունին առաջին 3 բառերը:

8- Գրէ՛ «Հաւատով Խոստովանիմ» աղօթքին 15րդ տունին առաջին 3 բառերը:

9- Գրէ՛ «Հաւատով Խոստովանիմ» աղօթքին 7րդ տունին առաջին 2 բառերը:

10- Գրէ՛ «Հաւատով Խոստովանիմ» աղօթքին 8րդ տունին առաջին 2 բառերը:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Ընդհանուրի անկիւն

1- Հետեւեալներէն ո՞ր մէկը սպաս մը չէ.-

- ա- Սկիւր
- բ- խունկ
- գ- քշոց
- դ- աշտանակ

2- Ըստ առածին «Դիմակաւոր բարեկամը աւելի վտանգաւոր է քան...».-

- ա- անդիմակ թշնամին
- բ- դիմակաւոր թշնամին
- գ- դիմակաւոր դրացին
- դ- անդիմակ դրացին

3- Ըստ Սաղմոս 15[14]-ին «Տէր ո՞վ արժանի պիտի ըլլայ սուրբ լեռանդ վրայ ...»

- ա- տուն շինելու
- բ- բարձրանալու
- գ- բնակելու
- դ- կանգնելու

4- Հրատապ ցիւթը.-

- ա- այժմէական է
- բ- անմիջապէս պէտք է լուծել
- գ- հրամայական
- դ- վերի բոլոր պատասխանները ճիշդ են

5- Ո՞ր մէկը կարելի է նկատել հայ ազգի առաջին հայրապետը.-

- ա- Գրիգոր Նարեկացի
- բ- Գրիգոր Լուսաւորիչ
- գ- Մեսրոպ Մաշտոց
- դ- Խրիմեան հայրիկ

6- Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին կը կոչուին Գաւ.-

- ա- Եկեղեցոյ սրբութիւններ
- բ- Սուրբ Երրորդութիւն
- գ- դաւանանք
- դ- եկեղեցական ողջոյններ

7- Ո՞ր գիտութեան նպատակն է հիմնաւորել եւ ապացուցանել աստուածային յայտնութեան ճշմարտութիւնը.-

- ա- Փիլիսոփայութիւն
- բ- բանասիրութիւն
- գ- դիցաբանութիւն
- դ- աստուածաբանութիւն

8- Սուրբ պատարագի ընթացքին արտասանուող «Ընկալ, կեցո եւ ողորմեա» բառերը կը նշանակեն.-

- ա- Լսէ, ապրիր եւ ողորմէ
- բ- Լսէ, պաշտպանէ եւ ողորմէ
- գ- Ընդունէ, պահպանէ եւ ողորմէ
- դ- Ընդունէ, ապրիր եւ ողորմէ

9- Ըստ ժողովրդական երգին, «Ալագեազ սարն ...» .-

- ա- ամպել ա
- բ- տրտմել ա
- գ- փռուել ա
- դ- սառել ա

10- Երկու եղբայրներու կիներ զիրար կը կոչեն.-

- ա- հարս
- բ- ներ
- գ- քեռկին
- դ- զարմիկ

Կարճ Լուրեր

• Նուիրատուիւթիւն

Շնորհակալութեամբ ստացանք **Տէր Եւ Տիկին Բարգէն Թօփճեանէն** 24 օրինակ «Փամագիրք Մեծի պահոց Արեւագալի եւ Հսկումի» առ ի գնահատանք Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտներուն «Հաւատով Խոստովանիմ» աղօթքի արտասանութեան Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ Չորեքշաբթի օրերու հսկումի արարողութեան ընթացքին: Փամագիրքերը տրուեցան մասնակցող աշակերտներուն:

• Ամէն Շաբաթ օր երեկոյեան ժամը 7:00 ին **Աստուածաշունչի Սերտողութիւն Երիտասարդներուն համար** Ս. Յակոբ Մայր Եկեղեցի:

• Դասախօսութիւն «Ազգային Սահմանադրութիւն» Հինգշաբթի, **Մարտ 18 2004** ի երեկոյեան ժամը 8:00 ին **Ա. Ահարոնեան Սրահ**

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ
Խմբագիր՝ Շաղիկ Պոյաճեան
Աշխատակիցներ՝ Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան, Գարուիկ Գէպթանճեան, Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս Պապիկեան:

«Ճաշու աւետարան»ը
Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը
Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը.- Ուսուցիչներ՝ Իզապէլ Քուլլութեան, Սալբի Բակլաեան, Վերժին Գէպթանճեան, Վերա Կարապետեան, Երան Լոշխաճեան, Գարուիկ Գէպթանճեան, Յասմիկ Նաճարեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Կալքէջ՝ Բաֆֆի Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Շաղիկ Պոյաճեան:



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Ցակոբ Մայր Եկեղեցույ
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ



ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 8

Ապրիլ 2004

Քրիստոս յարեալ ի մեռելոց

Կիր.	Բ2.	Գ2.	Դ2.	Ե2.	Ուր.	Շաբ.
				1	2	3
4	5	6	7	8	9	10
11	12	13	14	15	16	17
18	19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30	

Յարութեան հանդէպ հաւատքի ոյժը

Որպէս Հայ, կարելի չէ Ապրիլ ամիսը ընդունիլ առանց անդրադառնալու մեր պատմութեան ամենէն ահաւոր հանգրուանին՝ Ապրիլեան Եղեռնին: Սակայն որքան որ մահ յիշատակող ապրիլեան այս տարեդարձը անուրանալի է, նոյնպէս եւս անկարելի է իբր հայ դրժել յարութեան հանդէպ մեր հաւատքին ոյժը որ յատկապէս կը շեշտուի նոյն Ապրիլ ամսուան ընթացքին՝ Քրիստոսի յարութեան յիշատակութեան առթիւ:

Յարութեան հանդէպ հաւատքը հայ ժողովուրդին մօտ ունեցած է մեծ ազդեցութիւն: Ու կարծես հայու նկարագիր դարձած է նորէն ու նորէն ոտքի կանգնիլ ամէն տեսակի ընկճումներէ ու դառն փորձառութիւններէ ետք: Վերականգնում, վերանորոգում, վերակերտում, վերաշինութիւն... եւ ոչ միայն շէնքերու կամ ինչքերու, այլ նաեւ աննիւթական արժէքներու:

Հայու նկարագրի բաղկացուցիչ տարր դարձած յարութեան հանդէպ հաւատքը պէտք է պահպանուի մեր մօտ ու ներմուծուի մեր մանուկներուն եւ պատանիներուն մօտ որովհետեւ չկայ աւելի զօրաւոր ոյժ քան այն՝ որ մեզի կը մղէ հաւատալու թէ ամէն չարիքէ վերջ բարիք կայ, ամէն վայրէջքէ վերջ՝ վերելք, ամէն դժբախտութենէ ետք՝ երջանկութիւն:

Այս առաքինութիւնը՝ հատարքն է:

4	Ծաղկազարդ
5	Աւագ Երկուշաբթի
6	Աւագ Երեքշաբթի
7	Աւագ Չորեքշաբթի
8	Աւագ Հինգշաբթի, Ոսնկուայ
9	Աւագ Ուրբաթ, կարգ թաղման
10	Ճրագալոյց Սուրբ Զատիկի
11	Սուրբ Զատիկ, Յիշատակ յարութեան
12	Մեռելոց
24	Յիշատակ Ապրիլեան եղեռնի

Յարութեան լոյսին մէջ երբ բացուինք,
դառնութիւնը կը փոխակերպուի
լուսաշինութեան, ցաւը՝ կորովի,
ընդվզումը՝ ստեղծագործութեան:

Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս

Վերջին ընթրիքը Հսկումի ընթերցանություն

Ղուկաս 22.14-23

Երբ ժամը հասաւ, Յիսուս տասներկու առաքելներուն հետ սեղան բազմեցաւ, եւ ըսաւ անոնց.

- Ետ փափաքեցայ զատկական այս ընթրիքը ձեզի հետ ընել չարչարուելէս առաջ: Բայց կ'ըսեմ ձեզի, թէ այլեւս ասկէ պիտի չուտեմ, մինչեւ որ ճշմարիտ Զատիկը կատարուի Աստուծոյ արքայութեան մէջ:

Ապա գինիի բաժակը առաւ, շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ եւ ըսաւ.

- Առէ՛ք ասիկա եւ իրարու փոխանցեցէ՛ք՝ խմելով ասկէ: Կ'ըսեմ ձեզի, թէ ասկէ ետք գինի պիտի չխմեմ, մինչեւ Աստուծոյ արքայութիւնը գայ:

Ապա հաց առաւ, շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ, կտրեց եւ աշակերտներուն տուաւ, ըսելով.

- Ասիկա մարմինս է, որ ձեզի համար տրուած է: Ասիկա կատարեցէք իմ յիշատակիս համար:

Նոյնպէս, ընթրիքէն ետք, բաժակն ալ առաւ եւ ըսաւ.

- Այս բաժակը Աստուծոյ նոր ուխտն է, կնքուած իմ արիւնովս որ ձեզի համար կը հոսի: Բայց ահա զիս մատնողը ինծի հետ սեղան նստած է: Ծիշո՞ղ է որ Մարդու Որդին պիտի մեռնի՝ ինչպէս որ Աստուած սահմանած է, բայց վայ այն մարդուն որ զայն կը մատնէ:

Անոնք սկսան իրարու հարցնել թէ իրենցմէ ո՛վ պիտի ընէ ատիկա:

Բովանդակություն


- Յարութեան հանդէպ հաւատքի ոյժը
- Վերջին ընթրիքը
- Ես յաղթեցի աշխարհի
- Ամենէն մեծ, ամենէն սուրբ շաբաթը՝ Աւագ շաբաթը
- Անդաստան
- Պահուած բառ
- Կրօնի առնչուող հայկական անուններ
- Նկարագիր- Հաւատք
- Մեծ Եղեռնի Նահատակներուն պատուիրանը
- Մարտ ամսուան պատասխաններ եւ մասնակցողներ
- Ո՞րն է ճիշդ պատասխանը
- Սաղմոսասացութեան Մրցանքի Երեկոյ
- Կարճ լուրեր կիրակնօրեայէն

«Ես յաղթեցի աշխարհի...» Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոս

Յարութեան դէպքը կարենալ հասկնալու համար հարկ է հաղորդ ըլլալ այն տարածքներուն, որոնք մեր մարդկային գոյութեան խորագոյն այքերուն մէջ Աստուծոյ եւ աստուածայինին, անմահականին եւ յաիտենականին ներգոյութիւնն են: Ով որ իր մէջ անաղարտ կը պահէ այդ հոգեւոր հաղորդութեան ատակութիւնը՝ կրնայ «ըմբռնել» այդ տարածքին համապատասխան զգայնութեամբ եւ հասկացողութեամբ յարութեան դէպքը որպէս աստուածայինին ներգործութիւնը մարդկայինին մէջ:

Այդ զգայնութեան եւ հասկացողութեան անունն է **հաւատք**:

Ինչ ոյժ է սա. բայց՝ անո՛ր համար որ այդ ոյժին ներքին զգացողութիւնը, գիտակցութիւնը եւ անոր իր մէջ ու իր մէջէն գործելու նկատմամբ հարկ եղած պատրաստակամութիւնն ու ընդառաջումը ունի: Երբ մէկը ուշադրութեամբ կարդայ մասնաւորաբար Նոր Կտակարանը, Աւետարանները, Գործք Առաքելոցը, Առաքելական Թուղթերը՝ այնպէս կը զգայ հաւատքին ներկայութիւնն ու ներգործութիւնը ինչպէս արեւին լոյսը: Ծիշդ է որ մենք արեւին ուղղակիօրէն չենք կրնար նայիլ, արեւը իր արեւութեանը մէջ չենք կրնար տեսնել. եթէ փորձենք՝ կը կուրմանք: Բայց նաեւ ոչինչ կրնանք տեսնել առանց արեւին կամ լոյսին: Այդպիսի ոյժ է հաւատքը եւ այդպիսի ազդուութիւն ունի ան մարդկային կեանքին մէջ եթէ մեր աչքերը բաց են եւ կամ այլագոյն եւ



թանձրագոյն ակնոցներով եւ թանձրամած ամպերով չեն խափանուած:

Քրիստոսի յարութիւնը մահուան ժխտումը չէ, այլ մահուան նուաճումը կամ «մահուամբ մահը կոխելու» եւ մեզի «կեանք» պարգեւելու աննախընթաց, անզուգական արարքը որով մենք կ'ունենանք կարելիութիւնը մահէն չընկճուելու, այլ՝ իր տուած կեանքով, հոգեկան սրբութեան, աստուածային անմահական զօրութեամբն ու դրոշմովը մեր կեանքը իմաստաւորելու, արժեւորելու, հարազատօրէն իրագործելու, եւ զայն «երկնից արքայութեան» մէջ յաւերժօրէն ապրելու:

Ամենէն Մեծ, ամենէն Սուրբ շաբաթը՝ Աւագ շաբաթը

Հայաստանեայց եկեղեցին Ջատիկը, կամ Սուրբ Յարութեան տօնը նախորդող շաբթուան ընթացքին կը յիշատակէ Յիսուսի կեանքի վերջին վեց օրերը որոնց ընթացքին Ան խտացուց ու տարբեր տարբեր ձեւերով արտայայտեց ամբողջ իր առաքելութեան միակ նպատակը՝ մարդոց հանդէպ սէրը: Այս շաբաթը, որ կը նկատուի տարուան ամենէն սուրբը, Աւագ կը կոչուի ու անոր իրաքանջիւր օրը կը կրէ նաեւ աւագ անունը: Այսպէս կան Աւագ երկուշաբթի, աւագ երեքշաբթի, աւագ չորեքշաբթի, աւագ հինգշաբթի, աւագ ուրբաթ եւ աւագ շաբաթ: Այս օրերէն իրաքանջիւրը կը յիշատակէ Յիսուսի կեանքէն առնուած մասնայատուկ դրուագ մը ու եկեղեցական խորհրդանշական արարողութիւններ կը մատուցուին անոնցմէն իրաքանջիւրին:

Աւագ Երկուշաբթի

Տերեւագարդ բայց անպտուղ թօզնիին անհիծման ինչպէս նաեւ տանարը մաքրելու օրն էր: Այս դրուագներուն մասին կը կարդանք հետեւեալ հատուածներուն մէջ.- Մատթէոս 21.12-23 եւ Մարկոս 11.12-19

Աւագ Երեքշաբթի

Այս օրուան մասին երկարօրէն կարելի է կարդալ Մատթէոս 21.23-էն սկսեալ: Աւետարանիչը կը ներկայացնէ Յիսուսի առակներէն մի քանին, ինչպէս Երկու որդիներու առակը, չար մշակներուն առակը, հարսանիքի հրաւիրեալներուն առակը: Այս օրուան ընթացքին է նաեւ որ Յիսուս բացատրութիւններ կու տայ հրեաներուն անոնց հարցումներուն շուրջ: Այս ատեն է որ Յիսուս կը փոխանցէ մեծագոյն պատուիրանը «Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ մտքովդ» եւ «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս»:


Հ ա յ ա ս տ ա ն ե ա յ ց եկեղեցին Աւագ երեքշաբթի կը

յիշէ նաեւ տասը կոյսերու առակը եւ վերջին դատաստանի բացատրութիւնը:

Աւագ Չորեքշաբթի

Այս օրը Բեթանիայի մէջ կին մը թանկարժէք իւղով կ'օծէ Յիսուս, ինչ որ կը խորհրդանշէ Անոր շուտով հասնելիք մահը: Օծման կը յաջորդէ Յուդայի որոշումը Յիսուս մատնելու:





Յովնաթանեան

Գիտէի՞ր թէ...

Աւագ ուրբաթ օր որ աւագ շաբթուան ամենէն աւելի սուրբ օրն է պատարագ չի մատուցուիր: Ինչո՞ւ: Որովհետեւ այդ օր Յիսուս ի՛նք «պատարագուեցաւ»՝ այսինքն զոհուեցաւ խաչին վրայ, որպէս կենդանի զոհ:

Աւագ Շաբաթ


Դժոխքի աւերում եւ Ծրագալոյցի պատարագի օր: Այդ երեկոյ եկեղեցւոյ վառած մոմերէն կը վառուին բազմաթիւ մոմեր եւ հաւատացեալներ այդ մոմին լոյսը կը բերեն իրենց տուները իբրեւ խորհրդանիշ Յիսուսի յարութեան ուրախ աւետիսին: Այդ երեկոյ վերջ կը գտնէ նաեւ Մեծ Պահքը:

Աւագ Հինգշաբթի

Վերջին ընթրիք, Սուրբ Հաղորդութեան խորհուրդի հաստատում եւ ոտնուայ: Հինգշաբթի իրիկուն, ժամերգութենէն ետք կը կատարուի «խաւարում» կոչուող արարողութիւնը որուն ընթացքին խորանին վրայ կը վարին 12 մոմեր եւ մէկ մեծ մոմ կը դրուի անոնց կեդրոնը: Աւետարանի իւրաքանչիւր ընթերցումէ ետք կը մարուի մէկ մոմ, մինչեւ որ մնայ միայն մէջտեղի մեծ մոմը:

Աւագ Ուրբաթ

Յիսուսի ձերբակալութեան, խաչելութեան, մահուան ու թաղումի յիշատակի օրն է: Առաւօտեան կը կատարուի ժամերգութիւն ու կը կարդացուին Աւետարանէն հատուածներ որոնք կը բովանդակեն Յիսուսի երկրային կեանքի վերջին ժամերը:



Մինաս 1450

Գիտէի՞ր թէ...

Խաւարումի ընթացքին մէկ առ մէկ մարուող մոմերը կը խորհրդանշեն Յիսուսի աշակերտները որոնք մէկ առ մէկ լքեցին զինք, իսկ մէջտեղի մեծ մոմը որ արարողութեան աւարտին կը մնայ վառած՝ Քրիստոսը որ մնացած էր մինակ:

Անդաստան

Հայաստանեայց եկեղեցիէն ներս ա ս տ ու ա ծ ա պ ա շ տ ու թ ե ա ն արարողութիւնները բազմաթիւ բաժիններէ կը բաղկանան: Զատկուայ շրջանի նուիրուած եկեղեցական արարողութիւններուն շարքին կայ ծես մը որ իրայատուկ է իր ձեւին եւ իմաստին մէջ: Այդ Անդաստանն է:

Անդաստանը աշխարհի չորս ծագերու օրհներգութեան նուիրուած արարողութիւն մըն է: Ժամանակին ան կը նուիրուէր արտերու եւ անդաստաններու պտղաբերութեան համար: Այդ օրերուն, Անդաստանը կը կատարուէր եկեղեցիէն դուրս՝ արտերու եւ այգիներու մէջ: «Անդաստան ելլել» կամ «Անդաստան օրհնել» կը նշանակէր աշխարհի չորս կողմերը օրհնել: Արարողութեան ժամանակ, հոգեւոր դասը խաչով, խաչվառով եւ Աւետարանով երգելով կ'օրհներ արեւելքը եւ այդ կողմ գտնուող Հայոց հայրապետութիւնը՝ Սուրբ խաչի եւ Աւետարանի նշանով, յանուն Սուրբ երրորդութեան: Ապա կ'օրհնուէր եւ պահպանման խնդրանք կը ներկայացուէր աշխարհի արեւմտեան կողմի համար, ուր քրիստոնէայ թագաւորութիւններ եւ ազգեր կային: Դէմքերը դէպի հարաւ դարձնելով՝ կ'օրհնէին հարաւը, այնտեղ գտնուող երկիրները, անդաստանները եւ տարուան պտղաբերութիւնը: Դէպի Հիւսիս դառնալով կ'օրհնէին վերջապէս հիւսիսային կողմը գտնուող վանքերը, անապատները, քաղաքներն ու գիւղերը եւ անոնց

բնակիչները:

Ներկայիս Անդաստանը կը կատարուի եկեղեցիի ատեանէն ներս, այսինքն եկեղեցիին մէջտեղը: Գիրքի ընթերցումէն ետք, բոլոր ներկայ եկեղեցականները շուրջառնելով կը զգեստաւորուին: Հանդիսապետը խաչ ու գաւազան կ'առնէ ու կը կենայ եկեղեցիին մէջտեղը: Միւս եկեղեցականները կ'առնեն խաչ կամ Աւետարան, հանդիսաւոր օրերուն նաեւ այլ մասունքներ, եւ կը կենան հանդիսապետին կողքին, եկեղեցիին մէջտեղ, դէմքերը դարձած դէպի Արեւելք: Բուրվառակիր սարկաւազը, մոմակալները եւ միւս սարկաւազները վառած մոմեր բռնած կը տեղաւորուին ատեանի եզերքին, եկեղեցականներուն դիմաց դէմքերը դէպի Արեւմուտք: Իսկ դպիրները ձեռքերնին մէկական վառած մոմ՝ կը շարուին բեմին առջեւ, դէմքերը դէպի Արեւմուտք:

Պահուած բառ

ս	կ	ն	ղ	ս	ա	կ	ն	ր	ու	հ	ն
տ	հ	ր	ա	լ	ո	ո	տ	տ	ա	ու	
ե	ա	ո	ա	հ	ր	ր	ե	ն	ե	յ	ա
փ	լ	ու	ա	կ	ա	պ	ե	դ	գ	ր	ր
ա	ա	ն	ն	ե	ա	տ	ր	հ	տ	ե	ս
ն	տ	ի	վ	ր	է	պ	ա	ց	ու	ն	ա
ա	ք	զ	ա	բ	ա	ն	ա	կ	մ	ի	կ
կ	ե	պ	խ	ք	ու	ր	մ	շ	ղ	ք	տ
ե	ս	ա	լ	ա	ր	ա	յ	ր	տ	փ	ա
ր	շ	ու	շ	ա	ն	ս	ու	ր	օ	ի	զ
տ	ա	ն	կ	ա	խ	ս	դ	ն	ա	ղ	ա

ազատ
աւարայր
անվախ
անկախ
բանակ
զինուոր

կրակապաշտ
կրօն
հաւատք
հերոս
հայրենիք
հուր

նահատակ
նուարսակ
շուշան
սակ
սպարապետ
ստեփանակերտ

սուր
տղմուտ գետ
տուր
տօն
փիղ
քուրմ

Կրօնի առնչուող հայկական
անուններ

Զատիկ
Առաքել
Աւագ
Աւետիս
Համբարձում
Յարութիւն
Միւռոն

Ը

«Քրիստոնէութիւնը հոգետիրումն է աշխարհին եւ նիւթեղէնին վրայ»

Կ

Այս խօսքը մեկնակէտ եւ սկզբունք առնելով է որ այս յօդուածներու շարքով կը կեդրոնանանք մեր նկարագրի բարեպաշտ եւ օրինակելի գծերուն վրայ, այլ խօսքով՝ մեր առաքինութիւններուն վրայ, որոնց միջոցաւ միայն կրնանք նիւթական աշխարհէն բարձրանալով հասնիլ հոգետիրին:

«Քրիստոնէութիւնը հոգետիրումն է աշխարհին եւ նիւթեղէնին վրայ», եւ քրիստոնէային առաքինութիւններէն մէկն է ...

ա

Հաւատքը

ր

Այնպէս ինչպէս գիտութիւնը կը բացատրէ իմացական իրականութիւնները, այնպէս ալ հաւատքը կու գայ բացատրելու եւ մարդկայնօրէն «ըմբռնելի» դարձնելու գերբնական նկատուած երեւոյթները:

Իբրեւ ճշմարտութիւն ընդունելու կարողութիւն, բան մը որ չենք գիտեր եւ որուն մասին դրական ապացոյցներ չկան: Հաստատ համոզում:

Քրիստոնէական առումով՝ դաւանանք, կրօն:

ա

Անհաւատներ իրենք իրենց կը կոչեն «քննադատ միտքեր», «անկախ մտածողներ», «առարկայականութիւն ունեցողներ», սակայն իրենք գիրենք կը մերժեն հաւատքի անհրաժեշտ շնորհքէն:

«Քրիստոնէական հաւատքը երբ լեցնէ մարդու հոգին անկեղծ ներկայութեամբ մը, չի պարփակուիր անձին զգացումներուն եւ կեանքի պարունակին մէջ: Կը ճառագայթէ՝ լոյս ու ջերմութիւն ցանցելով իր շրջապատին վրայ:»

հ

Ծատեր հաւատքը կը նկատեն տկարութիւն որովհետեւ կը կարծեն թէ հաւատացեալը փախուստ տալով բնութեան եւ կեանքի դժուարութիւններէն կը կառչի իր հաւատքին: Սակայն ընդհակառակը ինչպէս Յովհաննէս առաքեալ ինքն ըսած է Հաւատքը յաղթութիւն է աշխարհի վրայ որովհետեւ նիւթական եւ աշխարհիկ հարստութիւնները արհամարհելով ոյժ կու տայ մարդուն հոգեկան հարստութեան:

ր

ՀԱԻԱՏՔ

Հաւատացեալ ըլլալ կը նշանակէ...

Հաւատալ առանց շօշափելի փաստերու
Վստահիլ Աստուծոյ հակառակ բոլոր հակասող երեւոյթներուն

Անձ մը որ ...հաւատացեալ է.- >

Անձ մը որ հաւատացեալ չէ.- >

Անկեղծ է
Վստահելի է
Ինքնավստահ է
Հաւատարիմ է
Համեստ է

Դիւրութեամբ կ'ընկճուի
Փորձութեան կ'ենթարկուի
Կը վախճայ
Ինքնավստահ չէ
Անապահով կը զգայ

Հարիրապետին ծառային բժշկութիւնը

Երբ Յիսուս Կափառնաում մտաւ, իրեն մօտեցաւ Հոնմայեցի հարիրապետ մը, որ կ'աղաչէր ըսելով.

- Տէ՛ր, ծառաս տունը անդամալոյծ վիճակի մէջ է եւ սաստիկ կը տառապի:
Յիսուս ըսաւ.

- Ես կուգամ ու կը բժշկեմ զայն:

Հարիրապետը պատասխանեց.

- Տէ՛ր, ես արժանի չեմ քեզ իմ յարկիս տակ ընդունելու. միայն բան մը ըսէ, եւ ծառաս պիտի առողջանայ: Որովհետեւ ես ալ, որպէս իշխանութեան ենթակայ մարդ, ձեռքիս տակ զինուորներ ունիմ. մէկուն կ'ըսեմ «Գնա՛», եւ կ'երթայ, ուրիշի մը կ'ըսեմ՝ «Եկո՛ւր», եւ կուգայ. ծառայիս կ'ըսեմ՝ «Այս բանը ըրէ», եւ կը կատարէ:

Յիսուս երբ լսեց, հիացաւ եւ իր հետետորդներուն ըսաւ.

- Կ'ըսեմ ձեզի, թէ նոյնիսկ Իսրայէլի մէջ այսպիսի հաւատք ունեցող մը չգտայ:....

Յետոյ Յիսուս հարիրապետին ըսաւ.

- Գնա՛, ինչպէս որ հաւատացիր՝ այդպէս թող ըլլայ քեզի:

Եւ նոյն վայրկեանին հարիրապետին ծառան բժշկուեցաւ:

Հարիրապետը ի՞նչ խնդրեց Յիսուսէն

ա. Զինք բժշկէ

բ. Ծառան բժշկէ

գ. Իրեն հաւատքի մասին սորվեցնէ

դ. Զինք թշնամիներէն ազատէ

Յիսուս ի՞նչ ուզեց ընել

ա. Հարիրապետին տունը այցելել

բ. Զինք ազատել

գ. Իրեն Աստուածաշունչը սորվեցնել

դ. Հարիրապետին հետը տանիլ

Ինչ է հաւատքը: Հաւատք՝ կը
նշանակէ վստահ ըլլալ այն բաներուն
որոնց կը յուսանք եւ համոզուած ըլլալ
այն բաներուն որոնք չեն երեւիր:

Երբայեցիներուն 11.1

Յիսուս Հարիրապետին ո՞ր յատկանիշով
տպաւորուեցաւ

ա. Հաւատքով

բ. Անհաւատութեամբ

գ. Հնազանդութեամբ

դ. Անհնազանդութեամբ

Մեծ Եղեռնի Նահատակներուն պատուիրանը

24 Ապրիլ 2003 ին Փարիզի մէջ՝ կատարուեցաւ բացումը Մեծ Եղեռնի Յուշակոթողի մը:

Այսօր, Մեծ Եղեռնէն 89 տարիներ ետք, մեզմէ իւրաքանչիւրը կոչուած է ըլլալու **կենդանի կոթող** մը եւ .-

- ապրելու **Հայակնիք** կեանք մը
 - ամուր կառչած մնալու մեր **Հայավայել** բարի բարքերուն
 - կարդալու եւ կեանքի վերածելու մեր **Հայագրեալ** Աստուածաշունչը
 - երգելու, մտիկ ընելու եւ լսելու մեր **Հայանուագ** շարականներն ու երգերը
- եւ մանաւանդ **սիրելու Հայը:**

Յիսուս ըսաւ.- «Նոր պատուիրան մը կու տամ ձեզի.-

Սիրեցէ՛ք իրար: Ինչպէս ես ձեզ սիրեցի՝ դուք ալ իրար սիրեցէք: Ձեր իրար սիրելով է որ մարդիկ պիտի գիտնան, թէ դուք իմ աշակերտներս էք:» **Յովհաննու 13:34,35**

Այս է մեր Մեծ Եղեռնի Նահատակներուն պատուիրանը. Նախ եւ առաջ, Սիրել Հայը:



Մարտ ամսուան պատասխանողներ եւ մասնակցողներ

Մանկապարտեզի անկիւն

Զատիկի, Երուսաղէմ, Յիսուս, արմաւենիի, Ովսաննա՛, Տիրոջ, Սուրբ, աւանակի

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. բ. 23 Փետրուարին
2. ա. Աշակերտները
3. բ. 2
4. բ. 3
5. գ. Յուդա
6. բ. 60,000
7. գ. 6
8. բ. Դրախտէն դուրս վտարուեցան
9. ա. Մեծ պահքէն առաջ
10. գ. 3

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. գ. Անտիոք
2. բ. Վարդան
3. ա. բ. եւ գ. Յիսուս մէջբերում մը ըրաւ Հին կտակարանէն ուր Աստուած Մովսէսի միջոցաւ ըսաւ ժողովուրդին
4. բ. խթում
5. ա. 451
6. ա. որովհետեւ չէին մասնակցած այդ ժողովին եւ հետագային մերժեցին այդ ժողովին որոշումները
7. բ. Յիսուսի այս աշխարհի նախորդող կեանքը
8. գ. Յակոբ
9. ա. Նշխար, բ. Մաս, գ. Մոմավառութիւն, դ. Խնկարկութիւն, ե. Երկրպագութիւն, գ. Մեծ Պահք
10. Բուն բարեկենդան, Արտաքսման, Անառակին, Տնտեսին, Դատաւորին, Գալստեան, Ծաղկազարդ, Զատիկ

Երկրորդականի անկիւն

1. Տնտեսի
2. Անառակին, Տնտեսին, Դատաւորին
3. Ղուկաս
4. 24
5. Ս. Ներսէս Ծնորհալի
6. 12րդ
7. Իմաստութիւն Հօր՝ Յիսուս

8. Պահապան ամենայնի Քրիստոս,
9. Տեսող ամենայնի,
10. Բնող գաղտնեաց

Ընդհանուրի անկիւն

- 1- բ. խունկ
- 2- ա. անդիմակ թշնամին
- 3- գ. բնակելու
- 4- դ. վերի բոլոր պատասխանները ճիշդ են
- 5- բ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ
- 6- բ. Սուրբ Երրորդութիւն
- 7- դ. աստուածաբանութիւն
- 8- ա. Ընդունէ, պահպանէ եւ ողորմէ
- 9- ա. ամպել ա
- 10- բ. ներն

Մարտ ամսուան մասնակցողներ

Մանկապարտեզ

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Ճեսիքա Մատթէոսեան, Կրէյս Նարեկեան, Ռիթա Մամիրոյեան, Դանիէլ Ակրեան, Թամար Տեմիրճեան, Արշակ Խշխշեան, Մհեր Պապեան, Արազ Գէպթանճեան:

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Նաթալի Սեթեան, Գէորգ Պուլքեան, Դալար Գէպթանճեան:

Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Ալէք Կարապետեան, Ներսէս Նասոյեան, Հրայր Մատթէոսեան, Սերենա Քուլուքեան, Յարութ Քուլուքեան:

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Քրիստինա Կարապետեան, Անի Մելեքեան, Թամար Զաքմաքճեան

Անսխալ պատասխանողներ

Լորա Սարիմանուկեան, Սեդրակ Մամիրոյեան, Գօգօ Մատթէոսեան

Երկրորդականի անկիւն

Լոռի Քէօւէյեան, Կարօ Կարապետեան, Թամար Գիգիրեան, Փօլ Գիգիրեան, Արալ Խաչատուրեան, Քրիստինա Լոշխանեան:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



**«Հոս չէ ան, որովհետեւ յարութիւն առաւ» «Այս տարի
Յարութեան Տօնը Ապրիլ --- ին է:»**

Ամբողջացո՛ւր ըստ Մատթէոս 28.1- 7

Մարիամ, Մարիամը, երկրաշարժ, հրեշտակը, քարը, նստաւ,
սարսափեցան, մի՛ վախնաք, խաշուած, յարութիւն, ըսէք, առաջ, տեսնէք
Շաբաթ երեկոյէն ետք, երբ Կիրակին կը բացուէր, -----
Մագդաղենացին եւ միւս ----- գերեզմանը տեսնելու եկան:
Յանկարծ զօրաւոր ----- մը եղաւ, եւ Աստուծոյ
----- երկինքէն իջնելով՝ գլորեց գերեզմանի մուտքին դրուած
----- եւ ----- անոր վրայ: Անոր տեսքը փայլակի կը նմանէր,
եւ հագուստները ձիւնի պէս ճերմակ էին: Պահապանները երբ ասկա
տեսան, ----- եւ մտելի պէս եղան: Հրեշտակը կիներուն
ըսաւ « Դուք ----- . գիտե՛մ որ ----- Յիսուսը կը
փնտռէք: Հոս չէ, որովհետեւ ----- առաւ ինչպէս ըսած էր:
Եկէք եւ տեսէ՛ք այն տեղը ուր դրուած էր: Անմիջապէս գացէք եւ -----
իր աշակերտներուն՝ թէ յարութիւն առաւ: Անկկա ձեզմէ ----- Գալիլիա
կը հասնի եւ հոն պիտի ----- զինք. ահա ըսի ձեզի:

Գիտութիւնը կը հպարտացնէ մինչ սէրը հաւատքը կ'ամրապնդէ

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն**

1. Յիսուս իր աշակերտներուն ոտքերը լուսով ինչի՞ դաս մը տուաւ անոնց:

- ա. համբերութեան
- բ. մաքրութեան
- գ. խոնարհութեան
- դ. ծուլութեան

2. Վերջին ընթրիքին Յիսուս ի՞նչ հաստատեց:

- ա. Սուրբ հաղորդութիւնը
- բ. Սուրբ Սահակը
- գ. Սուրբ կեանքը
- դ. Սուրբ պսակը

3. Ո՞վ Յիսուսը ուրացաւ 3 անգամ:

- ա. Յակոբ
- բ. Պետրոս
- գ. Պօղոս
- դ. Յուդա

4. Յիսուս իր ձերբակալութենէն առաջ ի՞նչ կ'ընէր

- ա. կ' ուտէր
- բ. կը խմէր
- գ. կ' աղօթէր
- դ. կ' աշխատէր

5. Ամբողջացո՞ւր

Ե՛ս եմ եւ կեանքը:
Ան որ ինձի կը,
թէպէտեւ մեռնի՝ պիտի:
Յովհ. 11.25 :

6.- Տասնաբանեայ պատուիրաններէն ո՞ր մէկը կ'ըսէ «չըլլա՛յ որ սպանութիւն ընես»:

- ա.- վեցերորդը
- բ.- հինգերորդը
- գ.- առաջինը
- դ.- երկրորդը

7.- Պահքի ո՞ր կիրակին կը կոչուի Ծաղկազարդ «Առաջին հաշուելով Արտաքսման Կիրակին»:

- ա.- երկրորդ
- բ.- չորրորդ
- գ.- վեցերորդ
- դ.- երրորդ

8.- Ի՞նչ էր Ղուկաս Աւետարանիչի արհեստը:

- ա.- ատաղձագործութիւն
- բ.- բժշկութիւն
- գ.- ուսուցչութիւն
- դ.- ձկնորսութիւն

9.- Հսկումի ընթացքին ի՞նչ աղօթք կը կարդանք:

- ա.- Հաւատամք
- բ.- Առաւօտ լուսն
- գ.- Հաւատով խոստովանիմ
- դ.- Մատեան ողբերգութեան

10.- Ամբողջացու՛ր աղօթքը:

Ով Երկնային, ով - - - - - Դուն մեր -
- - - - - , Հայր բարի, տուր մեզի - - - ,
շնորհք ու - - - , իմաստութիւն եւ - - - - -
- - - :

Ո՞րն է ճիշդ պատասխանը Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ե՞րբ կը տօնենք Սուրբ Քառասուն
մանկանց տօնը:

ա.- Մարտ 20

բ.- Ապրիլ 30

գ.- Միջինքին յաջորդող Ծաբաթ օրը

դ.- Մեծ պահքի 27-րդ օրը:

2.- Ու՞ր գրուած է « Մի՛ ընէք որեւէ բան որ
հակառակասիրութենէ կամ փառասիրութենէ
մղուած ըլլայ. այլ՝ խոնարհ ոգիով՝ ձեր
ընկերները ատելի լաւ համարեցէք քան դուք
ձեզ: Միայն դուք ձեզ մի՛ մտածէք, այլ նաեւ՝
ձեր ընկերոջ մասին»:

ա.- Փիլիպպեցիներուն 2.5

բ.- Մատթէոս 6.16

գ.- Եբրայեցիներուն 12.3

դ.- Մարկոս 6.7

3.- Անառակ Որդիին առակին մէջ, հայրը
քանի՞ զաւակ ունէր եւ ո՞ր զաւակը ուզեց
ունենալ հօր հարստութեան իր բաժինը:

ա.- երեք զաւակ ունէր եւ միջնեկ զաւակը
ուզեց ունենալ հարստութիւնը:

բ.- Երկու զաւակ ունէր եւ մեծ զաւակը ուզեց
ունենալ հարստութիւնը:

գ.- Երկու զաւակ ունէր եւ փոքր զաւակը
ուզեց ունենալ հարստութիւնը:

դ.- չորս զաւակ ունէր եւ փոքր զաւակը ուզեց
ունենալ հարստութիւնը:

4.- Որու՞ համար գրուած է այս Ծարականը
«Աստուածային սիրով մեզի հոգեւոր ծնունդ
տուիր, Գորովագութ Հայր պանծալի, Գրիգոր
Հայրապետ, Մարմնիդ չարչարանքով մեզ
մեղքի աղտէն մաքրեցիր, Լուսաւոր
քարոզութեամբդ որդիներ ծնար:»

ա.- Գրիգոր Նարեկացիի համար:

բ.- Գրիգոր Լուսաւորիչի համար:

գ.- Գրիգոր Զոհրապի համար:

դ.- Մեսրոպ Մաշտոցի մասին:

5.- Ո՞վ էր Քառասուն Մանուկները
չարչարողը:

ա.- Լիկիանոս

բ.- Կոստանդիանոս

գ.- Օգոստոս

դ.- Ներոն

6.- Հետեւեալներէն որո՞նք Յիսուսի քովն էին
իր խաչելութեան ընթացքին:

ա.- Յովհաննէս եւ մայրը Մարիամ

բ.- Պետրոս եւ Յովհաննէս

գ.- Յովհաննէս

դ.- Յակոբոս եւ Պետրոս

7.- Աւագ Ծաբաթ կը կոչուի

ա.- Ս. Ծնունդին յաջորդող շաբաթը

բ.- Ծաղկազարդին յաջորդող շաբաթը

գ.- Ս. Զատիկէն մինչեւ Համբարձում

դ.- Ս. Զատիկի նախորդող շաբաթը

8.- Աւագ Ծաբթուայ իւրաքանչիւր օր ունի
յիշատակ մը:

Աւագ Երկուշաբթի -----

Աւագ Երկուշաբթի -----

Աւագ Զորեքշաբթի -----

9.- Աւագ Ծաբթուայ իւրաքանչիւր օր ունի
յիշատակ մը:

Աւագ Հինգշաբթի -----

Աւագ Ուրբաթ -----

10.- Աւագ Ծաբաթ օրը կը կոչուի Ծրագալուց
Ս. Զատիկ, իսկ Ս. Զատիկը Յիշատակն է
Յիսուսի Յարութեան: Ս. Զատկուայ յաջորդող
Երկուշաբթին յիշատակն է
-----:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն**

1- Ի՞նչ կը կոչուի Ս. Զատկուան
յաջորդող 3 կիրակիները:
ա.- ----- Կիրակի
բ.- ----- Կիրակի
գ.- ----- Կիրակի

2- ըստ Գրիգոր Տաթևացին հակիրճը
խորհրդանշէ աշխարհը՝ հետեւեալ
ձեւով:
ա. Կեղեւը՝ -----
բ. Մաշկը՝ -----
գ. Ծերմկուցը՝ -----
դ. Դեղնուցը՝ -----

3-Կարմիր գոյնով ներկուած հակիրճը
կը նշանակէ թէ՛

4-14 Հարցումներուն համար.
Հետեւեալ դէպքերը Աւագ շաբթուան
ընթացքին ո՞ր օրը տեղի ունեցան:

4-Յիսուս մաքրագործեց Տաճարը
աւագ ----- օրը:

5-Այրին որ տաճարին մէջ իր
ունեցած երկու լուման տուաւ աւագ
----- օրը:

6-Յիսուս լացաւ Երուսաղէմի վրայ

աւագ ----- օրը:
7-Յիսուս պատմեց տասը կոյսերուն
առակը աւագ -----
օրը:

8-Յուդա յանձն առաւ Յիսուսը մատնել
աւագ ----- օրը:

9-Զատկական ընթրիքը տեղի ունեցաւ
աւագ ----- օրը:

10-Աշակերտներուն ոտքերու
լուացումը տեղի ունեցաւ աւագ
----- օրը:

11-Պետրոսի ուրացումը տեղի ունեցաւ
աւագ ----- օրը:

12-Յիսուս աղօթեց Գեթսեմանիի
պարտէզին մէջ աւագ
----- օրը:

13-Յիսուս խաչուեցաւ աւագ
----- օրը:

14-Երկինքը խաւարեցաւ երեք ժամ
աւագ ----- օրը:

15-Կիրակի օրերը Քրիստոսի
յարութեանէն առաջ կը կոչուէին՝
----- :

Ո՞րն է ճիշդ պատասխանը Ընդհանուրի անկիւն

1- Ունելուայի արարողութիւնը կը

խորհրդանշէ.-

ա- մաքրութիւն

բ- խոնարհութիւն

գ- բարիք

դ- ընկերասիրութիւն

2- Եկեղեցւոյ ո՞ր բաժինը կը կոչուի
աւանդատուն.-

ա- խորանի կից սենեակը

բ- մուտքին մոմ վաճառելու սենեակը

գ- երկրորդ յարկի վրայ գտնուող
տարածութիւնը

դ- աւանդատունը եկեղեցւոյ բաժին չէ

3- Քրիստոս յարեալ ի մեռելոց.-

ա- Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի

բ- Ձեզի մեզի մեծ աւետիս

գ- Ամէն

դ- Օրհնեալ է յարութիւնը Քրիստոսի

4- Մարգարէն.-

ա- Աստուծոյ անունով կը խօսի

բ- կը գուշակէ

գ- աստուածային լուսաւորութիւն ունի

դ- բոլոր վերի պատասխանները

5- Զիթենեաց պարտէզը, որուն մէջ
մատնուեցաւ Յիսուս, կը գտնուի.-

ա- Գողգոթա

բ- Բեթանիա

գ- Գեթսեմանի

դ- Բեթլեհեմ

6- Քրիստոսի ամենէն մեծ պարուիրանն էր.-

ա- Սիրէ ընկերդ անձիդ պէս

բ- Յարգէ հայրդ ու մայրդ

գ- Մի ստեր

դ- Անդադար աղօթէ

7- Նժդեմ անունը կը նշանակէ.-

ա- Քաջ մարդ

բ- Կրակի կտոր

գ- բարեսիրտ

դ- պանդուխտ

8- Ծնունդն ու Զատիկը նախորդող օրուան
եկեղեցական արարողութիւնը կը կոչուի.-

ա- Պատարագ

բ- Ծրագալոյց

գ- Կարգ թաղման

դ- Ունելուայ

9- Ըստ Սաղմոսի 37[36]-ին, «Սիրող մի՛
նեղեր չարերուն համար, ոչ ալ նախանձէ»... .

ա- հարուստ մարդոց

բ- անօրէն մարդոց

գ- չարամիտ մարդոց

դ- անհաւատ մարդոց


10- Թիւով քանի էին իմաստուն կոյսերը
որոնք իրենց լապտերներով Տէրը պիտի
ընդունէին.-

ա- 5

բ- 2

գ- 10

դ- 40



Կազմակերպութեամբ՝
Գանատայի Ազգային Առաջնորդարանի
Զրիստոնեական Դաստիարակութեան Խորհուրդին

Հովանաւորութեամբ՝
Տ. Խաժակ Ս. Արքեպիսկոպոս Յակոբեանի
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին

Տեղի պիտի ունենայ **Մայիս 1, 2004-ին**
 Երեկոյեան ժամը 6:30-ին
 Ս. Յակոբ Ազգային Վարժարանի
 Բաադրմաճեան Սրահին մէջ

<p><input type="checkbox"/> Խումբ թիւ 1 (1995 - 1996 - 1997-ի Ծնունդ)</p> <p><u>Պարտադիր</u></p> <p><input type="checkbox"/> Ասմունք .- «Տէրն է Հովիւս» (Սաղմոս 22 (23), նոր աշխարհաբար թարգմանութիւն)</p> <p><input type="checkbox"/> Երգ .- «Զրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»</p> <p><u>Ազատ</u></p> <p>_____</p>
<p><input type="checkbox"/> Խումբ թիւ 2 (1992 - 1993 - 1994-ի Ծնունդ)</p> <p><u>Պարտադիր</u></p> <p><input type="checkbox"/> Ասմունք .- «Հաւատով Խոստովանիմ» (Առաջին 3 տուներ, գրաբար)</p> <p><input type="checkbox"/> Երգ .- «Կիլիկիա» (Առաջին տուն)</p> <p><u>Ազատ</u></p> <p>_____</p> <p>_____</p>
<p><input type="checkbox"/> Խումբ թիւ 3 (1991-ի Ծնունդ, 13 տարեկան եւ վեր)</p> <p><u>Պարտադիր</u></p> <p><input type="checkbox"/> Ասմունք .- «Հաւատամք» (գրաբար)</p> <p><input type="checkbox"/> Երգ .- «Առաւօտ Լուսոյ» (Առաջին 2 տուներ, միևնույն «դասեցո վերնոցն»)</p> <p><u>Ազատ</u></p> <p>_____</p> <p>_____</p>

Բոլոր անոնք որոնք կը փափաքին մասնակցիլ սոյն մրցանքին, կը խնդրենք որ կապ հաստատեն Զրիստոնեական Դաստիարակութեան Խորհուրդին հետ 514-856-1200 թիւին եւ կամ գրեն armenianprelacy@ca.inter.net հասցէին:

Կարճ Լուրեր

• Նուիրատուիժին

Շնորհակալութեամբ ստացանք **Բրշ. Յակոբ Ա. Սրկ.**

Գասպարեանէն 24 խաղ-նուէրներ առ ի գնահատանք Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտներուն «Հաւատով Խոստովանիմ» աղօթքի արտասանութեան **Ս. Յակոբ Մայր Եկեղեցու** Չորեքշաբթի օրերու հսկումի արարողութեան ընթացքին: Խաղ-նուէրները տրուեցան մասնակցող աշակերտներուն:

• **Ամէն Շաբաթ** օր երեկոյեան ժամը 7:00 ին **Աստուածաշունչի**

Սերտողութիւն Երիտասարդներուն համար Ս. Յակոբ Մայր Եկեղեցի:

• **Դասախօսութիւն** "THE BIBLE, Fact or Fiction (Genesis, Exodus)"

Հինգշաբթի, **Ապրիլ 22 2004** ի երեկոյեան ժամը 8:00 ին **Ա. Ահարոնեան** Սրահ

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ
Խմբագիր՝ Ծաղիկ Պոյաճեան
Աշխատակիցներ՝ Յասմիկ Նաճարեան, Երան Լոշխաճեան, Գարուիկ Գէպթանճեան, Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս Պապիկեան:

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցու Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը.- Ուսուցիչներ՝ Իզապէլ Քուլլութեան, Սայրի Բակլաեան, Վերժին Գէպթանճեան, Վերա Կարապետեան, Երան Լոշխաճեան, Գարուիկ Գէպթանճեան, Յասմիկ Նաճարեան, Ծողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Կալքէջ՝ Բաֆֆի Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Ծաղիկ Պոյաճեան:



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցու
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ



ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 9

Մայիս 2004

Հարուստ Ամիս մը

Կիր.	Բ2.	Գ2.	Դ2.	Ե2.	Ուր.	Շաբ.
						1
2	3	4	5	6	7	8
9	10	11	12	13	14	15
16	17	18	19	20	21	22
23/ 30	24/ 31	25	26	27	28	29

2	Կարմիր Կիրակի
9	Տօն Սուրբ Խաչի երեւման Մայրերու տօն
20	Համբարձում
23	Երկրորդ Ծաղկազարդ
28	Անկախութեան տօն
30	Հոգեգալուստ

**Թող մեզ պատժապարտ համարեն.
մենք գիտենք թէ մահուան
դատապարտութենէն ազատած ենք: Թող
մեր կեանքը տխուր կարծեն. մենք միշտ
ուրախ ենք: Աղքատ թող սեպեն. մենք
շատերու կեանքերը կը ճոխացնենք:**

Մայիս ամիսը քրիստոնէական եւ հայկական առումով հարուստ ամիս մըն է որովհետեւ անոր ընթացքին կը յիշատակուին զանազան կրօնական եւ ազգային տօներ, ինչպէս Հոգեգալուստ, Համբարձում, Մայրերու տօն եւ Անկախութեան օր:

Այս տօներէն իւրաքանչիւրը վեր կ'առնէ հայ ժողովուրդին մօտ հարազատ սկզբունքներ եւ արժէքներ: Մայրերու տօնը՝ հայ մօր զոհաբերութեան առաքինութիւնը եւ անոր հայ ընտանիքի հիմնաքար ըլլալը կ'ընդգծէ: Հոգեգալուստը կու գայ յիշեցնելու այն ինչ որ հիմնականն է քրիստոնէայ հաւատացեալին համար՝ այսինքն Սուրբ Հոգիին ներկայութիւնը անձին մօտ: Հայաստանի հանրապետութեան անկախութեան տօնը իր կարգին կը յիշեցնէ հայ ժողովուրդին սէրը ազատութեան, ինքնատիրութեան եւ արդարութեան հանդէպ:

Այս նիւթերէն իւրաքանչիւրը երկար քննութիւններու եւ վերլուծումներու կարելի է ենթարկել: Թէեւ մեզմէ իւրաքանչիւրը տարբեր ձեւով կը մեկնաբանէ ու կ'ապրի զոհաբերութեան, քրիստոնէութեան կամ անկախութեան սկզբունքները, բոլորս ալ անխտիր համաձայն կը գտնուինք անոնց կարեւորութեան շուրջ եւ զանոնք կը նկատենք իբր բաղձալի առաքինութիւններ:

Մայիս ամիսը ե՛ն թող ըլլայ ինքնաքննութեան ամիս, մենք մեզ հարց տալու համար թէ որքանո՞վ Սուրբ Հոգիին տեղ տուած ենք մեր կեանքերէն ներս, որքանո՞վ զոհաբերուելու պատրաստ ենք եւ որքանով կը յարգենք մեր եւ ուրիշներուն անկախութիւնը:

Մի՛ վատնէք Աստուծմէ ձեր ստացած շնորհքը...

Բ. Կորնթացիներուն 6.1-10

Արդ, որովհետեւ Աստուծոյ գործակիցներն ենք, կ'աղաչենք ձեզի, մի՛ վատնէք Աստուծմէ ձեր ստացած շնորհքը: Որովհետեւ Աստուած կ'ըսէ.-

«Երբ յարմար ժամանակը եկաւ՝ լսեցի քեզ, երբ փրկութեան օրը հասաւ, օգնեցի քեզի»:

Ահա հիմա՛ է այդ յարմար ժամանակը. հիմա՛ է փրկութեան օրը:

Ուե՛է բանով պատճառ մի՛ ըլլաք որ Աստուծոյ գործը խափանուի կամ վարկաբեկուի. այլ՝ բոլոր պարագաներուն ալ դուք ձեզ ցոյց տուէք որպէս Աստուծոյ պաշտօնեաներ, մեծ համբերութեամբ յանձն առնելով նեղութիւնը, վիշտը, չարչարանքը, ծեծը, բանտը, խոտվարարներու վայրագութիւնները, յոգնութիւնը, անքնութիւնը, անօթութիւնը: Այս բոլորը տարէք՝ մաքուր սրտով, գիտակցօրէն, համբերատարութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, ճշմարտութիւնը քարոզելով, Աստուծոյ զօրութեամբ եւ արդարութեամբ զինուած՝, չարին դէմ յարձակելու եւ ինքզինք պաշտպանելու համար: Մի՛ այլայլիք՝ ո՛չ փառքէն եւ ո՛չ անարգանքէն, ո՛չ գովասանքէն եւ ո՛չ մեղադրանքէն: Մարդիկ մոլորած թող ըսեն մեզի. մենք գիտենք թէ ճշմարտութենէն չենք շեղած: Թող չուզեն մեզ ճանչնալ. մենք գիտենք թէ մեզ լաւ կը ճանչնան: Թող մեզ պատժապարտ համարեն. մենք գիտենք թէ մահուան դատապարտութենէն ազատած ենք: Թող մեր կեանքը տխուր կարծեն. մենք միշտ ուրախ ենք: Աղքատ թող սեպեն. մենք շատերու կեանքերը կը ճոխացնենք: Այո՛, կը թուի թէ ոչինչ ունինք, մինչդեռ ամէն ինչ ունինք:

Բովանդակութիւն

- Խմբագրական
- Մի վատնէք Աստուծմէ ձեր ստացած շնորհքը
- Յիսուսի համբարձումը
- Հոգեգալուստ կամ Սուրբ Հոգիի գալստեան տօն
- Հոգեգալուստ եւ մկրտութիւն
- Հայ մայրը
- Պահուած բառ
- Նկարագիր- Յոյս
- Վիճակ կամ հայկական խաղ
- Գիտէի՞ր թէ
- Հայ կինը եւ ազգային անանդութիւնները
- Ապրիլ ամսուան պատասխաններ եւ մասնակցողներ
- Ո՞րն է ճիշդ պատասխանը
- Կարճ լուրեր կիրակնօրեայէն

Յիսուսի համբարձումը


« Ապա տարաւ զանոնք մինչեւ Բեթանիա եւ ձեռքերը վեր բարձրացնելով՝ օրհնեց զանոնք: Եւ մինչ կ'օրհնէր, բաժնուեցաւ անոնցմէ, դէպի երկինք բարձրանալով: Անոնք երկրպագեցին Յիսուսի եւ մեծ ուրախութեամբ վերադարձան Երուսաղէմ: Ամէն օր տաճարին մէջ էին գովելով ու օրհնաբանելով զԱստուած:»

Ահա թէ ինչ ձեւով կը պատմուի Յիսուսի համբարձման դրուագը Ղուկասի աւետարանի վերջին տողերուն մէջ:

Համբարձում կը նշանակէ «բարձրացում»: Համբարձումը Յիսուսի յարութիւն առած ու փառաւորուած մարմնով երկինք բարձրանալու եւ Հայր Աստուծոյ աջ կողմը բազմելու յիշատակման տօնն է, որ կը զուգադիպի Սուրբ Յարութեան կամ Զատիկէն քառասուն օր վերջ, Հինգշաբթի օրով: Հայաստանեայց եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդի կողմէ ամենէն աւելի ուրախ տօներէն մէկը կը նկատուի այս որովհետեւ անով Յիսուս անգամ մը եւս կը հաստատէր յաւիտենական կեանքի գոյութիւնը ու կը համբարնար, կը բարձրանար երկնաւոր հօր մօտ բարեխօսելու մարդկութեան համար:

Յարութենէն ետք, Յիսուս քառասուն օրերու ընթացքին կը յայտնուի Իր աշակերտներուն, վերստին կը հաստատէ Իր յարութիւն առած ըլլալը ու կը խօսի անոնց երկնքի արքայութեան մասին ու կ'ուսուցանէ թէ ինչպէս պէտք է քարոզեն Աւետարանը: Քառասուներորդ օրը Տէրը կը աշակերտներուն հետ կը բարձրանայ, անգամ մը եւս, ձիթենեաց լեռան գագաթը ու կը յայտնէ անոնց թէ «երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, զօրութեամբ պիտի լեցուիք եւ իմ վկաներս պիտի ըլլաք, Երուսաղէմի, Հրէաստանի եւ Սամարիային մէջ, եւ մինչեւ աշխարհի ծայրամասերը»: Երբ ան այս խօսքերը կ'արտասանէր, աշակերտները ապշահար կը նային թէ ինչպէս Յիսուս երկինք կը բարձրանայ մինչեւ որ ամպերը կը ծածկեն զինք աշակերտներու տեսողութենէն:

Համբարձման օրով Քրիստոսի տուած այս պատուիրանին համաձայն է ահա, որ անոր առաքելներէն երկուքը՝ Թադէոսն ու Բարթողիմէոսը կու գան Հայաստան քարոզելու եւ հոն հիմնելու մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին:



**«Համբարձում»
Մանրանկար 1287-ի Կիլիկիոյ
«Ակներ» պատկերազարդուած
Աւետարանէն**

Հոգեգալուստ Կամ Սուրբ Հոգիի գալստեան տօն

«Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ հայրս ձեզի պիտի դրկէ իմ անունովս, անհկա ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի:»

Այսպէս կը խոստանար Քրիստոս իր աշակերտներուն վերջին ընթրիքի ընթացքին: Ըստ Առաքեալներու գործերը գիրքին, այս «գալուստը» իրականացած է Քրիստոսի յարութենէն յիսուն օր վերջ: Նշա՞նք. «Բոլոր ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:»

Հոգեգալստեան տօնը կը զուգադիպի հրեաներուն Պենտեկոստէ տօնին հետ, որ յունարէնով կը նշանակէ «յիսուն օր»: Իրապէս ալ հրեաները, իրե՛նք եւս, Սուրբ Զատիկէն յիսուն օր վերջ տասնաբանեայ օրէնքներու ստացման առթիւ յատուկ յիշատակութեան օր ունին՝ Պենտեկոստէն:

Հոգեգալստեան ամենէն աւելի իրայատուկ դէպքը լեզուափոխութիւնն է, կամ Քրիստոսի աշակերտներուն տարբեր տարբեր լեզուներ խօսելու կարողութիւնը: Աւետարանը այսպիսի լեզուափոխութեան երկու դրուագներ կը պարունակէ:

Առաջինը Հին Կտակարանին մէջ երբ Բաբելոնի աշտարակի շինութեան ընթացքին գործաւորներու լեզուները կը խառնուին ու անոնք այլեւս զիրար չեն հասկնար: Երկրորդ դրուագը Նոր Կտակարանին մէջ յիշատակուող, երբ մարդիկ կը սկսին տարբեր տարբեր լեզուներ խօսիլ բայց բոլորն ալ կը վկայեն Աստուծոյ մեծագործութիւններուն մասին:



«Հոգեգալուստ»
Մանրանկար 13-րդ դարի
Կէսին Կիլիկոյ մէջ
ընդօրինակուած «Սմբատ
Սպարապետի Աւետարան» ԷՆ

Հոգեգալուստ եւ մկրտութիւն

Մեր եկեղեցւոյ եօթը (7) խորհուրդներէն մէկն է մկրտութիւնը: Մայիս ամսուան ընթացքին յիշատակուող հոգեգալստեան տօնին առթիւ հետաքրքրական է հաստատել կապը Մկրտութեան եւ Հոգեգալստեան միջեւ:

Մկրտութիւնը ինքնին Սուրբ Հոգիի ընդունիլն է մկրտուողին կողմէ, Սուրբ Հոգիի գալուստը անձին մէջ որմէ ետք միայն ան կը կոչուի քրիստոնէայ:

Այլ հետաքրքրական կապ մըն է նաեւ Հոգեգալստեան շարականի ընթերցումը մկրտութեան արարողութեան ընթացքին, երբ քահանան Սուրբ միւռոնը կը թափէ աւազանին մէջ, խաշածն ու կ'երգէ հետեւեալը.-

Հոգեգալուստի շարական

Առաքելոյ աղանոյ
Իջանելով մեծաձայն հրնչմամբ իր բարձանց,
Ի նմանութիւն լուսոյ փայլման
Հրազինեաց անկիզելի զաշակերտսն,
Մինչդեռ նըստէին Ի սուրբ վերնատանն:

Հօրմէն ղրկուած աղանին -Սուրբ Հոգին-
Մեծագոյ ձայնով փայլակի պէս
բարձունքէն իջնելով՝
անկիզելի կրակով զինեց աշակերտները,
մինչ անոնք վերնատունը նստած էին:

Աննիթական աղանի,
Անքննելի որ քըննէ զխորս Աստուծոյ,
Զոր առել է Ի Հօրէ՝
Պատմէ զահաւոր եւ ըսմիսանգամ գալուստն,
Զոր քարոզեցին համագոյական:

Աննիթական է աղանին եւ անքննելի
Սակայն ինք գիտէ
Աստուծոյ ամենածածուկ ծրագիրները
Եւ Հօրմէն առնելով մեզի կը պատմէ
Քրիստոսի ահաւոր երկրորդ գալուստին
մասին: Ան համագոյակից է Հօրը:

Օրհնութիւն ի բարձունս,
ելողին Ի Հօրէ Հոգւոյն սրբոյ.
որով առաքեալքն արբեցան անմահական
բաժական,
եւ հրաւիրեցին զիրկիրս Ի յերկինս:

Բարձունքներուն մէջ օրհնութիւն
Սուրբ Հոգիին որ Հօրմէն կը բղխի.
առաքեալներ անոր անմահական շնորհքներու
բաժակէն խմեցին
եւ երկիրը դէպի երկինք հրաւիրեցին:

Հայ մայրը

Մովսէս Մէլամարեան

Ոչ լեզունն է ոչ ալ գրիչը կարող են ճշգրիտ հարազատութեամբ արտայայտել զօրութիւնը, գեղեցկութիւնն ու ազնուականութիւնը մայր բառինն է մայրական սիրոյնն:

Ջաւկի մը մօրմէն ստացած գուրգուրանքին առընթեր, ստացած առողջ դաստիարակութիւնն է, որ հիմը կը դնէ ապագայ երջանիկ ու տիպար անձնաւորութեան: Վասնզի, մօր սիրտը զաւկին դասարանն է:

Դպրոցներն են զանազան կրթական հաստատութիւններն երբեք լիակատար կրթութիւն չեն կրնար տալ, ու օրինակելի զաւակներ չեն կրնար պատրաստել, որքան ընտանեկան յարկը: Ընտանիքէն ստացուած կրթութեան շնորհիւ է որ դպրոցը հետագային պիտի կրնայ աւելի հաստատուն հիմերու վրայ դնել մանուկին դաստիարակութիւնը:

Ընտանեկան կրթութիւնը առաւելաբար է բնականաբար կը ծանրանայ մօրը վրայ ու մայրն է տունին հոգեկան, բարոյական մինչեւ իսկ նիւթական բարձրացման գլխաւոր ազդակը:

Ամենէն ծանր պատասխանատուութիւնը մայր ըլլալն է: Ընդհանրապէս իգական սեռի իւրաքանչիւր ներկայացուցիչ բնախօսական իմաստով որդեճնութեան, հետեւաբար մայր ըլլալու յատկութիւնը ունի: Սակայն քիչերն են, որոնք բառին իսկական առումով իրենց զաւակներուն մայր կը դառնան:

Հայ մայրերը այդ քիչերէն են եւ պէտք է ըլլան տարբեր այլ ազգերու պատկանող Մայրերէն: Իւրաքանչիւր հայ մայր ազգապահպանման հաստատուն սիւներէն մին է, որովհետեւ, դարերէ ի վեր մենք գոյատեւած ու ապրած ենք շնորհիւ մեր մայրերուն, որոնք սիրոյ, զոհողութեան եւ տառապանքի հարդուրժողութեամբ պահած են զմեզ հայ:

Ջմեզ ձուլելու եւ կրօնափոխելու ամենէն ազդեցիկ միջոցներն անգամ կը մնան անզօր այնքան ժամանակ որ կ'ունենանք մեր նախնեաց նման տիպար ու զոհաբերող Հայ մայրեր, որոնք մեզի կ'ուսուցանեն եւ կը դաստիարակեն հայկական առաքինութիւններով, որ մեր հայապահպանման միակ զէնքն է:

Պահուած բառ

դ	ա	ս	ն	ն	ա	շ	ա	կ	ե	ր	տ	ա	կ
այ	ա	ն	լ	ս	ն	ղ	ն	լ	թ	ի	լ	ն	ն
ր	ն	շ	ս	ր	խ	չ	ի	լ	ճ	օ	ճ	ե	լ
ն	լ	ս	ն	լ	մ	ա	ր	լ	ա	կ	ի	ր	ե
ց	շ	ն	լ	ձ	լ	կ	լ	գ	ս	ր	լ	ե	ն
ց	ա	ն	ց	ն	ի	կ	ր	ա	կ	ա	ա	լ	ա
ց	ն	ն	ի	լ	թ	ա	կ	ա	ր	գ	կ	ծ	ի
ն	ա	ա	չ	կ	տ	ց	ր	է	տ	տ	ա	զ	ա
ե	լ	տ	յ	ա	յ	լ	ն	մ	ա	կ	բ	ա	յ
լ	ե	ա	խ	ն	շ	ն	ր	ա	ա	լ	ա	ր	ց
ղ	ն	տ	ց	յ	ա	ց	ե	ն	օ	տ	ր	ա	ա
գ	ա	ն	ձ	ե	լ	ն	լ	շ	ա	դ	ի	ր	կ
կ	ի	ս	ա	լ	ա	ր	տ	դ	ն	ա	ե	տ	ա
գ	շ	ի	ն	լ	ի	թ	լ	ն	ղ	ն	ր	ե	ն

ման
գանձել
այց
բարի
յանգ
տեղ
գին
ուշադիր
նիշ
դպրոց
ուսում
դաս
ուսուցիչ
մկրատ
ցանց

ուշ
ուսողութիւն
աղիւսակ
գրատախտակ
կաւիճ
ուշանալ
ցցնել
նիւթ
կարկին
անորոշ
շուարած
ցուցակ
ներել
խոշոր

կիսաւարտ
արտօնեց
ածական
սխալ
արմատ
մակբայ
կոշ
աշակերտ
ճօճել
հանել
հայցական
ազատ

ներողութիւն
կարգ
տակ
լոկ
տէր
ցոյց
ատեան

Ը

«Քրիստոնէութիւնը հոգետիրումն է աշխարհին եւ նիւթեղէնին վրայ»

Կ

Այս խօսքը մեկնակէտ եւ սկզբունք առնելով է որ այս յօդուածներու շարքով կը կեդրոնանանք մեր նկարագրի բարեպաշտ եւ օրինակելի գծերուն վրայ, այլ խօսքով՝ մեր առաքինութիւններուն վրայ, որոնց միջոցաւ միայն կրնանք նիւթական աշխարհէն բարձրանալով հասնիլ հոգետիրին:

«Քրիստոնէութիւնը հոգետիրումն է աշխարհին եւ նիւթեղէնին վրայ», եւ քրիստոնէային առաքինութիւններէն մէկն է ...

ա

Յոյսը

ր

Յանկացած լաւ բանը սպասելու կարողութիւն, հաւատալով որ ան պիտի իրականանայ: Լաւի ակնկալութիւն, հեռանկար:

Քրիստոնէական հաւատքի մէջ յոյսը խորհրդանշող դէպքը Յիսուսի յարութիւնն է: Հաւատացեալը կ'ապրի յուսալով թէ մահը վերջ մը չէ այլ՝ յարութեան ճամբով՝ անմահութիւն

ա

Յուսալը ապրիլ է: Յուսահատիւր՝ մեռնիլ: Նեղութիւնները, տառապանքները մարդկային կեանքին մաս կը կազմեն ինչպէս ուրախութիւններու բարեկեցիկ պահերը: Որքան պէտք չէ յղփանալ ու գինովնալ յաջողութիւններով եւ ուրախութիւններով, նոյնքան եւ պէտք չէ յուսալքուիլ եւ ընկճուիլ տառապանքներէն եւ նեղութիւններէն:

ի

ր

ՅՈՅՍ

Յուսակ կը նշանակէ...

Վստահիլ Աստուծոյ խոստումներուն եւ ակնկալութեամբ փափաքիլ

Անձ մը որ ...կը յուսայ.- ➤

- Ինքնավստահ է
- Գոհ է
- Համբերատար է
- Քաջալերող է

Անձ մը որ չի յուսար.- ➤

- Ծուռ կը յուսահատի
- Կասկածամիտ է
- Վախկոտ է

Ղազարոսի Յարութիւնը

Յովհաննէսի Աւետարանին մէջ 11.1-45 կը կարդանք Ղազարոսի Յարութեան մասին:

Ղազարոս մահացու հիւանդ էր երբ իր քոյրերը «Մարթա եւ Մարիամ» մարդ դրկեցին Յիսուսի մօտ որպէսզի լուր տան թէ Ղազարոս հիւանդ է:

Երբ Յիսուս Բեթանիա «Ղազարոսի գիւղը» հասաւ, արդէն իսկ Ղազարոս չորս օրէ ի վեր թաղուած էր: Մարթա երբ լսեց թէ Յիսուս կու գայ, դիմաւորելու գնաց եւ Յիսուսի ըսաւ.

- Տէ՛ր, եթէ հոս ըլլայիր՝ եղբայրս չէր մեռներ: Բայց հիմա իսկ գիտեմ, թէ ի՛նչ որ Աստուծմէ խնդրես՝ Աստուած քեզի պիտի տայ:

Յիսուս անոր ըսաւ.

- Եղբայրդ յարութիւն պիտի առնէ:

Մարթա պատասխանեց.

-Գիտեմ որ յարութիւն պիտի առնէ վերջին օրը, յարութեան ատեն:

Յիսուս ըսաւ

-Ե՛ս եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինձի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի:

Երբ մօտեցան տան եւ Յիսուս տեսաւ Մարիամը որ կու լար, եւ տան մէջ գտնուողներէն ոճամբ իրարու կըսէին

- Այս մարդը որ կոյրին աչքը բացաւ, չէ՞ր կրնար այնպէս մը ընել՝ որ Ղազարոս չմեռներ:

Յիսուս ուղուեցաւ դէպի գերեզմանը, հրամայեց որ վերցնեն քարը եւ աչքերը վեր բարձրացուց եւ ըսաւ.

- Հա՛յր, շնորհակալութիւն քեզի որ լսեցիր զիս: Գիտեմ որ միշտ կը լսես զիս. բայց ինչ որ այժմ կ'ըսեմ՝ շուրջս գտնուողներուն համար կ'ըսեմ, որպէսզի անոնք հաւատան թէ դուն դրկեցիր զիս:

Ասիկա ըսելէ ետք՝ բարձր ձայնով կանչեց.

- Ղազարո՛ս, դո՛ւրս եկուր:

Ու Ղազարոս դուրս ելաւ:

Մարթան կը յուսար որ Ղազարոս յարութիւն պիտի առնէ վերջին օրը: Ի՞նչ է մեր Յոյսը:

Ի՞նչ է հաւատքը: Հաւատք՝ կը նշանակէ վստահ ըլլալ այն բաներուն որոնց կը յուսանք եւ համոզուած ըլլալ այն բաներուն որոնք չեն երեւիր: Երբայցեցիներուն 11.1

Հաւատանք եւ ի մի միայն, ընդհանրական եւ առաքելական սուրբ Եկեղեցի: Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւն երկնից եւ ի կեանս յաւիտենականս:

Վիճակ Հայկական խաղ

Վիճակը համբարձման օրով խաղցուող հայկական տոհմիկ սովորութիւն նկատուող խաղ մըն է: Այս վիճակը խաղալու կերպերէն մէկը հետեւեալն է: Մատիտի կամ գրչի ծայրով մը եւ աչքը գոցած թիւ մը զատել հետեւեալ ցանցին վրայէն: Այս թիւին համապատասխանող գրութիւնը այդ թիւը ընտրած խաղին մասնակցող անձին վիճակն է:

1	4	12	3
10	2	9	5
6	8	11	7

- 1- Զգուշ պարապ խօսքերէ, գլխուդ փորձանք կը բերէ:
- 2- Գեղեցիկ ես բայց յամառ, ընկեր չկայ քեզ համար:
- 3- Երբ շատ սիրես դրամը, չես առներ սիրոյ համը:
- 4- Ժիր ես, աչքդ շատ բաց է, բայց ձեռքդ շատ կամաց է:
- 5- Խնայէ միշտ վաստակդ որ չբացուի յատակդ:
- 6- Գաղափարներ յայտնէ նոր, դո՛ւմ չուտուիր ամէն օր:
- 7- Օգուտ չիկայ քեզ անկէ, դուն այդ տետրակը փակէ:
- 8- Քեզի պէս մարդ շատ քիչ է, կ'ընես խելքիդ ինչ փչէ:
- 9- Գերի մ'ըլլայ քու կամքիդ, գիտցիր արժէքը կեանքիդ:
- 10- Երբ որ չունիս գութ, կորով, մարդ չսիրեր քեզ զօռով:
- 11- Մի վարանիր սիրէ միշտ, պիտ' չկրես երբեք վիշտ:
- 12- Երբ կ'ուզես որ համ բերես, ջանայ որ միշտ համբերես:



Գիտէի՞ր թէ

- **Հայաստանի Հանրապետութեան Զինանշանին** կեդրոնը Արարատ լեռն է որուն վրայ կը հանգչի **Նոյեան Տապանը**:

- **Հայերէնը** Հայաստանի պաշտօնական լեզու հռչակուեցաւ Դեկտեմբեր 1919 ին:

- Անկախ Հայաստանի ընթացքին վերջին դաշնագիրը՝ **Սեւրի Դաշնագիրը**, ստորագրուեցաւ 10 Օգոստոս 1920 ին:

Հայ կինը եւ ազգային ասանդութիւնները

*Ազատուհի Սիմոնեան
Հատուածներ*

Ազգային տոհմիկ ասանդութիւնները անգիր մեր պատմութիւնն են, որ դարերու ընթացքին առանց մասնաւոր ճիգի, փոխանցուած են սերունդէ սերունդ: Երբ մեր նախնիները կ'ապրէին այս ասանդութիւններով ու կը փոխանցէին զանոնք իրենց յաջորդող սերունդներուն, կը գտնուէին իրենց պապեմական հողերուն վրայ: Ներկայիս, յատկապէս սփիւռքի մէջ, երբ մեր ուրքերուն տակէն անհետացած է հայրենի հողը, այդ հողը ու անոր կապուած յիշատակները փոխարինող հիմնական ազդակներէն կը հանդիսանան ազգային տոհմիկ ասանդութիւնները: Իսկ այդ ասանդութիւններու պահպանման մէջ անուրանալի եղած է դերը Հայ Կնոջ, որպէս սինը հայ ընտանիքի:

Ասանդութիւնները առհասարակ կրօնական ծագում ունին եւ մեզի հասած են հեթանոսական շրջաններէն: Զոր օրինակ, «Վարդավառ»ի տօնակատարութեան իրարու վրայ ջուր սրկելու սովորութիւնը կու գայ հեթանոսական շրջանէն եւ կապ ունի ջուրի ու ցանքի աստուածներու պաշտամունքին հետ: Զատկական հաւկիթներկելու սովորութեան ծագումը եղած է նոր կեանքի սկզբնաւորութեան խորհրդանշը: Համբարձման տօնը կիներու յատուկ տօն մըն է, որ կը զուգահիսի գարնան եւ կապ ունի մեր նախնիներու բնութեան պաշտամունքի ասանդութիւններուն հետ:

Արդի կնոջ համար սակայն ո'րքանով շահեկանութիւն կը ներկայացնեն մեր տոհմիկ ասանդութիւնները: Արդեօք ժամանակավրէպ չե՞ն նկատուիր անոնք: Ինչո՞ւ պէտք է պահել զանոնք եւ փոխանցել սերունդներուն:

Եղեռնէն վերապրած մեր մայրերը կատարեցին իրենց դերը, փոխանցելով մեզի մեր ասանդութիւնները, հակառակ այն բոլոր

տառապանքներուն եւ հալածանքներուն որ իրենց բաժինը եղաւ: Եղեռնի մեր մայրերու սերունդը հանդիսացաւ այն թթխմորը որով խմորուեցանք, խորացանք, հասակ առինք, ազգային դիմագիծ կերտեցինք: Անոնք մեզի փոխանցեցին տոհմիկ ասանդութիւնները, զորոնք տակաւին կը շարունակենք գործադրել: Զատկական հաւկիթներկելը, քաթաները, չէօրէկները, միջինքի յատուկ ճաշերու եւ պահեցողութեան ասանդութիւնները, հարսանիքի, որդեծնութեան, մկրտութեան, երեխան միւռնէն հանելու եւ այլ կարգի ասանդութիւններ: Նաեւ փոխանցեցին մեզի ասեղին հրաշագործ ոյժը եւ սորվեցուցին ազգագրական ձեռագործները Մարաշի, Այնթապի եւ այլ շրջաններու: Մանաւանդ առաքինի կեանքի յատկութիւնները, աշխատանքի սէրը, նուիրումի եւ զոհողութեան ոգին, ձեռներէցութիւնը:

Որպէս ժառանգորդները այդ մայրերուն, ի՞նչ ձեւով կը վերաբերինք նոյն այդ ժառանգութեան հետ՝ որպէս արդի մայրեր ու կիներ: Հայ կնոջ նոր ուղղութիւնը պիտի ըլլայ հինին ու նորին գեղեցիկ համադրութիւնը, ներդաշնակ զուգորդութիւնը, իւրացնելով անցեալէն մեզի փոխանցուած մարդկային, ազգային եւ կրօնական ասանդութիւններու գեղեցիկ փունջը, միեւնոյն ատեն քայլ պահելով արդի քաղաքակրթութեան ընձեռած առաւելութիւններուն հետ:

Ապրիլ ամսուան պատասխանողներ եւ մասնակցողներ

Մանկապարտեզի անկիւն

Մարիամ, Մարիամը, երկրաշարժ, հրեշտակը, քարը, նստաւ, սարսափեցան, մի՛ վախճաք, խաչուած, յարութիւն, ըսէք, առ աջ, տեսնէք

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. գ. Խոնարհութեան
2. ա. Ս. Հաղորդութիւնը
3. բ. Պետրոս
4. գ. Կ'աղօթէր
5. յարութիւնը, հաւատայ, ապրի
6. ա. վեցերորդը
7. գ. վեցերորդ
8. բ. Բժշկութիւն
9. գ. Հաւատով խոստովանիմ
10. հրաշալի, Աստուած,

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. գ. եւ դ. Միջինքի յաջորդող Ծաբաթ օրը մեծ պահքի 27րդ օրն է:
2. ա. Փիլիպպեցիս 2.3
3. գ. 2 զաւակ ունէր եւ փոքր զաւակը ուզեց ունենալ հարստութիւնը
4. բ. Գրիգոր Լուսաւորիչի համար
5. ա. Լիկիանոս
6. ա. Յովհաննէս եւ մայրը Մարիամ
7. բ. եւ դ. Ծաղկազարդին յաջորդող շաբաթը Ս. Զատիկին նախորդ շաբաթն է
8. արարչագործութեան, տասն կուսանաց, մատնութեան Տեառն
9. Վերջին ընթրիքին եւ Ոսնկուայի, չարչարանաց, խաչելութեան եւ թաղման
10. Մեռելոց

Երկրորդականի անկիւն

1. ա. Նոր, բ. Կանաչ, գ. Կարմիր
2. Երկինքը, Օդը, Ծովը, Յամաքը
3. Յիսուս Քրիստոս խաչին վրայ իր արեամբ վճարեց փրկագինը ամբողջ աշխարհի
4. Երկուշաբթի
5. Երեքշաբթի
6. Կիրակի
7. Երեքշաբթի
8. Չորեքշաբթի
9. Հինգշաբթի
10. Հինգշաբթի
11. Հինգշաբթի

12. Հինգշաբթի
13. Ուրբաթ
14. Ուրբաթ
15. Մէկշաբթի

Ընդհանուրին անկիւն.-

- 1- բ, խոնարհութիւն
- 2- ա, խորանի կից սենեակը
- 3- դ, օրհնեալ է յարութիւնը Քրիստոսի
- 4- դ, բոլոր վերի պատասխանները
- 5- բ, Բեթանիա
- 6- ա, սիրէ ընկերդ անձիդ պէս
- 7- դ, պանդուխտ
- 8- բ, ճրագալոյց
- 9- բ, ոչ ալ նախանձէ անօրէն մարդոց
- 10-գ, 10 իմաստուն կոյսեր

Ապրիլ ամսուան մասնակցողներ

Մանկապարտեզ

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Ծեսիքա Մատթէոսեան, Կրէյս Նարեկեան, Արին Անթեպեան, Յուլեր Անթեպեան:

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Գէորգ Պուիքեան, Հրայր Մատթէոսեան, Միներ Մատթէոսեան:

Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Ալէք Կարապետեան:

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Քրիստինա Կարապետեան, Հրակ Նարեկեան

Երկրորդականի անկիւն

Լոռի Քէօսէյեան, Կարօ կարապետեան, Թամար Գիգիրեան, Փօլ Գիգիրեան, Քրիստինա Լոշխանեան:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն**



Ամբողջացո՛ւր Ղուկաս 24: 50-53

**Բեթանիա, օրհնեց, բաժնուեցաւ, երկինք, երկրպագեցին,
Երուսաղէմ, զԱստուած**

Յիսուսի համբարձումը այս տարի Մայիս ----- ին է:

Ապա տարաւ զանոնք մինչեւ ----- եւ ձեռքերը
վեր բարձրացնելով ----- զանոնք: Եւ մինչ
կ’օրհնէր, ----- անոնցմէ, դէպի
----- բարձրանալով:

Անոնք ----- Յիսուսի եւ մեծ ուրախութեամբ
վերադարձան ----- : Ամէն օր տաճարին
մէջ էին՝ գովելով ու օրհնաբանելով -----:

Բնաւ չարերուն նմանիլ մի ցանկար ոչ ալ անօրէնութիւն գործողներուն նախանձէ

Ո՞րն է ճիշդ պատասխանը Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Յիսուս գիւղ մը մտած միջոցին քանի՞ բորոտ բժշկեց:

- ա.- եօթը
- բ.- ութը
- գ.- տասը
- դ.- երեք

2.- Ամբողջացո՞ւր սաղմոսը:

ա.- Տէ՛րն է ----- ուստի ուել քանի՛ ----- պիտի չմնամ:-----
արօտավայրերու մէջ կը մակադեցնէ զիս հանգստարար ----- զիս կը տանի:

3.- Ո՞վ բացաւ Սողոսին աչքերը:

- ա.- Պողոս
- բ.- Անանիա
- գ.- Յուդա
- դ.- Ստեփանոս

4.- Այրի կինը եկեղեցիի գանձանակին մէջ քանի՞ լումա նետեց:

- ա.- տասը լումա
- բ.- երեք լումա
- գ.- չորս լումա
- դ.- երկու լումա

5.- Հերովդեայի աղջիկը ի՞նչ խնդրեց հերովդէս թագաւորէն իր ծննդեան տարեդարձին:

- ա.- Յովհաննէս Մկրտիչի գլուխը:
- բ.- Թագաւորութեան կէսը:
- գ.- Ոսկի
- դ.- Պալատ մը ունենալ:

6. Աստուածաշունչը քանի՞ մասերու կը բաժնուի:

- Ա. 0
- Բ. 125
- Գ. 2
- Դ. 1000

7. Որո՞նք են այդ մասերը:

- Ա. հին կտակարան եւ նոր կտակարան
- Բ. հին կտակարան
- Գ. նոր կտակարան
- Դ. աւետարան

8. Ի՞նչ է հին կտակարանը

- Ա. կը պարունակէ Աստուծոյ խօսքերը Յիսուսի գալուստէն վերջ
- Բ. կը պարունակէ Աստուծոյ խօսքերը Յիսուսի գալուստէն առաջ
- Գ. կը պարունակէ Աստուծոյ խօսքերը Յիսուսի գալուստէն առաջ եւ վերջ
- Դ. կը պարունակէ առաքելական նամակները

9. Ի՞նչ է նոր կտակարանը

- Ա. կը պարունակէ Աստուծոյ խօսքերը Յիսուսի գալուստէն վերջ
- Բ. կը պարունակէ Աստուծոյ խօսքերը Յիսուսի գալուստէն առաջ
- Գ. կը պարունակէ Աստուծոյ խօսքերը Յիսուսի գալուստէն առաջ եւ վերջ
- Դ. կը պարունակէ առաքելական նամակները

10. Նոր կտակարանը որո՞նք մասին կը խօսի:

- Ա. Մովսէսի մասին
- Բ. Աբրահամի մասին
- Գ. Ադամ եւ Եւայի մասին
- Դ. Յիսուսի մասին

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն**

1.- Յիսուս իր մօր հոգատարութիւնը
աշակերտներէն որո՞ւ յանձնեց:

- ա.- Պետրոսի
- բ.- Յակոբոսի
- գ.- Մատթէոսի
- դ.- Յովհաննէսի

7.- Այս տարի ո՞ր օրը կը տօնենք
Հոգեգալուստը:

- ա.- Մայիս 20
- բ.- Յունիս 1
- գ.- Մայիս 7
- դ.- Մայիս 30

2.- Զաքէոս ի՞նչ ըրաւ Յիսուս տեսնելու
համար:

- ա.- ժողովուրդը հրեց առաջ անցնելու եւ
Յիսուսը տեսնելու:
- բ.- Լերան մը վրայ բարձրացաւ:
- գ.- Բարձր ձայնով պոռալու սկսաւ որ Յիսուս
իր կողմ նայի:
- դ.- Ծառի մը վրայ բարձրացաւ:

8.- Աստուածաշունչի ո՞ր գիրքին մէջ կը
կարդանք Հոգեգալուստի դէպքին մասին:

- ա.- Մատթէոս
- բ.- Մարկոս
- գ.- Ղուկաս
- դ.- Առաքեալներուն գործերը

3.- Ամբողջացուր համարը:

Անեղ----- Մեղայ քեզ-----
իմովք, -----եւ ----- իմով.
մի՛ յիշեր զմեղս իմ -----՝ վասն
անուանդ քոյ -----:

9.- Ո՞վ է հեղինակը Առաքեալներու գործերը
գիրքին:

- ա.- Մատթէոս
- բ.- Մարկոս
- գ.- Ղուկաս
- դ.- Յովհաննէս

4.- Յիսուս Յարութիւնէ ետք քանի օր մնաց
իր աշակերտներուն հետ:

- ա.- երեք օր
- բ.- տասը օր
- գ.- քառասուն օր
- դ.- մէկ տարի

10.- Հոգեգալուստի օրը Առաքեալները Սուրբ
Հոգիով լեցուելէ ետք ի՞նչ սկսան ընել:

- ա.- Աղօթել
- բ.- Սաղմոս ըսել
- գ.- Հոն հաւաքուած տարբեր երկիրներէ եկած
ժողովուրդներու լեզուներով խօսիլ
- դ.- Տուն վերադարձալ

5.- Ծաբթուան ո՞ր օրը տեղի ունեցաւ
Յիսուսի դէպի երկինք Համբարձումը:

- ա.- Հինգշաբթի
- բ.- Ուրբաթ
- գ.- Ծաբաթ
- դ.- Կիրակի

6.- Այս տարի ո՞ր օրը կը տօնենք
Համբարձումը:

- ա.- Մայիս 20
- բ.- Յունիս 1
- գ.- Մայիս 7
- դ.- Մայիս 30

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն**

1- Յիսուս իր յարութենէն քանի՞ օր
ետք համբարձաւ:

----- օր

2- Հոգեգալուստը՝ կամ Պենտեկոստէն Յիսուսի յարութենէն
քանի՞ օր ետք տեղի ունեցաւ:

----- օր

3. Աստուածաշունչի ո՞ր գիրքին մէջ
կը կարդանք Հոգեգալուստին մասին:

4. Առաքեալներու Գործերը գիրքին
Ա. գլուխին մէջ կը կարդանք թէ
Առաքեալները փոխարինեցին Յուդան
: Որո՞ւ հետ:

- ա. Մատաթիա
- բ. Բարսաբա

5. Առաքեալները ի՞նչ միջոց
գործածեցին հաւատացեալներուն
կողմէ երկու ներկայացուած անձերէն
մէկը զատելու:

6. Չորս Աւետարաններէն ո՞ր
երկուքին մէջ կը կարդանք Յիսուսի
համբարձումին մասին:

7. Հետեւեալ գիրքերէն ո՞ր մէկուն մէջ
կը կարդանք Հոգեգալուստի մասին:

- ա- Մատթէոս
- բ- Մարկոս
- գ- Ղուկաս
- դ- Առաքեալներուն Գործերը

8. Ո՞վ գրած է Առաքեալներուն Գործ
երը գիրքը:

- ա- Մատթէոս
- բ- Մարկոս
- գ- Ղուկաս
- դ- Յովհաննէս

9. Այս տարի Ս. Խաչի ո՞ր տօնը կը
տօնենք Մայիս 9 ին:

10. Երկրորդ Ծաղկազարդը
Համբարձումի յաջորդող Կիրակին է:
Այս տարի ե՞րբ է Երկրորդ
Ծաղկազարդը:

11. Հին կտակարանի ո՞ր դէպքը մաս
կը կազմէ Հայաստանի
Հանրապետութեան զինանշանին:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Ընդհանուրի անկիւն

1- Ո՞րն է անկապ անունը.-

- ա- Արշիլ Կորքի
- բ- Մարտիրոս Սարեան
- գ- Սայաթ Նովա
- դ- Գառզու

2- Համբարձումի ծանօթ երգին մէջ «Ամպի տակից» ի՞նչ կու գայ.-

- ա- հուր
- բ- ջուր
- գ- դուռ
- դ- նուռ

3- Ո՞ր մէկը հայկական թագաւորութիւն մը չէ.-

- ա- Բագրատունեան
- բ- Արտաշեսեան
- գ- Մամիկոնեան
- դ- Կիլիկեան

4- Ո՞ր թռչունի հայերուն համար հայրենի կարօտ կը խորհդանշէ.-

- ա- կռունկ
- բ- կաքաւիկ
- գ- սոխակ
- դ- լորի

5- Ըստ սաղմոս 29 (30) -ին, Տէրը կը փառաբանեմ որովհետեւ.-

- ա- ինծի ներեց
- բ- զիս ազատեց
- գ- ինծի դարձի բերաւ
- դ- զիս գոհացուց

6- Ո՞ր հայ հերոսը տգեղ Հսկայ մըն էր.-

- ա- Քաջ Նազար
- բ- Ծարպիկ Արա
- գ- Տորք անգեղ
- դ- Սանասար

7- Ինչ կը նշանակէ «Ինչ որ ցանես ան կը հնձես».-

- ա- Պէտք է զգուշ ըլլաս
- բ- Արարքներուդ հետեւանքը կը կրես
- գ- Ամէն ինչ իր ժամանակը ունի
- դ- Աշխատասէր պէտք է ըլլալ հունձք ունենալու համար

8- Բանաստեղծը կը սիրէ անուշ Հայաստանի.-

- ա- արեւաքամ բառը
- բ- արնանման նուրը
- գ- արեւահամ բառը
- դ- արեւահամ պարը

9- Ո՞ր մէկը եկեղեցական զգեստի մաս չի կազմեր.-

- ա- Բազկուրար
- բ- բազպան
- գ- գօտի
- դ- Մաղզմայ

10- Ո՞ր բառով կը վերջանայ Աւետարանը.-

- ա- Քրիստոս
- բ- Ամէն
- գ- Յաւիտեանս
- դ- Աստուծոյ

Կարճ Լուրեր

Կիրակնօրեայ Դպրոցի Հանդէս

**13 Յունիս 2004, կեսօրէ ետք ժամը 1:30ին Բասդրմանեան Սրահ:
Մուտքը ազատ:**

- **Ամէն Շաբաթ** օր երեկոյեան ժամը 7:00 ին **Աստուածաշունչի Սերտողութիւն Երիտասարդներուն համար Ս. Յակոբ Մայր Եկեղեցի:**
- **Դասախօսութիւն** "Հին Կտակարանի Օգտագործումը նոր Կտակարանի Հեղինակներուն կողմէ" Երեքշաբթի, **Մայիս 25 2004** ի երեկոյեան ժամը 8:00 ին **Ա. Ահարոնեան Սրահ**

«Մաշտոցի Արձագանգ»ի Խմբագրական կազմ
Խմբագիր՝ Ծաղիկ Պոյանեան
Աշխատակիցներ՝ Յասմիկ Նանարեան, Երան Լոշխանեան, Գարոլին Գէպթանեան, Նիկոլ Դանիէլեան եւ Թորոս Պապիկեան:

«Ճաշու աւետարան»ը
 Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու Աւետարանի հատուածները...

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը
 Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

*Սուրբ Յակոբ Հայց. Առաք. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը.-
 Ուսուցիչներ՝ Իզապէլ Քուլլուքեան, Սալբի Բակլատեան, Վերժին Գէպթանեան, Վերա Կարապետեան,
 Երան Լոշխանեան, Գարոլին Գէպթանեան, Յասմիկ Նանարեան, Ծողիկ Նանարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանանեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Կայքէջ՝ Բաֆֆի Պապիկեան, Լուսանկարիչ՝
 Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Ծաղիկ Պոյանեան:*



ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայաստանայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ
Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 10

Յունիս 2004

Ճշմարտությունը կը տիրէ

Կիր.	Բ2.	Գ2.	Դ2.	Ե2.	Ուր.	Շաբ.
		1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29	30			

Յունիս ամսուան ընթացքին յիշատակուող Գրիգոր Լուսաւորչի վիրապէն դուրս գալու օրը Հայաստանեայց եկեղեցույ այն տօներէն մէկն է որ կը պարունակէ անյայտ պատգամներ: Այս տօնը ամենէն առաջ անմատ յոյսի օրինակ մըն է եւ ճիշդ այնպէս ինչպէս Լուսաւորիչ ի՛նք չլուսալքուեցաւ 13 տարիներ շարունակ, բոլոր հաւատացեալ քրիստոնէայ, իր ամենէն դժուարին պայմաններուն մէջ պէտք չէ թոյլ տայ որ յոյսը զինք լքէ:

Երկրորդ, այս տօնը ճշմարտութեան գերադաս ըլլալու օրինակ մըն է: Այնպէս ինչպէս Տրդատ թագաւոր փորձեց Լուսաւորիչը վիրապ նետելով անոր քարոզած ճշմարտութիւնը թաղել, մեր առօրեայէն ներս եւս կը պատահի որ մարդիկ մերժելով իրականութիւնը, այս կամ այն ձեւով արգելք հանդիսանան անոր յայտնութեան: Սակայն երկար տարիներ վերջ, Լուսաւորիչ դուրս ելաւ վիրապէն եւ ճշմարտութիւնն ալ յայտնուեցաւ այդ ելքով: Նոյնպէս ալ կեանքի ընթացքին, մարդիկ կը փորձեն իրականութիւնը դրժել, ծածկել, եւ կամ մերժել, սակայն ուշ կամ կանուխ ճշմարտութիւնը մէջտեղ կու գայ եւ կը տիրէ:

Գրիգոր Լուսաւորչի խոր վիրապէն դուրս գալու տօնը հարուստ է յոյսի, հաւատքի եւ ճշմարտասիրութեան տիրումի օրինակներով. եւ թերեւս այս դասերն են որոնք պէտք է փոխանցուին մեր զաւակներուն երբ անոնց կը խօսինք Գրիգոր Լուսաւորչի պատմութեան մասին աւելի քան տեղեկագրական եղելութիւններն ու իրողութիւնները:

6	Յիշատակ Եղիա մարգարէին
7	Հրիփսիմեանց կոյսերու յիշատակ
8	Գայանեայց կոյսերու յիշատակ
12	Ս. Գրիգոր Լուսաւորչի վիրապէն ելքի յիշատակութիւն
13	Տօն Սուրբ Էջմիածնի
19	Մեծն Ներսէս
26	Գիւտ նշխարաց

Ճշմարտութեամբ ամրապնդեցէք ձեր մէջքը, արդարութիւնը հազէք զրահի պէս, եւ խաղաղութեան Աւետարանը քարոզելու պատրաստակամութիւնը հազէք կօշիկի պէս:

Եփեսացիներուն 6.14

Չարին դէմ պայքարելու զէնքերը

Եփեսացիներուն 6.10-18

Ի վերջոյ, զօրացէք Տիրոջմով եւ իր ամենակարող զօրութեամբ: Ձեր վրայ առէք Աստուծոյ սպառազինութիւնը, որպէսզի կարենաք Սատանային հնարքներուն դէմ դնել: Որովհետեւ մեր պատերազմը մարդոց հետ չէ, այլ՝ երկինքի տակ գտնուող չար ոգիներուն, իշխանութիւններուն եւ պետութիւններուն, այս խաւար աշխարհի տիրակալներուն դէմ:


Ուստի Աստուծոյ սպառազինութիւնը առէք, որպէսզի երբ չար օրը գայ՝ կարենաք ետ մղել Չարին հարուածները եւ ամէն ինչ ընէք՝ կանգուն մնալու համար:

Հետեւաբար պատրաստ եղէք. ճշմարտութեամբ ամրապնդեցէք ձեր մէջքը, արդարութիւնը հագէք զրահի պէս, եւ խաղաղութեան Աւետարանը քարոզելու պատրաստակամութիւնը հագէք կօշիկի պէս: Եւ այս բոլորին վրայ, հաւատքի վահանը առէք որպէսզի կարենաք մարել Չարին արձակած բոլոր միացող նետերը: Առէք նաեւ փրկութեան սաղաւարտը եւ Սուրբ Հոգիին սուրը, այսինքն՝ Աստուծոյ խօսքը: Այս բոլորին հետ աղօթեցէ՛ք, աղօթեցէ՛ք եւ խնդրեցէ՛ք տեսաբար, Սուրբ Հոգիին օգնութեամբ: Ատոր համար ալ՝ արթուն հսկեցէք, կատարեալ յարատեւութեամբ աղօթելով բոլոր հաւատացեալ եղբայրներուն համար:

**Էջմիածնի Աւետարանէն մանրանկար մը
որ կը ներկայացնէ Մոգերու
Երկրպագութիւնը**

Բովանդակութիւն

- խմբագրական
- Չարին դէմ պայքարելու զէնքերը
- Էջմիածին
- Երկնաւոր նահատակ եւ կոյսեր իմաստուն
- Հայոց սրտի լուսաւորիչ Մեծն Ներսէս
- Մայիս ամսուան պատասխաններ եւ մասնակցողներ
- Նկարագիր - Սէր
- «Մաշտոցի Արձագանգ» ի խմբագրական կազմ
- Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակը



Էջմիածին

Այս տարի, Յունիս 13-ին, Հայաստանեայց առաքելական եկեղեցին կը տօնէ Սուրբ Էջմիածնի տօնը: Ինչպէս գիտենք, Էջմիածինը Վաղարշապատի մէջ գտնուող Հայաստանեայց եկեղեցւոյ կեդրոնն է որ, ըստ Ագաթանգեղոս պատմիչի, կառուցուած է Գրիգոր Լուսաւորիչի տեսիլքին համաձայն: Ըստ պատմիչին, Յիսուս Քրիստոս երկինքէն կ'իջնէ Վաղարշապատ ու հոն, ոսկէ մուրճով գետնին զարնելով ցոյց կու տայ այն վայրը ուր պէտք է խաչի նշանով եկեղեցի մը կառուցել:

Էջմիածնի մայր տաճարը կառուցուած է 301-303 թուականներուն, բազմաթիւ անգամներ վերանորոգութեան երթարկուած եւ կանգուն մնացած մինչեւ այսօր: Ան աշխարհի հազուագիւտ շէնքերէն մէկն է ուր 18 դարեր շարունակ կեանքը շարունակուած է: 453 թուականին Էջմիածնի Մայր աթոռը փոխադրուած է Դուին եւ այլուր, ապա հազարամեայ մը ետք, 1441 թուականին վերահաստատուած Վաղարշապատ ուր կը մնայ մինչեւ այսօր:

Էջմիածինը հայուն համար սովորական վայր մը չէ, այլ՝ ուխտավայր. եւ պատահական չէ որ գերմանացի անուանի բնագէտ ու բուսաբան Ռատտեն, 1871 թուականին Հայաստանի մէջ իր գիտական ուղեւորութիւնը կատարելէ ետք Էջմիածին կոչած է «Հայկական Հոմ»:


Երջանկայիշատակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսը 1996 ին ըսաւ «Սուրբ Էջմիածինը եղած է եւ է, բոլոր հայերուն համար, իրենց ազգային ծննդեան որպէս քրիստոնէայ ազգ, ծննդեան մտորը՝ Հայկական Բեթլեհեմը»:

«Էջմիածին» կը կոչուի նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան պաշտօնական հրատարակութիւնը որ կրօնական եւ պատմաբանասիրական ամսաթերթ մըն է:

«Էջմիածնի Աւետարան» Փղոսկրեայ Աւետարան, հայ գրչութեան եւ մանրանկարչութեան ձեռագիր մատեան: Ընդօրինակուած Յովհաննէս գրիչին կողմէ 989 ին:

«Էջմիածնի դպրոց» Վաղարշապատի դպրոց «Վարդապետարան» հոգեւոր կրթական հաստատութիւն: Հիմնադրուած՝ 4րդ դարուն եկեղեցւոյ սպասաւորներ եւ ուսուցիչներ պատրաստելու նպատակով

«Էջմիածնի Հոգեւոր Ծեմարան» Հոգեւոր բարձրագոյն գիշերօթիկ ուսումնական հաստատութիւն հիմնուած 1945 Նոյեմբեր 1 ին Գեորգ Չորեքեանի նախաձեռնութեամբ: 1998 ին Գարեգին Ա. Կաթողիկոսի կողմէ վերանուանուեր է **Գեորգեան Հոգեւոր Ծեմարան:**



Էջմիածնի Աւետարանին Փղոսկրեայ կազմը

« Երկնաւոր նահատակ եւ կոյսեր իմաստուն . . . »


Մեզմէ ով ծանօթ չէ Հռիփսիմեանց ու Գայանեայց կոյսերու նահատակութեան պատմութեան: Անոնք իրենց նահատակութեան շնորհիւ դարձած են քրիստոնէական հաւատքի վկայութիւններն ու տօնելի նահատակները:

Հռիփսիմեանց կոյսերը առաքինագարդ վանական կեանք կը վարէին Հռոմի մէջ, իրենց հոգեւոր մայրապետ Գայանէ կոյսի առաջնորդութեամբ: Խուսաբելով հռոմեացի Դիոկղետիանոս կայսրի հալածանքներէն եկած ու հաստատուած են Հայաստան, Վաղարշապատի Հնձանք կոչուած վայրը: Սակայն հոն ալ հալածանքի ենթարկուելով, այս անգամ օրին տակաւին կռապաշտ Տրդատ թագաւորի հրամանով ու անոր իսկ հրահանգով՝ նահատակուած:

Կ'ըսուի թէ սրբունիներու մահէն 9 օր վերջ Գրիգոր Լուսաւորիչ դուրս եկաւ խոր Վիրապէն ու ինք ամփոփել տուաւ անոնց մարմինները: Անոնց յիշատակին է որ կառուցուած են Էջմիածնի Սուրբ Հռիփսիմէ եւ Սուրբ Գայանէ վանքերը:

16 Ապրիլ 1979-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. Հայրապետ հաղորդագրութիւն մը կը դրկէր Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոս Խորէն Ա. Հայրապետին: Ահա հատուած մը այդ հաղորդագրութենէն. –

« խոր յուզումով կը հաղորդենք թէ սուրբ Հռիփսիմէ վանքի պարիսպի տակ անցեալ տարի գ տ ն ու ա ծ հնադարեան մատուռ դամբարանին մէջ կատարուող նոր պեղումները յայտնաբերած են գերեզմաններ՝ աճիւններովը գլխատուած մարմիններու: Ծատ հաւանական է որ գտնուած աճիւնները սուրբ Հռիփսիմեանց կոյսերու խումբէն նահատակուածներու աճիւններն են, որոնք ըստ մեր պատմիչներուն նահատակութենէ յետոյ ամփոփուած էին դամբարանի մը մէջ»...



Էջմիածնի Ս. Հռիփսիմէ վանքը

Հայոց սրտի լուսաւորիչ Մեծն Ներսէս

Ներսէս հայրապետ կաթողիկոս ձեռնադրուեցաւ 353 թուականին, Արշակ Բ. թագաւորի օրերուն: Ան թագաւորին քարտուղարն էր, սակայն Փառէն Աշտիշատեցի կաթողիկոսի մահէն ետք թափուր մնացած հայրապետական աթոռին համար արժանաւոր մէկը պէտք էր ընտրել: Այս արժանաւոր անձը հանդիսացաւ Յուսիկ հայրապետի թոռ՝ Ներսէս:

Պատմութիւնը Ներսէս հայրապետի ընծայած է Մեծ Տիտղոսը իր կատարած մեծ գործերուն եւ բարեկարգութիւններուն համար: Հիմնական նպատակն էր հայ ժողովուրդի սրտին մէջ քրիստոնէական ազնիւ զգացումները ներմուծել եւ արմատացնել: Այսպէս օրինակ կը քաջալերէր իր ժողովուրդը որ հեթանոսական սովորութեամբ մահուան առջեւ չողբան, այլ՝ յարութեան յոյսը ի մտի ունենալով երկնքի արքայութեան հաւատան: Անդադար կը քաջալերէր որ մարդիկ բարեգործութեան ետեւէն ըլլալին եւ օրինակը ինքն իսկ տալով, իր տան մէջ կը հոգար որբերն ու չքաւորները:

Մեծն Ներսէս կաթողիկոս իր պաշտօնին գլուխն անցնելով մեծ բարեկարգութիւններու ձեռնարկեց: Անհամար վանքերու, դպրոցներու, որբանոցներու հիմնադրութիւնը իր աշխատանքին մէկ բաժինն էր: Ան կազմակերպեց հայ եկեղեցական դասը, ամէն կողմ քահանաներ, եպիսկոպոսներ եւ քարոզիչներ ղրկելով: Կանոնաւորեց եկեղեցիներու արարողութիւնները եւ որոշ օրեր ու ժամեր նշանակեց անոնց գործադրութեան համար:

Ահա իր այս բարեսիրական գործերուն շնորհիւ է որ ան դարձաւ Հայոց սրտի լուսաւորիչ:

Մայիս ամսուան պատասխանողներ եւ մասնակցողներ

Մանկապարտէզ

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Ճեսիքա Մատթէոսեան, Արազ Գեպթանճեան, Արին Անթեպեան, Յոլեր Անթեպեան, Ռիթա Խշիշեան:

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Սեւան Մելեքեան, Հրայր Մատթէոսեան:

Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Դալար Գեպթանճեան:

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն


Յովիկ Կարապետեան, Սեդրակ Մամիրոյեան, Ռուբէն Սեթեան, Արի Միրզայեան, Սեւակ Չաբրազեան, Ալին Սուլաքեան, Լորա Սարիմանուկեան, Անի Մելեքեան:

Անսխալ պատասխանողներ

Հրակ Նարեկեան, Գօգո Մատթէոսեան, Թամար Պուլիքեան

Երկրորդականի անկիւն

Լոոի Բէօսէյեան, Կարօ Կարապետեան, Թամար Գիզիրեան, Փօլ Գիզիրեան, Քրիստինա Լոշխանեան:



Էջմիածնի Ս. Գայանէ վանքը

Ը

«Քրիստոնեությունը հոգետիրումն է աշխարհին և նիւթեղէնին վրայ»

Կ

Այս խօսքը մեկնակէտ և սկզբունք առնելով է որ այս յօդուածներու շարքով կը կեդրոնանանք մեր նկարագրի բարեպաշտ և օրինակելի գծերուն վրայ, այլ խօսքով՝ մեր առաքինութիւններուն վրայ, որոնց միջոցաւ միայն կրնանք նիւթական աշխարհէն բարձրանալով հասնիլ հոգետիրին:

«Քրիստոնեությունը հոգետիրումն է աշխարհին և նիւթեղէնին վրայ», և քրիստոնեային առաքինութիւններէն մէկն է ...

Սէրը

ա

Սէրը առաջին պատուիրանն է: Թէև կանոնական շարքով 12 թղ գլուխը կը կազմէ, սակայն բոլոր պատուիրաններէն աւելի մեծ և առաքինի պատուիրան մըն է: «Տէր Աստուածդ պիտի սիրես քու ամբողջ սրտովդ, ամբողջ զօրութեամբդ և ամբողջ մտքովդ:

Ինչպէս որ մեզմէ իւրաքանչիւրը իր անձին չար բան չի ցանկար, նոյնպէս ընկերոս համար չար բան պէտք չէ փափաքիլ: Եւ ինչպէս որ մարդ ինքն իրեն խնամք կը տանի ու կը հոգայ, նոյնպէս ալ ընկերոջ համար բարին պէտք է ցանկալ ու հոգալ անոր:

ր

Ընկերոջ սէրը Աստուծոյ սիրոյ համազօր է: Ահա թէ ինչու ըստ Յովհաննէս աւետարանիչին «Եթէ եղբայրդ որ կը տեսնես և չես սիրեր, Աստուած որ չես տեսներ ինչպէ՞ս կրնաս սիրել»: Մարդասէր անձը ինքնաբերաբար նաեւ Աստուածասէր կը նկատուի:

Համակրանքի ուժեղ զգացում, յարում, կապ, գուրգուրանք: Քրիստոնէական առումով հաշտ, բարեացական վերաբերմունք մարդոց միջեւ, մէկը միւսին օգնելու տրամադրութիւն, ընկերսիրութիւն, մարդասիրութիւն:

ա

գ

ի

ր

Յովհաննէսի աւետարանին մէջ կը կարդանք թէ Յիսուս կ'ըսէ.- « Միայն այն ատեն իմ աշակերտներս կ'ըլլաք և քրիստոնեաներ, երբ սիրէք զիրար: Ինչպէս որ ես սիրեցի ձեզ, դուք եւս պարտիք սիրել զիրար»:

ՍԷՐ

Մեծագոյն Սէրը այն սէրն է, որով մարդ ինքզինք կը զոհէ իր բարեկամներուն համար: **Յովհաննէս 15.13**

Աճծ մը որ ...կը սիրէ.- >

փափկանկատ է
ներող է
առատաձեռն է
օգնող է
գթասիրտ է
համբերատար է
հիւրասէր է
բարեսէր է

Աճծ մը որ չի սիրեր.- >

ագահ է
չարակամ է
կոպիտ է
չարագործ է

Ով որ կ'ընդունի իմ պատուիրաններս եւ կը գործադրէ զանոնք, ա՛ն է որ զիս կը սիրէ: Եւ Հայրս պիտի սիրէ զիս սիրողը: Ես ալ պիտի սիրեմ զայն եւ ինքզինքս յայտնեմ անոր:
Յովհաննէսի Աւետարան 14.21

Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ:
Յովհաննէսի Աւետարան 3.16

Իմ պատուէրս է՝ որ սիրէք իրար, ինչպէս ես ձեզ սիրեցի
Յովհաննէսի Աւետարան 15.12

Սէր ունեցողը հանդարտ կ'ըլլայ եւ քաղցրաբարոյ: Սէր ունեցողը չի նախանձիր, չի գողոզանար, չի հպարտանար, անպատշաճ վարմունք չ'ունենար, միայն ինքզինք չի մտածեր, բարկութեամբ չի գրգռուիր, չարութիւն չի խորհիր, անհրաւութեան վրայ չ'ուրախանար, այլ՝ ուրախակից կ'ըլլայ ճշմարտութեան: Սէր ունեցողը միշտ կը զիջի, միշտ կը հաւատայ, միշտ կը յուսայ եւ միշտ կը համբերէ:
Ա. Կորնթացիներուն 13.4-7

Դարձեալ կը պատուիրեմ ձեզի, սիրեցէ՛ք իրար:
Յովհաննէսի Աւետարան 15.17

Ներկայիս, ուրեմն, միակ կարեւոր բաներն են՝ հաւատքը, յոյսը եւ սէրը. իսկ այս երեքէն **մեծագոյնը՝ սէրն է:**
Ա. Կորնթացիներուն 13.13

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ ԺԱ. Տարի Խմբագրական Կազմ

Խմբագիր՝
Աշխատակիցներ՝

Ծաղիկ Պոյաճեան
Յասմիկ Նաճարեան
Գարուլ Գաբթանճեան
Երան Լոշխաճեան
Շողիկ Նաճարեան
Նիկոլ Դանիէլեան
Թորոս Պապիկեան

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ը Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք

www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն

«Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւերը...

«Ճաշու աւետարան»ը

Կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Ճաշու աւետարան»ը ձեզ կ'ուղղէ դէպի ամսուան իւրաքանչիւր օրուան Ճաշու Աւետարանի հատուածները...

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցույ Կիրակնօրեայ դպրոցի կամաւոր խմբակը.-

Ուսուցիչներ՝ Իզապէլ Քուլլուքեան, Սալբի Բակլաեան, Վերժին Գէպթանճեան, Վերա Կարապետեան, Երան Լոշխաճեան, Գարուլին Գէպթանճեան, Յասմիկ Նաճարեան, Շողիկ Նաճարեան, Աշխէն Իշխանեան, Յասմիկ Գանաճեան, Տնօրէն՝ Թորոս Պապիկեան, Կաթէջ՝ Բաֆֆի Պապիկեան, Լուսանկարիչ՝ Նիկոլ Դանիէլեան, Պարբերաթերթ՝ Ծաղիկ Պոյաճեան: